

ԱՐ ՃՐՁԱՆ

IV ՏԱՐԻ

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ո Ա. Գ Ի Բ

№ 9

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1904



ԹՐՅԱԿՈ

Արագատիսկ Ա. Քովթաթէլածէի  
Նիկոլայինիկի փող., № 21.

Ծարուելու Ար. Կոմատելաձե, Խճ. յև., № 21.

1904

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### № 9

Երես

1. ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ԱՐՑԱԽԾՈՒՄ ԵՒ ՍԻՒՆԵՐՈՒՄ (շարունակակից), Լ. Ս.-ի . . . . .	5
2. ԵՍ ՅՈԳՆԵԼ ԵՄ, ոտան, Ալ. Ժամուռիանի . . . . .	13
3. ՀԱՅՔ ԲՐՄԱՍՏԱՆՈՒՄ, Համբ. բան. Վարդանանի	14
4. ՎԱՆԻ ՆՍՃԱՆԴԼ ԵԵՐԿԱՅՅՈՒՄ, (շարունակ.), Ժեղուկիկի	19
5. ՍՊԾԿՆՈՒ ՄԷՐԻՆ, ոտան. Մրխակի Ծէր-Դանեիլեանի	36
6. ԴԱՐՄԱՅԹԵԱԶ ԿԱՄ ՎԱՅՈՅ ԶՈՐ (շարունակելի), Մ. Տ.-Ա.-ի . . . . .	38
7. ՕՐ. Խ-ԻՆ, ոտան. Ա. Մեղրեանցի . . . . .	45
8. ԲԱՂԴԱՍԱՐ, Անատոլ Փըրանսի, թարգմ. Գրամտութէնից Տ. Զաւէսի . . . . .	46
9. ՓԻԼԻՍՈՓ. ՄՏԲԻ ԸՆԴՀ. Էկոլիթիցի Աիրությունը, Միքայել Միքայելիսի	59
10. ՏՐՏՈՒՅՉ, ոտան. Յովհանն. Թումանեանի . . . . .	76
11. ՓՈԹԱՐԻԿԸ (շարունակելի), Ա. Անարոնեանի . . . . .	77
12. ԵԳԻՊՏՈՎԱՀԱՅՔ (տեղապահան), Ա. ք. Շաղոնեանի . . . . .	91
13. ՔՆՆԱԴ-ԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.—1) Մկրտիչ Պէտքականի «Իերուածներն ու Հառերը»,— Նա.: 2) Հ. Ա. Լիքրիկան «Պատիկրազարդ Բնաշնիկ բառարան»,—Նա.: 3) Բ. ուս. Գ. Մադարեան «Բնշնկաբնութիւն և հասարակութիւն»,—Նա.: 4) Յ. Մանանդեան «Պատրի Անգաղթի խնդիրը նոր լուսաբանութեամբ»,—Նա.: 5) Պ. օմիչ «Հերման և Պորտեա»,—Նա.: 6) «Զիւանու քնարը»,—Ա. Ա.՝ 7) Ա. Գորկի «Դանկօի սիսոր»,—Ա. Ա. Աքրատ: 8) Արան վարդապետ Պատմեան «Ամուսնութիւն, ամուսնակուծութիւն և բաղրացիական պատր»,—Յ. Ա. . . . .	95
14. ՆՈՐ ԱՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ, . . . . .	108
15. ԳԱՅ-ԱՌԱԿԱՆ ԿԵՍԵՐ.—1) Յուշուայ գրտպարան-թնթերցարանը,—Ղ.՝ 2) Ջուզման խնդիրը նիրեւանի նահանջումը,—Ա. Դուռ: . . . . .	109
16. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀՔ.—Դիտական բրանիկ, Ե. . . . .	119
17. ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարական երեւոյթների բարգութիւնը:—Դարձնալ հայի անդամներցամփութեան մասին:—Գորոցից դուրս կազմակերպուած կրթական մի-	

Նոր շթշան VI տարի

Հրատ. XVI տարի

# ՄՈՒՐՃ

ԹԹԱԵՆ, ՀԱՍՏՐՑՎԱԿԵՆ ԵԻ ՔԸԼԱՔԸԿԵՆ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Բ

№ 9

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1904

→ ՀՅՀ ←

Թ. ի Շ լ ի ս

Տպարան Ա. Զութաթելածէի, Սիկ. № 21.

Скоропечатня Ар. Кутателадзе, Ник. ул., № 21.

1904

Дозволено цензурою. Тифлисъ, 17 сентября 1904 года

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## № 9

ԵՐԵ

1. ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՒ ՍԻՒՆԻՔՈՒՄ (շարունակելիի), Լ. Ս.-ի . . . . .	5
2. ԵՍ ՅՈՒՆԵԼ ԵՄ, ոտան. ԱԼ Ժամուրեանի . . . . .	13
3. ՀԱՅԸ ԲՐՄԱՍՏԱՌՈՒՄ, Համբ. քահ. Վարդանեանի . . . . .	14
4. ՎԱՆԻ ՆԱՀԱՆԴԻ ՆԵՐԿԱՅՈՒՄԸ, (շարունակ.), ԺԵՐՈՒԿԻ . . . . .	19
5. ՍՎՃԿՆՈՒ ՄԷՐԻՆ, ոտան. Միսակ Տէր-Դանիէլիանի . . . . .	36
6. ԴԱՐԱԼԱԳԵԱԾ ԿԱՄ ՎԱՅՈՑ ԶՈՐ (շարունակելի), Մ. Տ.-Ա.-ի . . . . .	38
7. ՕՐ. Խ-ԻՆ, ոտան. Ա. ՄԵՂՋԵԱՆցի . . . . .	45
8. ԲԱՂԴԱՍՍՐ, Անատոլ Փրանսի, թարգմ. Գրանտերէնից Տ. Զաւէնի . . . . .	46
9. ՓԻԼԻՍՈՓ. ՄՏՔԻ ԸՆԴՀ. ԷԽՈԼԻՒԹԻԱՅԻ ՈՒՐՈՒՄԴԻ-ԾԸ, Մ'իլ. Յովիկ. . . . .	60
10. ՏՐՏՈՒՆՁ, ոտան. Յովիան. Թումանեանի . . . . .	76
11. ՓՈԹՈՐԻԿԻ (շարունակելի), Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ. . . . .	77
12. ԵԳԻՊՏԱՀԱՅՔ (տեղագրական), Ա. քն. Շաղուեանի . . . . .	91
13. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ. —1) Մկըրտիչ Պէշիթաշլեանի «Քերթուածներն ու ձառերը». — Նա.: 2) Հ. Ս. Եփրիկեան «Պատկերազարդ Բնաշ-	
կիկ բառարան».—Նա.: 3) Բժ. ուս. Գ. Մաղաքիան «Բժշկականութիւն եւ հասարակութիւն».—Նա.: 4) Յ.	
Մանանդեսն «Դաւիթ Անյաղթի խնդիրը նոր լուսա-	
րանութեամբ».—Նա.: 5) Գէօթէ «Հերման եւ Գոլո-	
թէա», —Նա.: 6) «Զիւանու քնարը».—Ա. Ա. Ա. : 7)	
Ա. Գօրկի «Դանկօֆ միրտը».—Ա. Ա. Ա. : 8) Արակն	
վարդապետ «Լոտինան» «Ամուսնութիւն, ամուսնադու-	
թիւն եւ քաղաքացիական պատկ».—Յ. Ա. : . . . .	95
14. ՆՈՐ ԱՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ. . . . .	108
15. ԳԱԼԻԱՌԱԿԱՆ ԿԵԱԿԵԲ. —1) Շուշուայ գրագարան-Ընթերցա-	
րանը. —կ. : 2) Ուսումնան իմուֆիր Երեւանի նահան-	
դում. —Ա.-Դօ. : . . . .	109
16. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ. —Գիտական քրոնիկ, Ե. . . .	119
17. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —Հասարակական երևոյթների բար-	
դութիւնը: —Գարձնավ հայի անքնթերցամիրութեան մա-	
սին: —Գարոցից դուրս կազմակերպուած կրթական մի-	

չոցներ: — Հայ ընթերցողների սահմանափակ կոնտինգենտը: Լ. Ս. . . . . . . . . . . . . . . . .

Բարձրագոյն մանիթեստ: — Ռւժեղացրած պահպանութիւն: — Գատաստանական պալատի վճիռը: — Մինիստրոնների կոմիտենի որոշումը օտարքիրկրացիների բնակավայրերի մասին: — Ֆինլանդիայի նոր գեներալ-նահանգագետի նշանակումը: — Բարձրագոյն հաստատած մամուկի նոր օրէնքներ Ֆինլանդիայում: — Պետական օժանդակութիւն „Զակառ. ՕԵ.“ լրագրին: — Ստիակենդիաներ:

124

18. ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Ռուս-հապոնական պատերազմը:

— Միջնորդութեան հարցը: — Անգլիան իր գործերն է շտկում: — Թիւքքիան շարունակում է իր քաղաքականութիւնը: — Բուլղարական իշխանի ընդունուիլ Ֆրանց Յովսէփ կայսրից: — Վալգեկ-Ռուսասի մահը: — Կոմիր ճառը Օսկերում: — Փուրնալիստների միջազգային համաժողով Վիեննայում: Լ. Ս. . . . . . . . . . .

134

19. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .

141

20. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ . . . . .

146

21. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .

147

22. ՅԱԿԵԼՈՒԹԾ. Քէյմն Մ'որիէր՝ «ՀԱՅԻ ԲԱԲԱՅԻ ԱՐ-

ԿԱԾՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ», վէպ պարսկ.

կեանքից, թարգմ. տնգլ. Մ. Կարուղետեան. 193—240

## ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածազրերից՝ զբեկ պարզ, մտնաւանդ թուերը, յատուկ անումներն ու օտար քաները, և թերթի միայն մի երեսի վրայ, առանձնապէս ուշ գտրձնել կէտագրութեան, ուղղագրութեան և նոր պարզեցները որոշակի մինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը և՝ բնագլիք:

2. Հընդունած մեծ յօդուածները պահում են խմբագրատանը և ամիս, իսկ յետոյ ոչնչացւած են: Ենառջերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախուը: Փոքր յօդուածներն ու ստանառուները չեն վերացրածնելու:

3. Քրուածքների գարձատութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեանն առանց պայմանների ուղարկուած ճեռագլիքները համարում են անվճարելի:

4. Խմբագրութիւնուն իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխուու կամ կրաստնելու իրաւունքը:

5. «Ամուրձի» համարը շստացուելու վէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տուլ ոչ ուշ, քանի յաջորդ համարը լոյս տեսնելու:

6. Խմբագրութեանն զանազան հարցուածներով՝ զիմող տնձինք պէտք է պատասխանի համար ուղարկելն առանգագրաց կամ պատային բանել:

7. Հասցեն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոտ.: Հասցեի փոփոխումը պէտք է սահցուի խմբագրատանը իրավանչիւր ամսի 20-ից ոչ ուշ, որպէսզի տուաջիկայ համարն ուղարկուի նոր հասցեով:

ՄԻ ՔԵՆԻ ՕԲ

## ԱՐՑԱԽՈՒՄ ԵՒ ՍԻՒՆԻՔՈՒՄ

Ա.

Յունիսի վերջին օրերից մէկն էր, երբ ես Թիֆլիսի երկաթուղու կայարանում, վագոնի մէջ նստած, անհամբեր սպասում էի գնացքի մեկնման:

Վագոնի մէջ այնքան տօթ էր, որ մարդուց նստած տեղը բրտինը ծլծլում էր:

Նոյն վագոնում էին ի միջի այլոց տեղաւորուել և մի ռուս ու մի վրացի զինուորականներ, որոնք Հեռաւոր Արևելք էին ուղևորում: Առաջինը կանգնած էր պատուհանի մօտ և աշխատում էր հանգստացնել իր վզով ընկած ամուսնուն, որ անկարող էր զսպել իր հեկեկանը, իսկ երկրորդին ճանապարհ էր գցում նրա մօտ 20 տարեկան սիրուն սևազգեստ աղջիկը, որի աչքերը կարմրել էին և ուռել արտասուբքից. նա այժմ աշխատում էր պահել իր լացը:

Կողքիս նստած էին երկու ռուս, երևի երկաթուղային մեքենավարներ, որոնք գնում էին մօտիկ կայարաններից մէկը: Դրանք հիմնաւորապէս երկրագել էին Բաքուին և իրանց հետ վագոն էին մտցրել մի տկնոր լիքը գինով: Տկնորը դրել էին նստարանի տակ և յանախ քնրշութեամբ դիմում էին նրան «Հորթիկ» (տելեհոչեք) փաղարշական խօսքով:

Գնացքը շարժուեց: Բոլորը տեղաւորուեցին. ճանապարհ գցողները այլևս աւելորդ տեղ չէին բռնում:

Պատուհաններից քամի փշեց, դիւրացաւ մեր չնչառռութիւնը:

Վրացի զինուորականը նստել էր իմ դիմաց: Բաքոսի երկրպագուներից մէկը հանեց նստարանի տակից «Հորթիլին», ուղղելով նրան միքանի փաղաքշական ածականներ,—լրցրեց էմալէ թասը և դիմելով վրացի զինուորականին ասաց.

—Թոյլ տուէք, ձերդ պայծառափայլութիւն, խմել ձեր կենացը և ցանկալ ձեզ կատարեալ աջողութիւն պատերազմում: Տայ Աստուած, որ դուք վերադառնաք կռուից ողջ ու առողջ և ձեր կուրծքքը զարդարուած լինի մի շարք զբանշաններով: Խմում եմ մեր արծիւների —ուսու հերոսների կենացը. թող դրանք ջարդ ու փըշուր անեն մեր յանդուզն թշնամուն... Ձերդ պայծառափայլութիւն, ինձ էլ կը վերցնէք ձեզ հետ, ա, ես նրանց ցոյց կը տամ...

Իշխանը չնորհակալութիւն էր անում. նա կասկած չունէր որ հզօր Ռուսաստանը կը յազթի իր թղուկ ուսոխին: Ինքը եղել էր ռուս-տաճկական պատերազմում և գիտէր ռուս զինուորի անվեհերութիւնը. բացի այդ, նա համոզուած էր որ գենարալ կուրոպատկինի նման ռազմագէտ հաղիւ գանուի աշխարհում:

—Կեցցէք, կեցցէք, բդաւեցին մեքենավարները, գէ խմեցէք, ձերդ պայծառափայլութիւն. դուք հերոս էք, մեր բոլոր զինուորականները հերոսներ են, կեցցեն մեր արծիւները...

Երբ կայարաններից մէկում մեր այդ հարեւանները անհետացան իրանց «Հորթիլի» հետ, իշխանը իրան շառթեթեացած զգաց: Աղատուած աեզը բռնեց մի վրացի երիտասարդ քահանայ: Վրացի հոգեորականը և զինուորականը իսկոյն ծանօթացան և զրոյցի բռնուեցին: Բնականաբար խօսակցութեան առարկան պատերազմն էր: Երեսում էր որ քահանան հետեւում է մամուլու լոյս տեսնող բոլոր տեղեկութիւններին. մինչդեռ իշխանը արհամարհանքով էր վերաբերում «գրչակների» և

«Ժղթակիցների» «յիմար», «առւտումում» հաղորդումներին, նա իրան մասնագետ էր համարում և այն ինչ պրոֆաններիս թուում էր յաղթութիւն—նա համարում էր պարտութիւն, և ընդհակառակը Զուր էր տէրտէրը փորձում առարկութիւններ անել. իշխանը հեղինակաւոր կերպով շարունակում էր դարդացնել իր ռազմական ծրագիրները Կէս գիշեր էր և դեռ քնի մէջ ես լսում էի գրանց տաք վէճը և՝ «Ճապոնացի», «Պորտ-Արտուր», «Ռուսաց էսկադրա», «Պէներալ Կուրոսակին» խոսքերը:

Լուսաբացին իջայ Եւլախ կայարանում, մեր իշխանը ամուր փաթութուել էր եափնջում և խռմփում էր, իսկ քահանան չկար:

\* \*

Եւլախը գտնուում է Քուռ դետի աջ (հարաւային) ափին. այդ կայարանից պօստային ճանապարհ է գնում գէպի հիւսիս՝ Շէքիի մայրաքաղաք Նուշին և զէպի հարաւ՝ Դարաբաղի մայրաքաղաք Շուշին: Ես ուզում էի մի ուղևորութիւն կատարել մեր հին Արցախ և Սիւնիք հահանգներում, որոնք միասին այժմ բռնում են Գանձակ հահանգի մեծ մասը: Եւլախից Շուշի գնում են նաև մասնաւոր կառքեր: Ես վերցրի գեմոկրատիական հանրակառքում մի տեղ, ինձ տուին մի տոմսակ, որի վրայ նշանակուած էր գինը՝ 5 րուբլի, բանից գուրս եւ կաւ որ այդ գինը զոյսութիւն ունի միայն հրանց համար, որոնք սովորութիւն չունին ստկարկութիւն անելու, աւելի փորձուած ուղեկիցներս վճարել էին 2—3 րուբլի:

Հանրակառքը լցուել էին հայ երեխաններ, կանայք և միքանի երիտասարդներ, մեզ հետ էր և մի հրէայ օրիորդ — առամենալոյժ, որ ամառը գնում էր Շուշի՝ իր արհեստը գործադրելու: Առաջի անդամը չէր որ հարայէլի այդ գուտարը մինչմենակ ճանապարհօրդում էր՝ սեփական աշխատանկով իր գոյութիւնը պահպաննելու համար. նա միքանի անգամ դնացել էր նոյն նպատակով՝ Թաւրիդ:

իր պրակտիկի համար նա դիտէր հայերէն և թուրքէրէն միքանի խօսք միայն Յուսահատուել չգիտէր այդ տոկուն և ընդունակ ցեղի զաւակը:

Հանրակառքը էր արգէն ճամբորգներով, երբ մի կայարան անց մի փափախաւոր թուրք էլ ուզեց նստել կառապանի մօտ: Մեր ուղեկից շուշեցի պարոններից մէկը այնպիսի աղմուկ հանեց, այնպէս ուժգին սկսեց կռուել կառապանի և կոնդուկտորի հետ որ խեղճ թուրքը պիտի մնար ճանապարհին. նեղ դրութիւնը հնարագէտ դարձրեց նրան. մի ակնթարթում նա վեր մադրլցեց և նստեց հանրակառքի կարին. այդ խորամանկութիւնը բոյորին ծիծաղացրեց, և թողին նրան այնտեղ՝ տապակուելու արևի այրող ճառագայթների տակ:

\* \* \*

Մեր ճանապարհը ընկած էր յատակի նման հարթ դաշտավայրով. հին Հայաստանի Ռւտի նահանգով էինք առաջ ընթանում: Մեզնից գէպի արեմուտք և հարաւ, հեռւում, կապախն էին տալիս Արցախի լեռները, որոնք ականատես էին դեռ ևս երկու դար առաջ հայոց մելիքների ազատազրական ջանքերին:

Հին Ռւտին շատ յաճախ անցել է հարեան ազուանների ձեռքը, որոնց թագաւորութեան իսկական սահմանը եղել է Քուռ գետը Աղուանից աշխարհը բռնում էր այժմեան Շէքի-Շիրվանը: Սակայն ի զուր չէ ասած «սահման քաջաց զէնն իւրեանց», աղուանները միշտ երբ իւրանց ուժեղ են զգացել՝ տիրել են նաև Ռւտի նահանգին, որ իր աշխարհագրական գիրքով Աղուանից աշխարհի շարունակութիւնն է: Այժմ այդ աղուանների հետքն էլ չկայ կովկասում, իսկ ուտիացիներից մնացել են երկու երեք գիւղեր Նուխիի կողմերում: Իրաւ է, պատմական Ռւտի նահանգի մայրաքաղաք և երեքմն Աղուանից կաթողիկոսութեան աթոռանիստ կենտրոն Պարտաւը այժմ էլ գոյութիւն ունի, սակայն նա ներկայացնում է այժմ

մի կոյտ ողորմելի խրճիթների, իրանց թուրք բնակիչշներով։ Այդքան փոփոխական է ազգերի ճակատագերը...

Դէպի հարաւ ընթանալով դժուարութեամբ անցնում էք Թարթար, Խաչէն, Գարդար գետերով. սրանք սկիզբ են առնում Արցախի բարձրաբերձ, անտառազարդ և զով լեռներում, ապա կատաղի հոսանքով իջնում են Առանի գաշտավայրը և ամառուայ տաքից լռում ու չորանում այդտեղ, մերկացնելով այլանդակ քարերով ծածկուած իրանց հունը։ Լեռնոտ Հայաստանի այդ գետերը յիշեցնում են ձիւնապատ սարերում աղատ օդի մէջ մեծացած երէները, որոնք մեռնում են, երբ նրանց վար են իջեցնում խորշակահար տափաստանները։

\* \* \*

Միայն Խաչէն գետը անցնելուց յետոյ նկատելի է դառնում ձեր վերելը։ Եւ երբ մանում էք Գարդար գետի հովիտը և անցնում նրա մուտքը երբեմն կապող՝ Ասկերան բերդի աւերակների միջով—շրջապատող թշնութիւնը ստանում է լեռնային բնաւորութիւն։

Գետի միւս ամին տեղատեղ երևում են ռուս գաղթականների հիմնած նոր գիւղերը, որոնք տեղական լանդշաֆտի մէջ տարբեր կուլտուրայի և կենցաղի տեսարաններ են մտցնում։

Խանքենդի կայարանից սկսած օձապատյա ճանապարհը արդէն զառիվեր գնում է Շուշի։ Գեռ Ճը հասած այդ քաղաքը դուք ճանապարհին առիթ ունէք տեսնելու մեր տնտեսական կեանքում տոկունութիւն և ձեռնարկող ողի ցոյց տուող շուշեցու նոր գործեր. զարեջը դործարան, կամ նատնտեսական ֆերմա...

Արդէն մթնել էր Քաղաքը դժուարում է ծովի մակերևոյթից 5020 ոտնաչափ բարձր, սարի գագաթին վերելքը բնականաբար գանդաղ էր կատարւում։ Բոլորը սաստիկ ջարդուել էինք ու յոզնել։ Երեխաները

ամենաանկընական գիրքերում անդամքնել էին մեռեների նման։ Կամքը թուլացել էր և մեծերի մօտ. մարդ անզօր է այդ յոդնածութեան մէջ լշխել իր ջղերի և մլանների վրայ, աչքի կոպերը ծանրանում են և իրանք իրանք խփուում, չնայած ձեր բոլոր հակառակութեան. դլուխը թուլացած շինքի վրայ սկսում է ամեն կողմ օրօրուել, ինչպէս համեացած հասկը բամուց Երեսն ննջողի գըլուխը ինքն իրան այնպիսի թափով յետ է ընկնում մէջ քի վրայ, որ թւում է թէ վիզը պէտք է կոտրուի. մարդ սթափուում է, կծում է շրթունքները որ ցաւից չընի, սակայն իդուր. վաստակաբեկ օրդանիզմը ընկճուած է, կորցրել է իր կամքը և ահճնատուր եղել ընին։

Յանկարծ այնպէս ուժով սկսեց մեր կառքը վեր վար թռչկոտել, աջ ու ձախ թեքուել, որ կարծես սաստիկ ալեկոծութեան բռնուած նաւակ լիներ։ Պէտք էր ձեռքերով ամուր բռնել նստարանի կողքերից—կառըից դուրս չը նետուելու համար։ Մենք մուտք էինք գործել Պարաբաղի մայրաքաղաքը, և նրա խորդ ու բորդ, քարերով ու փոսերով ծածկուած գլխաւոր փողոցը թափահարում էր մեղ, այդ ձեռվ «բարի գալուստ» յայտնելով։ Կարելի է առանց չափազանցութեան տաել որ նուշուայ հիմնադիր Փանահնանի օրից մինչև այժմ միայն մի փոփոխութիւն են կրել այդ «սալայատակները», այն էլ երբ Աղա-Մահմէդ-խանը աւերել է քաղաքի հետ և նրա փողոցները։ Քաղաքացիները վերտաշնելով իրանց սեփական տները, հասարակութեան սեփականութիւն—փողոցները թողել են աւերուած վիճակի մէջ. և զեռ երկար կը մնան այդպէս, որովհետեւ Պարաբաղի «դուման» սպասում է որ Եւրոպայում սալայատակելու աւելի կատարելագործուած և էժան միջոցներ գտնեն. մի՛թէ արժէ քաղաքն ել ու մուտք անող կառըերի համար ծախքեր անել....

«Բարի գալուստի» ալեկոծութիւնից աւելի ցնցող էր նուշուայ «բարի ճանապարհը»։ Ես և իմ ուղեկիցը վերցրել էինք պոստի կառք, լծած Դարաբաղի չորս ոչ հոչակաւոր նժոյդներ։ Կառքը պէտք է բարձրանար նուշուայ առաջնակարգ փողոցով և գուրս գար Կօրիսի ճանապարհը։ Մի քանի քայլ մրինք թէ չէ, պոստատան առաջ կառքը կանգ առաւ, նրա առաջի անխները քարերից մերկացած փողոցի փոսերի մէջ էին ընկել, ձիերը չէին կարողանում գուրս քաշել կառքը քարերի և փոսերի խառնիխուան աւերակներից։ Մենք գուրս եկանք կառքից, իջաւ և կառապանը, որ յոդնել էր խեղճ անսասուններին մտրակելուց։ Կառապանին օգնութեան հասաւ մի իշապան իր գաւազանով. հարայնքոցը, ծեծը անկարող էին օգնել հասարակութեան անհօգութիւնից առաջ եկած չարիքին։ Մեր ողբալի դրութիւնը այնքան սովորական մի բան էր թւում բռն շուշեցիներին, որ կողքի կոկիկ, քարաշէն տներից միայն ժպառում էին։ Ըստիպուած էինք մի քանի արհեստաւորներ հրաւիրել, որ մեր կառքի անխներից բարձրացնեն։ Եւ այդպէս հարայնքոցից, մտրակի և գաւազանի հարուածներից ահարեկուած ձիերը հաղիւհազ կարողացան դատարկ կառքը դուրս բերել այդ երանելի քաղաքից...

Եւլախից մինչև նուշի ամբողջ 104 վերստ տարածութիւն անցնելով կառքը, ձիերը, ճանապարհորդները ջարդուփշուր լինելու այնքան վտանգ չեն կրում, ինչ քան այդ քաղաքի գլխաւոր փողոցով միքանի քայլ անելու ժամանակ։

Մենք ստիպուած էինք ամբողջ զառիվերը ստքով բարձրանալ։ Աղասուելով քար ու փոսերից, քաղաքի դարբասի մօտ կառապանը կանգնեցրեց հալից ընկած ձիերին։ Մինչ մենք նստած կառքում սպասում էինք որ հանդստանան ձիերը, միքանի քայլ հեռու մեր առաջ ներկայանում էր կեանքի մի ընորոշ պատկեր։ շուշեցի միքանի մանր առեւտրականներ կանգնեցրել էին մի գիւղացու, որ ջորու վրայ բարձած ճաերով լի կողով-

ներ՝ քաղաք էր գնում։ Վաճառականները պաշարել էին դիւզացուն. մէկը բռնել էր ջորու սահծից, միւսը կըռները դրել էր կողովների վրայ, որոնց մէջ ճվճիւմ էին ճտերը, իսկ երկու հօգի բռնել էին դիւզացու թևերից և օձիքից և «ման օլըմ, տուր, ման օլում, տուր» աղերսանքով պոկչին դալիս։ Դիւզացին չէր համոզւույ «անաստուած էժան գնով» զիջել իր ապրանքը։

— Դէ, բաց թողէք, ձեռք քաշէք, չեմ ծախում, ասացի, թողէք ասում եմ...

Ո՞վ էր լորդը, տղուկների պէս կպել էին և պոկչին դալիս... Կառքը շարժուեց տեղից, հեռուից ես յետնայեցի. գեռ շարունակում էր բռնի սակարկութիւնը։

Բաւականին նեղ և անփոյթ շինած պոստային ճանապարհը ընկած է Գարդար գետի մի վտակի հոսանքով, ձորի արևմտեան լանջի վրայ։ Կանաչապատ սարերի բուսականութիւնը տեղի ճոխ է դառնում երբ մօտենում էր «Թթու-Զուր» կոչուած տեղին, որ նուշուց դէպի հարաւարեւմուտք 18 վերստ հեռաւորութեան վրայ է դանուում։ Թթու-Զուրը զարաբաղցիների կիսլօվուտկին է. նրանք սիրում են գործածել այն հանքային ջուրը, որ բվիսում է այդ տեղում. Արցախի այդ ճնարգանը շերով ծախում են ոչ միայն նուշի, այլ և Բագու, Գանձակ։ Թթու-Զուրը ապրելու համար բնակարաններ չկան. Եթէ յարմարութիւններ ստեղծուեին, նա կը դառնար զով և գեղեցիկ ամարանոցավայր։ Պոստային կայտրանի դիմացի սարը տեսնելով՝ կարելի է հասկանալ թէ ինչու ուսւները լըսօգորսկ (ճաղատ սար) են անուանել Թթու-Զուրը. դիմացի մի գաղաթ մեղկ է և այդ «ճաղատութեան» շուրջ ծառերը խիտ անտառ են կազմում, որ առհասարակ ծածկում է բոլոր լեռնային լանջերը և ձորերը։ Նմանութիւնը ճաղատ գլխի շուրջ բուսած մազերի հետ բաւական մօտ է, թէև ոչ բանաստեղծական, մանաւանդ երբ նկատում էք այդ անտառներում արածող հօտեր ու նախիլներ...

## ԵՍ ՅՈԳՆԵԼ ԵՄ...

Ես յոդնել եմ սըրտիս ցաւից,  
Ա՛յս, յոգնել եմ ու հիւծուել.  
Վայ իմ սըրտին, խըզճուկ սըրտին—  
Արցունքով է նա լըցուել...

Տըխուր կեանքիս ամենամի օրն՝  
Որպէս դալուկ մի տերեւ  
Ընկած դաժան հողմի բերան՝  
Թօշնեց անվաշյլ, անարև...

Անլոյս անցան, լուռ մարեցին  
Իմ շատ յոյսեր, շատ փափագ.  
Ում էլ սիրոյ վարդ ձօնեցի—  
Վարդը ձըգեց սոքի տակ...

Ա՛յս, յոգնել է սիրտըս ցաւից,  
Յոգնել այս վուչ աշխարհից.  
Յաւերժ հանգիստ, ժըպտա սըրտիս  
Գէթ դռւ շիրմի խաւարից...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

## ՀԱՅԸ ԲՐՄԱՍՏԱՆՈՒՄ \*

Բրմաստանայ հայերի անցեալ և ներկայ կեանքը մեր աղպի եթէ չասեմ ընդհանրութեանը պիտի ասեմ մեծամամնութեանը անծանօթ է, որովհետեւ կամ ի մօտոյ ծանօթներն իրանց ժամանակից չեն կարողացել նուիրեն և կամ թէ հնդկահայոց թւում դասիլով, որոշակի չի խօսեցուել Բրմաստանայ հայերի մասին: Սակայն՝ քանի որ Բրմաստանում հայերը մի առանձին գաղթականութիւն են կազմում և մի առանձին հասարակական ճիւղ են կազմում, հարկաւոր է ըստ կարելոյն ծանօթացնել «Մուրճ»-ի յարգելի ընթերցողներին, անցեալից որչափ որ տեղեկութիւններ կարող եմ ձեռք բերել, իսկ ներկայից որչափ որ ծանօթ եմ:

Ա. Հայերի Բրմաստան գաղթելն

Հայերի Բրմաստան գաղթելու սկզբնաւորութեան մասին աւելի հաստատ տեղեկութիւն չկայ, միայն պարոն Թաղէոս Խաչիկ Աւետումիանցն իր աշխատասիրած «Արամայիս» գրքոյց կի մէջ որ տպագրուած է 1846-ին Կալկաթայում, գրում է հետեւալն.—

«Ի մէջ զանազան տպգաց բնակչաց Բարմայ աշխարհի՝ էր երբեմն զի Ազգն Տլայնայ էր մեծագօրն, որոյ թագաւոր նստէր յընդարձակ քաղաքին Փեղուայ, յորոյ 'ի բերդամիջի զարգիս արօրագիր լինին երկրագործք: Արդ՝ 'ի բարեբաստութեան այսր աղջի, բազումք 'ի մերայնոց անցին յայս կոյս Գանգեայ, և տեղի բնակութեան կալան 'ի Սընին \*\*) քաղաք՝

\*) Բիրման չնդկա-2ինի նախկին հզօր մի տէրութիւն է, որ 1886 թուից բրիտանական կալուածք է. զլխտոր քաղաքներն են Մանդալայ և Բանգլում: Ծ. Խ.

\*\*) Սընին կամ Եսրին որ բըմայ ազգը ծընին է կոչում իսկ անգլիացին Սիրիեմ, մի ընդարձակ թերակղզի է, ուր այժմ անզլ գօրաց բերդն է և նաֆտի գործարաններ կան. միծ մասն անտառացեալ և անմարդարնուկ է զարձած. չողինաւակով մերձ մի ժամուոյ երթարու ճանապարհ հեռու է Ռանգունից:

որ կայ յարենելից առ հարաւակողմն Ռանգունայ: Սընին՝ որպէս արդ Ռանգուն, էր նաւահանգիստ, ուր՝ բացի մերայնոց, յաճախէին անգղիացիք և գաղիացիք ևս վասն առևտրոյ, ուր շինեցին վերջինս և զեկեղեցի մի, որոյ երից կողմանց պարիսպն միայն արդ կանգուն կան<sup>\*)</sup>: Ունէին և Մերաղինք զփայտակերտ եկեղեցի, և ժողովուրդն ընդ ամենայն էին իբրև վաթսուն տունք: 'Ի յասնել Դիւցալին Ըլավմիուայի՝ կիսաստուածոյն Բարձայից, ընդդէմ Տըլայնի, յաւեր դառնայ Սընին յամի Տեան 1756. որպէս և մալրաքաղաքն Փէգու 'ի հետևեալ ամի, և 'ի տեղի Սընինայ՝ կառուցանէ բազմահանճարս աշխարհակալ զնորն Ռանգուն, որ նշանակէ վաղճան պատերազմի, ուր ժողովին մերազինք ցրուեալը յառաջնոյ անտի:

«Աւելորդ համարինք յիշել՝ զի եկեղեցի մեր որպէս և տունք որ 'ի Սընին, հրոյ ճարակ եղեն ամենայն, որպէս և քաղաքն զլխովին յաւեր և յալպականութիւն. սակայն՝ ոչ կարեմք զանց առնել զալէտալի կատարածիւ Տէր Մարգարայ՝ որպէս և զժամկոչին մեր: Զի՞ որպէս լուաք, 'ի պաշարման անդ քաղաքին՝ 'ի կոչել զժողովուրդն ձայնիւ զանգակի գալ՝ 'ի մէջ գիշերի 'ի Տօնախմբութիւն Ծննդեան Տեան, համարի Տլայն քաղաքապետն զձայն զանգակին իբրև զնշան յարձակման տուեալ առ Բրմայս, և առանց հարց ու փորձի հրամայէ իսկոյն հատանել զզլուխն երկոցունց կարծեալ դաւազրացս: Յաւերակս անդ Սընինայ տեսանի ցարդ գերեզմանատուն ազդիս, 'ի միջի վայրենացեալ մայրեաց և մացասաց. սակայն կէս տապանաքար և եթ տեսաւ 'ի պատուական սպիտակ մարմարինէ, ունելով միայն զանուն ննջեցելոյն <sup>\*\*)</sup>, ուստի ոչինչ ծանօթութիւն կարեոր եղել քաղել:

\*) Սոյն աւերակի երեք կողմի սպարիսպները մինչեւ օրս գնու կանգնած են, և մէջ տեղում անտառապին մի այնպիսի վիթխարի ծառ է բարձրանում, որ մի դարից աելի տարիների գրաւականն է: Ջառ հետաքրքիր եղայ սոյն աւերակում մի հետք զանել, սակայն գար է անցել, և բնութիւնը ամեն բան կորցրել է: Որպէս լսեմ՝ մտադիր են անգղիացիք կրկին եկեղեցի հաստատեն նոյն աւերակ:

## Ծ. Հ.

\*\*) Եյս սպիտակ մարմարինէ տապանաքարն որպէս կ'երկի անկայտացել է - արգեօր մացառների՝ տակ: Սակայն 15 տարի սրանից առաջ 1889-ին մի ռանդունաբնակ հայ - սլքմ հանգուցեալ - պ. Կարապետ ծափրազեան անունով, որ նոյն տեղ մեծ գետին կարուածք ունէր, իր սեփական կալուածքի մօտ երկու հատ անմնաս մնացած հայի գերեզմանաքարեր է զտնում որձաքարից, վեց ոտ, երկայնութեամբ, երեք. ոտ. լայնութեամբ և մի թզաշափ հաստութեամբ և ուզում է գերեզմաններն նորոգել տալ և տապանաքարերն հաստատել. սակայն տեղական անգլ. կառավարութիւնը չի թոյլ տալիս, այլ իբրև հը-

«Յայսմ ժամանակի նոր զօրացեալ էին Անգղիացիք յԱրեւելեան կողմունս, և ունէին զվաճառատեղի մի ՚ի զլուխն նէզը շէջայ, առ երի Բասին քաղաքի, ուր զկնի սակաւուց գաղտագողի փոխադրեալ զթնդանօթս ամրացուցանեն ըստ կարևորին: Զկնի զօրանալոյ Ըլավմիուայի՝ հրաման ընկալան Անգղիացիք ունի զնոյն արտունութիւն որպէս առ ժամանակօք Տլայնի. դաշամբ օգնելոյ Բրմայից ՚ի ժամու հարկաւորութեան: Սակայն զկնի սակաւուց ՚ի վտարանջել առաջնոյ ազին, հաւատադրուժ դտեալ Անգղիացոց ձեռն տան Տլայնի և գրգռեն զիրաւացի ցասումն Յաղթականին: Խորագէտն Գրիգոր որ կայր՚ի սպասու

Նութիմ պատուիրում է և բերել են տալիս կառավարութեան Ռանգունայ թանգարանում պահում են, ուր մինչև օրս կանգնած մնում են զեղեցիկ փորագրութեամբ հետեւալ տապանագրերով.

ա. «Աս է Ցապտնս Զուզայեցի, Օրդի գոլով Աւաքի, Յովհաննէս անուն գոչի, որ փոխեցաւ աշխարհ գալի եւ թիմ հաղարի աճի բի եւ ՚ի ամսի Արամ գ.ի:

Aqui está Sepultado o Corpode Joannes Arac de nascô Armenia Natural de Persia o quo falleceo de Zdade de 4 annos aos 29 de Dezembro de 1737 à:

REQUIES CATIN PACE»

(Սրա ներքեն բրմայ լեզուաւ)

բ. «Եկեալ է ասոտ ՚ի շիրմի, Ոսկեքառն Քրիստոնէի, եւ զեհէ Լուսաւորչի, զործովն եղեալ յաւէտ բարի, չետաղոտող տնանկաց ամենի, փաճառական յոյժ պիտանի, եւ էր փարթամ ընչիւք կարի. Ազգաւ եղեալ Զուզայեցի, Պետրոս անուն սա յորջորջի. Օրդի եղեալ է Սալուկի, եւ էր տիօք երեսամի, Տասն հ եօթն մակ աւելի, Վաղջանեցաւ յայսմ քաղաքի, որ նարին կ'արտաձայնի, Ով ոք որ յայսմ հանգիպեսցի. լի բերանով տալ ողորմի. Տէրն Քրիստոս իւլին Ողորմի, Ցաւուլն ահեղ Դատաստանի: Թիվն ՌՃՃ թիւրայ իբ. օրն շարաթ:

Aqui est a Sepultadô o Corpo de Coja Petrus de Sarue Natural de Julfa que feudo daydade de 47 annos falleceo Zu 20 de Outubro de 1725.

REQUIES CATIN PACE»

(Սրա ներքեն բրմայ լեզուաւ)

Բացի այս երկու տապանագրերին, որ անջնաս մնացել են մինչև օրս, սրանց մօտ նոյն թանգտրանում կայ և մի տապանագր ցածի կիսից միայն, և այն էլ երկարութեան կողմից երկու կտոր եղած հետեւալ արձանագրութեամբ.

(Վերի մասը չկայ, միայն հազի կարգում է)

«Յովհաննէս Օրդի Զաքարիա թիվն ձժԶ. Եյր ամսի իգ. Ազիտան Սուլութ օ Կորպո Զաքարիա իւն 1732 Տար 18».

(Ներքեն բրմայ լեզուաւ)

Վերջինի մօտին հաստատ տեղեկութիւն չկայ ոչ է գտել. սակայն կարծում են նոյն պ. Ցափրազը պիտի գտած լինի:

Ըլավմիուայի, դիպող առիթ գտեալ ցուցանելոյ զհաւատար-  
մութիւն իւր, հրաման ինդրեալ՝ ի դրանէ անցանէ բազմու-  
թեամբ բեռնաբարձ նաւակաց ընդ Բասին՝ ի զլուին նէգրէջայ,  
վաճառականութեան աղագաւ, ուր պատուով ընկալեալ յԱն-  
դղիացի վաճառականաց, պարզէ առաջի նոցա զցուցակ վաճա-  
ռաց իւրոց՝ մոմոյ, փղոսկրի ևայլն: Խնդութեամբ կախուն Ան-  
գղիացիք զիայցն. և զկնի սակարկութեան հրաման տայ Գրի-  
գոր՝ և հարիւրաւոր անձինք շալակեալ զմեծամեծ ժանիս փղոց  
բերեն՝ ի վաճառատեղին նոցա, ուր հանեալ զթագուցեալն  
սուր իւրեանց՝ ի ժամնեացն տիրապետեն ամրոցին և հիմնայա-  
տակ առնեն, որով և գլուխն նէգրէջայ կայ մնայ առ Բրմայս  
ցայսօր ժամանակի: Զայնու ժամանակաւ դեռ՝ ի տղայութեան  
էր կարողութիւն Ըսկերութեան Արմելեան Հնդկաց, այն ինչ  
Բրմայից զօրացեալ յոյժ. որոյ վասն ոչ կարացին Անգղիացիք  
առնուլ զվրէժ մնասուն մանաւանդ զի չունէին և զարդարացի  
իրաւունս:

«Մեծարի Գրիգոր փառօք և պատուով վասն հաւատարիմ  
ծառայութեանն, ոչ միայն տիտղոսիւր Վէզրի և պաշտօնատա-  
րութեամբ որ ցայն ժամանակ չէր տուեալ ումեք օտտրականի,  
այլև կալուածովք բովանդակ քաղաքին Սընինայ մինչև՝ ի վաղ-  
ճան կենացն: Զկնի որոյ ձեռն արկեալ՝ ի կառուցումն եկեղեց-  
ւոյն Ռանգունայ՝ ի գոյից անտի իւրոց, և կեցեալ փառօք  
ցվաղճան կենացն, թողեալ է զնետ իւր զմի միայն սերունդ՝ ի  
գտեր կողմանէ՝ Գրիգոր Սարգիս Մանուկ, թոռն Աղազարի  
Յակոբեան՝ երեւելի վաճառականի,՝ ի մօր կողմանէ»:

Պարոն Թագէսու Խաչիկ Աւետումն այսչափ միայն տեղե-  
կութիւն է տալիս:

Հ. Սանգերմանօ անունով կաթոլիկ մի հոգեորական (ան-  
շուշտ իտալացի), որ 1783-ին Բրմաստան է եկել իբրև միսսիօ-  
նար, իր գրած «Բրմայ ազգի Տէրութեան նկարագրութիւն»  
անունով գրքում (որ անգլիերէնի թարգմանուած տպուել է  
Հոռվմում 1833-ին) գրում է հայերի մասին, որ 1721-ին, երբ  
երկու կաթոլիկ հոգեորականներ են ուղարկում Բրմաստանայ  
կաթոլիկ ժողովրդոց հովուելու (որոնցից առաջ Բրմաստանում եր-  
կու փորտուզէ տգէտ քահանաներ են լինում, մէկը Սիրիեմի մէջ  
և միւսն Աւա թագաւորանիստ քաղաքում), երբ այն երկու կա-  
թոլիկ նոր հոգեորականները գալիս են Աւա, այնաեղի թագա-  
ւորը հետները լաւ է ընթանում աւելացնելով թէ, Հայերից էլ  
օգնութիւն են ստանում: Նաև յիշում է որ Սիրիեմի կաթոլիկաց  
եկեղեցին (որոյ երեք կողմի պարիսպները դեռ կինում են)  
Բրմաստանայ առաջին աղիւսաշէն շինութիւնն է լինում, որոյ

շինութեանը նպաստում են մի հայ և իր կինը (որք զաւակից գուրկ են լինում) և անոնները մի լատիներէն արձանագրութեան մէջ, որ 1750-ի թուականն ունի, յիշուած է Նիկողայոս Ագուիլար և Մարգարիտ:

Արդ թէ պարոն Թաղէոսի և սոյն Հ. Սանգերմանօսի գլուխածներից և թէ Սիրիեմից գուրս եկած տապանաքարերի յիշատակութիւններից կարողանում ենք իմանալ, որ 1721-ին հայեր եղել են Բրմաստանում հաստատուած, հետեւաբար տարիներ առաջ պիտի սկսած լինեն գաղթել, ուստի կարող ենք այն եղրակացութեան գալ, որ երկու գար աւել է, ինչ հայը սկսել է գաղթել Բրմաստան. իսկ եթէ էլ աւելի առաջ են սկսել գաղթել, գուցէ կարելի կը լինէր գտնել յիշատակութիւններ պ. Թաղէոսի յիշած վէզիր Դրիգորի Ռանգունում շինած մեր եկեղեցւոյ տուսարներում կամ թղթերում, եթէ զոհ չերթային անգլիացոց Ռանգունայ տիրապետելու պատերազմին քանզի, անգլիացին Ռանգունն է տիրել, իսկ մեր Ռանգունայ հին եկեղեցւոյ շինութիւնն իր պարունակութեամբ զոհ է գացել պատերազմին:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ քահ. Ս. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ

(Կը շաբունակուի)

# ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ <sup>\*)</sup>

## XVII

Ա ա ն ի ք ա զ ա բ ը

Վանի բնակիչները.—Թիւրքերը. թիւրքերի յարաքերութիւնները հայերի հետ  
Քրդերը. Գնչունները.—բնակավայրը, թիւը, նկարագիրն ու զբաղումները:

Վանեցիների զբաղումների մասին մեր խօսքը վերջացնելուց  
յետույ, կամենում ենք որոշել վանեցիների ընդհանուր թիւը և  
ապա մամնաւորել մեր խօսքը հայերի մասին, իսկ նախքան  
հայերի մասին խօսելը անհրաժեշտ ենք համարում միքանի խօսք  
ասել թիւրքերի և միւս տարրերի մասին:

Վան քաղաքի ամբողջ աղբաբնակութեան թիւը համառում  
է 27,000-ի, իսկ եթէ արուարձաններն էլ միասին՝ հաշուենք,  
կ'ունենանք մոտ 50,000 թիւ): Թիւրքերի թիւ համառում է  
11000-ի, հայերինը՝ 15,000, իսկ 1,000<sup>ա</sup> միւս տարրերն—գնչու,  
քիւրդ ևայլն:

Թիւրքերի <sup>1/9</sup> մասը ապրում է Քաղաքամիջում, իսկ մնա-  
ցած մասը Այգեստանի Շամիրամայ թաղ, Կոր տար, Հայկա-  
վանք, ո. Յակոր, Նորաշեն կոչուած մասերում, տեղափեղ էլ հա-  
յերի թաղերում:

Թիւրքերը, ինչպէս յայտնի է, դաւանութեամբ սիւննի են,  
խօսում են օսմաններէն կամ թիւրքերէն լեզուի տեղական գաւ-  
ւառաբարբառով:

Վանեցի թիւրքերը վաճառականութեամբ կամ արհեստնե-  
րով չեն զբաղւում. շատ թէ քիչ կրթուած դասակարգը կառա-  
վարութեան գործերում պաշտօն է ձեռք բերում, մի մասը թէ  
քաղաքում և թէ գիւղերում սեփական կալուածներ ունենալով  
զբաղւում է երկարագործութեամբ և անասնապահութեամբ: Ա-  
ռևսուրի մէջ կան նպարավաճառութեամբ զբաղւող հասարակ

\*) Տիւ «Մուլմ», № 8.

խանութպաններ, վերջերս ոմանք էլ սկսած են մանրավաճառութեամբ զբաղուել: Մսավաճառութիւն, բաղչէպանութիւն, պախէզպանութիւն թիւրքերի սիրելի զբաղումներն են և գրեթէ միայն նրանց ձեռքումն են գտնուում այդ զբաղումները:

Եթէ այս ու այն պարապումներով զբաղուողների համեմատական ցուցակ կազմելու լինենք, պիտի ունենանք մօտաւորապէս հետեւեալք.

Պետական պաշտօն վարողները կազմում են  $23\%$

Կալուածատէրեր (տուն, խանութ, այգի, արտ,

անսասուն ունեցողներ) » .  $35\%$

Նպարավաճառներ . . . » .  $12\%$

Մսագործներ . . . » .  $8\%$

Բաղչէպաններ և պախէզպաններ (բանջարանոց

և սեխաստան մշակողներ) » .  $13\%$

Պանազան արհեստներով և զբաղումներով

պարապողները » .  $9\%$

Տնտեսապէս միջակ վիճակ ունին, կալուածատէրերն ու պաշտօնեանները բաւական բարեկեցիկ, իսկ միւս գործերով զբաղուողները շատ էլ նախանձելի վիճակ չունին, կայ նաև աղքատների կամ թշուառների մի մեծ դասակարգ: Առաջին խումբին պատկանող որևէ ընտանիք տարեկան ելևմուտք ունենում է  $30-100$  լիրա, իսկ վերջին դասակարգին պատկանող ընտանիքը՝  $5-8$  լիրա: Թէև ջանքեր լինում են աւելի բարեկեցիկ, վայելուչ և ճաշակաւոր կեանք վարելու համար, սակայն այնքան չեն յաջողում, տնտեսագէտ չեն, ծախսեր առում են առանց հաշուի:

Ի՞նչպէս յիշեցինք դէպի կրթութիւն շատ սէր չունին, թէև կառավարութիւնը աշխատում է ուսման կարենութիւնն զգացնել տալ ժողովրդին, բայց յաջողութիւնը դեռ շատ չնչին է: Թէև իւրաքանչիւր թաղի մէջ կամ մզկիթներին կից կամ թաղային կամ ծխական տարրական վարժարաններ, բայց բոլորովին անխնամ վիճակի մէջ են: Այդ կարգի դպրոցներում հաւաքուած մանուկների խնամքը յանձնուում է մէկ մոլլայի կամ խոջայի, որ մութ ու խոնաւ խցիկներում ծալապատիկ նստող իր աշակերտներին տշխատում է սովորեցնել դուրանի ու յայրենի լեզուի պարզ ընթերցում և պարզ հաշիւ:

Ընդամենը 9 հատ դպրոց ունեն թիւրքերը (Յ-ը Քաղաքամիջում, միւսները Այգեստանում), որոնցից մէկի մէջ—Իսրէէնդէր-փաշա-մէղրէսէսի կոչուած դպրոցում—յատկապէս կըրօնաւորներ են պատրաստում: Այս բոլոր դպրոցների մէջ հաւաքուած են ընդամենը— $1000$ -ի չափ մանչ աշակերտներ:

1901 թուին բացուեցաւ վանի թրքուհիների համար աղջկանց վարժարան, ուր պաշտօնավարում է մի հայ վարժուհի. աշակերտուհիների թիւը գեռն շատ սահմանափակ է. ուսանելի առարկաներն են մայրենի լեզուի ընթերցում, ուսանողուհիները մասնաւորապէս գորգագործութեան արհեստը պիտի սովորին: Յարատեսութիւն կ'ունենայ այդ դպրոցը թէ ոչ, այդ ապագան ցոյց կուտայ:

Ութսունական թուականից սկսած վանում գոյութիւն ունի րիւշտիէ էսքէրիէ մէքթէրի—զինուորական միջնակարգ վարժարան—ունի միջնակարգ նախակրթութեան 6-ամիայ շրջան, աշակերտուհիների թիւն է 200, պաշտօնեաների թիւը 8: Տեսուչը և ուսուցիչներից 4 հոգի զինուորական պաշտօնեաներ են, իսկ մուացած 3-ը կրօնականներ: Ուսանելի առարկաներն են՝ մայրենի լեզուն, կրօն, ֆրանսերէն, թուարանութիւն, ագգային պատմութիւն, աշխարհագրութիւն, գեղագրութիւն, գլոծագրութիւն, երաժշտութիւն: Մինչև 1900 թիւը դպրոցը սեփական շէնք չունէր, իսկ յիշեալ թուին ժողովրդական հանգանակութեամբ մի գեղեցիկ շէնք հիմնուեցաւ: Դպրոցի տարեկան ծախքն ամբողջապէս կառավարութիւնն է վճարում: Դըպրոցի շրջանաւարտները իրանց ձեռքում աւարտման վկայական ունենալով իրաւունք ունին էրզրումի նոյնանուն դպրոցը մըտնելու ուսումն ստանալու, իսկ այստեղից էլ Պոլսի բարձրագոյն ընթացքն շարունակելու: Բարձրագոյն դասընթացքի շրջանաւարտները զինուորական պաշտօնեաներ են դառնում:

Վանեցի թիւրքերը կրօնասէր են, տառացի կերպով պահպանում են նախական աւանդութիւններ, բարեպաշտութեամբ կատարում են իրանց կրօնական պարտականութիւնները: Սակայն նշանները ցոյց են տալիս որ կամաց-կամաց կրօնական զեղծումներ թիւրքերի մէջն էլ սպրդում են: Ինչպէս յայտնի է Մեծ Խալիֆա Մուհամմէդը խիստ կերպով արգելած է ոգելից խմիչքների գործածութիւնն, ամբողջ 13 դար մուտուլմաները սրբութեամբ պահել են այդ պատուէրը, անշուշտ մեծամեծ օգուտներ և բարիք վայելելով, իսկ այժմ ինչպէս ուրիշ տեղերի նոյնպէս և վանի թիւրքերի մէջ բաւական ընդհանրացել է խմիչքը գործածելու մոլութիւնը, թէև անցած տարում իրատէի սէնիէ-ովլ - կայսերական հրովարտակով - խիստ պատուէրներ տրուեցան խմիչք գործածողներին, բայց և այնպէս չարիքն արմատախիլ անել բաւական զժուար է երևում, մոլութիւնները նախ զարդացած համարուած դասակարգի մէջն են մտնում և այնտեղից անցնում հասարակութեան մէջ:

Վանի թիւրքերը համեմատելով իրանց օտար քաղաքացի Սեպտեմբեր, 1904.

ազգակիցների հետ բնաւորութեամբ մեղմ, քաղցրաբարոյ և միամիտ են, համերաշխութեան գաղափարը մարմնացած է նըրանց մէջ, մի գեղեցիկ սովորութիւն ունին, մանաւանդ ձմեռուան շրջանի մէջ—գիշերները իւրաքանչիւր թաղամասում հաւաքումներ են տեղի ունենում, որովհետեւ հասարակական ժողովարաններ—կլուբներ չունեն, այսօր մէկի՝ վաղը միւսի տունն են հաւաքում, գլխաւորաբար չափահաս մարդիկ, այստեղ խօսում են օրուայ խնդիրների, լուրերի մասին, խորհրդակցում են հասարակական բնաւորութիւն ունեցող հարցերի մասին, արծարծում են զանազան հարցեր ու խնդիրներ և լուծում են. շատ անգամ այս հաւաքումների մէջ եղած որոշումներ անմիջապէս պաշտօնական վճռի են փոխում: Վանում միայն թիւրքերն ունին այս գեղեցիկ սովորութիւնը, որով թէ ժամանցներ են ունենում, թէ զուարձանում են և թէ հասարակութեան մէջ օրուայ հարց եղող խնդիրներին ծանօթանում են. ոչ մի անկարգութիւն տեղի չի ունենում այս հաւաքումների մէջ:

Թէև բազմակնութիւն թոյլատրուած է թիւրքերին, բայց վանում կարելի է մատի վրայ համրել մէկից աւելի կին պահող թիւրքերին, անշուշտ տնտեսական պայմաններն էլ արգելք են լինում միքանի կին պահելու: Կնթողութիւն էլ շատ քիչ է պատահում, բայց անբարոյականութիւն, ուրիշ խօսքով գաղտնի ապօրինի կենակցութիւն բաւական տարածուած է վանեցի թիւրքերի մանաւանդ երիտասարդների մէջ, օրէնքը թէև արգելում է և կառավարութիւնն էլ հետամուտ է այդ գեղծման մէջ գտնուողներին ձեռք բերելու և պատիժներ տալու, բայց և այնպէս ճար չի լինում, որովհետեւ թիւրք տարրը վաւաշու է և իր կրքերի մէջ անսանձ: Խաղամոլութիւնն էլ բաւական ընդհանրացած մոլութիւնն է գարձել: Որովհետեւ թիւրքերը չունենալով կանոնաւոր զրադում տարուայ մեծ մասը պարապ են անց կացնում, այդ պատճառով իրանց պարապ ժամերի մեծ մասն էլ անց են կացնում կաղինօններում, կանվէններում (խաղատուն), այնտեղ թէ զուարձանալու և թէ միմիանցից փող շորթելու համար կումար են խաղում: Թիշ թիւ չեն կազմում այսպիսի ընտանիքի հայրեր, որոնք իրանց տարուայ ամբողջ վաստակը ձմեռուայ ընթացքում խաղով կորցնում են, իրանց ընտանիքն անօրինակ թշուառութեան զո՞ն գարձնելով:

Վանեցի թիւրքերի յարաբերութիւնը իրանց հայրենակից հայերի հետ ներկայումս գոհացուցիչ է, աւելի գոհացուցիչ պիտի լինէք եթէ տեղի չունենար 96 թուի անախորժ դէպքը: Թիւրքերը կատարելապէս համոզուած են որ առանց հայերի

իրանոք ապրել չեն կարող, մանաւանդ զարգացած դասակարգը գնահատում է հայերի աշխատասիրութիւնը...

Վանում կան 40 տան չափ քիւրդեր, որոնք զանազան գիւղերից գաղթելով քաղաք, իրանց բնակութիւն հաստատել են քաղաքի զանազան մասերում և մանաւանդ Շամիրամ կոչուած թիւրքական թաղում: Սրանցից շատերը արդէն ժամանակի ընթացքում թողնելով քրդական կոպիտ վարքուրարը թիւրքակել են, որեկներն էլ հետզհետէ միննոյն ձևով քաղաքակրթում են.

30 տան չափ էլ գնչուներ (մորըմ, բոշա) կան Վանում, որոնք թէն թափառաշրջիկ կեանք են վարում, բայց վերջին տարիներումս բաւական հողեր և կալուածներ ձեռք բերին և բնակութիւն հաստատեցին Քաղաքամիջի պարիսպներից դուրս, դէպ արևելք Այգեստանի արևմտեան ծայր կազմող «Փշով փողան» կոչուած փողոցի մէջ: Ունին սեփական լեզու, խօսում են նաև թիւրքերէն, հայերէն և քիւրդերէն, ամառները թափառում են նահանգի զանազան մասերը, զբաղւում են նուագածութեամբ, երաժշտութեամբ, բանաստեղծական տաղանդ էլ ունին, Վանի թիւրքերէն ժողովրդական երգերի հեղինակները սրանք են, մաղագործութեամբ էլ զբաղւում են, կախարդութիւններ և հմայութիւններ են անում, առանձին և մասնագիտական սէր ունին դէսի գողութիւն: Իրանց կեանքի ներքին պայմանները միայն իրանց ծանօթ է:

Աննշան թուով պարսիկներ էլ կան Վանում, որոնց մեծամասնութիւնը պանդուխտ է, որոնց մասին խօսել անկարևոր է. ուրիշ օտարազգիներից կան Վանում անհատներ, որոնք պաշտօնով միայն Վանում հաստատուած են:

### XVIII

Հայերը.—Թիւը. գաղթականական հոսանքը գէտի ներս ու գուրս. զաղթականների վիճակը Վանում. վանեցիների զրադաւմը, տոկումութիւն և սէր արհեստների և վաճառականութեան մէջ, անտեսական վիճակը. համեմատութիւն ուրիշ քաղաքացիների հետ. աննպաստ պայմաններ և աղջուներ (1876-ի հրդեհը. 1878-79-ի սովը. 1896-ի աղէտը. 1897-99-ի սովը). բերդաբերութիւն հայրենիքում. վիճուրական տուրք. ալբրտա 80-ական թուականներին և ներկարում. տպրուստի մէջին վինը ներկայումս. միքանի կինստական պիտոյքների տյումս. տպրուստի մէջին վինը ներկայումս. դրամական տաղնատպ. ընդհանուր պացոյց. ելեմուտք. անհաւասարակութիւն. դրամական տաղնատպ. ընդհանուր կրիզիս. վաշխառութիւն. անտեսականի համեմատ դասակարգերը. տարեկան ելք իւրաքանչիւր դասակարգի. վանեցու անտեսագիտութիւն. գործող շատ՝ զոր-

ծը քիչ:

Ինչպէս ամբողջ նագանգի նոյնպէս և քաղաքի բնակիչների մէջ հայերը մեծամասնութիւն են կազմում: Քաղաքում

հայերի թիւը հասնում է 15,000-ի: Այս թիւը սակայն փոփոխական և ելևէջների ենթակայ է, որովհեակ կայ մէկ հոսանք որ անակնկալ երբեմն պակսեցնում է հայերի թիւը, երբեմն շատացնում է, գաղթականութեան հոսանքն է դա: Գաղթականութիւն Վանից դէպի օտար քաղաքներ—գաղթականութիւն նահանգի զանազան մասերից դէպի քաղաք, առաջինը պակսեցը նում, իսկ երկրորդը մեծացնում է հայերի թիւը քաղաքում: Միասմի յիշել այստեղ թէ որ թուերին հայերը քաղաքից գաղթել են դէպի դուրսերը մեզ շատ հեռուն կը տանի, յիշենք միայն վերջին գաղթականութեան ժամանակը. այս շրջանը սկսւում է 1896 թուից և շարունակում է մինչև այժմ, թէև հիմա համեմատաբար շատ չնշին թիւ են կազմում գաղթողները, բայց և այնպէս իրաւունք ունենք ասելու թէ այդ հոսանքը դեռ կայ, բայց աւելի սաստկացաւ 1895 թուից սկսած: Սյժու կան բազմաթիւ գիւղացի գաղթականներ, որոնք քաղաքում տուն, այգի, կալուած ունեն. զբաղւում են վաճառականութեամբ և արհեստներով: Գաղթականների մէջ մեծ թիւ են կազմում շատախցիներ, տնեցիներ, մոկացիներ, սպարկերացիները և քաղաքի շուրջը գտնուող գիւղացիներն ինչպէս նաև աղբակեցիները: Մրանք իրանց տուն-տեղ, մալ ու մուլք թողնելով երբ մտնում են քաղաք յանձն են առնում ամեն տեսակ նեղութիւններ, անկարողները մուրում են, կարողները ծառայութեան մտնում, սարակութիւն են անում (այսինքն գարնան և ամրան ընթացքում այգի են փորում, ցորեն, խոտ են բաղում), ինայողութեամբ հետզհետէ իրանց վիճակը բարոքում են, կամաց-կամաց առաջ են գնում և սեփական կալուածներ ու գործ են ձեռք բերում: Եներկայ բնակչութեան  $15^{\circ}/_{\circ}$  կազմում են 1895 թուից սկսած գաղթողները. եթէ պատելու լինենք հայաբնակ թաղերը, իւրաքանչիւր քայլափոխին պիտի հանգիպինք գաղթականների, որոնք իբրև տնուոր (վարձկալ) մնում են այս ու այն հայի տան մէջ. իրանց նստած տեղերի համար վարձ չեն տալիս, կամ բոլորովին ձրի են նստում տան մէջ կամ վարձի փոխարէն երբեմն ծառայութիւն են անում (օր. ձմեռը տանտիբով կարի ձիւնն են սրբում, հացն են թխում տարին 8—10 անդամ հայլն): Գաղթականների զաւակներին էլ

Դէպի դուրս գաղթողների տեղն են բռնում և աւելի մեծ թիւ են կազմում դէպի ներս գաղթողները: Այս հոսանքը վազուց կայ, բայց աւելի սաստկացաւ 1895 թուից սկսած: Սյժու կան բազմաթիւ գիւղացի գաղթականներ, որոնք քաղաքում տուն, այգի, կալուած ունեն. զբաղւում են վաճառականութեամբ և արհեստներով: Գաղթականների մէջ մեծ թիւ են կազմում շատախցիներ, տնեցիներ, մոկացիներ, սպարկերացիները և քաղաքի շուրջը գտնուող գիւղացիներն ինչպէս նաև աղբակեցիները: Մրանք իրանց տուն-տեղ, մալ ու մուլք թողնելով երբ մտնում են քաղաք յանձն են առնում ամեն տեսակ նեղութիւններ, անկարողները մուրում են, կարողները ծառայութեան մտնում, սարակութիւն են անում (այսինքն գարնան և ամրան ընթացքում այգի են փորում, ցորեն, խոտ են բաղում), ինայողութեամբ հետզհետէ իրանց վիճակը բարոքում են, կամաց-կամաց առաջ են գնում և սեփական կալուածներ ու գործ են ձեռք բերում: Եներկայ բնակչութեան  $15^{\circ}/_{\circ}$  կազմում են 1895 թուից սկսած գաղթողները. եթէ պատելու լինենք հայաբնակ թաղերը, իւրաքանչիւր քայլափոխին պիտի հանգիպինք գաղթականների, որոնք իբրև տնուոր (վարձկալ) մնում են այս ու այն հայի տան մէջ. իրանց նստած տեղերի համար վարձ չեն տալիս, կամ բոլորովին ձրի են նստում տան մէջ կամ վարձի փոխարէն երբեմն ծառայութիւն են անում (օր. ձմեռը տանտիբով կարի ձիւնն են սրբում, հացն են թխում տարին 8—10 անդամ հայլն): Գաղթականների զաւակներին էլ

տեղական դպրոցներում ձրի ուսում է տրուում: Որևէ գաղթական առառաւելին 15 տարուայ ընթացքում քաղաքացի է դառնուում:

Վանեցի հայերը զբաղւում են վաճառականութեամբ, առևտուրով, արհեստներով և այն բոլոր զբաղումներով, որոնք յիշուած են վանեցիների զբաղումների մասին խօսելիս: Արդէն տեսանք թէ թիւրբերը ինչով են զբաղւում, նրանք առևտուրից և արհեստից աւելի սէր ունեն և շահ փնտրում են պետական պաշտօնների և կալուածատիրութեան մէջ, իսկ հայերը այդ ասպարէզներում յաջողութիւն և դիւրութիւն չունենալու պատճառով իրանց նուիրել են առևտուրի և արհեստների:

Չնայած հայերի ջանքին և աշխատասիրութեան իրանց տնտեսական վիճակը շատ վատ է, մանաւանդ եթէ համեմատելու լինենք ուրիշ նահանգական քաղաքների, օր.՝ Կարինի, Կեսարիայի, Սվազի, Խարբերդի և Բիթլիզի հետ, այս քաղաքների բնակիչները վանեցիներից և մասնաւորապէս հայերը Վանի հայերից տնտեսապէս անհամեմատ աւելի բարուոք վիճակ ունեն: Մէկ խօսքով Վանի հայերը ասիսկան Թիւրքիոյ քաղաքներում ապրող հայերից բոլորից էլ ազբատ են. շատ հեռուն չերժանք, վերցնենք Վանի գրացի Բիթլիզ քաղաքի հայերը և նրանց տնտեսական վիճակը համեմատենք Վանի հայերի հետ, ահագին տարբերութիւն կը գտնենք: Բիթլիզում հարիւրներով կարելի է գտնել 50,000 լիրայի կարողութիւն ունեցող հայ վաճառականներ. իսկ Վանում ոչ թէ հարիւր, այլ մէկ հատ էլ չի կարելի գտնել. 20,000 լիրայի կարողութիւն ունեցող էլ չկայ Վանում: Բիթլիզիները ընդհանրապէս հինգ անգամ աւելի բարձր վիճակի մէջ են գտնւում իրանց հարևան վանեցիներից:

Վանեցիների անհամանձելի տնտեսական վիճակի պատճառները շատ են, որոնցից միքանի կարևորագոյնների մասին կանգ առնել անհրաժեշտ ենք համարում:

Ինչպէս ընդհանուր վանեցիների, մասնաւորապէս Վանի հայերի տնտեսական վիճակին ծանր հարուածներ են հասցրել վերջին քառորդ դարում պատահած միքանի աղէտներ և արկածներ: Իր տեղում յիշեցինք 1876 թուի հրդեհը, այդ հրդեհին զոհ գնացող վաճառանիւթերը հայերին էին պատկանում, հարիւր հազարաւոր բուրլիներ մէկ օրուայ մէջ մոխիր դարձան, այդ վէրքը գեռ մինչև հիմա բուժուած չէ: Վանի շուկայի հրդեհը չէր նմանում Բագուի նալթահորերի սովորական հրդեհներին, որոնց հասցրած վնասները միքանի ժամ յետոյ մոռացւում են. Վանի շուկան հայերի սիրտն էր, սիրտը

կոտրուեցաւ, մարմինն արդէն մեռած է: Երկու ապրիլ չէր անցել այդ անոելի հրդեհի վրայ, առա հասնում է և մի ուրիշ պատուհաս, իբրև հետեանք 1877—78-ի արևելեան պատերազմի—վանում տիրում է սուլալի սով, հաց չկայ, եղածի գինն էլ 25 անգամ բարձրացել է. թէն հազիւ 2 տարի տեսեց այդ անոելի սովը, բայց և այնպէս այդ խիստ կարճ շրջանն էլ բաւական էր առանց դրան էր արդէն կմախք դարձած վանեցիներին արիւնաքամ անել:

Սնցնում է հրդեհի վրայ ճիշտ 20 տարին, առա 1896 թուին պատահում է յայտնի արհաւիրքը. այս անգամ վեասուողը շուկան չէր բարերախտաբար տահմ թէ դժբախտաբար, այլ տներն էին որ վառում և կողոպտում, իսկ աշխատող ձեռներն էլ կտրատում էին. 15 օրուայ ընթացքում հայերի բնակարանների միծ մասը աւերակ և ամայի դարձան և 1000-ից աւելի աշխատողներ հողի տակ մտան, իսկ երկու տարի յետոյ առաջին սովից 20 տարի յետոյ իբրև հետևանք նախորդ տարում պատահող անցքերի կրկնուեցաւ սովը. այս անգամ թէն առաջինի չափ չբարձրացաւ, բայց աւելի աղետալի դարձաւ, որովհետև 1878-ի սովի ժամանակ փողը տուատ էր վանում, ցորենն էլ շատ թէ քիչ կարելի էր ձեռք բերել, իսկ այս անգամ թէ փող չկար և թէ ցորեն, այս սովը պատահեցաւ այն ժամանակ, երբ երկրագործի եզն ու գոմէշը խլուած էին իր ձեռքից, երբ պոլսեցի հայ պանդուխտները փոխանակ օգնութեան ձեռք կարկառելու իրանց ընտանիքներին (ինչպէս արել էին նախորդ սովի ժամանակ)՝ մերկ ու ջլուտ հայերենիք էին գառնում իրանց ընտանիքի բեռք աւելի ծանրացնելու: Այս անգամ և՛ հացի, և՛ փողի, և՛ վաստակի, և՛ աշխատաւորի սով էր, թալանից, հրդեհից ազատուած թափթփութները այս անգամ սովը տարաւ: Հազարաւոր տներ ծախեցին իրանց ամենաանհրաժեշտ կանկարասիներ (անկողին), ումանք իրանց տներն են ծախում, շատ նշանաւոր տների անգամները մուրացկանի տոպրուկը կախում են իրանց ուսից, աւելի շատերը թողնում են իրանց տուն ու տեղը և հազար ու մի նեղութիւններով փախչում են երկրից դուրս «փշուր մը խաց» ճարելու համար, մի խոշոր խումբ էլ օրերով, շաբաթներով խոտ, արմատ, ուտելոց յետոյ դաւանափոխութեան է դիմում կաթոլիկ քարոզիչների գութը շարժելու և օգնութիւն ստանալու նպատակով:

Հայերի տնտեսական վիճակի վրայ միծ ազգեցութիւն աւրաւ այն կարգադրութիւնը, որի համաձայն վանեցիները Պոլիս չեն կարող երթալ, իսկ որովհետև բացի Պոլսից ուրիշ որիէ քաղաք չկայ նահանդներում, ուր կարելի լինի գործ գտնել և

փող տւելացնել, այդ պատճառով էլ վանեցի հայերը իրանց ծննդավայրում եղած միջոցներով բաւականանալու պարտաւորուած են: Մինչև 1895 թիւը ամեն տարի կարելի էր Պոլսում հաշուել մօտ 7,000-ի չափ պանդուխտ հայ վանեցիներ քաղաքացի և գիւղացի: Պանդիստութեան էին զնում նրանք, որոնք հայրենիքում շահաւոր գործ չէին կարող գտնել, նրանք հայրենիքից հեռանալով պանդիստավայրում հաշտուում էին իրանց բախտի հետ և ամեն տեսակ գործի ձեռնարկում էին պարապ չմնալու համար. իսկ հայրենիքում մնացողներն էլ բաւական արդիւսաւոր գործեր և գոհանալու չափ շահի աղբիւրներ էին կարողանում ձեռք բերել: Պոլսում գտնուող վանեցի պանդուխտները տարեկան 80,000 լիրա (մօտ 700,000 ըուրլի զուտ փող էին փոխադրում Վան, բացի գրանից 4—500 լիրայի էլ զանազան ապրանքներ էին ուղարկում իրանց ընտանիքներին, որով տարեկան մօտ 800,000 ըուրլի փող էր մանում Վան և միծ ազդեցութիւն էր ունենում Վանի աղքատիկ ելեմտացոյցի վրայ, իսկ այժմ գրեթէ բոլովին դադարել է այդ աղբիւրը, Կովկաս, Ամերիկա, Բուլղարիա և ուրիշ զանազան քաղաքներում գտնուող պանդուխտները հաղիւ թէ տարեկան 5000 լիրա փոխադրեն Վան: Միւս կողմից՝ Վանում գործը չի կարող բաւականացնել աշխատողներին: Վանում աշխատելու ընդունակութիւն ունեցողների 70% ը իր օրական աշխատութեան իրը վարձ ստանում է 2—3 դուրուշ (16—24 կոպէկ) կամ տարեկան ստառաւելն 8—10 լիրա, և այս գումարով որեէ ընտանիքի հայր պիտի պահէ 5—7 անդամներից բազկացած տունը:

Զինուարական տուրքն էլ բաւական ծանր է վանեցի հայերի համար. իր տեղում տեսանք թէ վանեցի հայերը ինչ տեսսակ և որքան տուրք պարտաւոր են վճարել կառավարութեան, սակայն այդ օրէնքը միայն վանեցիների համար չէ, այլ ամբողջ թիւրքահպատակների, որով վանեցի հայը նոյնքան զինուուրական տուրք պէտք է տայ, որքան իզմիրցի, կեսարացի կամ ըրուսացի հայը. ինարէկ՝ կեսարացու համար 40 դուրուշ զինուուրական տուրք տալ շատ հեշտ է, իսկ վանեցուն ոչ: Իզմիրցի հայը իր վաստակի  $\frac{1}{150}$  մասն է տալիս իրը զինուուրական տուրք, իսկ վանեցին  $\frac{1}{20}$  մասը:

Վանեցի հայի ապրելու ներկայ ձեզ նոյնպէս ազդում է տնտեսական վիճակի վրայ և հետզհետէ աղքատացնում է նըրան: Վանեցին ներկայում մուտքից աւելի ելք է ունենում: Օր՝ մի ընտանիք որ ունի 20 լիրայի մուտք, 20—25 և նոյն իսկ 30 լիրայի ելք է ունենում: Այդպէս չէր առաջ, վանեցին

իր տունը կանոնաւոր կառավարելուց յետոյ տարեկան մի խոշորիկ գումար էլ աւելացնելու փոխարէն պարտք է աւելացնում, բայց և այնպէս չի կարող տունը կանոնաւոր կառավարել։ Դրա պատճառը հասկանալի պիտի դառնայ եթէ համեմատենք վանեցու ներկայումս և անցեալում ունեցած ապրելու ձեւ։

Վերցնենք օր. 80-ական թուականները և համեմատենք ներկայի հետ։ Մինչև 80-ական թուականները վանեցին գործածում էր տեղական շաղվար (որ պատրաստում էր բրդից), սպիտակեղինները պատրաստում էր տեղական կտաւից, հազնում էր իշլիկ և զպուն մանխսայից պատրաստուած, մահուդից էլ սալթա կամ սաքօ (պայլտօ) էր հագնում, իբրև ոտնաման գործածում էր տեղական սոլ, որ կարելի էր ձեռք բերել ընդամենը 80—150 զուրուշով, և հագնում էր 2—3 տարի (սաքօ՝ 8—10 տարի), ծակուած կամ մաշուած մասերն էլ կարկասաններով շարունակ նորոգում էր. իսկ այժմ սրանց փոխարէն հազնում է կրոպական թանդ ապրանքներից պատրաստուած կոստիւմ, ճերմակեղինները պատրաստում է կրոպական բատիսկայից կամ առնուազն ամերիկայից և տեղական չիթ ու շիլայի փոխարէն գործածում է երոպական չիթ, գոկ և այլն, սոլի փոխարէն գործածում է մուճակ, ամառուայ ու ձմեռուայ սեղոններին յարմարացնում է իր հագուստները, և այս բոլորը ձեռք է բերուում 3—400 զուրուշով և մէկ տարի էլ չի կարող գործածել այս հագուստները, որովհետև չեն դիմանայ: Տան շէնքի և կահաւութեան մասին նոյնը կարելի է ասել. մինչև յիշեալ թուականները վանեցինները գոհանում էին 4—5 կտորից բաղկացած միայարկ բնակարանով, որի կահակարասինները շատ պարզ, նահապետական էին, գեղեցկութիւնից աւելի դիմացկունութիւն ունէին. մէկ երկու կտոր կապերտ կամ թաղիք, մի քանի հատ բարձ ու մինդար (բազմոց), ահա այդ շրջանի կահաւութիւնը. մէկ բարձ կամ մինդար մինչև 100 տարի էլ կարող է դիմանալ. միայն 3—4 տարին մի անգամ նրանց երկսի չիթը պէտք էր փոխել. իսկ այժմ չըրանց փոխարինում են երոպական ձեր աթոռներ, թիկնաթոռներ, կանափէններ, դիւաններ, սեղաններ և ուրիշ բազմաթիւ զարդեր, որոնք փչանալու ենթակայ լինելով՝ 1—2 տարին անգամ կամ պէտք է վերանորոգուեն կամ նորով փոխարինուեն, չնայելով որ 3—4 անգամ աւելի սուլ գնուվ են ձեռք բերուում, քան բարձ ու մինդարներ։ Յիշեալ շրջանի մէջ իբրև խմիչք գործածութեան մէջ էին գինի և օղի, այժմ աւելի միծ քանակութեամբ են գործածուած սրանք, իսկ սրանց վրայ աւելացել է նաև թէյի, սուրճի, օշա-

բակների և կաթի գործածութիւնը։ Կերակրի տեսակներն էլ բարդուած են, մնունդին այժմ աւելի ուշադրութիւն են դարձնում։ Աղջկայ հարմանալու պայմաններն էլ հետզհետևէ բարդաւում են. մինչև յիշեալ թուերը աղջիկը հօր տնից հեռանում էր չնչին օժիտ տանելով իր հետ, իսկ այժմ այդ օժիտի խընդիրը մեծ մտահոգութիւն է պատճառում ծնողներին, երկպատիկ, քառապատիկ ծախս է լինում հարսնացու աղջկայ վրայ։ Ծնողները այժմ պարտաւոր են մի կարեւոր գումար էլ յատկացնել իրանց թէ մասն և թէ աղջիկ զաւակների գաստիարակութեան համար, այս ծախսիցն էլ ազատ էին ծնողները մինչև յիշեալ թիւը։

Կարծեմ շատ թէ քիչ պարզուեցաւ ընթերցողի համար թէ այժմ վանսեցին մըրքան փոխել է իր ապրելու ձեզ և պարտաւորուած է առաջուանից 4—5 անգամ աւելի ծախս անել բայց մը տեղից պիտի հայթհայթի. այդ ծախքի չափ վաստակ լինէր, իհարկէ որևէ գժուարութիւն չպիտի ծագէր. բայց ինդիրն էլ դրանումն է, որ վաստակ ընդհակառակն պակասել է, 80-ական թուականներին որևէ ընտանիքի հայր 10 լիրայով օրինաւոր կերպով իր ընտանիքը կառավարելուց յետոյ նոյնքան փող էր աւելացնում կամ կալուած էր գնում, իսկ այժմ 30 լիրայով էլ չի կարելի այն ժամանակուայ չափ կանոնաւոր առւն կառավարել, այնինչ տնտեսական շահը 20 ուկուց աւելի չէ։

Անշուշտ հետաքրքիր է իմանալ թէ այժմ ապրուստի գինը ինչպէս է վանում։ Այդ հարցին շատ թէ քիչ գոհացում տալու նպատակով այստեղ զնում եմ միքանի գըլիստար նիւթերի և իրեղինների ցուցակը իրանց առջև նշանակելով միջին արժէքը։

Յորեն—քիլէն արժէ 140—180 դուրսուշ փութը—մօտ 60—75 կոպ. (վերջին սովից յետոյ 1899 և 1900 տարիների առաս բերքի պատճառով ցորենը չափաղանց աժանացաւ, քիլէն 800 դուրսուշից իջաւ 80—100 դր. այժմ փոքր ինչ բարձրացել է և հասել մինչև յիշեալ գումարին). ոչխարի միս ամառուայ շըջանում մինչ ձմեռուան սկիզբը օխան արժէ 2 դուրսուշ—փունտը 4—5 կոպէկ (ձմեռը գիւղի ճանապարհները փակւում են և ոչխար շատ քիչ է մորթւում քաղաքի մէջ և ամառուայ կրկին գնովն է ծախւում. վանեցի հայերը չկարողանալով այդ գնով միս ուտել, կովի միս են գործածում ձմեռը, կամ ոմանք աշնան վերջերը միսը աղում են և պահում են ձմեռուան մէջ ուտում են). կովի միս ձմեռուայ ընթացքում օխան 2—3 դ.—փունտ 5—7 կոպ. իւղ—օխան՝ 10—11 դ.—փունտ—20—22 կոպ. պանիր՝ յու-

նիսի մէջ՝ լիտր՝ 14—18 դ.—փութը—2—2<sup>1</sup>/<sub>4</sub> լուբլի, ձմեռուայ ընթացքում օխան 2<sup>1</sup>/<sub>2</sub>—3 դ. փունտը—10—12 կոպ. (վանեցիշները որպէսզի ձմեռը թանգ գնով պանիր չգնեն խանութպահներից, յունիսից սկսած երբ գաւառներից գիւղացիները սկըսում են պանիր փոխադրել քաղաք, ամբողջ տարուայ համար որքան որ պէտք է գնում են):

Զու	{ ամառուայ ընթացքում 6—8 հատ 10 փարա կամ 2 կ. { ձմեռուայ » 3—4 » » » »
-----	---

կաթ—զուտ և մաքուր ամեն ժամանակ օխան 1 դ.—1 փունտ—2 կոպ.:

Զուկ (տառելի) 100 հատ—40—50 փարա կամ 8—10 կոպէկ. (100 ձուկը կշռում է 15—20 փունտ, գարնան ժամանակ, մայիս և յունիս ամիսներում այս ձուկը ծախու է գալիս, ամեն տուն հարկաւոր եղած չափով—2—5 փութ միանգամից գնում է աղաջուրի մէջ դնում և ամբողջ տարին դործածում):

Մեղր օխան՝ 8—10 դ.

սուբ (դողաբ) օխան 4—8 դ.

գինի օխան՝ 2 դ. 1 կեղուո—1 ր. 60 կոպ.

օղի » 8—10 դ.

քացախ » 2—3 դ.

կտաւատի ձէթ օխան 2—3 դ.

խոտ մէկ բարդ (30 խուրձ)—25—30 դ.—փութը՝ 10—16 կոպ. (կանաչ ժամանակ խոտի մէկ խուրձը կէս փթից աւելի է կշռում, ձմեռը խոտն էլ է թանգանում. վառելափայտ—չէքին (=32 լտրի), 30—40 դուրուշ փութը՝ 8—12 կոպ. ածուխ—լիտր 3—4 դուրուշ—փութ 40—50 կոպէկ.:

Աղ	{ տեղական՝ կամ ուրիշ խօսքով Զանիկ գիւղ աղբիւրի { աղը լիտրը 6—7 <sup>1</sup> / <sub>2</sub> դր.—փունտը 2 կոպ.
----	---

Խոտ—հատը 1—2 դր.—8—16 կոպ.:

Կանաչեղիններից և բանջարեղիններից՝

սոխ	{ կանաչ սոխ 8—15 դաստա—10 փարա (դաստան կըշ— { սում է 1 <sup>1</sup> / <sub>4</sub> —1 <sup>1</sup> / <sub>5</sub> փունտ, ուրեմն 1—2 ֆ. 1 կոպ.).
-----	--

գլուխ սոխ—լիտր 1<sup>1</sup>/<sub>2</sub>—2<sup>1</sup>/<sub>2</sub> դր.—փութ 22—30 կոպ. կաղամբ—լիտր 1<sup>1</sup>/<sub>4</sub>—1<sup>1</sup>/<sub>2</sub> դր. ճակնդեղ տակ—լիտր 20—30 փարա. շաղգամ—լիտր 20—40 փարա (գլուխ սոխ, կաղամբ, ճակնդեղ և շաղգամ ծախում են աշնան վերջերը, բանջարանոցների բերքերը հաւաքելու ժամանակ, վանեցիները միանգամից գնում են ամբողջ տարին դործածելու համար):

Պառակներից՝

տանձ—օխան 20—30 փարա, ֆունտը՝ 1 1<sup>1</sup>/<sub>2</sub> կոպ.

ինձոր—լիտր 2—3 դրշ.

ծիրան—լիտր 3—4 դրշ.

սալոր—լիտր 2<sup>1</sup>/<sub>2</sub>—3<sup>1</sup>/<sub>2</sub> դրշ.

սեխ—լիտր 2—3 դրշ.

ձմերուկ—1—2<sup>1</sup>/<sub>2</sub> դրշ.

դդում—20—30 փարա

կարտոֆել—1<sup>1</sup>/<sub>2</sub>—2 դրշ.

Անշուշտ հասկանալի է թէ բանջարեղինսերը և թէ պըտուղները ձմեռուան մէջ թանդանում են հազուագիւտ դառնանալու պատճառով։

Մի քանի նմուշ էլ դրսից վան մտնող իրեղնների.

բրինձ—լիտր 24—30 դրշ., ֆութը՝ 4—5 բուբլի.

շաքար—լիտր 24—30 » » » »

թէյ—օխան 25—40 դրշ. ֆունտը՝ 50—80 կոպ.

սուրճ—օխան 8—12 դրշ., » 16—24 »

չամիչ—լիտր 15—24 » ֆութը՝ 2<sup>1</sup>/<sub>2</sub>—4 բուբլի:

Սրանց գինն էլ փոփոխական է, երբեմն աւելի ցածրանում է, երբեմն էլ հակառակն է լինում։

Ահա այս ցուցակի մէջ յիշուածները ինչպէս նաև առհասարակ ամեն բան ներկայումս աւելի սուլ է քան մինչև 80-ական թուականները. մինչև այդ ժամանակները օր՝

գինին՝ օխան արժէր 1<sup>1</sup>/<sub>4</sub>—1<sup>1</sup>/<sub>2</sub> դրշ.—1 ֆութը՝ 1 բուբլի

իւղ՝ » » 6—7 դրշ.

աղ՝ լիտր՝ » 3—4 դրշ.

խոտ՝ բարդը՝ » 15—20 դրշ.՝

Այս համեմատութիւնը ցոյց է տալիս թէ ապրուստի գիւնը ներկայումս աւելի թանգ է քան ութսունական թուականներում։ Վանեցիների տնտեսական վիճակի քայլքայման ամենագլխաւոր պատճառներից մէկն էլ Վանում մտնող և այնտեղից ենորդ գումարների անհաւասարակշռութիւնն է։ Արդէն արտահանութեան և ներածութեան մասին խօսելիս մենք տեսանք թէ գլխաւորաբար 90-ական թուականներից սկսած Վանի նահանգը իր սահմաններից ներս է մտցնում տարեկան մօտ 260,000 օսմ. լիբայի ապրանք և դրա փոխարէն գուրս է ուղարկում 105,000 օսմ. լիբայի ապրանք, ուրեմն տարեկան 155,000 օսմաննեան լիբա վանն իր մագուկից գուրս է հանում. աւելացրէք դրա վրայ նաև այն գումարը, որ վանեցիները հողի տակն են թագցնում կամ մէկ խօսքով անձեռնմընիւնի են պահում։ Վերջերս է մտել այդ հոսանքը Վանում. թէ

հայերը, թէ թիւրքերը և թէ մանաւանդ քրդերը աշխատում են իրանց ձեռք ընկած փողը աւելացնել և պահել ապագայի համար. թէ տարեկան ո՞րքան գումար այս ձեռվ կը պահուի, իհարկէ յայտնի չէ: Իրողութիւնն այս է, որ Վանում տարեցտարի փողը պակսում է: Ո՞րտեղից է ճարում փողը, փողերանոց չունի Վանը, ուրեմն Բնչպէս պէտք է բացատրել այս հանելուկը. ահա դրա բացատրութիւնն է որ խիստ տխուր եզրակացութեան է բերում - Վանը օրէցօր մսանկանում է և իր հոգեվարքին է մօտենում: Վանեցիների ներկայ սերունդը իր պապերից բաւական մեծ քանակութեամբ հողային կալուած, տնային կահկարասիք և դրամական հարստութիւն է ժառանգել. այժմ իր վաստակից աւելի այդ ժառանգութիւնն է իրան կերակրով: Շատերը իրանց տները ծախում են, փողը ուտում են, շատերը արտերը, ոմանք այգին, ոմանք՝ տան այս ու այն աւելորդ (!!) կահկարասիքն: Այս կերպով շատերն են ապրում. բայց մինչև երբ պիտի տեէ այդ, առառաւելն մինչեւ 8—10 տարի. և իրաւի եթէ տնտեսական ներկայ զրութիւնը շարունակուի միջանի տարի էլ, Վանը տնտեսական կատարեալ քայլայման պիտի ենթարկուի. նշաններն արդէն հիմա երևում են. օր.՝ օրէցօր հողային կալուածների արժէքը իջնում է, 90-ական թուականներին այն աբար որի արժէքն էր 100 լիրա, այժմ ծախում է 30 լիրայի, կամ այն տունը, որ արժէքը 200 լիրայի, այժմ կ'արժէ 70—80 լիրա: Վանի տնտեսական վիճակի ջերմաչափը հողային կամ անշարժ կալուածքն է:

Տնտեսական տագնապ ընդհանուր է վանեցիների համար. բայց կան անհատներ, որոնց համար այս տաղնապը ձեռնտու պարագայ է իրանց անխիղճ ոտնձգութիւններն աւելի և աւելի առաջ տանելու համար: Խօսք վաշխառուների մասին չ: Բնական է որ ներկայ տնտեսական անմխիթարական պայմաններում վաշխառուների թիւը պիտի շատանայ և վաշխառութիւնը էլ իր անօրինակ ծայրայեղութեան պիտի յանգի: Արդէն Վանի վաշխառուները առաջուց էլ յայտնի էին իրանց անգթութեամբ. իսկ այժմ ճանաչում եմ այնպիսի վաշխառուներ, որոնք ոչ Աստուած ունին, ոչ խիղճ, ոչ գութ, նրանք անվախ կողոպտում, ծծում, արինաքամ են անում իրանց ճանկ ընկնողին: Պարա հն տալիս 20, 50, 60<sup>0</sup>/օով: Ճիշտ երեք օր առաջ արհեստառոր մի երիտասարդի հետ խօսելիս մտերմաքար յայտնեց ինձ հետևեալ իրողութիւնը. «Զափազանց նելում էի, ամաչում էի զրութիւնս հրապարակի վրայ հանել. դիմեցի ընկերներիցս մէկին և ինդրեցի որ 2 լիրա պարտ տայ ինձ կէս տարի ժամանակով. ընկերս յանձն առաւ օգնել հետևեալ պայ-

մաններով. ա.) 2 լիրայի փոխարէն 3 լիրա արժէքով որևէ իր իրան մօտ գրաւ դնեմ, բ.) լիրային ամսական 5 դուրուշ տուկոս տամ, պարտառորուած ընդունեցի»: Վէպ չէ որ պատմում եմ, այլ իրողութիւն։ Լիրային ամսական 5 դուրուշ տոկոս տալ նշանակում է տարեկան  $60\%$ : Դեռ այդ տոկոսն էլ ոչինչ, գրաւ դրուած իրեղէնները գումարի կրկին արժէքը պիտի ունենան. պարտապանների մեծ մասը չկարողանալով ժամանակին վճարել իր պարտքը՝ գրաւ զրուած իրեղէնները վաշխառուին է մընում. Վանում կարելի է ցոյց տալ հարիւրներով տներ, այդինք, արտեր (կահկարասիներ չեմ ասում—դրանք անհրաժեշտ են), որոնք այս ու այն պարտապանից խլել են վաշխառուները իրրև իրանց արդար իրաւունքը:

Այժմ ամփոփելով մեր փաստերը կը տեսնենք որ 1876-ի հրդեհը, 1878-ի և 1898 ահոելի սով ու թանգութիւնները, 1896 ահոելի աղէտը, գաւառացիների Պոլիս պանդիստութեան գնալու արգելքը, միւս կողմից Վանում տիրող գործի պակասութիւն, ապրելու ներկայ ձեր, տուրքերի ծանրութիւնը, վաշխառութիւն և Վանից ենող ու Վան մտնող փողի անհաւասարակշռութիւնը վանեցիների և մասնաւորապէս վանեցի հայերի տնտեսական վիճակը օրէցօր քայլայում են:

Նիւթական վիճակի համեմատ վանեցի հայերին կարելի է չորս դասակարգի բաժանել. — ա. կամ բարձր դասակարգին պատկանում են այն ընտանիքները, որոնք ելևմուտք են ունենում տարեկան  $60-100$  լիրա, բ. կամ միջին դասակարգին պատկանում են տարեկան  $15-30$  լիրայի եկամուտ ունեցողները, գ. կամ հասարակ դասակարգին պատկանողները ծախսում են տարեկան  $6-12$  լիրա, իսկ դ. կամ մուրացկանների դասակարգին պատկանում են նրանք, որոնք գիւղերից են գաղթել քաղաք և իրանց ապրուստ հայթայթում են երբեմն մուշրալով, երբեմն էլ աշխատելով. սրանց մէջ քաղաքացիներ էլ շատ կամ:

Ա. դասակարգին պատկանում են քաղաքի առաջնակարգ առևտրականներ, վաճառականներ և կալուածատէրերը. սրանք իրանց տարեկան վաստակի մի մասը տան վրայ ծախսելուց յետոյ կարող են մի փոքր մաս էլ աւելացնել և բարգել գրամագլխի վրայ: Բ. դասակարգին պատկանողները ինչ որ շահում են, նոյնութեամբ գործածում են (փող աւելացնողները բացառութիւն են կազմում): Գ. դասակարգին պատկանողները իրանց վաստակով շատ անդամ չկարողանալով ապրել պարտք են անում, իսկ դ. դասակարգին պատկանողները իրանց խըդառուկ գոյութիւնը հազիւ թէ պահպանում են:

Ա.	խումբին	պատկանող	տները	կազմում	են	$2^o/_{\text{ց}}$
Բ.	»	»	»	»	»	$20^o/_{\text{ց}}$
Գ.	»	»	»	»	»	$70^o/_{\text{ց}}$
Դ.	»	»	»	»	»	$8^o/_{\text{ց}}$
Ուրեմն եթէ վաճառքի թէ ընիկ և թէ գաղթական						
հայ ժողովուրդը 2,500 տուն հաշուենք, կունենանք՝						
50 տուն ա. խմբին պատկանող,						
500	»	լ.	»	»	»	
1750	»	դ.	»	»	»	
200	»	դ.	»	»	»	

## Ընդամենը 2500 »

Տնտեսական այս աննախանձելի վիճակում ապրող վանեցին իր կենցաղավարութիւն մէջ ցոյց է տալիս չափազանց տնտեսագիտութիւն և խնայասիրութիւն։ Ճաշակի խնդիրն է միայն որ նրան մեծամեծ ծախսերի է ենթարկում, այլապէս նա շատ քիչ ծախսով պիտի բաւականանար, ուտելիքի մէջ երեւմ է վանեցու տնտեսագիտութիւնը շատ փայլուն կերպով, մէկ ֆունտ մսով 6 անդամից բաղկացած ընտանիք կերակըրւում է 2 անգամ, իւրաքանչիւր անգամին երկու տեսակ կերակուրով, խնայասէր վանեցի հայ տանտիկինը 1 ֆունտ մըսից կարող է 5 տեսակ կերակուր պատրաստել թէ ամառ թէ ձմեռ, մէկի մսի հետ կարտոֆիլ է գործածում, միւս կերակուրի մէջ խնձորի չիր, երրորդին լորի, չորրորդին շաղկամ, հինգերորդին կաղամբ ևայլն ևայլն։ Մի խօսքով մսի վրայ հարիւրաւոր տեսակներով պտուղներ, հունդեր և բանջարեղիններ են ձգում վանեցի տանտիկինները. սուպի անուն չկայ խոհարարուհիների կերակուրների ցուցակի մէջ, միայն հարսանիքների ժամանակ կարելի է հանդիպել չորբայի, որ միենոյն սուպն է հաւի մսով պատրաստուած։ Մսեղէն կերակուր ամեն օր գործածել չէ կարելի, մէկ օր միս, միւս օր իւղ, երրորդ օր պահք, չորրորդ ձուկ ու թան, յաջորդ օրը ժամանակ կամ պանիր։ Վանեցիների մեծամասնութիւն տարեկան մասնակի մէջ ամենատարես տեղն են բոնում հաց, տառեխ ձուկ, ժամիկ, պանիր, թան և ասդուր։

Միայն ուտելիքի մէջ չէ որ վանեցին խնայողութիւն է անում, այլ ամեն մի ծախսի մէջ։ Հաճոյքների համար էլ նա խնայող է, լսնջոյքներ շատ քիչ են պատահում, խմիչքի գործածութիւնը համեմատելով ուրիշ բաղաքների հետ շատ քիչ է, չկայ վանում որևէ տուն, որ սովորութիւն եղած լինի ամեն օր ճաշի և ընթրիքի ժամանակ զինի գործածուի, չնայելով

գինին իրանց այգիներից է պատրաստում. «Խմելու փոխարէն, ասում է վանեցին, զինիները կը ծախեմ և հազար հոգս կը հոգամ»։ Վանեցին ժամանակի գործածութեան մէջն էլ տնտեսագէտ և խնայող է, պարապ ժամանակ չի ունենում, գործ եղած ժամանակ գիշերցերեկ չի հարցնում, այլ աշխատում է։ Այո, մի օտարերկրացի եթէ Վան մտնի, տեսնելով վանեցիների գործը՝ պիտի հրատարակէ թէ վանեցիների պէս դանդաղ, ծոյլ ժամավաճառ, անգործ ժոկովուրդ ուրիշ տեղ չկայ, բայց նա իր տեսութեան մէջ սխալում է, ընդհակառակըն միջավայրն է որ գործ չէ տալիս նրան։ Այն գործը որ կատարում է վանեցին Յ ժամում, կարող է կատարել 1 ժամում, բայց որովհետև միւս 2 ժամին պարապ պիտի մնայ, այդ պատճառով է երկարացնում գործը։ Վանում գործող շատ կայ, բայց գործ չկայ, մինչև անգամ 2 կոպէկ օրավարձին էլ պէտք ունեցող կայ, միայն թէ գործ տուէք, Վանեցի արհեստաւորներից ոմանք՝ դերձակ, մուճակագործ ձմռան ընթացքում հարսանիքների շրջանում երբ շատանում է գործը, օրուան 24 ժամուայ մէջ հազիւ թէ Յ—4 ժամ քննեն, այլ շարունակ աշխատում են։ Վանի խանութպանները ձմռան խիստ ցրտերին ծալապատիկ նստում են իրանց խանութներում առանց վառարանի, առանց կրակի, միւս կողից սառած ձեռներով յաճախորդին ուղածները տանել բերել, վերցնել դնել, չափել ձեռ չեն գժուարանում։

## ԾԵՐՈՒԿ

(Կը շարունակուի)

## ՍՎԱԼԻՆՈՒ ՄԵՐԻՆ

Սվալինու մերին, Սվալինու մերին...  
Եւ դուք չեք տեսել Սվալինու մերին:  
Նազելի կուսի հրապուրանքներով  
Մարդ է կախարդում Սվալինու մերին:  
Սվալինու մերին, Սվալինու մերին...  
Այնքան գեղեցիկ, այնքան սիրուն է  
Սվալինու մերին:  
Երկու լեռների գոգումն է ընկած  
Սվալինու մերին:

Երկու լեռներ են իրարու դիմաց,  
Երկուսն էլ չքնաղ, երկուսն էլ չքեղ,  
Երկուսն էլ պէս-պէս զարդերով պճնուած,  
Կարծես եղեմն է տարածուել այնտեղ:  
Երկու լեռներ են, երկուսն էլ սիրուն.  
Եւ ամեն տարի երկինք ու երկիր  
Սիրով միացած՝  
Տալիս են այնտեղ մի շոայլ դարուն:  
Եւ այդ լեռների դիւթական ծոցում  
Ընկած է շուքով Սվալինու մերին,  
Ուր եղեմական ջրեր են հօսում,  
Պաղ ալիքները անոյշ խոխոջով  
Կամաց քսելով կանաչ ափերին:

Երկու լեռներ են:  
Եւ հէնց այդ երկու լեռների կողքին՝  
Անթիւ կնծիռներ ժողված ճակատին՝

Տնկուել է թափով Սվտկնայ-գեալին։  
 Մարդ սարսափում է, երբ որ նայում է  
 Այդ մերկ, ապառաժ, քարքարոտ սարին։  
 Ժայռեր, ի՞նչ ժայռեր...  
 Կարծես հսկան է վատահ իր բազկին՝  
 Փորձելու համար իր ոյժն ահազին՝  
 Այդ ահեղ ժայռերն հաւաքել, բերել,  
 Կախել իր սիրած լեռների կրծքին՝  
 Եւ կամ կատաղած՝ զարկել իր լախտով,  
 Փորել, փորփրել այդ սարի կրծքում  
 Վիճեր սոսկալի և դրել այնուեղ  
 Մշտական խաւար,  
 Մշտական խաւար անթափանցելի։  
 Երկու լեռները, Սվտկնու մէրին,  
 Որքան էլ չքնաղ, որքան սիրուն են,  
 Նոյնքան էլ ուժեղ սիրով սիրում են  
 Իրանց հարեւան ապառաժ սարին։  
 Այդպէս է, այդպէս. գեղեցիկ հարսը  
 Վայրենի երկրում  
 Սիրում, պաշտում է վայրենի ոյժին։  
 Եւ ինչո՞ւ նրանք էլ իրանց կանաչով,  
 Առուշաղբիւրով,  
 Ամեն առաւօտ քաղցր ժպիտներ  
 Չտան հարեւան յաղթագէմ սարին։  
 Եւ... ախր նրանք էլ գալտնիքնել ունին։  
 Ամենից ծածուկ, ամենից գաղտնի,  
 Միայն այդ չորսին, այդ չորսին յայտնի։

Ծառազարդ գետի փոքրիկ հովախ մէջ  
 Նազունաղանկով ընկած է մի գիւղ.  
 Սվտկնին է դա, փոքրիկ Սվտկնին,  
 Գեղեցիկ, օրհնուած, հարուստ Սվտկնին,  
 Սվտկնու մէրին, Սվտկնու մէրին,  
 Եւ դուք չեք տեսել Սվտկնու մէրին։

ՄԻՍԱԿ ՏԵՐ-ԴԱՆԻԵԼԵԱՆ

## ԴԱՐԱԼԱԳԵԱԶ ԿԱՄ ՎԱՅՈՑ ԶՈՒ

Դարալագեազի անթիւ հոյակապ վասքերի, բերդերի և կամուրջների աւերակները վկայում են, որ հայի արեան հեղեղներով ողողած նախկին այդ Վայոց Զորը ունեցել է մի փառաւոր անցեալ: Թողնելով Վայոց Զորի անցեալը՝ այժմ ևս կը ցանկայի ընթերցողին մի համառօտ տեղեկութիւն տալ նրա ներկայ գրութեան մասին:

Դարալագեազը սահմանակից է արևելքից Զանգեղուրի գաւառին, արևմտից՝ Երևանի և Նոր-Բայազետի գաւառներին, հարաւից՝ Նախիջևանի գաւառին և Շարուրի գաւառակին, իսկ հիւսիսից Նոր-Բայազետի և Զիւանշիրի գաւառներին:

Դարալագեազը սաստիկ լեռնային գրութիւն ունի: Այդ անունը ինչպէս բացատրում են շատերը, ստացել է իր անթիւ ու անհամար լեռների պատճառով (Դարալագեազ—դարալարգեազ թուրքերէն նշանակում է ձորեր մանեկ: Երեք գլխաւոր լեռնաշղթաներ կան նրա մէջ բաղմաթիւ բարձրաբերձ գագաթներով և գեադուկներով (պըւալա):

Դարալագեազի մի ծայրից մինչև միւս ծայրը լեռ ու ձոր ճեղքելով անցնում է Արփաչայ գետը՝ Ալաղեազ կամ Ղօյթուչայ, Հէրհէր չայ, Զուլ չայ, Ջիրակ չայ կամ Ղուչչի բիլակ չայ, Ախտա չայ, Մարտիրոս չայ և Գնիջիկ չայ վտակներով:

Արփաչայի վտակների մի քանիսի վրայ կան հոյակապ հին կամուրջներ, կոփածոյ բարերից շինած:

Հանքային ջրերից ամենազլխաւորներն են Խոտիսու գիւղից 1/2 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող երեք ծծմբային աղբիւրները, որոնք ունին 29,5—33<sup>0</sup> տաքութիւն ըստ R<sup>o</sup>: Այդ աղբիւրները շրջակայ գաւառներից գէպի իրանց են զըրաւում յաճախողների մեծ քանակութիւն ամառնային ժամանակ. բացի որանցից կան էլի հանքային ջրեր Սօյլան գիւղի մօտ, Ենկիջայ գիւղից երեք վերստ հեռաւորութեամբ Ղոզլուդարա ձորում, Հէրհէր գիւղից գէպի արևելք Ղալա-դարասի ձորում, Քէշիշքեանդից գէպի արևելք Լոր-դարա ձորում, Ար-

փա գիւղից գէպի ներքեւ երեք վերստաչափ հեռու Արփաչայի երկու ափերին միքանի աղբիւրներ, Բուլախլար գիւղի մօտ, երտափին գիւղից 2 վերստ գէպի հիւսիս Գիւմիւշըուլաղ վտաշի երկու ափերին միքանի աղբիւրներ, Վերին-Տանձիկ գիւղից գէպի արևելք միքանի աղբիւրներ Արփաչայի երկու ափերին, Ներքին-Տանձիկ գիւղից  $\frac{1}{2}$  վերստ գէպի հարաւ Արփաչայի ձախ ափին, Մալիշկեա գիւղից  $\frac{1}{2}$  վերստ հեռու գէպի հիւսիս ձորի մէջ և Այար գիւղից գէպի հարաւ երեք վերստ հեռաւութեան վրայ, Ենկիջայի ու Ղուրզուլաղի ճանապարհի վրայ ձորի միջի մեծ աղբիւրը «Գուաւ» (Քոսի ջուր) անունով:

Այժմեան Դարալագեազը (Վայոց Զորը) բաղկացած է հինգ շինական հասարակութիւններից, որոնք են.

	գիւղ	տուն
1 Քէշիշքեանդի	շինական հասարակութիւն	20 1158
2 Ալագեազի	»	20 874
3 Գնդիվազի	»	22 814
4 Մարտիրոսի	»	18 769
5 Ղողլջայի	»	21 863

Ընդամենը 101 4478

Սրանցից ամենից մեծը Քէշիշքեանդու շինական հասարակութիւնն է, որի մէջ կան ութ հայ գիւղեր, Ալագեազու հասարակութեան մէջ երեք հայ գիւղեր, Գնդիվազու հասարակութեան մէջ 3 գիւղ, Մարտիրոսու հասարակութեան մէջ չորս հայ գիւղեր և Ղողլջայու հասարակութեան մէջ հինգ հայ գիւղեր։ Ահա այդ գիւղերի անունները.

Քէշիշք. Հասար. Քէշիշքեանդ, Օրթաքեանդ, Բաշքեանդ, Ղոյթուլ, Այար, Մալիշկեա, Ենկիջա և Դայլախլու։

Ալագեազու հասար. Հասմնքեանդ, Էրտագին, Քարազը լուն և Թառաթուն։

Գնդիվազու հասար. Կուշի, Գնդիվազ և Հէրհէր։

Մարտիրոսու հասար. Փոռ, Փաշալու, Աղաղակ, Մալտիրոս և Սոյլան։

Ղողլջայու հասար. Արգա, Ռինդ, Աղաւնաձոր, Ելգին և Գնիշիկ։

Քէշիշքեանդը այժմ 155 տուն է կազմում։ Բնակիչների թիւը ընդամենը 1405 հոգի, որոնցից 746 հոգին արական են, իսկ 659 իգական։ Այդ գիւղը Դարալագեազու գաւառակի կենտրոնական գիւղն է, ուստի այստեղ է մշտապէս նստում դաւառակի պրիստաւը, հաշտարար միջնորդը, որը նշանակուած է 1903 թուի աշնանից։ Արգէն շինւում է այստեղի իշխանութեան

կարգադրութեամբ Դարալագեազու քննական և հաշտարարական մասի կառավարչի բնակարանը և ատեանը. շուտով պէտք է բացուի այստեղ նաև պոստատուն. այստեղ է գտնուում շինական կառավարութիւնը և Քէշիշեանդու միդասեան արքունի արական գլուխոցը, որի մէջ սովորում են 59 աշակերտ և 4 աշակերտուհի:

Բնակիչները գաղթած են Տաճկաստանի Աղբակ գաւառից ոռուս-պարսկական պատերազմից յետոյ. կան գաղթածներ և Պարսկաստանի Սալմաստ գաւառից, բայց բոլորն էլ խօսում են սալմաստեցոց լեզուով: Քէշիշեանդցիները պարապում են երկրագործութեամբ, այգեգործութեամբ և անամնապահութեամբ, հին, նահապետական ձևով: Շատ քիչ տարածութեան վրայ են ցանում բամբակ և բրինձ. ամառնային ժամանակ զգում են ջրի պակասութիւն, որը կարելի էր վերացնել, եթէ բնակիչները միախողութեամբ լինէին և մօտիկ աղբիւրներից ջուր բերէին՝ ջրհորներ փորելով: Այդ մասին թէկ եղել են շատ յորդորողներ, բայց հարուստների ու ալքատների մէջ միաբանութեան բացակայութեան պատճառաւ բանը գլուխ չէ եկել: Գիւղի աղբիւրի ջուրը քիչ աղի համ ունի և բղիւելով ճահճային հողի միջից՝ առողջարար չէ, որի համար էլ բնակիչները այնքան առողջ և վայելչակազմ մարդիկ չեն համեմատելով Դարալագեազի միւս գիւղերի բնակիչների հետ: Եթէ քիչ աշխատութիւն գործ դնեն, քէշիշեանդցիները կարող են խմելու համար էլ պատուական ջուր բերել մօտիկ աղբիւրներից: Բնակիչների երեք մասը աղքատ է, 50—60 տուն չունեն բանուոր անաստեններ, մնացածներից տասն տուն հարուստներ են որոնց կարողութիւնը համում է 100—1000 րուբ., երկու տուն մինչեւ 3000 րուբ. գումար, միւսները բոլորը պարտք չունեցողներ և օրստօրէ ապրողներ: Աղբատութեան վլխաւոր պատճառը Ջրի պակասութիւնն է, վերջին աարիների շարունակ երաշտը և հողային հարցը, հողը, որով անհաւասար կերպով օգտագում են նրանք, այսինքն մի մասը այնքան հող ունի, որ չգիտէ ինչպէս մշակի, միւսինն այնքան քիչ է, որ չգիտէ ինչ անէ: Պարսկաստանից գաղթած օրից մինչև այժմ հողաբաժնութիւն տեղի չէ ունեցել Քէշիշեանդում. զրկուողները 1889 թուից մինչև 1894 թիւը մաքառելով, չկարողացան յաջողացնել հողաբաժնութիւնը, յաղթանակն անցաւ էլի հողատէրերի ձեռքը զանազան միջոցներով... Վերջին ժամանակներս բնակիչները բաւականին օգտագում են իրանց մթերքները վաճառելով ծառայող դասակարգին և գուցէ դրանով բարեփոխեն իրանց դրութիւնը: Դիւզը հետպհեաէ կերպարանափոխուում է, և շատ չի տեիլ, որ

սա Դարալագեազի կենտրոնավայրը, մի գիւղաքաղաք կը գառնայ: Առայժմ կայ երկու ճոթեղէն ապրանքի և մի մանը-բուքի խանութներ, երկու դարենոցներ և երկու մաշկակարի խանութներ: Քէշիշեանդցիներն ունեն եկեղեցի և երկու քահանայ:

Գիւղի հարաւային կողմը դեռևս կանգնած է մի աւերակ բերդ այնքան վիթխարի քարերից շինած, որ մարդ զարմանում է թէ ինչ հակայական ոյժ են ունեցել շինողները այդ քարերը իրար վրայ դարսելու համար: Տերդի մասին ոչ մի աւանդութիւն չկայ, բացի վրայի գերեգմանաքարերը, որոնք իրանց արձանագրութեամբ ու նկարներով վկայում են, որ բերդը հայկական է եղել:

Քէշիշեանդցի 2<sup>1/2</sup> վերստ հեռաւորութեամբ գէպի հիւսիս, Փուռուչայ գետակի ափին, հարթավայրի վրայ դրուած է Օրթաքեանող գիւղը, 115 տուն, ունէ 1016 հոգի բը-նակիչներ, որոնցից 589 արական են և 427 իգական: Այդ գիւղի բնակիչները խիստ կարօտութիւն են զգում թէ հողի և թէ ջրի պակասութեան մէջ, այստեղ ամեն մի հոգուն հասնում է 3<sup>1/4</sup> փութէն տեղ հող, թէ ջրային և թէ անջրդի: Մի քանի տարի առաջ հաշւում էին Դարալագեազի ամենաաղքատ գիւղը, բայց վերջին տարիները օրթաքեանդցիները մշակութիւն անելով թէ Դարալագեազի գաւառակում թէ Թիֆլիսի և Գանձանահանգներում մի քիչ բարւոքեցին իրանց դրութիւնը: Խեղճերը մշտական հացի կարօտութիւն ունին, այնպէս, որ հարկադրուած են իրանց այդիների լերքերը գրաստներով կրել նոր-Բայազետու գաւառը և այնտեղ փոխել ցորենի ու գալու հետ, 115 տանից 10 տուն միայն հաց չեն առնում ծախ, մնացողները բոլորն էլ հաց են գնում: Սրա համար ամեն մի տուն պարտաւորուած է ունենալ մի կամ երկու բեռնակիր ձի կամ ջորի իր հացը հայթնայթելու համար, մի բան միայն մխիթարական է, այն է՝ պատուական ջրի և օդի շնորհիւթէ արական և թէ իգական սեռը խիստ առողջ են: Գարունը բացուելուն պէս օրթաքեանդցիները խումբ բահերն ուսերին գնում են հարևան Մալիշկեա գիւղը կամ այլ գիւղեր խաղողի այգիներ փորեկու: Օրթաքեանդը իր ժիր բանուորներով կատարում է մերձակայ գիւղերի դաշտային մշակութիւնը, մանաւանդ հունձը, այժմ նրանց դրութիւնը համեմատաբար քիչ լաւ է քէշիշեանդցիներից: Այդ գիւղի գիւղին լաւ չէ, որովհետեւ խառնողը լաւ չէ համում: Հողի և ջրի սակաւութեան պատճառաւ խոտը և դարմանը սակաւ է այնտեղ, որը և արգելք է դառնում անասնապահութեան առաջադիմութեանը: Միքանիսը ու-

նեոր օրթաքեանդցիներից հարևան Ալիխանսկայ, Բլբուլօլան և Ղարա վանք թուրք գիւղերի հողերը կիսարար ցանում են կամ ցորեն կամ առւոյտ իրանց պէտքերը լրացնելու համար։ Ամառուայ համար օրթաքեանդցիք ունեն լաւ արօտատեղիներ թէ իրանց Ղուլի-բինա հանդերում և թէ Գեօլ իւրդ—«Թաքա գոլդուրան» իւրդի վրայ։ Օրթաքեանդն ունի մի եկեղեցի և մի գրեթէ անզրագէտ ծեր քահանայ։ Կան 4—5 լաւ գզրարներ, որոնք լաւ թաղիքներ են պատրաստում գիւղամից—գառանքրդից։ Գիւղից 5—6 վերստ հեռաւորութեան վրայ, դէպի հիւսիս, մի սեպաձև լեռան վլխին կանգնած է գեռնես ամուր կոփածոյ քարերով շինած բերդ, որին աւանդութիւնը յատկացնում է Պոօշիշանին։ Բերդից դէպի արևմտահարաւ աջ կողմը 2½ վերստ հեռաւորութեամբ գտնուում է հոյակապ Աստուածածնի վանքը կիսաւեր գրութեան մէջ, որտեղ շրջակայ գիւղերի բնակիչները Աստուածածնի տօնին ուլստ են զնուում։

Օրթաքեանդից 2½ վերստ հեռու դէպի հիւսիս (Քէշիշքեանդից 5 վերստ) երկու զուգանեռական ձորերի բերանում լեռնալանջի վրայ զրուած է Բաշքենանդ գիւղը, որը Օրթաքեանդից և Քէշիշքեանդից բարձր գիւրք ունենալով իր այդ գահոյքից, ինչպէս մի գիտանոց նայում է դէպի արևմտահարաւ Օրթաքեանդի և Քէշիշքեանդի կանաչ և ծառազարդ հարթավայրին մինչև Արփաչայը, մինչև Աղաւնաձոր գիւղի սարահարթը և մինչև Դարալատկեազը Շարուրից բաժանով լիոները, որոնց ծայրին իբրև պսակ նստած է հորիզոնի վրայ սպիտակափառ Մասիսը։ Այդ բոլորը կազմում են միասին մի հիանալի տեսարան, իսկապէս յատկացնելով Բաշքեանդին իր գլխի գիւղ, բաշ-գիւղ անունը։ Գիւղի արևմտեան կողմից շառաչում է աղմկալից Գուռուչայ վտակն ու անցնում հոկայ գարնոր ընկույնիների հովանիների տակով ու կտրելով Օրթաքեանդ և Քէշիշքեանդ գիւղերը թափւում է մայր Արփաչայ։

Քէշիշքեանդու շինական հասարակութեան մէջ սրա ջուրը ամենագործականն է, բայց ափսոս որ Գուռուչայը որքան գարնանը զոռողանում է, այնքան ամառը մեղմանում, նուազում, լուսմ և հաղիւ է բաւականացնում այդ երեք գիւղերին, կոյւ և աղմուկ բարձրացնելով նրանց մէջ։ Բաշքեանդը բաղկացած է 60 տնից, բնակիչների թիւն է 672 հոգի, որոնցից 316 արական են և 256 իգական։ Այդ գիւղը չնայելով իր գեղեցիկ գիւրքին, ամառնային ժամանակ սաստիկ կարօտութիւն է զգում դաշտերը և այդիները ջրելու համար, ուստի երկրագործութիւնը իր ցանկալի արդիւնքը չէ մատակարարում բնակիչներին, որով խեղճերը պարտաւորուած են թէ հացը և թէ խո-

տը անասունների հսմար մշտապէս ծախ առնելու։ Հարուստ-ները մօտիկ Ղարավանք թիւրք դիւղի բնակիչների փոխագարձ համաձայնութեամբ ցանում են կիսարար ցորեն ու գարի, առւոյտ ու գոռինկայ և այդպիսով հոգում են իրանց կարիքը։ Բաշքեանդցիներն էլ օրթաքեանդցիների պէս պարտաւորուած են ունինալ ամեն մի տուն 1—2 ձի կամ ջորի Նոր-Բայազետի գաւառից կամ այլ հարեան գիւղերից հաց փոխազրելու։ Տաս-նեակ տարիներ սրանից առաջ խիստ աղքատ էին, բայց այժմ նախանձելի դրութեան մէջ են, համեմատելով զրացի դիւղերի հետ։ Այս բանում բաշքեանդցիներին օգնեց Ռուսաստանը, որ-տեղ միքանի պարոններ պարապելով առևտրով Արմաւիրի շըր-ջակայ գիւղերում, բաւականին գումարներ մացրեցին գիւղը։ Եթէ մի հիւր, մանաւանդ յարգելի անձնաւորութիւն մտնէ Բաշքեանդ, շաբաթներով չէ կարող աղասուել բաշքեանդցինե-րի ձեռքից տնից տուն հիւրասիրուելով։ Գիւղացիները ապրում են հաշտ և սիրով, չնայելով, որ իրանց Պարսկաստանից գաղ-թած հայերի մէջ կուսակցութիւնը, կոփւն ու թշնամութիւնը անպակաս են։ Ապրում են ու հագնեւում մարուր։ Թէն պան-դուխտներ շատ կամ գիւղից, բայց երբեք իրանց հայրենիքը չեն մոռացել և մինչեւ այսօր բաշքեանդցիներից ոչոք չէ ան-ջատուել հայրենիքից ընդմիշտ՝ կարգադրուած է իրանց մէջ, որ 1—2 տարի մի եղբայրը մնայ օտարութեան մէջ, ապա սա վերադառնայ միւս եղբայրը գնայ, որպէսզի համ նիւթապէս չվնասուին համ հայրենիքից անմասն անբաժին չմնան։ Բաշ-քեանդցիները գաղթած են Պարսկաստանի Սալմաստից և Սաւ-րի գիւղերից, որի համար էլ ինչպէս ամենին յայտնի է, լրջա-միտ ու աչքաբաց մարդիկ են, իրեւ սաւրիդեղցի կամ սալ-մաստցի։ Գիւղում գրեթէ  $\frac{2}{3}$  մասը հիւսնութիւն գիտեն։ Շատ տներ ունին 10—100 փեթակ մեղուներ, որոնք լաւ ար-դիւնք են տալիս մանաւանդ բաշքեանդցիների «Բինայ» անուա-նեալ հանդում։ Կանայքը ձմեռուան սկզբից մինչև գարնան վերջը պարապում են թել մանելով, բրդից գորգեր ու կտսիրա-ներ գործելով։ Այսահեղ, գիւղի մօտ, բաւական ժամանակ գոյու-թիւն ունէր Պոօշ իշխանի ապարանքը, որը գիւղացիները հետ-ըզնետէ քանդելով օգտուեցին քարերով։ Աւանդութիւն կայ թէ գիւղից վերև «կապ» կոչուած բարակառկառի մէջ պահուած է Պոօշ իշխանի թուրը, կպրէ կարասում զմուռած։

Ղօյթուլչայի վերայ, Բէշիշշեանդից Յ վերսու հեռա-ւորութեամբ գտնեւում է Ղօյթուլ գիւղը դէպի արևմուտ։ Բը-նակիչների թիւն է 1066, որոնցից 646 արական են, 420-ը իգական։ 1886 թուի ընտանեկան ցուցակով կազմում էին 83

տուն, այժմ եղել են 123 տուն։ Դիւղը դրուած լինելով ցած դիրքի վրայ, ամառները շոգ է լինում, որի համար էլ թէ բամբակը և թէ պրինձը լաւ աճում են ու արդինք տալիս, ստացւում է և պատուական գինի։ Վերջին տարիները Ղօյթուցիները բամբակի և չալթուկի փոխարէն սկսել են բոստան ցանել, որից իւրաքանչիւր տուն ստանում է 50—100—150 ըուբլի կանխիկ գումար։ Հէնց որ ձմերուկը կամ սեխը հասնում են, Նոր-Բայազետի գաւառի բնակիչները իրանք են գալիս այլերով գնում ու տանում իրանց գաւառը բոստանի (գարալագեացոց լեզուով «պախէզի») բերքերից։ Բաշ-Նորաշէնու—Նոր-Բայազետի արքունական ճանապարհը, որ անցնում է Ղօյթուկի մօտից, զգալի կերպով նպաստեց Ղօյթուցիների մթերքների փոխադրութեանն ու վաճառքին։ Ղօյթուկի հողը առհասարակ ամեն բանի յարմար է և արդինաբեր երկրագործութեան համար, ուստի այդ գիւղացիները համեմատաբար աւելի ապահով վիճակի մէջ են, քան թէ օրթաքեանդցիները, քէշիշքեանդցիները և բաշքեանդցիները և միւս հայ գեղերը, այնպէս որ այդ գիւղում հաց ծախողներ կան, իսկ հաց ծախոնողներ հազիւ թէ գտնուին, նոյնպէս էլ ապահովութիւն է վայելում անասունների խոտ ու դարմանի կողմից։ Սակայն մի կողմից Ղօյթուչայն ամեն տարի իր փոփոխական հոսանքով քանի տանում է նրա բերքի արտերը, անտառները և խոտանոցները մօտաւորապէս աւելիելով 100 բեռան տեղ տարածութիւն, միւս կողմից Ղօյթուկ գիւղի կալուածատէր թուրք բէկերը Զիվայի տանում են նրանց հողերից ստացած եկամտի <sup>4/30</sup> մասը։ Բացի այդ, Ղօյթուցիները չունին իրանց անասունների համար ամառուան արօտատեղի (բացի երկու տանից որոնք ունին իրանց համար առանձին արօտատեղի Նոր-Բայազետի գաւառում), ուստի պուած են յիրուցան լինել թուրք գիւղերի օբաները, որովհետև արօտատեղիների կողմից թուրքերը հարուստ են հայերից բնակելով Դարալագեազի լեռնային մասերում, բայց այդ տեղերում իրանց անասունների կերպերը պակաս հարուած չէ հասցնում Ղօյթուցիների նիւթական և բարոյական վաճակին։ Ղօյթուցիները խարխափում են տղիտութեան խաւարի մէջ, այնպէս, որ 1066 հոգուց 10 հոգի գրագէտներ հազիւ կարող էք գտնել։ Թէև ղօյթուցիները կարող են կրթել իրանց զաւակներին մերձակայ միդասեան արական գլուղում Քէշիշքեանդու, բայց այդ ուսումնարանը չի կարողանում բաւականացնել Քէշիշքեանդու, Ալագեազու և Ղոչղայու շինական հասարակութեան մանուկներին, որոնք բաժին ունին այնտեղ,

տարեկան մէկ ըուբլի դրամավճարի համար։ Ղօյթուցիները ունին մի ծերացած և գրեթէ անգրագէտ քահանայ, եղկու ջրաղաց և մի բամբակ մաքրելու գործարան։ Ղօյթուցիները սակաւ կարօտութիւն ունենալով կենսական պիտոյքների, դուրս չեն գալիս գիւղից և չեն շիւռմ այլ գաւառների ու քաղաքների բնակիչների հետ, որի համար էլ նրանց մտաւոր վաճակը գտնում է նահապետական դրութեան մէջ, նոյնիսկ նրանց հազստի ձևը միևնոյնն է, ինչ որ առաջ էր, օր. կանայք հազնում են զեռ քիւլաշներ, իսկ տղամարդիկը կապուտ կտաւը, իրանց գործած ու ներկած։ Մի քանի տներում կնիկները գործում են ըստիր գորգեր ու կապերտներ։ Բնակիչները գաղթել են Պարսկաստանի Սոմայ գիւղից և խօսում են սալմաստցիների լեզուով։

Մ. Տ.-Ա.

(Կը շարունակուի)

## ՕՐ. Խ-ԻՆ

Անդին բոյրիկ,

Էլ մի կրկնիր դու այս ցաւոտ օրերում,  
Որ ողջ աշխարհն իմ մէջ է լոկ ամփափում,  
Որ ամենից, ամեն ինչից առաւել  
Սիրում ես ինձ, ինձնով ես լոկ դու տարուել.

Չկայ արդեօք մի այլ վսեմ գաղափար,  
Որ պաշտելի բարձր լինի մեզ համար,  
Չկան արդեօք գաւանանըներ ու խոհեր,  
Որ կլանեն անվերջ տանջող մեր մտքեր։

Նայիր, քոյրիկ, սեով պատած մեր կեանքին,  
Արցունը մէջ թաղուած կորած մեր օրին.  
Նայիր՝ ինչպէս աշխարհը մեզ բանտ է մութ,  
Որուեզ չնչում, ապրում ենք մենք անօդուտ...

Սիրենը միմիանց, բայց այդ սիրուց առաւել  
Մեզ պէտք է գեռ այլ խոհերով դրաւուել...  
Մե օրերի սէրն էլ է սև երեսում  
Երբ նա միայն եսի մէջ է ամփոփում։

Ա. ՄԵՂԵԱՆՑ

# ԲԱՂԴԱՍԱՐ

(Անատոլ Գրանսի)

## I

Այդ ժամանակներում, Բաղդասարը, որին յոյներն անուանում էին Սարասէն, թագաւորում էր Եթովպիայի մէջ: Նա սևամորթ էր, բայց դէմքով գեղեցիկ: Պարզամիտ էր ու վեհանձն: Նա իր թագաւորութեան երրորդ տարուայ մէջ, երբ քսաներկու տարեկան էր, այցելութեան գնաց Սարայի թագուհուն՝ Բալքիսի: Սամբորիտիս մոգը և Մանքերա ներքինին նրան ընկերակցում էին: Նրա կարաւանը բաղկանում էր եօթանասուն և հինգ ուղարկութիւն որոնք բեռնաւորուած էին կինամոնով, զմուսով, ոսկու փոշիով և վղոսկրով: Ուղևորութեան ժամանակ, Սամբորիտիսը նրան բացատրում էր և՛ մոլորակների ազգեցութիւնը, և՛ թանգարին քարերի յատկութիւնը ու Մանքերան երգում էր նրա համար կրօնական, ծիսական մեղեղիներ: Բայց Բաղդասարը նրանց չէր լսում և զուարճանում էր հեռուն, սարերի վրայ, ականջները ցցած՝ պպղող փոքրիկ շնագայլներին դիտելով:

Վերջապէս, տասներկու օրուայ ճանապարհորդութիւնից յետոյ, Բաղդասար և իր ընկերները վարդի մի բուրմունք ըգոգացին և շուտով տեսան Սարա քաղաքի շուրջը սփոսող պարտէզները:

Այստեղ, հանգիպեցին մանկամարդ աղջիկների որ պարում էին ծաղկած նոսենիների տակ:

—Պարը՝ մի ազօթք է ասաց Սամբորիտիս մոգը:

—Մեծ արժէքով կարելի էր ծախել այս կիներին; ասաց Մանքերա ներքինին:

Բաղաք մտած լինելով՝ նրանք հիացած մնացին մեծ մագաղինների սայլաւաների և ատաղձատաների, ինչպէս և այն մեծաքանակ ապրանքների առաջ որ դիզուած էին նրանց մէջ՝ երկար քայլեցին, սայլակներով, բեռնակլներով, էշերով և ի-

շապաններով լիբը փողոցներից և յանկարծ երևեցան Բալքիսի  
պալատի մարմարեայ պարխապները, ծիրանի վրանները, ոսկէ-  
զօծ գմբէթները:

Սաբայի թագուհին նրանց ընդունեց մի բագի մէջ ուր  
անուշահոտ ջրի շատրուաններ զովութիւն էին սփռում. և ի-  
րանց մարգարտանման շիթերով մի յստակ մըմունջ էին յա-  
րուցանում: Կանգուն, մի ականակուռ շրջազգեստ հագած՝ թա-  
գուհին ժպտում էր:

Բաղդասար՝ դրան տեսնելով՝ մեծապէս վրդովուեց: Թա-  
գուհին՝ նրան երազից աւելի քաղցր և ցանկութիւնից աւելի  
գեղեցիկ թուաց:

—Տէր, կամաց մըմնջեց նրան Սամբորիտիս, աշխատեցէք  
թագուհուն հետ առևտրական մի լաւ դաշինք կնքելու:

—Զգուշացէք, տէր, աւելացրեց Մանքերա: Ասում են թէ  
նա կախարդանք է գործ դնում մարդկանցից սիրուելու հա-  
մար:

Յետոյ, երկրպագութիւն անելով՝ մոգն ու ներքինին  
հեռացան:

Բաղդասար, Բալքիսի հետ միայնակ մնալով՝ փորձեց իո-  
սել, բաց արեց բերանը, բայց մի բառ անգամ չկարողացաւ  
արտասանել: Նա մտածեց: «Թագուհին իմ լուութիւնից պէտք  
է զայրանայ»:

Այնուամենայնիւ թագուհին դիո ևս ժպտում էր և բար-  
կացած երեսյթ չունէր:

Առաջինը նա խօսեց և ամենաքնքուշ երաժշտութիւնից  
աւելի քաղցր ձայնով ասաց.

—Թող ձեր գալուստը բարի լինի և նստէք ինձ մօտ:  
Եւ մի մատով, որ ասես սպիտակ լոյսի մի ճառագայթ  
լինէր, նա ցոյց տուեց ծիրանի բարձեր որ զետեղուած էին  
գետնի վրայ:

Բաղդասարը նստեց, մի մեծ հառաջանք արձակեց և իւ-  
րաքանչիւր ձեռքով մի-մի բարձ խլելով իսկոյն գոչեց.

—Տիկին, ես ցանկանում էի, որ այս երկու բարձերը ձեզ  
թշնամի երկու հսկաներ լինէին: Որովհետև ես նրանց վիզը  
կ'ոլորէի:

Ու, այսպէս խօսելով՝ նա բուռնցքի մէջ այնքան ուժգին  
սեղմեց բարձերը, որ կերպասը պատառ-պատառ եղաւ և նրան-  
ցից դուրս թուաւ սպիտակ աղուամազերի մի ամպ: Փոքրին  
փետուրնիրից մինը, պահ մի թոչկոտեցաւ օղի մէջ, յետոյ ե-  
կաւ հանգչեց թագուհու ծոցում:

—Տէր Բաղդասար, ասաց Բալքիս կարմրելով՝ ինչու համար ուզում էք հսկաներ սպանել:

—Որովհետեւ ձեզ սիրում եմ, պատասխանեց Բաղդասար:

—Ասացէք ինձ, հարցրեց Բալքիս, արդեօք ձեր մայրաքաղաքի հորերի ջուրը լաւ է:

—Այս պատասխանեց Բաղդասար, զարմացած:

—Ես հետաքրքիր էի նոյնպէս իմանալու, շարունակեց Բալքիս, թէ ի՞նչպէս են պատրաստում չոր բաղցրաւենիքները (confiture) եթովպիոյ մէջ:

Թագաւորը չգիտէր ինչ պատասխանէր: Նա ստիպեց.

—Ասացէք, ասացէք ինձ հաճոյք պատճառելու համար:

Այս ժամանակ նա յիշողութեան մի մեծ ճիգ արեց և նըլկարագրեց եթովպացի խոհարաբների՝ մեղրով սերկելի պատրաստելու եղանակները: Բայց թագուհին նրան չէր լսում: Յանկարծ նա ընդմիջեց.

—Տէր, ասում են, թէ դուք սիրում էք Կանդաս թագուհուն, ձեր գրացուհուն: Ինձ մի խարէք, նա ինձնից աւելի գեղեցիկ է:

—Աւելի գեղեցիկ, տիկին, գոչեց Բաղդասար Բալքիսի ոտքն ընկնելով, մի՞թէ կարելի է...

Թագուհին շարունակեց.

—Իսկ նրա աչքեցը, նրա բերանը, նրա մոյնը, նրա կոկորդը... Բաղդասար բազուկները տարածեց դէպի նա և աղաղակեց.

—Թոյլ տուէք վերցնել այն փոքրիկ փետուրը, որ հանգչել է ձեր պարանոցի վրայ և ես ձեզ կը բաշխեմ իմ թագուհութեան կէսը, Սամբորիտիս մոգի և Մանքերա ներքինիի հետ:

Բայց նա վեր կեցաւ և ծիծաղելով փախաւ մի յստակ քրքիչ արձակելով:

Երբ մոգն ու ներքինին ներս մտան, իրանց տիրոջ գտան մտածմունքի մէջ ընկղմած ինչ որ նրա համար շատ անսովոր բան էր:

—Տէր, գուցէ անկարող եղաք առետրական մի լաւ դաշինք կնքելու, հարցրեց Սամբորիտիս:

Այդ օրը Բաղդասար Սաբայի թագուհու հետ ընթրեց և արմաւի դիմի խմեց:

—Ճիշտ է, ասաց նրան Բալքիս, ընթրիքի ժամանակ, որ Կանդաս թագուհին ինձչափ գեղեցիկ չէ:

—Կանդաս թագուհին սեամորթ է, պատասխանեց Բաղդասար:

Բակիս՝ յանկարծակի նայեց Բաղդասարին և ասաց.

— Մարդ կարող է սեամորթ լինել, առանց տգեղ լինելու:

— Բաւքիս, աղաղակեց թագաւորը...

Աւելի չխօսեց: Նրան իր բազուկների մէջ առնելով՝ կոնակի վրայ պառկած պահում էր թագուհու ճակատը իր շրթների տակ, բայց տեսաւ որ նա լալիս էր: Այն ժամանակ նրան խօսեց շատ ցածր փայտայող ձայնով մի քիչ երգելով, ինչպէս անում են ստնդուները: Նրան իր փոքրիկ ծաղիկը, իր փոքրիկ աստղը անուանեց:

— Ինչո՞ւ լաց էք լինում, ասաց նրան: Եւ ինչ պէտք է անել որպէսզի ել դուք չլաք: Եթէ մի բանի փափագում էք, յայտնեցէք ինձ ձեր ցանկութիւնը և ես կը կատարեմ:

Նա չէր լաց լինում այլում և մնում էր մտածկուած: Նա երկար պնդեց որ իր փափագը յայտնէ:

Վերջապէս նա խօսեց.

— Ես վախենալ կ'ուզէի:

Որովհետեւ Բաղդասար չհասկացած լինելու երեսյթ ուշնէր, նա բացատրեց որ երկար ժամանակից ի վեր նա ցանկանում էր մի անձանօթ վտանգի ենթարկուել, բայց չէր կարողանում, որովհետեւ Սարայի մարդիկն ու աստուածները հսկում էին նրա վրայ:

— Այնուամենայնիւ, աւելացրեց ժամալով, ես ցանկանում էի, գիշեր ժամանակ, սարսափի զմայլելի ցրտին իմ մսի մէջ թափանցելն զգալ: Ես ցանկանում էի իմ մազերի ցից ցից տնկուելն զգալ իմ զլիսի վրայ: Օ՛հ, այնքան լաւ է վախենալը:

Նա իր բազուկներն անցկացրեց սեամորթ թագաւորի վզի շուրջը և պազատող երեխայի ձախով ասաց.

— Ահա գիշերը վրայ հասաւ: Երկուսս միասին ծալտուածքնանք մամն գանք քաղաքի մէջ: Ուզո՞ւմ էք:

Հաւանեց: Թագուհին անմիջապէս վաղեց դէպի պատուանը և ծառերի ճիւղերի միջից դիտեց հասարակաց հրապարակը:

— Մի մուրացիկ, ասաց նա, պառկել է պալատի պատիտ տակ: Տուէք նրան ձեր հագուստները և փոխարէնը պահանջեցէք նրա ուղտի մորթից շինուած զլիսի փաթթոցը (turban) և այն կոշտ կտաւեղէնը որ իր մէջըն է կապում: Շուտ արէք, ես գնում հմ պատրաստուելու:

Ու ինչոյքի սրահից դուրս վաղեց ցնծութիւնից ծափահարելով:

Բաղդասար իր ոոկեհուու, վշեայ պատմուճանը տուաւ մուրացին և առաւ նրա փաթթոցն ու սպածանելին: Նա այդ-

պէս մի ճշմարիտ ստրուկի կերպարանքն ունէր: Թագուհին անմիջապէս երևեցաւ: Նա հագել էր այն առանց կարի կապով շրջազգեստը, որ դաշտում աշխատող կիներն էին կրում:

— Գիշենք, ասաց նա:

Ու նեղ նրբանցքներից, նա քաշ արեց Բաղդասարին, մինչև մի փոքրիկ դուռ որ բացւում էր դաշտերի վրայ:

## II

Մութ գիշեր էր: Բալքիսը գիշերուայ մէջ բոլորովին փոքրիկ էր երեսում: Նա Բաղդասարին առաջնորդեց այն գինետներից մինը, ուր հաւաքւում էին գողերն և քաղաքի բեռնակիրները պոռնիկների հետ: Գինետնում, երկուսը միասին մի սեղանի առաջ նստելով՝ կեղտոտ լամպի աղօտ լոյսի տակ, ապականուած մթնոլորտում տեսան գարշահոտ անբանները, որ մի կնոջ կամ մի բաժակ ողելից լմպելիքի համար իրարուխը փում էին բռունցքով կամ դանակով: Ուրիշները՝ խոսմում էին սեղանների տակ ընկած, բռունցքները սեղմած: Գինեպանը, պարկերի մի դէզի վրայ պառկած՝ խոհեմաբար, աչքի ծայրով արբեցողների արիւնալից կոիւն էր դիտում:

Բալքիս, առաստաղի գիրաններից կախ արած աղած ձուկեր նշմարելով ասաց իր ընկերոջ:

— Ես կամենում էի այդ ձկներից մինն ուտել ջարդուած սոխով:

Բաղդասար բերել տուաւ ձուկը: Երբ նա կերաւ, Բաղդասար նկատեց որ հետը զրամ վերցրած չէր: Ոչի՞նչ, մտածեց նա, առանց վճարելու կը մեկնենք: Բայց զինեպանը դրանց օձիքից բռնեց, կեղտոտ հայնոյանցներ թափելով նրանց գլխին: Բաղդասար բռունցքի, մի հարուածով գետին փոեց նրան: Բազմաթիւ արբեցողներ՝ սուրը մերկացրած յարձակուեցին այն ժամանակ երկու անծանօթների վրայ: Բայց սեամորթը՝ եղիպտական սոխեր մանրելու ծառայող մի անազնի ցուլպով զինուած լինելով, յարձակուողների երկուսին գետին տապալեց և հարկադրեց միւսներին նահանջելու: Նա՛ վախից իր մօտ ապաստանող Բալքիսի մարմի տաքութիւնն էր զգում: և դրա համար էլ անյաղթելի էր: Գինեպանի բարեկամները, այլիս չամարձակուելով նրան մօտենալ, խանութիւնը նրա վրայ կարկտի նման թափեցին իւղի կարասներ, անազեայ թասեր, վառուած լամբեր, և մինչև անգամ բրոնզեայ խոշոր պտուկը, ուր եփւում էր մի ամրող ոչխար: Այդ պտուկը մի սասափելի ժիրով ընկաւ Բաղդասարի գլխի վրայ

և նրա գանգը ձեղքեց։ Նա մի վայրկեան շշկուած մնաց, ապա իր ուժերը հաւաքելով պտուկը այնպիսի ուժզնութեամբ նետեց դէպի հակառակորդները որ բաղխումի շառաչին խառնուեցին անօրինակ ոռնումներ, և հոգեվարքի հոնդիւններ։ Կենդանի մնացածների սարսափից օգտուելով և վախենալով որ մի գուցէ Բալքիւալ վիրաւորուի, նրան իր բազուկների մէջ առաւ և փախաւ մութ ու ամայի փողոցներից։

Դիշերուայ լոռութիւնը՝ պատում էր երկիրը և փախստականները՝ իրանց ետե, արքեցողների և ըստ բաղդի նրանց հալածող կիսերի աղաղակների հետըղչետէ նուազումը լսում էին։ Շուտով նրանք Բաղդասարի ճակատից՝ Բալքիսի պարանոցի վրայ ընկնող արեան կաթիւնների թեթև չփշփոցը միայն լսեցին։

— Սիրում հմ քեզ մրմնջեց թագուհին։

Ու լուսինը՝ մի ամպի ետևից դուրս գալով՝ թագաւորը Բալքիսի կիսախուվի աչերի մէջ, արցոննքի մի սպիտակ՝ ու փալփուն շիթ նշմարեց։ Նրանք վայր էին իջնում մի չորացած հեղեղի անկողնուց։ Յանկարծ Բաղդասարի ոտքը սահեց։ Գիրկընդիմանն նրանք վայր ընկան։ Նրանց թուաց, որ խորսուգւում էին մի զմայլելի անէութետն մէջ և ապրող աշխարհը դադարեց այլևս նրանց համար գոյութիւն ունենալուց։ Նրանք ըմբոշինում էին դեռևս ժամանակի, թուի և տարածութեան թովիչ մոռացումը, երբ, արշալոյին՝ վիթերը եկան իրանց ծառաւն անցնել ժայռերի խոռոչներում հաւաքուած ջրից։

Այդ պահին, անցնող աւաղակները մարգագետնի վրայ պառկած երկու սիրահարներին տեսան։

— Խեղճ, աղքատ հն, ասացին աւաղակները, բայց մենք նրանց մեծ գնով կը ծախենք, որովհետեւ երիտասարդ են և գեղիցիկ։

Ու այս ասելով մօտեցան նրանց, կապկապեցին ու մի էշի պոչին կտակելով իրանց ճամբան շարունակեցին։

Սևամորթը՝ շղթայկապ, աւաղակների դէմ մահուան ըստամալիքներ էր կարդում։ Բայց Բալքիսը՝ առաւտեան զով օդի մէջ սարսուալով՝ մի ինչ որ անտեսանելի բանի ժպտում էր կարծեւ։

Սարսափելի լուռ տեղերից անցկացան մինչև որ արեգակի ջերմութիւնը զգալի եղաւ։ Արեւ շատ էր բարձրացել արդին, երբ աւաղակներն իրանց բանտարկեալների կապանքները քակելով, մի ժայռի ստուերի տակ, իրանց մօտ նստեցրին, նրանց առաջ մի քիչ մլստած հաց զցեցին, որը Բաղդասար

արհամարհանքով մերժեց վերցնել, բայց Բալքիս ագահաբար կերաւ:

Թագուհին ծիծաղում էր: Եւ երբ աւազակների պետը նըրան հարցրեց. թէ ինչն համար էր ծիծաղում.

—Ծիծաղում եմ, պատասխանեց, մտածելով՝ որ ձեզ ամենքիդ պէտք է կախել տամ:

—Իրաւ, բացազնշեց աւազակապետը, ահաւասիլ մի տարօրինակ խօսք քեզ նման մի թաթախամաններ լուացողի համար, նոնոշնկաս: Անկասկած քու խափշիկ սիրահարիդ ձեռքով է որ մեզ ամենքիս կախել պիտի տաս չչ:

Երբ այս նախատական խօսքերը լսեց, Բաղդասար սարսափելի զայրոյթի մէջ ընկաւ և աւազակի վրայ խոյանալով նրա վիզն այնպէս ուժգին սեղմեց որ մազ մնաց խեղդէր:

Բայց աւազակը՝ իր դանակը մինչև կոթը խրեց նրա փորի մէջ: Խեղճ թագաւորը գետին թաւալելով՝ մի օրհասական հայեացք գցեց Բալքիսի վրայ և աչքերը փակեց:

### III

Նոյն պահին, մարդիկների, ձիերի և զէնքերի մի մեծ ժխոր լուեց և Բալքիս ճանաչեց քաջ Աբներին, որ իր զօրախըմբի գլուխն անցած՝ եկել էր իր թագուհուն ազատելու, որի խորհրդաւոր անյայտացումը նախորդ երեկոյից իմացել էր արդէն:

Նա երեք անգամ Բալքիսի առաջ երկրպագեց և հրամայեց իր մարդկանց, որ թագուհու համար պատրաստուած գահաւորակը նրա մօտ տանեն: Զինուորները՝ աւազակների ձեռքերը կապուում էին: Թագուհին դարձաւ դէպի աւազակապետը և քաղցրութեամբ ասաց.

—Դուք ինձ չէք մեղաղըեր անշուշտ, բարեկամս, թէ ձեզ մի դատարկ խօստում արի, երբ ասացի որ դուք կախաղան պիտի բարձրանայիք:

Սամբորիտիս մոգն ու Մանքերա ներքինին, որ Աբների կողքին կանգնել էին մեծ աղաղակներ արձակեցին, երբ իրանց իշխանին տեսան անշարժ գետնի վրայ տարածուած՝ մի գանակ փորի մէջ մխուած: Զգուշութեամբ նրան բարձրացըին: Սամբորիտիս, որ բժշկական արուեստի մէջ վարպետ էր, նըկատեց որ նա դեռ ևս շնչում էր: Մինչդեռ ինքն զբաղուեց վերքերը շտապով կապելով՝ Մանքերա թագաւորի բերանի փրփուրներն էր սրբում: Յետոյ նրանք Բաղդասարին ամրացը-

րին մի ձիու վրայ և յամրօթէն առաջնորդեցին թագուհու պաշտը:

Բաղդասար՝ ամբողջ տասնեհինգ օր բուռն զառանցանքի մէջ անցկացրեց: Նա անդադար խօսում էր եռ եկող պտուկի, հեղեղի բաց արած ճանապարհի մէջ աճած մամուռի մասին և Բալքիսին էր կոչում բարձրածայն: Վերջապէս, տամնևիցերորդ օրուայ մէջ, աչքերը բանալով իր մնարի մօտ տիսաւ Սամբորիտիսին և Մանքերային, բայց թագուհուն չտեսաւ:

—Ո՞ւր է, ի՞նչ է անում թագուհին:

—Տէր, պատասխանեց Մանքերա, նա Կոմաժենի թագաւորի հետ փակուած է մի սենեակում:

—Անտարակոյս, նրանք համաձայնութիւն են կայացնում ապրանքներ փոխանակելու համար, աւելացրեց իմաստուն Սամբորիտիսը: Բայց դուք մի վրդովուէք, տէր, որովհետև ձեր տեսդը կարող է սաստկանալ:

—Ես ուզում եմ նրան տեսնել, գոչեց Բաղդասար:

Եւ նա խոյացաւ դէպի թագուհու առանձնասենեակը ու ծերունին և ներբինին անկարող գտնուեցին նրան արգելելու: Ննջասենեակի մօտ համնելով՝ նա Կամոժենի թագաւորին տեսաւ, որ ոսկու տակ արեգակի նման փայլվլուն դուրս էր գալիս այնտեղից:

Բալքիս՝ մի ծիրանի անկողնու վրայ տարածուած՝ աչքերը փակ ժպտում էր:

—Իմ Բալքիս, իմ Բալքիս աղաղակեց Բաղդասար:

Բայց նա իր գլուխը չէր գարձնում և թւում էր թէ խորասուզուած է մի երկար երազի մէջ:

Բաղդասար նրան մօտեցաւ և ըսնեց նրա մի ձեռքը, որը նա խոկոյն քաշեց:

—Ի՞նչ էք ուզում ինձանից, ասաց նա:

—Դուք հարցնո՞ւմ էք, պատասխանեց սևամորթ թագաւորը արտասուզների մէջ պայթելով:

Նա գարձրեց դէպի Բաղդասարը իր խաղաղ ու խստահայեաց աչքերը:

Բաղդասարը հասկացաւ որ նա ամեն բան մոռացել էր և նըրան յիշեցրեց հեղեղի անկողնու մէջ անցկացրած գիշերը: Բայց նա,

—Ես չգիտեմ, ճշմարիտը, ի՞նչ էք ուզում ասկը, Տէր: Երկի անպատճառ դուք երազում էք:

—Ի՞նչ, աղաղակեց գժբախտ իշխանը բազուկները գալաւելով, քո՛ համբոյըները և այն դանակը, որի հետքերը պահել եմ, երազնե՞ր են արդեօք...»

Նա վեր կացաւ. նրա շրջազգեստի ակունքը կարկուտի նըման աղմուկ բարձրացրին և փայլակներ արձակեցին:

—Տէր, ասաց, ահաւասիկ ժամը, ուր ես իմ նախարարների հետ խորհրդի պէտք է հստեմ: Ես ձեր հիւանդ ուղեղի երազները լուսաբանելու աւելորդ ժամանակ չունիմ: Հանգստացէք: Մնաք բարեաւ:

Բաղդասար՝ կթոտելով՝ մեծ ճիգ գործ դրաւ այդ չար կնոջից իր տկարութիւնը ծածկելու համար. վակեց իր սենհակը և ուշաթափ ընկաւ, որովհետև նրա վէրքը բացուել էր:

## IV

Նա երեք շաբաթ մնաց անզպայ, որպէս մեռել, յետոյ քըսաններկորդ օրը ուշքի գալով՝ Սամբորիտիսի ձեռքից բռնեց, որը Մանքերայի հետ հսկում էր իր վրայ և լալագին գոչեց.

—Օ՞հ, բարեկամներս, որքան երջանիկ էք դուք երկուսդ, որովհետև ձեզնից մինը ծերունի է իսկ միւսը նման ծերունու... Բայց ոչ, աշխարհում երջանկութիւն չկայ և ամեն ինչ վատ է երկրի վրայ, քանի որ սէրը մի չարեք է և Բալքիսը չար:

—Իմաստութիւնն է մարդուն բախտաւորացնում, պատասխանեց Սամբորիտիս:

—Ես ցանկանում եմ փորձել, ասաց Բաղդասար: Օ՞հ, ճանապարհ ընկնենք շուտով դէպի Եթովպիտի: Եւ որովհետև նա իր սիրածին կորցրել էր, վճռեց նուիրուել իմաստութեան և դառնալ մոգ: Եթէ այդ որոշումը նրան ոչ մի հաճոյը չէր պատճառում, գորէ մի փոքր խաղաղութիւն կը պարզեէր: Առմին երեկոյ, Սամբորիտիս մոզի և Մանքերաներքինի հետ իր պալատի պատշգամբում նստած՝ հորիզոնում երևացող անշարժ արմունխներն էր դիտում և կամ լուսնի լուսով՝ ծառի կոճըղերի նման նեղոսի վրայ ծածանող կոկորդիլոսներին էր դիտում:

—Բնութիւնը դիտելով մարդ երբէք չի կշտանում, ասում էր Սամբորիտիս:

—Անտարակոյս, պատասխանում էր Բաղդասար: Բայց ընութեան մէջ կայ մի բան արմաւենիներից և կոկորդիլոսներից աւելի գեղեցիկ:

Այդպէս էր խօսում որովհետև միտքն էր ընկնում Բալքիսը: Եւ Սամբորիտիս, որ ծերացել էր, ասում էր.

—Նեղոսի աճումի երեկոյթը կայ որ հիանալի է և որը ես բացատրեցի: Մարդ աշխարհ եկած է հասկանալու համար:

—Նա ծնած է սիրելու համար պատասխանում էր Բաղասար հառաջելով։ Կան բանեք, որ չեն բացատրուի։

—Որժնք են այդ բաները, հարցրեց Սամբորիտիս։

—Մի կոչ մատնութիւնը, պատասխանեց թագաւորը։

Այսուամենայնիւ Բաղդասար՝ վճռած լինելով մոգ դառնալ, կառուցանել տուաւ մի աշտարակ որի բարձրութիւնից տեսնում էր բազմաթիւ թագաւութիւններ և երկնքի ամրող տարածութիւնը։ Այդ աշտարակը աղիւսից էր և միւս բոլոր աշտարակներից բարձր էր։ Երկու տարուց պակաս ժամանակի մէջ չշինուեց և Բաղդասար նրան կառուցանելու համար իր հօր արքայական ամրող հարստութիւնը ծախսել էր։ Ամեն զիշեր այդ աշտարակի կատարն էր բարձրանում և, այնուղի, իմաստուն Սամբորիտիսի հսկողութեան տակ զննում էր երկինքը։

—Երկնքի պատկերները մեր ճակատագրերի նշաններն են, նրան ասում էր Սամբորիտիս։

—Պէտք է նրանց ճանչնալ, այդ նշանները մութ են։ Բայց, մինչդեռ ես նրանց ուսումնասիրում եմ, ես չեմ խորհում Բալքիսի վրայ և այդ մի մեծ առաւելութիւն է։

Մոգը նրան ուսուցանում էր, բացի այլ օգտակար ճշշմարտութիւններից՝ գիտենալ որ աստղերը, զամերի պէս, երկնակամարի վրայ հաստատուած են և որ հինգ մոլորակներ կան, օրինակ, Բել, Մելոտախ, Ներօ, որ արու են, Սին և Միլիտա, որ էզ են։

—Արծաթը, նրան ասում էր դարձեալ, համապատասխանում է Սինի, որ լուսինն է, երկաթը Մելոտախի, անազը Բելի։

Եւ բարի Բաղդասարը ասում էր.

—Ահա այն գիտութիւնները, որոնց ես ուզում եմ ստանալ։ Մինչդեռ ես ուսումնասիրում եմ աստղաբաշխութիւնը, աշխարհի վրայ ոչ մի բան, ոչ իսկ Բալքիսի վրայ եմ խորհում։ Գիտութիւնները բարերար են, նրանք արգելում են մարդոց խորհել։ Սամբորիտիս, սովորեցրու ինձ այն գիտութիւնները որոնք մարդոց մէջ ջնջում են զգացումը, և ես քեզ ձեռքի վրայ ման ածել կը տամ իմ ժողովրդի մէջ։

Ահա ինչու համար Սամբորիտիս թագաւորին սովորեցրեց իմաստութիւնը։

Դ' Աստրամպսիկոսի, Գորբիառի և Պաղատասի սկզբունքների համեմատ նրան սովորեցրեց առուել magique-ը։ Բաղդասար՝ որչափ աւելի շատ էր զննում արեգակի տասներկու տաները (maisous), այնքան աւելի նուազ էր մտածում Բալքիսի մասին։

Մանքերա երբ այդ նկատեց, մեծ ուրախութիւն զգաց: — Խոստովանեցէք, տէր, «ասաց նա մի օր, որ Բալքիս թագուհին իր ոսկեհուռա շրջազգեստի տակ թագյնում էր իր ոտները որ այծի ոտների նման կծղակաւոր էին:

— Ո՞վ պատմեց քեզ այդ տեսակ յիմարութիւններ, հարցըրեց թագաւորը:

— Ամենքի կարծիքն է այդ, տէր, և Սարայում և Եթովպիայում, պատասխանեց ներքինին: Ամեն մարդ պարզորէն ասում է որ Բալքիս թագուհու սրունքը մազու է և ոտքերը երկու սև եղջիւբներից շինուած:

Բաղդասար ուսերը ցնցեց: Նա գիտէր, որ Բալքիսի սըրունքներն ու ոտքերը ուրիշ կանանց սրունքների և ոտների նման էին և կատարելապէս գեղեցիկ: Այսուհանդերձ այդ միտքը վչացրեց յիշողութիւնը՝ նրան՝ որին այնքան սիրել էր: Կարծես Բաղդասար մեղագրելիս լինէր Բալքիսին նրա համար, որ իր գեղեցկութիւնը՝ իրան տնծանօթ անձերի երևակայութեան մէջ անստգիւտ չէր: Այս մտածումը, թէ նա վայելել էր իրապէս մի բարեկազմ կնոջ, որը ուրիշների կարծիքով հրէշաւոր էր—նրան տիրեցրեց և նա այլևս չցանկաց տեսնել Բալքիսին: Բաղդասարի հոգին պարզ էր թէ՛ս, բայց սէրը միշտ մի բարդ զգացում է:

Այդ օրուանից սկսած՝ թագաւորը մեծ տուաշալիմութիւն արեց մոգութեան և աստղաբաշխութեան մէջ: Նա չափազանց ուշադիր էր աստղերի հանդիպութիւններին և նա նոյնքան անսըլսալ աստղապէտ էր, որքան նոյնինքն իմաստուն Սամբորիտիսը:

— Սամբորիտիս, կարող ես քո գլխով՝ երաշխաւորել իսկ գուշակութիւնների ստուգութիւնը:

Եւ իմաստուն Սամբորիտիսը պատասխանում էր.

— Տէր, գիտութիւնը անսխալ է, բայց գիտունները սխալ եռմ են միշտ:

Բաղդասար մի բնական գեղեցիկ հանճար ունէր: Նա ասում էր.

— Ճշմարիտ է միայն այն ինչ աստուածային է: Իսկ աստուածայինը մեղանից պահուած է: Մենք իզուր ենք վիտը սում ճշմարտութիւնը: Այսուամենայնիւ, ահա ես մի նոր աստղ գտայ երկնքում: Նա գեղեցիկ է ու կենդանի է թւում. երբ նուշողողում է ասես մի երկնային աչք լինի որ մեղմիւ քիթում է: Կարծես թէ նա ինձ կոչում է: Երանի՛, երանի՛, երանի՛ նըրան, որ այդ աստղի տակ կը ծնի: Սամբորիտիս, տես, ի՞նչ հայեացք է զցում մեզ վրայ այդ հիսանալի ու շքեղ աստղը:

Բայց Սամբորիտիս աստղը չտեսաւ, որովհետև չէր ուզում  
առենել: Գիտուն և ծեր՝ նա նորութիւնները չէր սիրում:

Ու Բաղդասար՝ գիշերուայ լոռութեան մէջ կրկնում էր  
միայնակ.

—Երանի, երանի, երանի նրան որ այդ աստղի տակ  
կը ծնի:

## V

Արդ, ամբողջ եթովպիայի և շրջակայթագաւորութիւննե-  
րի մէջ լուր տարածուեց, որ Բաղդասար թագաւորը չէր սի-  
րում այլևս Բալքիսին:

Երբ լուրը սարացների երկիրը հասաւ, Բալքիս զայրա-  
ցաւ որպէս թէ նրան դաւաճանած լինէին: Վազեց Կամոժենի  
թագաւորի մօտ որ իր կայսրութիւնը մոռացել էր Սարա քա-  
զաքում և գոչեց.

—Բարեկամս, գիտէք ինչ նոր լուր հաղորդեցին ինձ—  
Բաղդասար այլևս ինձ չի սիրում:

—Ի՞նչ փոյթ, ժամագին պատասխանեց Կամոժենի թա-  
գաւորը, քանի որ մենք սիրում ենք իրար:

—Բայց դժւք չէք զգում այն նախատինքը որ այդ լսար-  
շեկը անում է ինձ:

—Ո՞չ, պատասխանեց Կամոժենի թագաւորը, ես չեմ ըզ-  
գում:

Բալքիս նրան խայտառակ կերպով վռնտեց և իր մեծ ե-  
պարզուին հրամայեց, որպէսզի ամեն ինչ պատրաստէ եթով-  
ովիա ճանապարհորդելու համար:

—Այս գիշեր իսկ պէտք է ճանապարհ ընկնենք, ասաց  
թագուհին: Եթէ մինչև վերջալոյս ամեն ինչ պատրաստ չենի  
կորել կը տամ զլուխուգ:

Յետոյ, երբ միայնակ մնաց, սկսեց հեծեծել:

—Ես նրան սիրում եմ: Նա ինձ չի սիրում այլևս, և ես  
նրան սիրում եմ, հառաջեց իր սրտի ըլոլոր անկնդութեամբ:

Արդ, մի գիշեր, մինչդեռ իր աշտարակի վրայ էր բարձը-  
րացել հրաշագործ աստղը գտնելու համար, Բաղդասար՝ աչ-  
քերը խոնարհեցնելով դէպի երկիր, մի երկար ու զիծ տեսաւ  
որ հեռուն անտպատի մէջ աւագների վրայ օձալտոյս գալար-  
ում էր ինչպէս մըջիւնների մի բանակի Փոքրառփոքր, ինչ  
որ մըջիւն էր թւում, միծացաւ և ճշգուեց, ու թագաւորը նըշ-  
մարեց որ ձիեր, ուղտեր և փիղեր էին:

Կարաւանը քաղաքին մօտեցած լինելով՝ Բաղդասար՝

Սաբայի թագուհու թիկնապահների փալիլուն, կեռ սուրերն ու սև ձիերին տեսաւ: Բաղդասար ճանաչեց և Բալքիսին: Ու մի մեծ խոռվա պատեց նրան: Զգաց որ նրան դարձեալ պիտի սիրէր: Աստղը՝ երկնակամարում մի հրաշալի փայլով փողփառ զում էր: Ցածրում, Բալքիս՝ մի ծիրանեզարդ ու ուկեքանդակ գահաւորակի մէջ պառկած՝ փոքրիկ ու փայլուն էր ինչպէս աստղը:

Բաղդասար՝ իրան ձգուած էր զգում դէսլի նա՛ մի անգուսպ մղումով: Այնուամենայնիւ զլուսը նրանից դարձեց մէգերագոյն ջանքով և աչքերը դէպի երկինը բարձրացնելով վերըստին տեսաւ աստղը:

Այն ժամանակ աստղը խօսեց ու ասաց.

«Փառք Աստծուն երկնքումը, երկրի վրայ խաղաղութիւն, և մարդկանց մէծ հաճութիւն:

«Վերցրն մի չափ զմուռս, բարեսիրտ արքայդ Բաղդասար և հետեիբ ինձ: Ես քեզ կ'առաջնորդեմ դէպի այն փոքրիկ երեխան, որ մի մսուրում ծնաւ էշին և եղին մէջտեղ:

«Ու այս փոքրիկ երեխան թագաւորների թագաւորն է: Նա պիտի մխիթարէ նրանց, որոնք պէտք ունէին սփոփանքիւ:

«Նա կանչում է քեզ դէպի իրան, ով դու, Բաղդասար, ուրի հոգին նոյնքան մոայլ է որքան դէմքը, բայց որի սիրտը պարզ է ինչպէս մի երեխայի սիրուը:

«Նա քեզ ընտրեց որովհետեւ զու տառապեցիր, ու նա քեզ պիտի տայ հարստութիւնը, ուրախութիւնն ու սէրը:

«Նա քեզ կ'ասէ. Հընտեւելով եղիր աղքատ, ահա զըրանումն է կայանում ճշմարիտ հարստութիւնը: Նա քեզ կ'ասէ նոյնպէս. Ճշմարիտ ուրախութիւնը, ուրախութիւնից հրաժարուելու մէջ է: Սիրիր ինձ, և իմ մէջ միայն սիրիր միւս աւարածներին, որովհետեւ ես եմ միայն սէրը:»

Այս խօսքերից յետոյ, թագաւորի մոայլ դէմքի վրայ մի աստուածային խաղաղութիւն տարածուեց, որպէս լոյս:

Բաղդասար հիացած՝ մտիկ էր անում աստղին: Ու զգում էր որ մի նոր մարդ է դառնում: Սամբորդիտիս և Մանքերա՞ գետնամած երկրպագութիւն էին անում իր կողքին:

Բալքիս թագուհին դիտում էր Բաղդասարին: Նա հասկացաւ, որ աստուածային սիրով լեցուած այդ սրտում այլևս սէր չէր կարող լինել երբէք իրան համար: Մոլեկնութիւնից տըժգունուեց և հրամայեց կարաւանին անմիջապէս վերադառնաւ Սաբայի երկիրը:

Երբ աստղը դադարեց խօսելուց, թագաւորն և իր երկու ընկերները աշտարակից իջան: Յետոյ, մի չափ զմուռս պատը-

բաստելով՝ մի կարաւան սարքեցին և առաջ խաղացին աստղի առաջնորդութեամբ։ Երկար ժամանակ նրանք ճանապարհորդեցին անձանօթ գաւառներով և աստղը քայլում էր միշտ նրանց առաջից։

Մի օր, երեք ճանապարհի մէջտեղ հասնելով՝ երկու թագաւորների տեսան, որ բազմաթիւ հետևորդներով գնում էին։ Մինը երիտասարդ էր և սպիտակամորթ։ Բաղդասարին ողջունեց նա և ասաց։

—Իմ անունն է Գասպար, ես թագաւոր եմ և Հրէաստանի Բեթղեհեմ քաղաքում ծնուած երեխային ոսկի եմ լնծայ տառնում։

Երկրորդ թագաւորը նոյնպէս մօտեցաւ։ Մի ծերունի էր, որի սպիտակ մօրուքը ծածկում էր կուրծքը։

—Իմ անունն է Մելքոն, ասաց, ես թագաւոր եմ և խունկ եմ տանում այն աստուածային երեխային որ ծնուել է մարդկանց ճշմարտութիւնն ուսուցանելու համար։

—Ես էլ ձեղ նման նրա մօտ եմ գնում ասաց Բաղդասար։ Ես յաղթահարեցի իմ պակշոտութիւնը, ահա ինչո՞ւ համար աստղը ինձ խօսեց։

—Ես, ասաց Մելքոն, յաղթահարեցի իմ հպարտութիւնը, ահա ինչո՞ւ համար կոչուեցի։

—Ես, ասաց Գասպար, յաղթահարեցի իմ անգիտութիւնը, ահա ինչո՞ւ համար ձեղ հետ եմ գնում։

Ու երեք մոգերը միասին շարունակեցին իրանց ճանապարհը։ Արևելքի աստղը առաջնորդում էր նրանց, նա հասնելով վերջապէս այն տեղի վրայ ուր ծնուել էր երեխան, կանգ առաւ։

Արդ, աստղի կանգ առնելը տեսնելով՝ նրանք սաստիկ հրձուեցին։

Եւ ներս մտնելով՝ երեխային գտան՝ իր մօր՝ Մարիամի հետ, և երկրպագելով պաշտեցին նրան։ Ու, բաց անելով իրանց զանձերը, ընծայեցին ոսկի, խունկ և զմուռս ինչպէս ասուած է Աւետարանում։

Թարգմ. Փրանսերէնից Տ. ԶԱՀԻՆ

## ՓԻԼԻՍՈՓԵՅՈՒԹԵԱՆ ՄՏՔԻ ԲՆԳՀԵՆԱԽԻ ԷՓՈՒԹԻՑԻՑԻ ՈՒԹՈՒՅԻՒԺԻԾԼ

Փիլիսոփայութեան մէջ գոյութիւն ունեցող բաղմատեսակ վարդապետութիւնները կարելի է վերածել grosso modo երկու հակադիք ուզգութիւնների: Նրանք երկուսն էլ ծնունդ են առել հնագարեան անցեալում Յունաստանի մէջ, զարգացել, հասել են մինչև մեր օրերը. երկուսն էլ ունեցել են փայլուն բարգաւաճման իրանց շրջանները: Մէկ ուզգութիւնը կոչւում է իդէալիզմ, միւսը մատերիալիզմ<sup>\*)</sup>:

Մէկը պնդում է, թէ զաղափարն է (idée) միակ ու ըսկը բնական իրողութիւնը և թէ ամբողջ արտաքին աշխարհը սոսկ այդ մտքի արտացոլումն է, նրա ստեղծագործութիւնը: Միւսը պնդում է, թէ նիւթն է դոյութեան միակ սկզբունքը և թէ բովանդակ տիեզերքը, նրա հետ միասին և միտքն ու գաղափարը՝ ծնունդ են այդ նիւթի յաւիտենական շրջանառութեան:

Հետեւնք երկուսի էւոլիւցիային:

Մարդը շատ վազուց սկսել է փիլիսոփայել: Տիեզերական առեղծուածները միշտ կաշկանդել են նրա ուշադրութիւնը և լուծում պահանջել. բնութիւնը ու շարժում, անսառւն և ասուն, կհանք, ոգի... միշտ առեղծուածները: Ո՞րտեղից և ինչպէս ունեն նրանք գոյացել... Կամ գուցէ իրօք գոյութիւն չունին, գուցէ այն բուլութը, ինչ որ մենք շօշափում, լսում ու տեսնում ենք, բանդագուշնք է միայն, մեր մորքի ու երևակայութեան ծննդնդ: Գուցէ իմ «ես»-ն է միայն, որ գոյութիւն ունի... Այդ վերջին ենթագրութիւնն է իդէալիզմի չուկէտը. նրա համար իրականը սուբ'եկտն է կամ «ես»-ը (le sujet, le moi), որը՝ այսպէս ասած՝ կը անում է օր'եկտը, «ոչ-եսը» (l'objet, le non-moi):

\*) Ենք ուզում հայացնել մեր արևմտեան հայրենակիցների պէս փիլիսոփայական մի շարք տերմիններ, որոնք ընդունուած են բոլոր քաղաքակիրթագերի մէջ: Միենայն է, փիլիսոփայութեան տարերքների հետ անծանօթ ընթերցողին նոյնքան քիչ բան կ'ասեն «դադարիտրապաշտութիւն», «նիւթապաշտութիւն», «գրագիտութիւն», «ընտապանցութիւն» և այլ բառերը, որքան և «իդէալիզմ», «մետաֆիզիկա» հային:

Նրա հինաւուրց փայլուն ներկայացուցիչը՝ Պլատոն (ծն. 430 թ. Բ. ա.) պնդում էր, թէ գաղափարները մի-մի գոյութիւններ են, մի-մի էակներ։ Անթիւ վերացական գաղափարներ – արգարութիւնն, բարութիւնն, գեղեցկութիւնն ևայլն – որ մինք ստանում ենք առարկաններից ու փաստերից մեր մտքի վերլուծող ու ընդհանրացնող գործողութեամբ, նոյնովիսի իրական գոյութիւնն ունէին Պլատոնի համար, ինչպէս մեզ համար այսինչ մարդը, կամ այսինչ ծառը։

Սովորական մարդկային միտքը ըմբռստանում է այս անհեթեթութեան դէմ։ Ես տեսնում եմ այս ազնիւ մարդուն, բայց ես չիմ տեսնում ազնութիւնը։ Ես տեսնում, շօշափում եմ այս գեղեցիկ պատկերներն ու արձանները, բայց ինքը գեղեցկութիւնը անջօշափելի ու անտեսանելի է ինձ։

Սակայն պլատոնական իդէալիզմի համար անհեթեթ ոչինչ չկայ այդտեղ։ Դաղափարները ինքնուրոյն, անկախ արարածներ են, այսինչ տեսանելի և անտեսանելի իրերը գոյութիւն ունին միայն գաղափարներով։ Այս վերջինների պատճէններն են նրանք։ Ամբողջ տիեզերքը ոչ այլ ինչ է ըստ Պլատոնի, եթէ ոչ մի ստուեր, մի սոսկ խորհրդանշան, մի այլաբանութիւն, և փիլիսոփան հետաքրքրում է այդ տիեզերքով ճիշտ այնպէս, ինչպէս դուք հետաքրքրում էք ձեր բարեկամի լուսանկար պատկերով, երբ զրկուած էք նրա ներկայութիւնից։ Ճիշտ նախատիպը գաղափարներն են, մնացածը բոլորը նրանց պլատճէնն է։ – ահա պլատոնական իդէալիզմը։

Նրան յաջորդեցին հին ու միջին դարերում բազմաթիւ խառը սիստեմներ որոնց մէջ դժուար է տեսնել գերակշռումը այս կամ այն աշխարհայեցութեան։ Այսպէս Արիստոտելի և Դեկարտի և նրանց մի շարք հետևողների փիլիսոփայական սիստեմները։ Դեկարտիան դպրոցի ամենահանճարեղ ներկայացուցիչը Սպինոզային (ծն. 1632 թ.) ումնք հոչակում են իրեն մատերիալիստ, ուրիշները իդէալիստ։ Նրա փիլիսոփայութեան հիմունքն է՝ մտքի և բնութեան (սուբ'եկտի և օբ'եկտի) նոյնութիւնը, մի բան, որ շեշտում է և մատերիալիզմը \*):

Բայց Սպինոզան յանգում է այդ եզրակացութեան ոչ թէ փորձով, այլ սոսկ դատողութեամբ, ոչ թէ և posteriori, այլ և priori։ Նա նոյնացնում է միտքն ու բնութիւնը ոչ թէ վերածելով անգործարանաւոր կամ անօրգան կիանքը գործարա-

\* ) Այդ պատճառով և Սպինոզայի փիլիսոփայութիւնը կոչում է առնիզմ, — նա վերածում է տիեզերական բալոր երևոյթները մի միայնակ գոյացութեան, չութեան, մեկ սուբստանցի։

նաւորի կամ օրգանաւորի և այդ վերջինը հոգեկան կեանքի—այլ նա նոյնացնում է միտքն ու բնութիւնը (եսն ու ոչ-եսը), յիշուելով կամայականօրէն սոսկ այն ապացոյցների վրայ, որ մատակարարում է իր ուղեղը, գատողութիւնը։ Այդուեղ նա նման է իդէալիստ փիլիսոփաներին։ որովհետև, յիրաւի, իդէալիզմի բոլոր ներկայացուցիչների ընդհանուր և բնորոշ յատկանիշն է այդ ասլըիօրիստական մեջողը (la méthode à priori), որ վերջնականապէս գտարուած է գիտութիւններից։

Մեծ զարկ տուեց իդէալիստական հոսանքներին անգլիացի հռչակաւոր փիլիսոփա Բերկլէյ (1684—1753 թ.)։

Նա էլ նոյնացնում է (identifier) բոլոր երկոյթները, բայց վերածելով նրանց իր մտքն, գիտակցութեան։ Այն, ինչ որ մենք անուանում ենք բնութիւն, արտաքին աշխարհ, Բերկլէյի համար ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի գումար իր սեփական տպաւութիւնների և մտապատկերներով։ Խարուսիկ մի պատրանք է, երբ կարծում ենք թէ իրերը զոյսութիւն ունին դրսում։ Իրականապէս գոյութիւն ունեցողը մեր «ես»-ն է իր ըմբռնումներով ու մտապատկերներով։ Ոչինչ չկայ այդ «ես»-ից դուրս, նրանից անկախ։ Ամեն բան—մեր մէջ... Եսը այդպիսով չնջում է ոչ-եսին։ սուբ'եկտը կլանում է օբ'եկտին։ Եղակացութիւն։—մեր ուսումնասիրութեան առարկան, մեր քննկունիւթը՝ միմիայն մեր զգայարանքով ստացուած տպաւորութիւններըն են, մեր մտապատկերները, մեր գաղափարները։

Դաւիդ Հում (1711—1776) շարունակում է Բերկլէյին և յանգում է կատարեալ սկիպտիցիզմի։ Նա յայտարարում է, թէ նոյնիսկ մեր սեփական տպաւորութիւններն ու գաղափարները ճանաչելու հնարաւորութիւն չունինք, չենք կարող նրանց գիտականօրէն ուսումնասիրել, ընդհանրացնել, և ահա թէ ինչու։ ամեն-մի զատողութեան, ամեն-մի ճշմարիտ գիտական հետազոտութեան համար անհրաժեշտ է մի էական գործոն—պատճառականութիւնը (causalité), իրերը կամ տպաւորութիւնները ճանաչելու համար պէտք է կապել, համալրել նրանց անհրաժեշտութեան, պատճառական շղթայակցութեամբ։ Բայց —ասում է Հում—այդ պատճառական շղթայակցութիւնը մենք չենք տեսնում, չենք շօշափում, մենք այն չենք ըմբռնում մեր զգայարաններով։ Մենք միայն ստանում ենք հազարումի՛տ տպաւորութիւններ, որոնք յաջորդում են իրար ժամանակի ու տարածութեան մէջ։ Մենք տեսնում ենք կայծակը և ապա լըսում ենք որոտումք. բայց մենք չենք լսում, ոչ էլ տեսնում ենք կայծակի մէջ որոտի պատճառը։ «Պատճառ» ասուած բանը

«տպաւորութիւն» չէ, իսկ ինչ որ տպաւորութիւն չէ, անըմբ բռնելի է մեզ:

Տպաւորութիւնները յաճախակի իրարու յաջորդելով, մեր երևակայութիւնը կամաց-կամաց սովորում՝ է շաղկապել նրանց և առաջին տպաւորութեան ներքոյ սպասել երկրորդին, երրորդին, չորրորդին... Յարատեղ մի շղթայակցութիւն, որ մեզ թւում է անհրաժեշտ, ճակատագրական: Բայց լոկ մեր սովորութիւնն է, որ «անհրաժեշտ»-ի բնոյթ է տալիս այդ շղթայակցութեան. մեզ միայն թւում է, թէ իրար յաջորդող տըպաւորութիւնների մէջ կայ պատճառական կապ... Այդպիսով պատճառականութիւնը, գիտութեան խարիսխը, հանդիսանում է ոչ թէ խելքի, այլ հաւատի առարկայ. էլ մնաս բարով ուրեմն, գիտութիւն... սկեպտիցիզմի գոները բաց են. գիլիսոփայութիւնը տագնապի մէջ է... Կանոր զալիս է գրկելու նրան:

Ինչպէս շատ ուրիշ սիստեմների, այնպէս և Կանտի գիտութայութեան հկատմամբ մարդիկ չափազանց տարակարծիք են: Շատերի ասելով նա այն հսկան է, որ մահացու հարուած տուեց մետաֆիզիկային \*): Կ հիմք զրեց ճշմարիտ զիտական փիլիսոփայութեան: Այդ կարծիքը իրաւացի է և անիրաւացի: Տարակոյս չկայ, որ Կեօնիգսբերգի մեծ փիլիսոփան վերացական մտածողութեան աշխարհում մնում է անզուգական և վիթխարի հասակով իշխում է, կարելի է ասել, բոլոր դարերի մտքերի վրայ: Ոչ մէկը, արդարեն, այնքան հուժկու կերպով չէր սասանեցրել մետաֆիզիկայի ու բիոլոգիայի դարաւոր շէնքը, ոչ մէկը այնքան հանճարեղ ու մանրազնին գրչով, զուտ բանականութեան խորտակիչ փաստերով չէր հետազօտել, մտրակել, հարուածել մարդկային հոգու վրայ դարերով բռնացող դերբնական այլեայլ դոգմաները,—ինչպէս այդ արաւ լիմիանումը Կանտը (1724—1804 թ.):

Եւ այնուամենայնիւ—զարմանալի է այդ հակասութեան ողին մեծ հանճարեների մէջ—այնուամենայնիւ կասմի գիլիսոփայութիւնը եղաւ խորապէս իդէալիստական ու մետաֆիզիկական: Նա յաւակնեց թափ տալ իրանից հնութեան փոշին, բաց անել մի բոլորովին նոր դարագլուխ փիլիսոփայութեան պատճութեան մէջ,—նա մտածեց հիմնել իսկական գիլիսոփայութիւնը: Նա իր հոյակապ գործը որակեց «Բննական գիլի-

\*.) Մետաֆիզիկան ձգում է քննել ու ճանաչել իրերի ներքին էութիւնը, նրանց առաջին ու վերջին պատճառները, մի խօսքով այն բոլորը, ինչ որ դուրս է գիզիկայից, գործնական գիտութեան սահմաններից:

**սովայութիւն»** անունով (Die kritische Philosophie), հակառակ դոգմայականին, որը իրերի ներքին էութիւնը, տիեզերքի խորունկ գաղտնիքները թափանցելու և ճանաչելու յաւակնութիւն ունէր: Նա ձեռնարկեց քննուն նախևառաջ՝ մեր ճանաչելու կարողութիւնները և գտաւ նրանց շատ սահմանափակ ու անբաւարար՝ յիշեալ գաղտնիքները թափանցելու համար... Նա իր զարմանալի խելքով փորձեց վերլուծել հիմնականապէս մարդկային խելքը, նրա թոփչքները, նրա հասողութեան աստիճանները... Բայց չշեղուենք մեր համառօտ տեսութեան գծից:

Թէպէտե կանուը հոչակեց փորձը (Erfahrung, опытъ), թէպէտ նա շատ անգամ և որոշակի յայտարարեց, որ չկայ ճանաշողութիւն (Erkenntniß, познаніе) առանց գրսի տպաւորութիւնների, որոնք մատակարարում են մեզ գատողութեան համար անհրաժեշտ նիւթը,—այսուամենայնիւ կանուի ըովանդակ փիլիսոփայութեան հիմնական թեզը Բերկլէյի թեզն է, այսինքն՝ որ փորձի, քննութեան ենթակայ առարկանները մեր առարկաներն են, որ արտաքին նիւթական աշխարհը մեր մտապատկերներն է, որ այդ աշխարհը գոյութիւն չունի առանց մտածող ու զգացող էակի, առանց մարդու: Մենք ինքներս հնք արտադրում երևոյթները, ամբողջ տեսանելի ու շօշափելի տիեզերքը: Կամ ուրիշ խօսքով՝ իրերը համակերպւում են մեր գաղափարներին, օրենքալ հպատակւում է ուրեմնեկտին: Այդ վերջինն է արտագրում պատճառատականութիւնը և ուրիշ կատեգորիաները, որոնք հնարաւոր են դարձնում փորձը, այսինքն շաղկապում, միաւորում են տպաւորութիւններն ու մըտապատկերները և ծնունդ տալիս դատողութիւններին:

Այդպիսով կանուը ևս իրացնում է մետաֆիզիկայի հարազատ զաւակ՝ ապրիօրիստական ամուլ մեթոդը և կառուցանում է տիեզերքը իր բանականութեան տարերքներով:

Ամեն բան, ինչ որ երևան է գտլիս ժամանակի և տարածութեան մէջ կանուի համար (ժամանակը և տարածութիւնը ևս մեր մէջ են, մեր զգայնութեան պայմաններն են, նրա ձեւերը)—ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր մտապատկերները: Բայց որտեղից և ինչպէս են ստացւում դրանք: Ո՞րտեղից են գտլիս «երևոյթները»:

Կանուը պատասխանում է, որ երևոյթների աշխարհի յետեւում թագնուած է աներեւոյթ, «նումնալ» աշխարհը, որը անմատչելի է մեզ, քանի որ դուրս է ժամանակից ու տարածութիւնից, դուրս է ուրեմն և մեր զգայնութիւնից:

Այդ է հոչակաւոր «իրը ինքն իրան» (das Ding an sich),

որ մեղնից անկախ գոյութիւն ունի ինչ-որ անժամանակ և անտարած աշխարհում, և որը կանտի ասելով աղբիւր - պատճառըն է բոլոր դիտելի երևյթների: Նրա գոյութիւնը չենք կարող ստուգել, չենք կարող քննել, նա բացարձակ է (absolu) և անճանաչելի (incognoscible): Ահաւասիկ դարձեալ մէկը ժետափիզիկայի բնորոշ գծերից: Սպեհնսերի մօտ ևս մենք պիտի գտնենք այդ մեծ անյայտը, այդ առեղծուածային «իրը ինընիրան»ը:

Կանտից յետոյ - իդէալիստական մետաֆիզիկան ունեցաւ գեռ բազմաթիւ ու տաղանդաւոր պաշտպաններ: Ֆիլտէ, Շելլինգ, Հեգել, Շոպենհաուեր ևայլն, ներշնչուած մեծ մասամբ կանտի սիստեմով, բարձրացրին իդէալիստական փիլիսոփայութեան հմայքը և արտակարդ փայլ տուին գերմանական հանձարին: Այդ փառահեղ պլէադի մէջ իր մեծութեամբ, ինքնուրոյնութեամբ առաջին տեղը բոնում է Հեգել: Նա ցոյց տուեց ընդհանրացնելու և ընդկանոնելու (systematiser) մի անսովոր ուժ: Պարզ, կախարդական փորմուլաներով նա փորձեց տիրել համայն տիեզերքին, լուծել բազմակնճիռ առեղծուածները: Հեգել մեծ յօյսեր տուեց մարդկութեան: Նա լիակատար գոհացում պիտի տար ժամանակի տարտում իդերին, որ Գիօթէն խորհրդանշել էր Ֆառուսի անմահ պատկերի մէջ: Բնական զիտութիւնների անճարութիւնը, որ թողնում էր անպատասխան մարդկային միտքը տանջող մի շարք հարցումներ, պիտի վերանար հանձարի մի հսկայական ճիգով:

Հեգելն արհածարհեց կանտի բացարձակը կամ անճանաչելին, ժխտեց խորհրդաւոր DING ու SICH-ը: Անյայտ ու անըմբնելի ոչինչ չկայ: Բացարձակը մատչելի է մեզ, որպէս մի պայծառ իրականութիւն: Նա թէ միտք է և թէ բնութիւն, թէ սուր'եկա՞ է և թէ օք'եկատ: Նա այն յաւիտենական պրոցեսն է, շարժողութիւնը, էռլիւցիան, որը ընդգրկում է ամեն գոյութիւն և որից զուրս ուրիշ ոչինչ չկայ: Բացարձակը ինքը զադափարն է, որ շարժւում է (Selbstbewegung des Begriffs), ինքը բանսկանութիւնն է, որ ինքնարերարար ու յաւիտենապէս թափոր է կատարում, շրջաններ է անում՝ ծաւալելով իր ներքին պարունակութիւնը:

Հեգելի փիլիսոփայութեան մէջ ամեն ինչ վերածւում է գաղափարի կամ բանսկանութեան: Բայց նրա մօտ այդ վերջինները զտարպի ձեւեր չեն միայն կամ սոսկ շրջանակներ (ինչպէս կանտի մօտ), որոնք իրանց նիւթը ստանում են զըր-

սից։ Հեղելի «գաղափարը» միանգամայն ձև է և պարունակութիւն։ Նա միակ իրականութիւնն է, ամեն գոյութեան ըովանդակումը։

Գաղափարը կամ «տիեզերական բացարձակ ոգին» գոյութիւն ունի յաւիտենականութիւնից ի վեր տիեզերքից անկախ և տիեզերքից առաջ զոյութիւն է ունեցել որևէ տեղ։ Նա շարժում է ներքին յարակայ մի սկզբունքի զօրութեամբ, անցնում է պէս-պէս յաջորդական շրջաններ։ Չուելով նախնական ազատ ու պարզ դրութիւնից, երբ նա զեռ ինքնիրան միայն գոյութիւն ունէր (Der Geist an sich), իբրև սոսկ ալոտենց (կարողութիւն) առանց որակի և քանակութեան՝ ոգին, այսպէս ասած, դուրս է գալիս իրանից, մերկանում է բնութեան մէջ, իրականացնում է բնութիւնը իր զանազան աստիճաններով, անցնում է մեխանիկայի, ֆիզիկայի, օրգանիզմի դրութիւններից, ապա թողնում է բնութիւնը, ուր նա իրան օտար է զզում և նորից վերադառնում դէսլի ինքը, նորից գտնում է ինքնիրան, որպէս ազատ ոգի, գիտակից գաղափար և բացարձակ ճշմարտութիւն։ Այդ անսահման և ճակատագրական պրոցեսսի առաջին ֆազիսը (մինչև ողու արտայայտուելը բնութեան մէջ) պատկանում է զուտ տրամաբանութեան, երկրորդ ֆազիսը (ոգին շարժում է բնութեան մէջ) պատկանում է բնութեան փիլիսոփայութեան, վերջապէս երրորդը (ոգին գտնում է ինքնիրան) պատկանում է մտքի փիլիսոփայութեան (այդ վերջինի մէջ է մտնում պատմութեան փիլիսոփայութիւնը կամ մարդկային հասարակութիւնների էլոլիցիան)։

Արդպիսով, ամեն բան, ինչ որ գոյութիւն ունի—ֆիզիկական ու բարոյական աշխարհը, բնութիւնը և մարդկային պատմութիւնը ոչ այլ ինչ են, եթէ ոչ միևնույն գաղափարի կամ միևնոյն ոգու շարժման յաջորդական փաղիսները։

Շարժումը դիալեկտիկական է։ Ամեն-մի միտք, ամեն-մի առարկայ պարունակում է իր մէջ իր բացասութիւնը, ամեն-մի դրութիւն՝ իր հակագրութիւնը։ Միտքը մի անսպամ տրուելով բացասում է ինքնիրան, բայց փոխանակ չնշուելու այդ հակասութեամբ՝ նա՝ այսպէս ասած՝ հաշտում է իրան հետ մի նոր գաղափարի մէջ, մի նոր իրականութեան մէջ, որ աւելի բարդ, աւելի բարձր և աւելի հարուստ է։ Այդ նոր գաղափարը հաստատուելով նոյնպէս ժխտում է ինքնիրան, ապա նորից վրայ է հասնում հաշտութիւնը կամ համազրութիւնը (սինթեզ), և այդպէս անընդհատ շարունակում է պրոգրեսը դրութեամբ, հակագրութեամբ ու համազրութեամբ, մինչև որ

գաղափարը համում է իր բացարձակ կատարելութեան, ուր նա հանդիսանում է գերազոյն արգասիքը տիեզերական ձևափոխութեան:

Այս է Հեգելի հոչակաւոր տրիադը և դիալեկտիկական շարժումը: Նպ ընդգրկում է բովանդակ տիեզերքը, դասաւորում, շղթայում ու բացատրում է իրականութեան բոլոր տարրերը՝ բնութիւնը իր բոլոր թագաւորութիւններով, պատմութիւնը իր բոլոր գարաշը ջաններով, գեղարուեստը, կըրօնը, գիտութիւնը, փիլիսոփայութիւնը ևայն: Ամեն տեղ նոյն անխուսափելի ֆորմուլայի, նոյն տրիադի կիրառումն ենք տեսնում...

Մի հոյակապ աշխարհահայեացք, փիլիսոփայական մի ըսքանչելի, երկաթէ գիտշնպլին, որի նմանը տեսնում ենք միայն Սպիրիտի մօտ, այն տարբերութեամբ, որ անգլիացի փիլիսոփան ոտքերի վրայ գրաւ իրականութիւնը, որ Հեգել, այսպէս ասած, դրեւ էր գլխիվայր:

Հրաշքի պէս մի բան էր Հեգելի այդ գրանդիօզ—թէպետեկամայական, անհեթիթ—սիստեմը, ուր հսմայն տիեզերքը ներկայանում է որպէս էվոլյիւցիայի (գաղափարի և ոչ նիւթի) մի անհուն պրոցես և ուր կիրառում է ամեն քայլափոխում—թէկուզ և շատ յաճախ բռնազրօսիկ կերպով—միևնոյն խորհրդաւոր ֆորմուլան՝ տրիադը:

Բայց բոլոր հրաշքների պէս նա ևս շուտ անցաւ: Հեգելի աղղեցութիւնը յարատեց միայն մի որոշ շրջանում, ծայրականագույն հեգելեանների մէջ, օրթոդոքս մարկսիստների բանակում, որոնք իւրացրին դիալեկտիկական մտածողութեան հղանակը: Սակայն նրանք ևս սկսում են թօթափել ուսուցչից ժառանգած աւելորդ բեռը:

Ժամանակը պէտք չունէր Հեգելին: Մետափիզիկական ձևորութեան կառուցումները տաղտկացրել էին մարդկանց, և ահա հէնց հեգելեանիզմի ծոցում ընականօրէն առաջ եկաւ ըէակցիա—հակաղղեցութիւն: Ծոսնդ առաւ, կամ լաւ է ասել՝ զարդացաւ իդէալիզմի հակամարտ հոսանքը—մատերիալիզմը: Այդ վերջինը ևս ունէր բազմազարեան ու փառահեղ պատմութիւն, որ մինք պէտք է ուրուագծենք:

\*  
\* \*

Ուշագրաւ հանգամանք: Երկու հակառակորդ վարդապետութիւնները՝ մատերիալիզմը և իդէալիզմը՝ առաջ են գնում երկար ժամանակ զուգընթացաբար, առանց մինը միւսին կարու-

զանալու խեղղելու Երկուսն էլ սկիզբ են տոնում հեռաւոր անցեալում և հինգ այնտեղ էլ հասնում բարզաւաճման: Երկուսն էլ անցնում են նման պայմաններում բարբարոսական արշաւանքների և Փէօդալիզմի հաստատման շրջանը, երբ ամենուրեք կանգ էր առել մտաւոր կեանքը: Այդ խաւար ու դաժան ժամանակներում երկու դոկտրինները ուժեր են մթերում և վերածնութեան պանծալի օրերից վերստին ծաղկում ու տարածում իրանց հիմնական գաղափարները:

Երկու արմատապէս տարբեր հոսանքների այդ զուգընթաց առաջխաղացութիւնը արժանի է խոր ուշագրութեան: Նա ցոյց է տալիս, որ Փիլիսոփայութիւնը, այդ բարձրագոյն իդէօլոգիան (մարկսիստների արտայայտութեամբ) շատ էլ չի յարմարւում հասարակական ընդհանուր զարգացման պայմաններին: Արդիւնաբերական ուժերը հսկայական թոփչքներ են գործում զարերի ընթացքում, հասարակական ձևերը յաջորդում են իրար, սակայն փիլիսոփայական մտքի զարգացումը իր երկու խոշոր ու հակասական ուղղութիւնների մէջ մնում է անշեղ:— Երկու ուղղութիւններն էլ, մատերիալիզմը և իդէալիզմը, մեռմ են—գէթ մինչև 19-րդ դարի քառասնական թուականները—հաւասարապէս ուժեղ և հեղինակաւոր... Որքան ուրիմն զզոյց պիտի լինել, երբ փորձում ենք փիլիսոփայական էւոլիցիան ևս լուսաբանել Մարկսի տնտեսական մատերիալիզմով՝ արդիւնաբերական ուժերի զարգացմամբ, դասակարգային յարաբերութիւններով...

Դառնանք մեր նիւթին:

\* \*

Մատերիալիզմի տարատամ ու երկչուս սկզբնաւորութիւնը մենք տեսնում ենք գեռ 600 տարի Քրիստոսից առաջ, Յունատանում, Յոնիական դպրոցի մէջ, որ կոչւում էր նոյնպէս Փիղիկական գործոց: Նա ձգտում էր բացատրել բովանդակ առաջազրութիւնը այլնայլ նիւթական տարերքներով, ջրով, կրակով, օդով և այլն: Դպրոցի հիմնադիր Թալլսի համար ջուրը միակ գրական սկզբունքն էր ամեն բան ստեղծուել է նրանից, իսկ նա ինքը անստեղծ է, անսկիզբ: Նախնական այդ թէօրիան, թէև բիրտ ու գոեհիկ, այնուամենայնիւ պարունակում է իր մէջ ճշմարտութեան սաղմեր: Զուրը յիրաւի միծ դեր է խաղացել արարչագործութեան մէջ, նա եղել է, ի միջի այլոց, կեանքի ծագման անհրաժեշտապոյն պայմաններից մինը:

Դեմոկրիտի օրով (ժօտ 400 տ. Ք. ա.) յունական մատե-

րիալիզմը հասաւ իր ամենամեծ զարգացման, ստացաւ այսպէս ասած քաղաքացիութիւն։ Բնութեան երևոյթների անսահման այլազանութիւնը Դեմոկրիտը բացատրեց նիւթի—մատերիայի շարժողութիւնով,—այդտեղից և թէօրիայի անունը՝ մատերիալիզմ։ Նիւթը հանդիսանում է որպէս գերազոյն իրականութիւն, բաժանուած է անթիւ-անհամար մասնիկների կամ ատոմների։ Դրանք միևնոյն քիմիական բաղադրութիւնն ունին, տարբերուում են միայն ձևով ու չափերով։ Անվերջօրէն մանր և անբաժանելի՝ այդ ատոմները կուտակուելով իրարու վրայ և անջատուելով իրարից, կազմակերսում են կամ կազմակուծում պէս-պէս մարմիններ։

Ատոմների այդ յաւիտենական շարժողութիւնը չէ բղխում որևէ արտաքին, վերանցական ոկտրունքից—ինչպէս որ մտածում են աստուածաբանները, այլ նիւթի ներքին յարակայ էութիւնց։ Ամեն-ինչ բնութեան մէջ կատարւում է ճակատագրական անհրաժեշտութեանը և ամեն-ինչ—անդամ մարդկային միտքն ու հոգին—վերածւում են ատոմներին և նրանց շարժման։

Դա մատերիալիզմի հաւատոյ հանդանակն է, որ ապագայ յում փորձնական գիտութեան դարգացման շրջանում պիտի մշակուէր և ամբողջացուէր։

Դեմոկրիտից յետոյ մատերիալիզմը թուլացաւ, ընկճուեց Պլատոնի ու Արիստոտելի իդէալիստական աշխարհահայեացքի հարուածների տակ, բայց վերստին կազդուրուեց հոչակառը Եպիկուրի օրով (Յ-րդ դարում Ք. ա.). Նրա համար ևս նիւթը գոյութեան միակ հիմունքն է, և մոքի ու հոգու բոլոր արտայայտութիւնները բացատրուում են նիւթական ատոմների մըշտնչենական շարժմամբ։

Հսովմէական տիրապետութեան ամբողջ ընթացքում Փիլիսոփայութիւնը չառաջազիւեց։ Միջնադարեան շրջանը ևս մի երկարատև մատոր գիշեր էր։ Մատերիալիզմը վերականգնելու համար լուրջ և ինքնուրոյն փորձեր եղան 17-րդ դարում։ Միծ զարկ տուեց նրան անդիմացի Բակոնն իր շարունակական յորդորներով ուսումնասիրել բնութիւնը և հիմնել մեր դատողութիւններն ու ընդհանրացումները Եիշտ փորձի վրայ։ Բակոնը հոչակաց ինդուկտիւ մեջողը, որը փնտրում է երևոյթների պատճանները և բաց է մնում բնութեան օրէնքները՝ հիմնուելով ամենամեծ թիւ փառաերի վրայ։ «Մետաֆիլիկան, ասում էր նա, ունի մենաստանի գոյութիւն։ Նա ամուլ է, ինչպէս կուռանները»։

Բակոնից սկսում է մի փայլուն շարք գիտնականների և Սեպտեմբեր, 1904.

գիլիսոփաների, 17-րդ ու 18-րդ դարերում, Անգլիայի և Ֆրանսիայի մէջ, որոնք յարեցին մատերիալիզմին: Հոբս, Լոկ, Նարտէյ, Պրիստլէյ (Անգլիայում), Լամետրի, Հոլբախ, Դիդրո, Դալամբեր, Հելվեցիուս և այլն (Ֆրանսիայում—ահա այդ շարանը: Մատերիալիզմը այդպիսով նուաճեց 18-րդ դարի ամենաընտիր մտքերը արևմտեան երկու առաջադէմ երկրներում: Նա, կարելի է ասել, տիրեց բոլոր աշխարհներին—Փիլիսոփայական, հասարակական, բարոյագիտական: Նրա մի ուրիշ անունն էր սենսուալիզմ (*sensualisme*): Նա յայտարարում էր, որ մեր բոլոր մտապատկերներն ու գետելիքները ոչ այլ ինչ են, եթէ ոչ արդիւնք արտաքին աշխարհից մեր հինգ զգայարանների միջոցով ստացուած տպաւորութիւնների: Մենք հետեապէս կարող ենք ճանաչել, կարող ենք հասկանալ այն առարկաները միայն, որոնք մատչելի են մեր զգայնութեան:

Բայց մատերիալիզմի ամենափայլուն յաղթանակները վերապահուած էին 19-րդ դարին: Գիտութեան պանծալի նուաճումները մի անսովոր թոփչք հաղորդեցին նրան, և մի անողոք արշաւանք սկսուեց գերբնական բոլոր հաւատալիքների դէմ: Գերմանիան թօթափեց իդէալիզմը և դարձաւ առաջապահը՝ հակառակ ուղղութեան: Հեգելեան շկոլայի ձախակողմեան թեր—ֆոյերբախ, Շտրաուս և այլն—հանգիստաւոր կերպով յարեց մատերիալիզմին: Ֆոխտ, Բիւխներ, Մոլեշուս եղան նրա հուժկութեան պրոպագանդիստները:

Ֆրանսիայում ևս սկսուեց բէակցիա մետաֆիզիկայի և իդէալիզմի դէմ: Ֆրանսիական մտածողները յետ նայեցին դէպի 18-րդ դարը, գրկեցին նրա փառաւոր աւանդութիւնները: Օգիստ Կոնսորի (1798—1857) և աշակերտների ջանքերով մըշակուեց պլողիտիզմի վարդապետութիւնը, որ իր է հութեամբ ազգակից է մատերիալիզմին: Այդ նոր վարդապետութիւնը, միանգամբնդիշտ դուրս է վանում իր ուսումնասիրութեան շրջանից «նախնական ու վերջնական պատճառները», իրերի «ներքին էութեան» քննութիւնը և հիմնում է գիտութիւնը փորձի ու ստոյգ գիտողութեան վրայ:

Վերջապէս Անգլիայում ծնունդ առաւ Դարվինի աշխարհաշառաւչ վարդապետութիւնը, որը զարկ տալով էւոլյուցիօնիզմի մեծ դադափարին և անհունապէս հարստացնելով գիտութեան այլևայլ ճիւղերը՝ հիմնաւորեց և ամրացրեց մատերիալիստական փիլիսոփայութիւնը:

Մատերիալիզմը որակուեց նաև «մոնիզմ» անունով: Ոյժը և նիւթը հոչակուեցին որպէս ատտրիբուտներ միևնոյն սուբստանցի, միևնոյն ու եղակի իրականութեան: Ոյժը երբէք ա-

ուսնց նիւթի և նիւթը երբէք առանց ոյժի գոյութիւն չունի: Բովանդակ տիեզերքը ներկայանում է որպէս պատճառական մի վկթխարի շղթայակցութիւն: Հոգեկան աշխարհը կապուած է ընդհանուր կենդանականին, այդ վերջինը՝ անկենդան աշխարհին. մինը միւսից բղխում է պատճառականօրէն և ընականօրէն, սուկ ոյժնիւթի կամ սուբառանցի յաւիտենական ձեսփոխութեամբ: Մարդ և բնութիւն, սուբ'եկտ և օբ'եկտ, ես և ոչես նոյնանում են միենոյն սուբստանցի, միենոյն համատարած շարժուն նիւթի մէջ:

Մատերիալիզմը գարձաւ աւետարան մարդկային խորհող մեծամասնութեան: Նա հոչակուեց իբրև թէօրիաներից ամենաազիտականը, իբրև մի տեսութիւն, որ ամենից աւելի է համապատասխանում իրականութեան և առողջ դատողութեան:

Դժուար է ինարկէ յօրինել մի թէօրիա, փիլիսոփայական մի աշխարհահայեացք, որ գոհացում տար մտքի պահանջներին կատարելապէս, բացարձակալէլ: Մատերիալիզմը իշխում է այսօր տիբականօրէն, բայց գեռ սակաւ չեն մտածողները, որոնք չեն գոհանում մատերիալիզմով: Ոչոք չէ կարող արգելքներ դնել մարդկային մտքի խիլախ թոհչքներին, ոչոք չէ կարող արգելել նրան՝ փիլոսոփայական հանդարտ մտախոհութեան մէջ կրկնել վաղեմի, շատ հին հարցումները. «Ի՞նչու է այս բոլորը... Ի՞նչ է գոյութեան սլատճառը, նրա խորհուրդը... արարչագործութեան սկիզբը, նրա գաղտնիքները: Ինչ է տիեզերական սուբստանցը. ինչո՞ւ է նա շարժուում և ինչո՞ւ է հէնց այնպէս շարժուում...» Հարցումներ, որոնք անխուսափելի կերպով զբաղեցնում են մարդկային ուղեղները, և ոչ միայն պարզ, այլև՝ խոպան ուղեղները... «Ի՞նչպէս է ծագել այն հրաշալի երևոյթը, որ անուանում ենք լիեանք»: Բայց գեռ աւելի հրաշալին կայ. «Ի՞նչպէս է արդիօք սկզբնաւորուել մարդկային գիտակցութիւնը, նիւթի այդ գերագոյն արաայայտութիւնը...»

Այս, գեռ մարդիկ կը շարունակեն փիլիսոփայել—ապարդիւն, աւաղ—տիեզերական առեղծուածների մասին: Ի՞նքը չելիկըլը—ենայի հոչակառոր պրոֆեսորը և մեր ժամանակի ամենահոչակառոր մատերիալիտ բնագէտներից մինը—մոլեգին յարձակուելով Դիւրուա Ռէյմոնների դէմ՝ խոստովանում է, որ կայ ամեն բան ընդգրկող տիեզերական մի առեղծուած (εἰδ allumfassendes Welträthsel)—սուբստանցի պրոբլեմը...

Այս խորհրդածութիւններով բնաւ չենք կամենալ մոլորցնել ընթերցողին: Հրաշը, «գերբնական»-ի գաղափարը միանդամ ընդմիշտ վտարուած է գիտութիւնից և նրանց մասին խօսք չի կարող լինել որևէ քիչ թէ շատ լուրջ տեսու-

թեան մէջ: Տիեզերական ներդաշնակ շէնքը հրաշալի է, բայց նա «հրաշք» չէ: Էւոլիցիօնիզմը մեծ վարդապետութիւնը ցոյց է տալիս մեղ, թէ ինչպէս այդ շէնքը կառուցուել է աստիճանաբար, զուտ մեքենայական պատճառներով, առանց որևէ գերբնական ուժի միջամտութեան: Կեանքի ծագումը, անասնական աշխարհի աստիճանական կատարելագործումը հրաշալի են, բայց նրանք «հրաշք» չեն: Նոյն էւոլիցիօնիզմը, որ այնքան սերտ կերպով կապուած է մատերիալիզմի վարդապետութեան հետ, ուսուցանում է, թէ ինչպէս այդ բոլորը կատարուել է ընական պատճառներով:

Քանի՞-քանի գաղտնիքներ, որ մի գար սրանից առաջ գիտուել են իբրև հրաշք, լուսաբանուած են այսօր, չնորհիւ ուսումնասիրելու մեր միջոցների կատարելագործման, չնորհիւ գիտութեան առաջադիմութեան...

Այդ առաջադիմութիւնը իրօք հակայական է: Ֆիզիկական գիտութիւնները տուին բեղմնաւոր ուսումնասիրութիւններ բոլոր աշխարհներում և եզրակացրին ուժեղի միութիւնը, միատարբութիւնը ամբողջ տիեզերքում: Սպիկտրալ' անալիզը ցոյց տուաւ, որ մեր երկրագնդի բազագրիչ նիւթերը գտնելում են արեգակի ու միւս մոլորակների մէջ: Աստղագիտական ուսումնասիրութիւնները հաստատեցին, որ տիեզերական անեղբարձութիւնը լի է միլլիոնաւոր մարմիններով, մեր երկրագնդից էլ մեծ, որոնք շրջում են ու դառնում, կործանելում են ու վերաշինւում յաւիտենապէս:

Քիմիան գտաւ նորանոր տարբեր ու անդագրում վերլուծումներով ու ընդհանրացումներով մտածել տուաւ, որ նիւթը մէլի է տիեզերքի մէջ, չնայած տարբերի բազմազանութեան:

Հաստատուեց գերագոյն, հիմնական օրէնքը, —ոյժի և նիւթի անկորնչելիութիւնը բովանդակ տիեզերքում, նրանց յաւիտենական մնայունութիւնը:

Քիմիական տարբերի մէջ մէկը — ածխածինը — ստացաւ առաջնակարգ կարեւորութիւն: Նա այն հրաշալի յատկութիւնն ունի, որ առաջացնում է անթիւ ու բազմատիստակ օրգանական միաւորումներ: Դրա համար և ածխածինը անուանուեց «կեանքի քիմիական հիմունքը»:

Բիոլոգիայի (կիսաբանութեան) աշխարհում՝ կատարելագործուած խոշորացոյցը բաց արեց մեր առջև ամիսնատարբական, մանրիկ օրգանիզմների կամ մոնեղների անտեսանելի աշխարհը և լոյս սփուեց «կեանքի ծագման» կնճուտ հարցի վրայ:

Վերջապէս՝ նշանաւոր ըջիջային թէօրիան (Zellentheorie) և անթիւ ուրիշ գիւտեր ու թէօրիաներ...

Թաղաքակիրթ մարդկութիւնը մտնում էր մի նոր փիլիսոփայական շրջան։ Ամեն կողմից պահանջ էր զգացւում մի ամբողջացնող աշխարհահայեցքի, մի ընդհանրական ու գերագոյն ֆորմուլայի, որը կարողանար ամփոփել իր մէջ դրական գիտելիքների այդ հսկայական պաշարը, խստացնել ու միաւորել կոնկրետ երևոյթների այդ անսահման այլազանցութիւնը։

Հերթերտ Սպենսերը եկաւ այդ պահանջին գոհացում տալու Նա սկսեց սոցիոլոգիայով (հասարակագիտութեամբ), Նա նախ հետաքրքրուեց սոցիալական երևոյթների ուսումնասիրութեամբ և առաջարկաց աշխատութեան վերացական աշխարհը։ Նրա փիլիսոփայական դաւանանքը արտայայտուած է «Նախնական սկզբունքները» վերնագրով իր աշխատութեան մէջ, որ լոյս է տեսել 1862 թ.։ Այնտեղ է, կարելի է ասել, զեկավարող միտքը Սպենսերի բոլոր միւս հատորների։ Այնտեղ է հոչակաւոր ֆորմուլան, որով նա միաւորում ու բացատրում է տիեզերական, երկրաբանական, կենսաբանական, հասարակական և հոգեբանական բոլոր երևոյթները։ Այնտեղ է նաև Սպենսերի մետաֆիզիկան, նրա խորհրդածութիւններն ու եղբակացութիւնները «իրերի ներքին էութեան» մասին, տիեզերքի նախնական և վախճանական պատճառների մասին ևալին։

Սպենսերի պայծառ ու գրական միտքը ևս խոյս չտուաւ այդ կարգի մարգանքներից։ Նա ևս շեշտեց, ինչ որ շեշտել էին արդէն քննական փիլիսոփայութիւնը յանձին կանտի և պողիսիւլոմը յանձին կոնտի և աշակերտաների։ Մեր գիտելիքները տիեզերքի մասին յարաբերական են, երբէք բացարձակ (արսովիւ), երբէք լիակատար, Որքան աւելի ենք առաջանում մեր գիտելիքների, ծանօթութիւնների մէջ,—ասում է Սպենսեր,—այնքան աւելի ենք համոզւում, որ մի բան կայ մեղ անմատչելի, անըմբունելի։ Իրականութիւնը չի ներկայանում մեզ իր իսկական պատկերով, տիեզերքի հիմքը, նրա էութիւնը մի խորհրդաւոր բան է, անփերջ, յաւիտենական, անխմանալի և անճանաչելի (inconoscibile)...

Ենթադրենք—շարունակում է Սպենսերը - թէ տիեզերքը իր ամենասկզբնական շրջանի մէջ եղել է քաօսային ամպաձն մի զանգուած \*). հարց է ծագում. ի՞նչպէս է արդեօք նա յանգել այդ դրութեան... մենք կարող ենք վերածել տի-

\*) Այդպէս է կանտ—Լապլասեան նշանաւոր թէօրիայի համեմատ։

եղերական բոլոր երևոյթները ոյժի կամ շարժողութեան. քայց մեզ համար հանելուկ է մնում, թէ ինչ է այդ ոյժը, այդ շարժողութիւնը ինքնիրան. վերցրուած: Մենք կարող ենք վերածել մեր բովանդակ մտաւոր կեանքը զգացումների (sensation). բայց ինչ են այդ զգացումները... Եւայն ևայն:

Կան Սպեհնսերի համար երկու աշխարհներ, մէկը՝ ճանաշելի, միւսը անճանաչելի: Առաջինը յարարերականն է, երկը՝ բորդը բացարձակը: Մէկը առանց միւսի գոյութիւն չունի: Երկուսն էլ անհրաժեշտ են, որպէս փոխադարձ լրացուցիչներ: Բացարձակը գոյութիւն ունի առանց որևէ պայմանի. նա անըսկիզր է և անստեղծ:

Ընդհանրացնելով աստիճանաբար մեր գիտելիքները ըընութեան մասին, վերածելով նրանց միշտ աւելի և աւելի ընդհանուր Փորմուլաների (բանաձևերի), մենք վերջիվերջոյ պիտի յանգենք մի այնպիսի ընդհանուր ճշմարտութեան, որը այլևս անկարող կը լինենք վերածել մի աւելի ընդհանուրին: Այդ գախճանական ճշմարտութիւնը, ընդհանրացման պրոցեսի այդ վերջին օղակը կը լինի բնականաբար անվերլուծելի և անբացարելի: Նա ինքը Բացարձակն է, Արաոլիւն, Անձանաչելին? Մենք ստիպուած ենք ընդունել նրա գոյութիւնը, թէպէտ և խիստ աղօտ հասկացողութիւն միայն ունինք նրա մասին...

\*  
\* \*

Թողնենք մետաֆիզիկային հանգիստ որոճալ խոհըղաւոր ու յաւէտ անլուծելի առեղծուածները, մտնենք «Երևոյթների» կամ «Ճանաչելի»-ի աշխարհը:

Այդտեղ է երևան գալիս փիլիսոփա Սպեհնսերն իր կարող հանճարով, իր գերազանցապէս սինթետիկ (համագրող) մտքով:

Փիլիսոփայութիւնը՝ Սպեհնսերի ասելով՝ գիտելիքների ընդհանրացումն է, միաւորումը (unification): Գիտութիւնը տալիս է միայն փաստերի, ծանօթութիւնների մասնակի միաւորումն, այն ինչ փիլիսոփայութիւնը տալիս է լիակատարը:

Ինչպէս որ գիտութեան մէջ ամեն-մի բարձր ընդհանրացումն ծրարում ու խտացնում է աւելի ստոր կարգի ընդհանրացումներ, այնպէս էլ փիլիսոփայական ընդհանրացումները խտացնում ու ամփոփում են գիտութեան ամենաընդարձակ ճշմարտութիւնները:

Պէտք է ուրեմն կապել, ընդհանրացնել տիեզերական երևոյթները, պէտք է միաւորել և ամբողջացնել բոլոր գիտու-

թիւնների արդիւնքները,—այս է դառնում ճշմարիտ փիլիսոփայութեան նշանաբանը:

Սպենսերը նախնառաջ հարկ է սեպում իր կարծիքը յայտնել այն նշանաւոր խնդրի վերաբերմամբ, որ ամենահինգամանակներից ի վեր զբաղեցրել է փիլիսոփաներին. խօսքս «եսի» և «ոչ-եսի», սուբ'եկտի և օբ'եկտի փոխադարձ յարաբերութեան մասին է, ասենք պարզ, ժողովրդական ձեռվ—արտաքին աշխարհի անկախ գոյութեան կամ չգոյութեան մասին:

Ամբողջ «ճանաչելի» աշխարհը Սպենսերը վերածում է երկու կարգի երևոյթների. մէկը՝ «եսի» երևոյթներն են, միւսը՝ «ոչ-եսի». ուրիշ խօսքով՝ մէկը տեղի ունի մեր գիտակցութեան սահմաններում, միւսը՝ մեզնից դուրս, առարկայական, օբ'եկտիւ աշխարհում: Առաջին կարգի երևոյթները համարւում են թոյլ, երկրորդինը՝ ուժեղ:

Այդպիսով Սպենսերը բացարձակապէս յարում է մատերիալիստական ըէալիզմին և ծաղրելով Բերկլէյի, իումի ու այլոց ըէալիզմը՝ յայտաբարում է, որ մեր «ես»-ից դուրս, մեր գիտակցութիւնից դուրս գոյութիւն ունին՝ անկախ գոյութեամբ՝ իրերն ու երևոյթները, ամբողջ տիեզերքը:

Միք. ՅՈՎՀ.

## Տ Ր Տ Ո Ւ Ն Զ

Օրերս անպտուղ, տխուր, ձանձրալի,  
Ու գլնում եմ ես ունայն տրտունչով  
իմ սիրած մարդկանց, իմ լաւ յոյսերի  
Գերեզմանների շարքերի միջով։

Թաղել եմ նրանց, տխուր է ճամբան,  
Եւ իմ հարազատ աշխարհքում՝ օտար,  
Օտար ու մենակ անցուորի նման,  
Որ չունի լնկեր, ոչ տեղ ու դադար։

Օտար են շուրջըդ, ու չեն հասկանում  
Ոմանք քո վիշտը, ոմանք քո լեզուն,  
Անտարբեր գալոց երջանիկ օրին՝  
Չգիտեն նըրա կարօտը անքուն...

Չնչի՞ն մարդուկներ, լրբորէն հանդիսու,  
Անսիրտ, փոքրողի, գըծծի ու կոպիտ.  
Մեռնում են, մարում նրանց հայեացըից  
Եւ հոգու ձըդտում, և՛ սրտի ժպիտ։

Ել ում առաջին սիրտըդ բաց անես,  
Ո՞ւմ համար երդես սըրտալի երդեր,  
Ո՞ր չըքին սիրես, կեանքըդ նուիրես,  
Ել ի՞նչպէս ապրես անսէր, անընկեր...

Եւ օրերս այսպէս տխուր, ձանձրալի,  
Ու գընում եմ ես ունայն տրտունչով  
իմ սիրած մարդկանց, իմ լաւ յոյսերի  
Գերեզմանների շարքերի միջով։

ՅՈՎՃԱՆ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

## Փ Ո Թ Ո Ր Ի Կ Ը

Նաւը մռնչաց երկար ու ցաւագին, ծուխ ու մուր  
արձակեց դէպի վեր, տալա ընդհատշընդհատ տնքոցով  
առաջ շարժուեց դէպի ծովային փախչող հորիզոն-  
ները՝ նրա ցտուկի տակ պատառշպատառ ալիքները  
մռմռում էին ծեծուող գաղանների պէս, դալարում,  
փրփրում, իրար բաշքում, անօդուտ զայրոյթով իրար  
կրծոտում և տալա ոռնոցով ու հեծեծանքներով գուրս էին  
փախչում հակառակ կողմից։ Նաւը շարունակում էր իր ըն-  
թացքը տարերային անհողութեամբ, որպէս փշող, կոյր  
ճակատագիր, անցնում էր յաղթանակով, բայց նոյնպէս  
տնքոցով ու հառաջանքով, որպէս ալիքները՝ ծովի ան-  
հունութեան մէջ սկսուած մի խոլ պայքար էր այն, ուր  
յաղթողն ու պարտութիւն կրողը կարծես հաւասարա-  
պէս գժբախտ էին և չգիտէին՝ թէ ինչ են անում։  
Եւ ափերը...

Հեռնւ, վաղորդեան մշուշի մէջ նրանք կամաց-կա-  
մաց մաշւում, լուծւում՝ էին՝ ծառ ու թումբ, ժայռ ու  
բլուր մանրանում էին ու սպրդնում և տալա կամաց-  
կամաց թաղւում մի ամենակուլ անդունդի մէջ, որ մի  
աներեսոյթ ձեռք շտամշտապ բաց էր անում մեր յե-  
տեսում մեր թողած աշխարհը թաղելու համար։

Եւ լաւ էր, որ այդպէս էր...

Չգիտեմ ինչ էին մտածում իմ ուղեկիցները, բայց  
ես փախչում էի այդ ափերից անէծքով ու զայրոյթով։  
Եւ նզովքի ու զայրոյթի արժանի նրգան բան կար այն-  
տեղ, Տէր Աստուած։ Եւ գաղաղուած, յաւիտենականա-

պէս դժգո՞հ դէմքեր, որոնք դազաններ են թաղցնում իրանց յզկուած, փայլուն արտաքինի տակ, և շարունակ պահանջող, անողորմ աչքեր, ուր խմացականութիւնըն անդամ զիշտափիչ է, և՝ արցունք, և՝ քրտինք, և՝ լափող ախորժակ ու անառակ քրքիջներ, արորուած մէջքեր, անյօյս ու անտէր դոյութիւններ, թունոտ, աւերիչ կըրքերի ու փշտուած, տառապալից կեանքերի մի աշխարհ էր այն, որ թաղւում էր հսկայական անդունդի մէջ:

Նայում էի և գոհ էի, որ հորիզոնի տակ թաղւում են ափերը, թաղւում է նզովուած աշխարհը, որից փախչում էր մեր նաւը:

Ամեն ինչ ծածկուեց. մնաց անորոշ հեռուն, ուր ամենքը դարձեալ մի բան էին փնդրում անթարթ հայեցքով: Եւ հեռուն աշնանային մռայլ երկինքն էր, որ ծարաւի հրէշի պէս կախուել էր լայնարձակ ծովի վըրայ՝ կարծես նրա ջրերը անյագորէն ծծելու համար մինչև վերջին կաթիլը:

Ամպէր, ամպէր... մեծ ու փոքր, սև ու գորշ, նօթու ու խոճու, և ամենքը մռայլ, ամենքը լալկան, բաշքուել էին իրարից, փաթամթուել, գրկուել էին իրար հետ, սոզում էին ալիքների վրայից, լիզում էին նրանց փրփուն բաշը կամ մեզմիւ փափառւ ծովի հետ՝ ասես որոճալով մի մուժ բան ճամբորդների դէմ:

Նաւը մեծ էր, կուրծքը՝ յաղթ, կազմուածքը՝ կուռ, և ճակատը խրոխտ. նրա ամբողջ պատկերը մի ըմբսոտ բան ունէր իր մէջ, որ հաւատ էր ներշնչում, բայց և այնպէս ամենքս ճնշուած էինք մի աներևոյթ բեռի տակ, ամենքս նրա հետ միասին խուլ տնքում էինք առանց իրար հազորդելու մեր ներքին զգացմունքը: Մենք դադտնի կերպով ապրում էինք ծովի և նաւի մէջ կատարուող պայքարը, լսում, հասկանում էինք ամպերի սպառնալի փափացը և անհանգիստ էինք ու ոչնչացած: Եւ այդ ոչնչութիւնը մեր խեղճութեան, մեր անզօրութեան վրայ իջնում էր բարձունքներից, անհասկանալի անհունից, որի մէջ դոզում էինք կալկան ու

գորշ երկինքը բարդ-բարդ գիղել էր մեր զլիսին իր ամպերը, սղմում էր մեղ ասես ալիքների տակ թաղեւու համար: Երկինքի բեռը մեղ ծանր էր դալիս. բայց նաւը գնում էր ու տանում մեր ընկճուածու թախծոս դլուիները հեռու, հեռու...

Ամենքը տախտակամածի վրայ էին և կարծես մի մի բեռ էին տանում դէպի օտար հորիզոնները: Նայում էի այդ քարացած դէմքերին, և ինձ թւում էր թէ ամենքը փախել են ափերից լայնարձակ ծովում ցրելու իրանց հոգու անորոշ թախիծը: Սակայն այս անհունութեան մէջ անգամ հոգին թեթեացնելու տեղ չկար, այստեղ էլ երկինքն էր սղմում, նրա զօրի տակ ծովն էր տնքում, և ալիքները հեկեկում էին ցաւով:

Անլոյս ու խաւարամած երկնքի տակ բոլորի դէմքերը կապարի գոյն էին ստացել, գորշ ալիքների մռայլ արտացոլումները խաղում էին նրանց վրայ, և մարդիկ շարունակում էին նայել դէպի հեռուն մեռելատիպ ու գիների պէս: Ափերը թաղուեցին հորիզոնի տակ՝ տանելով իրանց հետ ծանօթ կեանքի պատկերները՝ հեռուն անորոշէր ու մռայլ, երկինքն ու ծովը սպառնալից էին, և տախտակամածի վրայ կանգնած մարդիկ դժոհն էին մի բանից, որ իրանք բացատրել չէին կարող: Լուռ էին ամենքը և նայում էին մերթ դէպի երկինք, մերթ դէպի հեծեծող ալիքները և մեծաւ մասամբ այնտեղ, ուր ափերը կորան:

Ո՞ւհ այդ ափերը... միթէ անկարելի էր նրանցից ազատուել, ով է մեր ճակատագիրը բեեռել հողին, ո՞վ է մեր ճակատը կախել գետնին, բթացրել մեր հայեացը, մեր մոքի թեերը փետել: Դժոհն էի ափերից, տառապել էի այնտեղ, — միթէ ամենքն էլ չեն տառապում — անձկութեամբ էի սպասում այն վայրկեանին, երբ կը կարողանամ ազատուել նրանցից, տարուել լայնարձակ ջրերի վրայ, ուր անսանձ հովերն են խաղում և ալիքները մռամում իրանց յաւետենական երգը: Հոգիս տենչում էր մեծն ու անսահմանը, ուր ամեն ինչ, անգամ աւելմունքը դեղեցիկ է, այն՝ որ ափ չունի և ոչ

չափի. և այժմ վերստին ես նոյն ատելի ափերն էի փնդրում թախծոտ հայեացքով։ Ես մենակ չեի, ամենը գէպի այն կողմն էին նայում, ուր քիչ առաջ կորան ափերը յուզարկաւոր հանդիսաւորութեամբ։

Ես հաւատացած էի, թէ ըոլոր իմ ուզեկիցներն էլ ինձ պէս են, ամենըն էլ խոյս են տուել ափերից նղովքով ու զայրոյթով և այժմ ցաւով են յիշում իրանց թուածվայրերը, անթարթ հայեացքով փնդրում են մի ծառ, մի շէնք, ծխի մի ոլորտ, որ կեանք ու աշխարհ յիշեցնէր։ Յաւիտենապէս գժգոհ ու անիծուած ողին էր մաս-մաս ապրում մեր մէջ, մենք փախչում էինք ոչ միայն ափերից, այլև մեզնից, իրարից և անկարող էինք աղա-տուել։

Ափերը, ափերը... մենք տմենքս մի աննիւթ թե-լով կապուած էինք նրանց հետ, մեր կարոզութիւնից դուրս էր կտրտել այդ զարմանալի շղթան, որ օգակ-օ-զակ վիշապի պէս պարփակել էր մեր էտթիւնը։ Անդամ այս խենթ ծովի վրայ, ուր հողմերը սամճ չունին և ալիքները գագար, ուր ամեն ինչ յաւիտենական է և վր-սեմ, անդամ այստեղ ափերը կարծես մեզ հետեւում է-ին քայլառքայլ գարշանքով, ոճիրներով ու ախտերով բեռնաւորուած մի կարաւանի պէս։ Անհունը երազելու փոխարէն մեր միտքը անդագար ծալում էր գէպի հո-ղը, և մեր երևակայութիւնը ներքեռում որսը փնդրող թոշնի պէս շարունակ գէպի հողն էր նայում, գէպի այն նղովուած ափերը, ուր արցունքն առատ է, ժպիտը գունատ և ցաւը միշտ խորունկ, ուր մի խօլ պայքարի մէջ մարդկային բիւրաւոր էակներ կրծուաւմ են իրար և ուր այնպէս գժբախտ են և՛ նրանք, որոնք յաղթում են, և՛ նրանք, որոնք չդիտեն՝ ինչ ասել է յաղթանակի հաճոյք։

Ափերը, նղովուած ափերը մեղ կաշկանդել էին նաև այս անհունութեան մէջ, մենք կարօտում, մենք փնդրում էինք նրանց, իրարից ծածուկ հառաջում էինք նրանց համար և գժգոհ էինք, որ կախուած ենք երկըն-

քի և ծովի մէջ, որ էլ չենք տեսնում մեր հայեացըը  
բժիշնող, մեր երեակայութիւնը խեղդող աշխարհը

«Փախիր՝ ուր ուզում ես, գարձեալ ափ պէտք է  
դուրս գաս», մտմտում էին ես մտախոհ քայլելով տախ-  
տակամածի վրայ յետ ու առաջ: Իմ ուշագրութիւնը  
գրաւեց մի վոքրիկ տառնտամերկու տարեկան աղջիկ  
գունատ գէմքով, սև՝ ինչպէս ածուխ՝ ացքերով, նա յենուել  
էր նաև եղրի վանդակապատին և անթարթ նայում էր  
գէպի վար՝ առես աշխատելով գիտել ուրիշական պատ-  
կերը զճիտ ալիքների մէջ: Նրա գանդուր ու ու մազե-  
րը անխնամ ձևով կախկանուել էին ճակատի և գէմքի  
վրայ, նրանց հետ խազում էր հովը, մերթ ցրիւ էր բե-  
րում, մերթ կրկնն հաւարում, բայց աղջիայ փոյթը չէր,  
նա շարունակում էր անփոյթ կերպով նայել ջրերին,  
մերթ ժպտում էր, մերթ մնում մտախոհ ու երազուն:  
Այդ փիրուն, վախտ մարմինը, այդ ու ու գանգրահեր  
գլուխը, գունատ, անուշ գէմքը, երազուն ացքերը մի  
բան անէին իրանց մէջ, որ այնպէս յիշեցնում էր ջրա-  
յին ոգին թւում էր, թէ նա հէնց նոր զուրս է եկել ծո-  
վից և նայում է իր քոյրերին, ժպտում է նրանց: Ահա  
թէ ով էր անտարբեր գէպի ափերը, —մտածեցի ես.  
ամբողջ օրը նաւում ենք, և նա քաղցրութեամբ ժըպ-  
տում է ալիքներին, սև ու սպառնալի ամպերը կախուած  
են վերից, ալիքները մռմռում են ու վրափրամ, նաւը  
աքնում է, բայց աղջիկը անհսու կերպով նայում էր գէ-  
պի վար, առես նա մի բան է տեսնում, որ մեզանից  
ոչոք չի տեսնում և ոչոք չի կարող հասկանալ:

Ես կամացուկ մօտեցայ, կանգնեցի նրա կողքին.  
Նա գլուխը բարձրացրեց, վոքրիկ գունատ ձեռքով  
յետ տարաւ իր խոսպապները ու ացքերի հայեացըը  
մի վայրկեան յառեց ինձ վրայ և կրկնն շարունակեց  
նայել գէպի վար, այնտեղ՝ վարում ալիքների փրփուրի  
մէջ մերթ ցոյց տալով իրանց ուսուցիկ մէջքերը և մերթ  
կորչելով ջրերի տակ՝ լողում էին բաղմաթիւ մեծ  
ու փոքր ձկներ՝ նրանք աշխատում էին անպատ-

ճառ համնել նաւին, քսուել նրա կողերին։ Նրանց էր նայում երեխան ու զուարձանում։

— Տեսնում ես, — ասաց երեխան առանց վեր նայելու, — ինչ շատ են նրանք, վազուց է, ինչ վազվզում են նաւի յետեւից, նայիր՝ ինչպէս կոխկոտում են իրար, այ, այս մեծը միշտ ամենից առաջ է վազում, բոլորն էլ աշխատում են նաւի տակ մտնել, այդ ի՞նչ են փնդը բում այդպէս։

— Ոչինչ, իմ փոքրիկ, նրանք բան չեն փնդրում, խազում են ալիքների հետ։

— Զէ, նրանք գալիս են մեզ հետ, ես ճանաչում եմ, վազուց է, նայում եմ, միշտ գալիս են. գիտես մենք ուր ենք գնում։

— Ո՞ւր։

— Մենք գնում ենք երկիր, դուրս կը գանք Տրասպիղն, տատս այնտեղ է, մեզ սպասում է, այս գիշեր կը համնենք այնտեղ, յետոյ կ'երթանք երկիր, այ, ձըկներն էլ գալիս են մեզ հետ։

— Դուք զնում էք երկիր, ձկներն էլ գալիս են ձեզ հետ. բայց երբ դուք դուրս գաք ափը, ձկներն այնուամենայնիւ կը մնան ջրերում։

— Ինչո՞ւ համար են մնում ջրերում, չե՞ն մրսում և չե՞ն խեղդւում։

— Զեն մրսում և չեն խեղդւում, ձկներն այդպէս են, այդ նրանց երկիրն է, այնտեղ նրանք լողում են, ազատ են, ուրախ են։

— Երկիր չէ, ծով է, — դժգոհ եղանակով ուղղեց ինձ երեխան. — Երկիրը մերն է. գիտես՝ մեր երկիրը վազուց չեմ տեսել։

— Շատ ես ուզում դնալ։

— Իսկի էլ չէ. հայրիկը ասում է՝ զնանք, և մենք գնում ենք, մայրիկն էլ է մեզ հետ, նա հիւանդ է, այ, այնտեղ պառկած է. տատս կանչում է, մայրիկս ու զում է գնալ, շատ է ուզում, ես չեմ ուզում։

— Հապա դու ուր կ'ուզես մնալ։

—Այսաեղ, այ, այստեղ էլ լաւ է.—նա ձեռները փռեց դէպի ծովը.—այսպէս գնանք, գնանք... մի լաւ տեղ, հեռու...

Երեխայի սև աչքերը վառուեցին, և գունատ դէմքը մի փոքր կարմրեց։ Նա այժմ նայում էր ինձ և ըստասում, թէ ես ինչ կ'ասեմ, որ նա չի ուզում գնալ երկիր, այլ մի «լաւ տեղ», հեռու, հեռու, դէպի անծառ նօթ հորիզոնները։

Ես լուռ էի։

—Դու ուր ես գնում,—յանկարծ դարձաւ նա ինձ։

—Ե՞ս... ես այնպէս, գնում եմ հեռու, այ, այն կողմերը։—ես ձեռքս մեկնեցի դէպի մութ հորիզոնը։

Նա մնաց մտախոհ. կրկին գլուխը քաշ ձգեց և դարձեալ նայում էր ջրերին։

—Աստղիկ, այ Աստղիկ, լսուեց նաւի երրորդ կարդի տախտակամածից մի հաստ ու խոպոտ ձայն։

—Հայրիկս է կանչում,—պէտք համարեց բացատրել Աստղիկը և շտապով գնաց դէպի հայրը։ Ես նայում էի նրա դալար իրանին, նրա հողմածածան մաղերին, տեսայ յետոյ, թէ ինչպէս հայրը բռնեց նրա ձեռքից, և երկուսով միասին վար իջան դէպի նաւի խորքը։ Քառասունից անց մի մարդ էր Աստղիկի հայրը, հաստ ընչացքներով, ածիլած երեսով և խոր ընկած այտերով։ Դա մի դէմք էր, ուր այնպէս որոշ կերպով դրուած էր թափառական կեանքի կնիքը։ Նա էր, որ ուզում էր փոքրիկ աղջկան երկիր տանել, յոդնած էր օտար երկընքի տակ և դադար ու հանգիստ էր ուզում երևի։ Ափերը, ափերն են քաշում, մտածում էի ես, սոսկումով, ոճիրներով պղծուած ափերը։ Նաւը քրքրում էր ծովի կուրծքը, ալիքները հեծեծում էին նրա տակ և հակառակ կողմից դուրս պրծնում նզովքով, ձկները շարունակում էին վագել նրա յետելից՝ աշխատելով իրարից առաջ անցնել. նայում էի և վերստին մտածում փոքրիկ աղջկայ մասին, որ փախչում էր ափերից, որ կ'ուզէր միշտ տարուել այս ձկների հետ հեռու, հեռու... նրա

երազուն աչքերը, գունատ դէմքը, գանգրահեր զլուխը իմ աչքի առաջն էին. նա այժմ ապրում էր իմ հոգում, և ես ցաւում էի, որ չսղմեցի կրծքիս այն փոքրիկ գըլուխը, և պինդ պինդ-չհամբուրեցի այն երազուն աչքերը, ուր վառում էր մի ըմբոստ տենչչ Ծովի աղջիկն էր նա:

Սութն ընկաւ, անսասազ, մռայլ մի զիշեր էր, որ իջու ծովի վրայ. սև երկինք և սև ծով գրիուեցին, և ոչ մէկը լուռ չէր, երկուսն էլ մռամբում էին, ներքեւում անհանգիստ էին ալիքները և վերում քամիները: Եւ խաւարը անբուն հսկում էր նրանց վրայ. մէկ նաևն էր լուսաւոր, նրա բազմաթիւ ճրագները որպէս խաւարի մէջ թարթող աչքեր տարւում էին ջրերի վրայից վախ-լուկ, յուսահատ փայլով: Ճամբորդները մէկիկ-մէկիկ վար իջան տախտակամածից և թազուեցին նաւասենեակների խորքում: Ես մնացի մենակ և ականջ էի դնում ա-լիքների ձայնին և կայմերի յուսահատ ճռուցին: Ծովն ու երկինքը ապրում էին մի թափով, որի առաջ և՛ եօ, և՛ իմ ուղեկիցները, և՛ մեր նաւն ամբողջ ոչնչութիւններ էինք: Եւ այն գիտակցութիւնը, թէ մենք բոլորս ոչինչ ենք բնութեան տռաջ, որ մենք միայն վայրկեաններ ենք տիեզերական ոյժերի յաւիտենականութեան հան-դէպ, իմ հոգին համակեց մի խորոնկ վշտով: Ինձ թը-ւում էր, թէ ալիքներն ու քամիները իրանց անդադը-րում ու հզօր մռնչիւնով հեղնում էին մեզ, մեր եղկե-լի գոյութիւնը, որ տիեզերքի լայնութեան մէջ տեղ ու գագար չենք գտնում, փախչում ենք, փախչում և չենք աղատում այս սև երկնքի պէս մեր գլուխն կախուած սև ճակատադրից: Այսել այդքան ճնշն և այդքան դը-քանիստ. ինչո՞ւ: Գլուխս ձեռքերիս մէջ առած և զոյդ արմունկներովս յենուած նուի վանդակատատին՝ ես նայում էի դէպի խաւարը, և իմ հայեացը թոյլ բաղկով ձգուած նետի պէս չէր կարողանում պատռել զիշերա-յին սեի թանձրութիւնը և մեր ճրագների լոյսի հետ մեռնում էր հէնց իմ ուների տակ: Հոգիս էր միայն,

որ տարւում էր հեռու, հեռու և դարձեալ սաւառնում էր ծանօթ ափերի, ծանօթ պատկերների վրայ։ Եւ նըսանք բոլորը վշատեցուցիչ էին, ճնշող, ոչինչ լուսաւոր, ոչինչ մխիթարական։ Մէկը կամացուկ դիակաւ թեփս. կողքիս կանգնած էր փոքրիկ աղջիկը։

—Դու գեռ չես քնել, իմ փոքրիկ։

—Զէ, ես նայում էի հեռուն... մերոնք չեն քնել...

քունս չի տանում... շատ մութ է... յետոյ ջրերը այնպէս ձայն են հանում... մայրս էլ տնքում է շարունակ։

—Վախենում ես ջրերի ձայնից։

—Զէ, չեմ վախում, ականջ եմ դնում. այնուեղ վարժապետին էլ էի ականջ դնում։

—Ի՞նչ վարժապետ։

—Զես ճանաչում մեր վարժապետին, նա մերոնց բաննը է պատմում, այ, նա այնտեղ է, —նա ցոյց տուեց տախտակամածի խորքը, —ականջ դիր։

Մենք լռեցինք երկուսս էլ. քամին մերթընդմերթ հասցնում էր մեր ականջին մէկ երկերուող ձայն, մերթ յատակ, մերթ խեղդուած և կոշտ, բայց միշտ լալկան ու ցաւոտ։ Ալիքների մոնչիւնի և հեծեծանքների մէջ այդ ձայնն իր առածին տեղը, իր առանձին շեշտն ունէր, ուր աւելի ցաւ կար, բան այս խաւարի և այս ու գիշերուայ մէջ։

—Դիտես ինչ, նա այնպիսի բաներ է պատմում... մարդու լացը գտլիս է... մայրս էլ շարունակ տնկում է, միշտ հարցնում է, թէ երբ կը համնենք... դու չդիտես, մենք ե՞րբ կը համնենք, տառս սպասում է։

—Վաղը առաւօտ դու կը համնեսքո տատին։

—Իսկ նաևը։

—Նա էլի կ'երթայ, կ'երթայ ծովերով հեռու ու հեռու։

—Դու էլ կ'երթաս։

—Հա, ես էլ կ'երթամ, բանի նաւը գնայ. կ'ուղես երթալ ինձ հետ։

—Կ'ուղեմ, ես շատ եմ ուղում այսպէս զնալ, բայց

մայրս... նա այնպէս տնկում է, ուղում է երկիր հասնել, և տառս սպասում է:

Քամին մեզմացաւ, ես այժմ որոշ ու յատակ լսում էի վարժապետի ձայնը. նա ինչոր պատմում էր, ինչ որ անիծում, և նրա խօսքերը ընկնում էին այրող կայծերի պէս, որոնցից կարծես խաւարն էր գողում: Դա մի ձայն էր, որ թափանցում էր մարդու հոգու խորքը, խառնում, քրքրում, ցաւեցնում էր և այնուտամենայնիւ հաճելի էր լսել:

Իմ փոքրիկ ուղեկցուհու փոյթը չէր սակայն, նա վերստին կախել էր իր գանդբահեր գլուխը վանդակապատից վար և նայում էր սև ջրերին, որոնք աղմկում էին նաւի տակը Բատ երևոյթին նա բոլորովին ուրիշ բան էրմտածում:

—Ասողիկ, այ Ասողիկ, լսուեցնոյն խոպոտ ձայնը Աղջիկը ցնցուեց:

—Հայրս գարձեալ կանչում է,—ասաց նա վհատ ձայնով,—ես գնում եմ. տես՝ վարժապետն ինչպէս է պատմում, էլի այնպիսի բաներ է ասում, մարդ գողում է,—աւելացրեց նա և շտապով ծածկուեց իմ աչքից:

Ես քայլեցի նրա յետելից, գնացի այնտեղ, ուր լրուում էր վարժապետի ձայնը: Թուով տամնատասնհինդ տղամարդ, հասակաւոր, ջահիլ, մռայլ գէմքերով, դըլուխները կրծքներին բաշած կամ իրար կողքի, իրար վրայ թեք ընկած, նստած էին տախտակամածի վրայ իրանց այլանդակ կապոցների ու ընկների մէջ: Նրանց կենտրոնում մի բարձր կապոցի վրայ ազօտ կերպով ծրագրուում էր մի ուրիշը, որ ըստ երևոյթին երկար բազուիներ ունի և նոյնպիսի ոտներ, որ նա երկուտակ ծալել էր, ծնկները գուշաց ցցած: Դէմքի գծաղրութիւնը շատ որոշ չէր, նկատուում էր միայն երկար սրածայր միրուքը, և աչքերի վրայ ամպի պէս իջնող թաւ յօնքերը, որ այնպէս մռայլ տեսք էին տալիս նրան: Առանց մօտիկից ծանօթ լինելու կարելի էր ասել, որ նա մէկն էր այն թափառական, անհանդիսար գոյութիւններից,

որոնց հայրենիքը կտառուած էիր անց կրունկներին, և ուրիշ կարծես քամիներից են հարցնում իրանց կեանքի անվերջ ճանապարհը:

—Քուներնիս չի տանում, ասա, վարժապետ, օղորմի քո հօրը,—կրկնում էր բազմութիւնից մէկնումէկը աշմեն անդամ, երբ վարժապետը յօդնած կամ ձանձրացած, հանդարտութեամբ քաշում էր իր չոր ծնկների վրայ երկար, մինչև գետինը համնող վերարկուի փէշերը, ձեռքերը խաչում կրծքին և գլուխը բաշ ձդած լուռ թաղում էր խոհերի մէջ:

—Ասա, վարժապետ, ծծֆ...

Եւ վարժապետը վերստին սկսում էր.

«Եռ վինդրում էի բեկորները, իսկ նրանք շատ հեռու են ընկել իրարից և ամենը մռմուռ են քամում, ամենը վշտի մուխ է բարձրանում պալան-պալան: Ես միշտ տեսնում էի այդ մուխը, ուր և մինչը, որ հօրիզոնի, որ երկնքի տակ ասես, ես նրան ճանաչում էի. Նրա գալարներն աւելի շատ են, ինչպէս ցաւած աղիքներ, դոյնն աւելի սկ է:»

«Ես վինդրում էի բեկորները և միշտ դտնում էի նրանց: Ես խօսում էի նրանց ականջին, ժպտում կամ լալիս էի նրանց հետ: Եւ որքան շատ են, 8էր Աստուած և ուրեմն են ընկել: Ես ուրեմն եղայ...»

«Անապաների բոցու արել իր կիզիչ շնչով որքան է լիզել այս խեղճ դանդս. Լեռներում ու ձորերում, ծովերի վրայ և մեծ ճանապարհներում քամիները որշքան են ծեծել այս խեղճ թիկունքս: Թուերս բեռ դարձան յօդնած ուսերիս և մարմինս ծանր էր գալիս տառապած ստուերիս, բայց ես քայլեցի, քայլեցի բեկորների յետելից: Եւ ամեն անդ նոյնն էր աշխարհը, եղբայրներ վայ յաղթուածին, վայ անզօրին:»

«Ճակատոս մոխիրների մէջ մաշուեց, և ստներս մեծ ճանապարհների քարերի մէջ փշուեցին, երբէք միենոյն տեղում այս դժբախտ գլուխս երկու անդամ չհանդըստացաւ, և երբէք արեի առաջին շողը միենոյն հօրիզու-

նի տակ երկու անգամ իմ աջքերին չփայլեց։ Բոլոր գիշերներն իրանց խաւարն ունին, բոլոր երկինքները նոյն աստղերը կամ նոյն ամպերը, և բոլոր հորիզոնների տակ մարդիկ նոյն են. օճիվները նրանց հետ են ծնուած, և ախտերը նրանց եղբայրներն են։ Տօթ գիշերներին պապակած օձերը կողը-կողքի են սողում լիզելու համար ցողից խոնաւացած խոտերը, ցուրտ ձմրանը նրանք իրար գալարուած են պառկում հողի տակ. մըրիկի ժամանակ սոված գայլերն ու բօրենիները ձիւն ցանելով իրանց շուրջը միասին են դուրս. գալիս որս ճանկելու, գիշակերները միասին են քրքրում մեծ անապատում ընկած ուղտերի գիտակները, քամիները մէկտեղ են մոնչում ժայռերի կատարներին և այրերում, ալիքները եղբօր ուես են հեծեծում փոթորիկների տակ, բայց մարդիկ ամեն տեղ կրծոտում են իրար ատամներով, կատաղութեամբ թաղում են իրար կոկորդի մէջ սոկոս մատները և հրճուում ու քրքջում են նմանի անկման առաջ. ես ձեզ ասում եմ, ամեն տեղ նոյնն է աշխարհը, եղբայրներ, վայ յաղթուածին, վայ անզօրին։

«Եւ գիշերները օտարի գուներում... ես սողում էի մեղմիւ, վախով, վիրաւորանքի և անարգանքի երկիւղով. չէ որ մներում սովորաբար մարդիկ են ապրում, որոնք կծել գիտեն։ Սողում էի անձրեսի ու ձիւնի տակ, թրջուած, գողալով ու գժբազդ, և ատամներս զարկուում էին իրար ցրտից, ես հեծեծում էի պատերի տակ՝ թափառական քամու հետ միասին, որ նոյնակս մի ճեղք էր վնդրում ներս սովալու համար։ Եւ գուները փակւում էին իմ առաջ։ Այն ժամանակ ես ընտրում էի կորած-մոլորուած խրճիթները, ուր աղօս ճրագը հազիւէր պլազում, ուր կեանքը խեղճութեան բեռի տակ հազիւէր համարձակւում մեղմիւ հեալ։ Այսուղ էի ապաստան գտնում, ուր զեղխութիւնը անգթութեան հետ թունաւոր օձի պէս չէին գալարուել անհիւրընկալ շեմը տակ։ Եւ կծկում էի մինչև լոյս, ապա կրկին քայլում գէպի նորանոր հօրիզոններ, ուր ըեկորներն էին

գաղաքար առել և ուր մխում էր նրանց ցաւը՝ Ե՛հ, ինչ  
չեր տեսայ, մի օր բանառում ես լսում էի, թէ ինչպէս  
հարեւան սենեակում մի կին երկունքով բռնուած, ան-  
ձար ու մենակ, մռնչում էր ցաւից, անիծում էր իր ար-  
դանդի պտուղը, և երկինքը, և՝ աշխարհը, եզրանդներով  
չանդռառում էր պատերը՝ կարծես իր գլխին փուլ բեր-  
րելու համար։ Եւ նրա աղաղակը լսում էր ինչպէս ան-  
դունդներից, խուր, ցաւագին, և այն ոչ թէ մարդկային  
կոկորդից էր դուրս գալիս, այլ թւում էր, թէ բաց  
կրծքի մէջ պատառուած սիրան էր ճշում։ Սոսկումից  
ու ցաւից մաղերս դիղանում էին, և ես զլուխս պատե-  
րին էի զարկում, որ դանդս փշուի, այդ աղաղակնե-  
րը զսեմ։ Յետոյ ամեն ինչ լռեց. տարաբախում մայրը  
մեռած երեխայ ծնեց ու մեռաւ։ Ե՛հ, եզրայրներ, հա-  
ւատացէք ինձ, աշխարհն ամեն տեղ նոյնն է, վայ յաղ-  
թուածին։ Թունոտ հոգիներ, քար սրաեր, ախտեր ու  
ոճիրներ, և այս բոլորի վրայ մի կոկիկ փայլուն դիմակ,  
որ ժպտում է, ժպտում և խածնում։ Գնում էք, լաւ եք  
անում, որ գնում էք, թող ես միայն թափառեմ։

Ես այլ ևս չեի լսում նրան, այդ ձայնը, այդ տա-  
րաբախում կնոջ պատմութիւնը իմ մէջ յարուցեց հաղար  
ու մի վերյաշեր, մի ամբողջ կետնք ազօտ, մշուշապատ  
պատկերներով ցցուեց իմ առաջ։ Այդ մարդը, այդ տա-  
րօրինակ, կէս-խենթ, կէս-փիլիսոփա այդ վարժապետը  
ինձ օտար, անծանօթ չեր թւում։ Ո՞ւր եմ աեսել և Երբ։  
Նա վերսկսեց իր թափառական կետնքի արկածներով  
հարուստ պատմութիւնը, խակ ես փորփրում էի ան-  
ցեալս, վնադրում էի անցքեր, յիշողութիւններ, որոնց  
հետ այս երկարահասակ, նիհար մարդու պատկերը  
կապուած լինէր։ «Դէրվիշ, դէրվիշ», այս բառը յանկարծ  
մեխի պէս ցցուեց դլխումս, և ես սկսեցի անդադար  
կրկնել մտքումս, և նրա հետ այնքան յուշեր պաշարե-  
ցին ուզեղս. «Դէրվիշ, դէրվիշ», աս անշուշտ նա է, նոյն  
հասակը, նոյն միրուքը անխնամ ու երկար, նոյն չորա-  
ցած ձեռները, որոնք անդադար քաշքառմ են երկար

Ներարկուի փէշերը։ Դէրվիշ, նա թափառում էր գիւղերում, գժբախտ ու մռայլ, յաճախ քաղցած ու անապաստան, պատմում էր արկածներ, անօրինակ ու սարսափելի, և միշտ ասում էր, թէ ինքը փնդրում է «քեկորները» մեծ մարմնի։ Մարդիկ լսում էին, դլուխները թափահարում, և բոլորն, ինչ նա ասում էր, համարում էին խենթի զառանցանք կամ մտացածին։ Ե՛ւ այդ կնոջ պատմութիւնը, և՝ դրա նմանները նա քանի անդամ էր պատմել։ Անուն չունէր, թափառական կեանքը նըրան կնքել էր «դէրվիշ» անունով, և այդպէս էլ սիրում էր ինքնիրան կոչել։

Եւ մի օր, մի անիծուած օր, ես իմացայ վորձով, թէ որքան ճշմարտութիւն կայ այդ անօրինակ մարդի սարսափելի պատմութիւնների մէջ։

Ա. ԱՀԱՐՈՒՆԵԱՆ

(Պը շաբոնակուի)

## ԵԳԻՊՏԱՀԱՅԱՅՔ\*)

(Տեղագրական)

Հայ կինը. Վերին Եգիպտոսի քաղաքներու եւ գիւղերու մէջ ցիրուցան եղող հայերը. Լոքոսորի իշապանները, Ասուանի ջրամբարը և ի Տէր հանգուցեալ Տէր Եղնիկ քահանայի թողուցած օրինակելի տպաւորութիւնը:

Առմանդ 1904 փետրուար 5 ի Վերին Եգիպտոս

Վերի Եգիպտոսի քաղաքներու և գիւղերու մէջ ցիրուցան եղող հայ ժոկովուրդին հոգևոր միսիթարութիւն մը մատուցանելու նուիրական պարտականութեամբ այս երրորդ անգամն է որ իրրե այցելու հովիւ կը հաւաիրուիմ այս վիճակի հայերէն:

Վերին Եգիպտոսի մէջ ամենէն զատ թուով բնակութիւն հաստատող հայեր կը գտնուուին յԱսիութ, ուր կարելի է կեղրոն համարել մնացեալ վայրերու բնակչաց, և ուր 12 տան չափ հայեր հաւաքուած են վերջերս չնորհիւ Մաթոսեան և Սարգիսեան վաճառատան ծխախոտի ընդարձակ գործարանի ներկայացուցիչ տիար Սիմոն Սարգիսեանի:

Ասիութէն յետոյ Մինէի գիւղաքաղաքի մէջ հաստատուած են հայեր: Այստեղ աւելի հին ժամանակէ ի վեր յաջողած են չորս տան չափ գաղթական հայեր ձեռք բերել բաւական ընդարձակութեամբ հողային կալուածներ և շինութիւններ, որպիսի կալուածներու գները տարուց տարի կրկնապատկուելու վրայ են: Իսկ մնացեալ 10-14 վայրերու մէջ բնակողներու թիւը 10-15 չանցնիր: Ցաւալին այն է որ վերոյիշեալ երկու կարևորագոյն վայրերու մէջ ցարդ յաջողութիւն ունեցած չեն գէթ միւմի մատուռ ու նախակրթարան հաստատել: Իմ կարծիքով՝ կամքը միայն կը պակսի. ապա թէ ոչ, մինը կամ միւս կարող են հաստատել չափաւոր վիճակով մը:

\*) Հեղինակը նոյն գրուածքը գետեղել է նաև Եգիպտոսի մի թերթում. մեղ ուղարկած յօդուածից կրմատել ենք միքանի ոչ կարևոր տեղեր:

Երրորդ այցելութեամբս այն համոզումն ու հաւատքը կայացաւ յիս թէ հայ կինը աշխարհիս որ անկիւնն ալ իյնաւլու անբախտութիւնը ունենայ, դարձեալ հայութեան յատկանիշն ամբապէս կը պահպանէ իւր հոգւոյ և մտաց խորերը. որովհետեւ ամեն պատահածս վայրերը խորին զմայմամբ դիտեցի թէ ինչ յուսով ու հաւատով, ինչ կարօտագին ծարաւով կը դիմէ դէպի իւր եկեղեցւոյ պաշտօնեայն, ինչ վստահութեամբ կը բանայ ու կը ներկայացունէ իւր մտային ու հոգեկան վէրքերը:

Անցեալ տարի Վերին և Ստորին Եղիպատոսի հայ գաղթականութեան ազգահամարը կատարուելով Գահիրէի Ազգ. Առաջնորդարանին յանձնուած է արդէն: Բայց թէ Երբ կամ ինչ միջոցներ կան այս վիճակներու հայ գաղթականութեան պահպանման մասին.—իհարկէ՝ ձեռնհաս իշխանութեան վրայ պիտի ծանրանայ ապագայի ամենագառն պատասխանատուութիւնը \*): Վասնզի Ծնունդի և Զատկի տօներու առթիւ տարհեան երկու անգամ ինձ նման ապիկար քահանաներու աճապարանօք մի տեղէն միւսը այցելութիւնները բաւարար չեն ժողովրդեան պահպանութեան համար: Մանաւանդ թէ այս կարդի այցելութիւններն աւելի եկամուտ մը ձեռք բերելու համար է քան թէ ժողովուրդը կորստեան վտանգէն աղատելու: Եթէ քաջութիւն և աղնուութիւն ունենանք ճշմարտութիւնը խոստովանելու, Եղիպատոսի մէջ գտնուուր եկեղեցականներէն և ոչ մէկս յարմարութիւն կամ ձեռնհասութիւն ունինը այս ամենափափուկ պաշտօնին, գէթ ես իմ մասին կը խոստովանիմ հրապարակաւ:

Անցեալի տխուր փորձերն ակներե են թէ՝ այն անտարբերութեամբ այլասեռեցան բազմաթիւ հայ գաղութներ (անձընագիր հովիւներու չգոյութեան պատճառաւ): Բուն իսկ Եղիպատոսիան աշխարհին մէջ եթէ պատմական ներքին տեսութիւն մ'ունենանք, պիտի տեսնենք թէ քանի՛ հազար հայեր այլասեռուած են դարերու ընթացքին մէջ: Եթէ հետազնին քննութեամբ իմաստասիրելու ելնենք Եղիպատոսի մէկ ծայրէն մինչև միւսը, շատ մը հայտնակ տեհրակներու, վանքերու և եկեղեցներու վայրերուն պիտի պատահինք: Տակաւին կանգուն կը մնայ Ասիութի շրջակայ խպատիաբնակ գիւղերէն մի-

\*) Ինչպէս կը տեղեկանանք, Սուտանի, Խարթումի՛ մանաւանդ Հապեշստանի մէջն ալ միսիթարսութեան կարօտ հոյեր կան, որոնք իրենց այդ վայրեր գաղթելէն ի վեր երբէք եկեղեցականի մ'երես տհած չեն: Եզ մասին Ամինայն հայոց Վեհափառ Կաթողիկոսը կարող է ազդու անօրինութիւն մը ընել, եթէ ներկայի ծանր տաքնապը թոյլատը իրեն խորհելու և այն հարցի մասին:

ոյն մէջ հայկական տառերով յիշատակադրերու եղծեալ հատ ու կտուր նշաններ՝ փորուած այն տեղի եկեղեցւոյ պատերուն վը-  
րայ, որոյ մասին ականատես մը պատմեց մեզ յԱսիութ:

Ենչպէս կը պատմուի, Լոքորէն երկաթուղիով կէս ժա-  
մաչափ դէպի վեր հեռաւորութիւն ունեցող ու Նեղոսի ձախ  
կողմի վրայ շինուած «Առմանդ» գիւղաքաղաքն երբեմն ամբող-  
ջութեամբ հայեր եղած են, ուր կը գտնուի ցարդ Հայաստանի  
նշանաւոր շուներու սերունդ մը իրեկ ապացոյց անցելոյն հայ  
բնակչավայր մը լինելուն: Բայց թէ ի՞նչպէս հայ սերունդն  
անհետացած է, իսկ շուները մնացած են, տակաւին լուսաբա-  
նութեան ենթակայ եղող հարց մէ: Ոմանց կարծիքն է թէ  
Հայաստանէն իրենց անասուններով գերի բերուած հայ ժողո-  
վրդեան հատուած մը մինչև հոս հասուցած ու բնակչութիւն  
հաստատել առւած են, գուցէ Կղէօպատրա թագուհւոյն ա-  
տենով: Հեթանոսութեան իշխանութեան ժամանակի հատուած  
մը լինելով՝ հեթանոս եգիպտացիներու կրօնքն ու լեզուն ու-  
սանելով այլասեռուած են: Գիւղաքաղաքի անունն ալ կարծել  
կու տայ մեզ թէ տաենոք հայշէն գիւղ մը եղած է հոս, և  
ուր տիսուր խորհրդածութեան ներքե կը գրեմ սոյն տողերը:

Լոքոր քաղաքը, որ Եղիպտոսի հնութեանց կեդրոնը հա-  
մարուած է, այս օրերու մէջ (Կղանակի յարմարութեան պատ-  
ճառաւ) բաղմաթիւ երոսուացի երկսեռ հսախոյզներ և զրօ-  
սաշրջիկներ կը գտնուին, ուր ճամբորդներ մինչև Ասսիուան  
հասնելու համար ստիլուած են Փահիրէէն մինչև հոս հասնող  
շոգեկառքէն միւսը փոխուելու, լեզուագէտ արաբացի իշապան-  
ներու պիտի պատահին անպատճառ, որնք զանազան լեզու-  
ներով կը հրաւիրէն ճամբորդներուն որ հածին հեծնել իրենց  
էշերը, գովասանելով նաև իրենց և էշերու լաւութիւնը: Երբե-  
մըն մինչև անզամ շոգեկառքին մէջ մտնելով, հակառակ իշա-  
տէրերու կամաց կը քաշքուտէն իրարմէ մերթ բոունցքներ  
հասցունելով միմեանց: Պատճառը—2-3 գահեկան վարձքն է:  
Այս օրինակ տեսարանին պատահած են գուցէ և ընթերցող-  
ներ, եթէ երբէք Փահիրէի բուրգերուն այցելած են:

Լոքորի իշապաններու լեզուագիտութեան և ճարագիկու-  
թեան մասին հարուստ և միանգամայն ագահ ծնողներէն մինը  
յայտնած էր. «Եթէ կ'ուզէք որ ձեր զաւակներ առանց ծախքի  
և զիւրութեամբ լեզուներ ուսանին, մի-մի էշ առէք ու Լոքոր  
զրկեցէք, կարճ ժամանակի մը մէջ քանի մը լեզուներ կ'ուսա-  
նին:

Ասսիուանի նորակառոյց ջրամբարը որ աշխարհիս հրաշա-  
լիքներէն մինն է, մօտաւոր ապագայի մէջ պիտի ցոյց տայ

իւր օրհնութիւնները Եգիպտոսի ցարդ ջուրի հրես չի ահանող աւագուտ և անհուն անապատներուն Այս մհծագործ շինութիւնը աւարտած է տարի մ'առաջ, զբկթէ հսկայագիր ու կռփածոյ կռանիթ քարերէ: Ամբողջ շինութիւնը տեսած է վեց ու կէս տարի. ջուրերը կը տարածուին ահագին ընդարձակութեամբ, հարիւրաւոր գիւղատեղեր ծածկելով:

Յանկալի էր որ Եգիպտոսի Հայ գաղութը ժամանակէն օգտուելով՝ կարողանար այս աւագուտ վայրերէն մասնարաժին մը ձեռք բերելու, վայրեր, որոնք արդագյին անգնահատելի դրախտներ պիտի դառնան Նեղոսի օրհնաբեր ջրերու ջնորհիւ: Սակայն ինչպէս կ'երկի՛ ալ ժամանակն անցած է, ինչպէս ամին տեղեր, այնպէս ալ Եգիպտոսի մէջ հայ ժողովուրդը Հայաստանի ապագայ յուսով կ'ուզէ ապրիլ: Օտարութեան մէջ հաստատուիլ չուզեր: Այս պատճառու ալ չուզեր կալուածներ գնել, որպէսզի իւր սիրտն ալ անշարժ կալուածներու նման չկապուի օտար աշխարհի հետ:

Ինչպէս կը լսեմ, այս նիւթերու վրայ երկարօրէն գրած է հանգուցեալ Տէր Եզնիկ քահանայն և երկար ատեն իւր մտածողութեանց առարկան ըրած է, սակայն վաղահաս մահով զրկուած է իւր խորհրդածութեանց արդիւնքը տեսնելէն: Պէտք է խոստովանիլ թէ հանգուցեալը խիստ լաւ տպաւորութիւն թողուցած է իւր այցելած ժողովրդեան վրայ, ինչպէս Գանիրէրէ՛ նոյնպէս և Վերին Եգիպտոսի հայ ժողովուրդը միշտ գովվեստիւք կր խօսին հանգուցելոյն վրայօք: Կ'աւաղեն ու կ'ուրան այնպիսի հազուագիւտ եկեղեցականի մը տարաժամ մահուան վրայ, Հանգուցեալի վայելած անհուն ժողովրդականութեան իցիւ թէ հետեւէին նաև շատերը: Արժանիք մ'է այս, զորշատ քիչերն ունին:

Ա. Քհ. ՇԱՂՈԵԱՆ

## ՔՆՆԵՐԸՏՈՒԹՅԻՆ ԵՒ ՄԵՏԵՆԸՆՍՑՈՒԹՅԻՆ

Մկրտիչ Պէջիկացլեսևի «ՔԵՐՈՎԱԾՆԵՐԸ ՈՒ ՃԱՌԵՐԸ», հրատարակութիւն  
Ա. Հոպանեանի, Փարիզ, 1904 թ., գինն է 4 ֆրանկ:

Ափսոս որ «Անահիտ»-ի տպարանում տառերը բաւական մաշուած են երևում, եթէ ոչ այս հրատարակութիւնը կարող էր շքեղ համարուել: Այս հատորի մէջ հաւաքուած են բանաստեղծի ոտանաւորներն ու ճառերը: «Ուրիշ հատոր մը պիտի պարունակէ թատրերգութիւնը», ասում է հրատարակիչը: Աւելացրուած են երեք տաղեր. գրաբար քերթուածների տակ դրուած են աշխարհաբար թարգմանութիւնը և «Նօթեր» բաժնում հրատարակիչը տալիս է զանազան բացատրութիւններ Պէշիկթաշլեանի բանաստեղծութիւնների մասին: Այդպիսով մեր գրական խոշոր դէմքերից մէկի բոլոր երկերի ժողովածուն հըշտատարակուելով՝ դիւրութիւն, է տրուում լիակատար կերպով ծանօթանալ նրա հետ. երեք երկրորդ հատորում հրատարակիչը կ'աշխատի դնել Պէշիկթաշլեանի նաև կենսագրականը, որ մինչև այժմ լոյս տեսած հրատարակութիւնների մէջ շատ թերի էր:

Na.

Հ. Ա. Էփրիկեան՝ «Պատկերագորդ ԹԲԱԾԽԱՐԻՒԿ բառարան», հատոր առաջին, գիրք ա., երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1903: Իւրաքանչիւր հատորի բաժնեգինն է 6 ըուրլի:

Պատկերներով զարդարած գեղեցիկ տպագրութիւն է այս գիրքը, որ անհրաժեշտ է իրեւ Հայաստանի աշխարհագրութեան մի էնցիկլոպեդիական բառարան: Այն, ինչ տալիս է մեր գրականութիւնը Հայաստանի զանազան տեղերի մասին, ամփոփուած է այս հրատարակութեան մէջ: Մի պակասութիւն, որի վրայ արժէր ուշագրութիւն դարձնել, այն է որ և ոչ մի քարտէզ չէք գտնի այդ «Աշխարհագրական» բառարանում. ցանկալի

էր որ գէթ միազդյն, թէկուզ սխեմատիկ կարտէզներ լինէին, Պէտք է ի նկատի ունենալ որ «Կիպերափ քարտէզը» կամ «Աշխանի Այրարատը», «Կիլիկեան» ևայլն շատ քչերի համար են մատչելի: Գնի կողմից բաւական սուզ է և այս «Բնաշխարհիկ բառարանը», որի կլիշէների մեծագոյն մասը բաղմիցը շահագործուած են վենետիկեան հրատարակութիւնների մէջ... ուստի պէտք է այնքան էլ չժամանգայնէին ներկայ տպագրութիւնը:

Na.

ԲԺ. ուս. Գ, Մադաֆիսն «Թօնկականութիւն և հասարակութիւն», 12 պատկերներով, Թիֆլիս, 1904 թ., զին է 25 կոպ.:

Բժշկական գիտութիւնը առանձին բախտ ունի հայերիս մէջ. ոչ միայն յատուկ օրգան ունինք բժշկական և առողջապահական հարցերին նուիրուած, այլև մեծ ու փոքր, ինքնուրոյն և թարգմանական բազմաթիւ գրքեր էլ հն լոյս տեսնում նոյն ճիւղին վերաբերեալ. շատ պրակտիկական ազգ ենք և մեծ ջանքեր ենք զործ գնում առողջ լինելու հսմար. վատ չէ, մանաւանդ որ ակսիօմա է համարում «առողջ միտքը—առողջ մարմնի մէջ» ասացուածքը... թէև, մոռացում է յաճախ որ կան շատ առողջ մարմիններ առանց մտքի էլ...

Գրքի ամենահետաքրքրական մասը զիտական բժշկականութեան զարգացման համառօտ պատմութիւնն է: Մի քիչ չափազանցութիւն կայ բժիշկ-ուստանող հեղինակի հետևալ խօսքերի մէջ. «Կարծում ենք՝ չենք սխալուիլ, եթէ ասենք, որ ոչ մի գասակարգ այնպիսի անձնութիւնութեամբ չի ծառայում հասարակութեան, ինչպէս բժիշկները»: «Բժիշկը ճրագ է, որ լոյս է տալիս՝ ինքը վառուելով»: Մենք կարծում ենք որ բժշկականութիւնը այն ձևով, ինչպէս նա գործադրում է այժմ ներկայ հասարակական կեանքում, աւելի օգուտ է բերում ունենո՞ր գասակարգին, քան չքաւոր մասսաներին. բաղմաթիւ են օրինակները, որոնք ապացուցում են որ մասնաւոր պրակտիկայով ապրելու անհրաժեշտութիւնը առիթ է տալիս եսական, նոյնիսկ տմարդի շահասիրական յարաբերութիւններ բժշկողի և բժշկուղների մէջ. իւրաքանչիւր հիւանդ մարդու լաւագոյն բըժշկութիւնը պէտք է դառնայ հասարակութեան գործ, հասարակութեան հաշուով, այն ժամանակ զանազան Զախարինները լոկ միլիօնատէրերի համար չեն դառնալ մատչելի: Մէկ խօս-

բով բժշկական օգնութեան կազմակերպելու գործում կան շատ պակասութիւններ, որոնց չնորհիւ այդ գիտական բարիքից օգտում է տարաբախտաբար մարդկութեան շատ չնշին մասը, և բբշշիւրները, ինչքան էլ լաւ գրած լինեն, չափաղանց քիչ են փոխում այդ չարիքն առաջացնող պայմանները:

Na.

Յ. Մամանյեան «Թաւիր Աճյալի խնդիրը նոր լուսաբանութեամբ», մատենադրական հետազօտութիւն, Պաղարշապատ, 1904 թ., գին է 20 կոպ.:

Հին Հայաստանը տուել է այն ժամանակուայ քաղաքակիրթ մարդկութեան երկու նշանաւոր մտաւոր ոյժեր, որոնց անոնը յայտնի էր իրանց հայրենիքից զուրս. դրանք են Պրոյերեսիոնը և Դաւիթ փիլիսոփան. այս վերջինը մեծ ծառայութիւն ունի արած աւելի իր հայրենիքին. ստեղծել իմաստասիրական բազմաթիւ ոճեր և բառեր, փորձել Արիստոտելի մտքերը հայերէն արտայայտել, վերլուծել նրան,—դա մեծ քայլ էր մեր լեզուի գարդացման հարցում, թէկուզ «ժողովրդական» չլինէին այդ գրուածքները:

Այդ «Դաւիթի անձնաւորութիւնը մի առեղծուած է եղել թէ բիւզանդաքէտների և թէ հայագէտ բանաստեղծների համար»: Յոյները Դաւիթին իրանց ազգից են ընդունել: Բանը այն է որ երկու Դաւիթ իմաստասիրների մասին տեղեկութիւններ կան. Դաւիթ Մեկնիչ և Դաւիթ Նորքացի, որոնք երևի տարբեր անձնաւորութիւններ են. այդ աւելի ևս խճում է հարցը: Պարզել Դաւիթի և նրան վերագրած երկերի վերաբերեալ խընդիրները—ահա այդ ուսումնասիրութեան նպատակը: Պ. Մանագեանը իր հետազօտութեան մէջ հետևեալ թեղիմներն է դընում,

§ 1. Դաւիթի մասին նախկին հետազօտութիւնները.

§ 2. Ֆ. Կոնիբիրի կարծիքը.

§ 3. Բանասիրական ուսումնասիրութեան մըր եղանակով կարելի է հաստատուն եղբակացութիւններ ստանալ.

§ 4. Սահմանք իմաստասիրութեան, Պորֆիրի Ներածութեան մեկնութիւնը և Արիստոտելի Վերլուծականքի մեկնութեան հատուածը միենոյն հեղինակի Դաւիթ փիլիսոփայից գործ են, իսկ Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» և «Ստորոգութեանց» հայերէն մեկնութիւնները Դաւիթինը չեն.

§ 5. Դաւիթի իմաստասիրական երկերը.

§ 6. Զանազան կարծիքներ Դաւիթի ամսձի մասին և գը-  
րանց քննութիւնը.

§ 7. Սահմանք իմաստափրութեան երկը և Ներածու-  
թեան ու Վերլուծականքի մեկնութիւնները թարգմանուած են  
յունարէնից.

§ 8. Նորպղատոնական Դաւիթ մեկնիչը Աղեքսանդրիա-  
յում ուսած Զ-րդ դարի մատենագիր է.

§ 9. Նորպղատոնական Դաւիթ մեկնիչը քրիստոնեայ է.

§ 10. Նոննոսին վերագրուած առասպելաբանական մեկ-  
նութիւնների հեղինակը Դաւիթ մեկնիչը չէ.

Անկասկած զիտական աշխարհում ուշագրութիւն և գնա-  
հատութիւն կը գտնեն այդ եղբակացութիւնները: Ուրախալի  
է որ իջմիածնում կազմակերպում է զիտութեամբ լուրջ պա-  
րապող մարդկանց մի փոքրիկ խումբ:

Na.

Դեօրի «Հերման և Գորորէտ», գերմաներէնից թարգմանեց Յարութիւն  
Պետրոսեան, Վաղարշապատ, 1904 թ., զինն է 40 կող.:

Գերմանացի հոչակաւոր մտածող-բանաստեղծի այս գը-  
րուածքը երրորդ անգամ է թարգմանուում հայերէն. այս վեր-  
ջին թարգմանութիւնը տարբերում է իր նախորդներից նրա-  
նով, որ կատարուած է տաղաչափութեամբ և ոչ արձակ: Թարգմա-  
նութեան կցուած են միբանի կարևոր ծանօթութիւններ, լի-  
զուն բաւական սահուն է, չափը ներդաշնակ: Իբրև «առաջին  
փորձ» անպայման աջող է պ. Յարութիւն Պետրոսեանի այս  
թարգմանութիւնը:

Na.

«Զիւանու բնարը», հատոր երկրորդ, Վաղարշապատ, 1904, զինն է 50 կող.:

Քիչ անգամ «աշուղ» համեստ անուանը կապուած է եղել  
այդ սաստիճան խոշոր յեղափոխիչ դեր, որքան այդ վիճակուեց  
Զիւանուն: Նրա անունը իրաւացի կերպով կապուած է մեր  
նորագոյն պատմութեան ամենահետաքրքիր էպոխայի հետ: Զի-  
ւանին հրապարակ եկաւ ճիշտ ժամանակին:

Ժողովրդական առաջնականգ աշուղներ մեզանում երբէք

պակաս չեն եղել, Արևելքի ազգերի մէջ հայ ժողովուրդը իր դարաւոր երգով ամենապատուաւոր տեղերից մէկը կարող է զրաւել թէ հին և թէ նորագոյն ժամանակներում, Եւ նրա երգը եղել է միշտ նոյնքան սե, որքան իր ճակատագիրն է, ենթարկուել է նոյնպիսի յեղեղումների, որպէս իր գոյութիւնը: Զարմանալի չէ, որ հայ աշուղը շատ յաճախ մայրենի լեզուից դուրս նաև լացել և ուրախացել է օտար լեզուով: Երգը և երաժշտութիւնը իշխանական դղեակների զարգերն են եղել. տիրապետոյ ցեղը միշտ առաջ էր մղում իր ազնուականութիւնը, որ բնականապէս պիտի պահանջէր իրան հասկանալի գեղարուեստ: Եւ հայ աշուղը երգել է թուրքերէն կամ վրացերէն ոչ թէ իր մայրենի լեզուն չիմանալուց, այլ պարզապէս տիրող թուրք խանին, փաշային կամ թաւադին հաճելի լինելու համար: Խակ միանգամ դղեակում հնչուած ձայնը էլ չի փակուել նրա քարէ պատերի մէջ և լայն ծփանքներով անցել է դէպի ստրկացած ժողովուրդը:

Տասնինսկրորդ գարի վերջին, երբ այլես ոչ խան և ոչ գղեակ կար, ազգային-ժողովրդական երգն էլ իր հին նուիրական մոտիւներն է փնդում: Քեօնողլիների լեկենդական դէմքը և նրանց հերոսական արկածների երգերը կամաց-կամաց գունատուում են, ժողովրդի աղմկուած և անորոշ խոհերով համակուած հոգին նոր բովանդակութիւն է փնդում, ձմերացին երկար գիշելներին սաքուներում երավող զլուխները նոյնպէս մի նոր բան են ուզում իրանց կոյր աշուղից: Ահա այդ անորոշ իղձերի կերպարանաւորողն եղաւ Զիւանին: Եւ պէտք էր, որ նա ծնուէր հայրենի յիշատակարաններով հարուստ Շիրակում:

Զիւանու կատարած գերը հայ ժողովրդական երգի կերպարանավոխթեան մէջ կրկնակի եղաւ: Նա հայացրեց այդ երգի և լեզուն, և բովանդակութիւնը: Կետնքն օժանդակեց, ժամանակը սրբագործեց, և նրա քնարը դուրս մղելով թուրքերէն երդերը, յաղթական ու գեղեցիկ, գարձաւ հայ ժողովրդի սիրելին, որ կարծես վաղուց հետէ վնազրում էր նրան: Երջանիկ մարդ, նա այժմ իր աշքով տեսնում է իր կատարած գործի բոլոր մեծութիւնը: Այսօր ամենամոռացուած հայ խրճիթում հնչուում է միայն հայրենի երգ, հասկանալի ու գրաւիչ:

Զիւանին իրեկ բանաստեղծ գուցէ և վար է իրանից առաջ եղած շատ ուրիշ հայ աշուղներից. նա անշուշտ մի թէշիշողի չէ, որ թէն թուրքերէն է երգել, բայց իր տաղանդի ուժով կարող է մրցել օտար առաջնակարդ վարպետների հետ: Բայց Զիւանին գերազանցում է դրանց բոլորից իր յիշափոխիչ բը-

Նաւորութեամբ։ Սիրուց, զինուց և ծաղկից դուրս նա իր քնարը նուիրեց հայրենի յիշատակներին, հայրենի ցաւին ու լացին։ Եւ նրա երգերի մէջ ամենից զրաւիչը, ամենից սիրելին և օրիգինալը հէնց այդ հայրենի մոտիւներն են։ Աւերակների ծխի ու մոխրի միջից բարձրացնող հայ մարդն է խօսում նրա շրթունքներով։

«Ազգի մի, որքան նկուն մնաս,  
Սիրոս քեզանից չի զատուի,  
Հազար տեսակ չարչարանք տաս,  
Սիրոս քեզանից չի զատուի»։

Եւ նրա երգերի մէջ տառապող, բայց միշտ յուսացող ժողովրդի հաւատն է խօսում։ Առանց թուականներին նայելու կարելի է ասել, որ այդ երգերը Շափփիի և Գամառ-Քաթիպայի ժամանակակից են։ Մի հզօր ու պարարիչ շունչ է փչում նըրանցից, աւերակների և գերեզմանների մօտ անգամ նրանք հնչւում են տենդոտ, յուսատու թափով։

Լաւ միտք է այդ ժողովրդական նշանաւոր աշուղի երգերի ժողովածուն հրատարակել հատոր-հատոր, մանաւանդ այժմ։ Ափսոս զինը թանկ է նշանակուած (50 կոպ.), պէտք էր աւելի մատչելի դարձնել։

Ա. Ա.

Պ. Գորկի՝ «Թանկօի սիրոք», թարգմ. Գ. Անտոնին՝ Թիֆլիս, 1904 թ., 12 էլեկտ., գինն է 3 կոպ.։

Ինչպէս նկատելի է, վերջիրս աչքի ընկնող ծաւալ է ըստացել մանր գրքոյկների հրատարակութիւնը, թէ ինքնուրոյն, թէ մանաւանդ թարգմանական։ բայց ցաւօք սրտի ստիպուած ենք ասել, որ այդ գրքոյկներն իրանց որակով չեն կարող մեզ ուրախութիւն պատճառել։

Թարգմանութիւններն անւում են մեծաւ մասամբ ուստերէնից, առանձնապէս նորագոյն զրովներից—Դոր'կիյից, Զելովից, Անդրէնից։ Բնդիանը ապէս աչքի է ընկնում այն հանգամանքը, որ թարգմանիչները ոչ միայն կանոնաւոր, այլ գոնէ այնքան չգիտեն ուստերէն, որ գէթ հասկանան այն, ինչ պէտք է վերածեն հայերէնից։ Այդ գեռ բաւական չէ. յաճախ անծանօթ է լինում թարգմանիչներին մինչև անդամ հայերէնը տարրաւական ձևով իսկ։ Այդպէս միանգամայն անպատճառ իր գործի

համար, նիւթականի թէ փառքի ծարաւից գրդուած, մէկ էլ տեսաք որևէ մէկը հրապարակ նետեց իր «թարգմանութիւնը». Ընթերցողը առնում է, նա ծանօթ չէ գրքի ներքինին, մանաւանդ որ նրա ճակատին բազմած է հոչակաւոր հեղինակի անուն. բայց վերջապէս այդ պարոնները պէտք է հասկանան, թէ՞ ոչ, որ արջի ծառայութիւն են մատուցանում առանց այն էլ պէտքական երկերով առքատիկ և իրանց «թարգմանութիւն»-ների պէս այլանդակ բրոշիւրներով չափազանց հարուստ մեր գրականութեանը:

Այդ կարգի սիւրպրիզներից է և Գոր'կիյի «Դանկօխ սիրտը» պատմուածքի թարգմանութիւնը, որ արել է պարոն Գ. Անանեանը:

Համեմատեցէք (ընդգծումները մեր են):

Բնագիրը.

«Во мнѣ естьъ мужество вести, вонъ потому я повелъ властъ! А вы? Что сдѣлали вы въ помошь себѣ? Вы только шли и не умѣли схранить мужество на путь болѣе долиѣ! Вы только шли, шли себѣ, какъ стадо овецъ!»

Ինչպէս տեսնում էք, շատ հեշտ միջոց է ընտրել թարգմանիչը. ինչտեղ դժուարացել է թարգմանել, նա ուղղակի կրծատել է կամ յօրինել է իր ձեռով:

„А они, увидавъ это, подумали, что онъ разсвирѣпѣлъ, отчего такъ ярко и разгорѣлись очи его; и они насторожились, какъ волки, ожидая, что онъ будетъ бороться съ ними, и стали плотине окружать его...“

Կոմմենտարիաներ պէտք չեն...

„Осеннины этимъ факеломъ великой любви къ зюдиямъ.“

„Всѣ бѣжалы быстро и смѣло.“

Այստեղ խօսքը փախչելու մասին չէ, այլ վազելու. հանդիպեր, 1904.

Թարգմանութիւնը.

«Եսունեցայքաջութիւների լար ճանալարն զնուու. գուք միայն զնում էք. զնում էք առանց հասկանալու (բնչը), ինչպէս ոչխարների հօու» (եր. 8):

«Խոկ մարդիկը տեսնելով այդ, կարծեցին որ Դանկօն կատաղել է և գայլերի նման զզուշութեամբ՝ աւելի խիս շրջապատեցին...» (եր. 9):

«Լուսաւորութելով սիրոյ այս ջանով» (եր. 10):

«Ամենքը վիախչումէին արագ և համարձակ» (եր. 10, երկու տեղ):

մարձակ և ուրախ փախչել չէ կարելի. փախչել և վազել տարբեր գաղափարներ են արտայայտում:

„И вотъ вдругъ лѣсь раз-  
ступился передъ нимъ, раз-  
ступился и остался сзади,  
плотный и нѣмой, а Данко  
и всѣ тѣ люди сразу окуну-  
лись въ цѣлое море солнечного  
свѣта и чистаго воздуха,  
промытоаго дождемъ“.

#### Կուրեճ:

Ужасъ родили женщины  
своимъ плачомъ надъ трупа-  
ми умершихъ отъ смрада и  
надъ судьбою скованыхъ  
страхомъ живыхъ,—и тру-  
сливые слова стали слышны  
въ лѣсу“.

«Եւ ահա յանկարծ տեղի  
տուեց անտառը, տեղի տուեց  
և մնաց ետև խիտ և համբ ան-  
տառը. արեգակի լոյսը ծովի  
նման և անձրեսով զովացած  
մաքուր օդը, միանգամից ա-  
մենքի վրայ սփոռւեց» (Եր. 11):

(Եր. 5):

Ո՞րտեղից ո՞րտեղ: Ի՞նչպէս էք հաւանում մանաւանդ  
«Խօսքեր լսելի էր լինում»—ը...

„Не своротить камня съ  
пути думою“.

«Մտածելով քարը ձանա-  
պարհից չի գլորուի» (Եր. 6):

Բայց... բաւտկան է.—ցիտատների շարքը կարող է ուղիղ  
այնչափ տեղ բռնել, որչափ տեղ բռնում է ամբողջ թարգ-  
մանութիւնը, որի սկզբից մինչև վերջը խորին տգիտութեան  
հոտ է փչում. Մենք ուշադրութիւն չենք դարձնիլ մի այդպի-  
սի չնչին բանի վրայ, եթէ միայն թարգմանչի առաջին թարգ-  
մանական փորձը չլինէր այդ. մեր ցանկութիւնն էր սրանով  
յիշեցնել պարոնին ոռւսական այս առածը. „Не въ свои сани  
не садись!“

Ա. ԱԹԱ.

Արևին վարդապէտ Դշտեան՝ «Ամուսնութիւն, ամուսնալսաւծութիւն և  
բաղաբացիսկան պատկ». (Երեք յաւելուածով. պետական օրէնքներ, հ. ե-  
կեղեցու կանոններ, ամուսնալուծական դատավարութիւն). Ալեքսանդրապոլ.  
1904.

Ոչ մի խնդիր հայոց եկեղեցական մատենագրութեան մէջ  
այնքան մեծ հետաքրքրութիւն չէ զարթեցնում իր կենսական

նշանակութեամբ, ինչպէս ամուսնութեան և ամուսնական օրէնսդրութեան վերաբերեալ խնդիրները: Հայոց հկեղեցին, որի իրաւասութեան հնմթակայ է ամուսնութիւնը իրքն եկեղեցական խորհուրդ, սահմանել է հնուց նրա սրբագործութեան համար կանոններ, որով դեկավարում է նա մինչև այսոր:

Շօշափելով հասարակական-ընտանեկան կեանքի ամենաէական շահերը՝ ամուսնական օրէնսդրութիւնը քրիստոնէական վարդապետութեան ընդհանուր սկզբունքների հետ ընդգրկել է նաև ժամանակի և ազգի ընթացիկ հասկացողութիւնները, որոնց ազգեցութեան տակ եկեղեցական ժողովներով սահմանուած ամուսնական կանոնները ժամանակի ընթացքում որոշ քաղաքականութիւնների են ենթարկուել պահպանելով սակայն անխախտ հկեղեցու կանոնական սկզբունքները: Դարերով կուտակուած այդ նիւթը մնացել է մինչև մեր ժամանակը իրքն խառնը և անկապ կանոնների ժողովածու, որի մէջ իր բնորոշ արտայայտութիւնն է ստացել մեր նախնիքների կրօնական-բարոյական աշխարհայեցողութիւնը և դաւանանքը: Ահա այդ կանոնների առաջին լուրջ հետազօտութիւնը մեղ տուեց հանգուցեալ վահ. վ. Բաստամեանը, որ իր կեանքի վերջին տարիները բացառապէս զբաղուած էր մեր ամուսնական օրէնսդրութեան կնճուտ խնդիրներով. նրա ընհական տեսութիւնը \*) մինչև այսօր չէ կորցրել իր դիտնական նշանակութիւնը և կարող է ծառայել իրքն ուղեցոյց հայոց ամուսնական իրաւունքը ուսումնասիրողների համար: Վ. վ. Բաստամեանից յետոյ նոյն նիւթի հիմնական հետազօտութիւնը մենք գտնում ենք մեր ժամանակի նշանաւոր հկեղեցական և մատենապիր Տէր Արիստակէս սրբազնան Սեղբակեանի գրքի մէջ \*\*), ուր հեղինակի գիտական պաշարը լուրջ հետեղութեամբ լուսաբանուած է հայոց ամուսնական օրէնսդրութեան վիճելի և մութ կէտերի նկատմամբ. այդ աշխատութիւնը ունի նաև այն գերազանց կողմը, որ ամփոփում է իր մէջ մեր հոգեսր հաստատութիւններում քննուած ամուսնական դորձերի վճիռները. այդ վճիռների գիտուածական (կազչութեան) բնոյթը կրկին և կրկին հաստատում է մի նոր ազգային-կրօնական ժողովի գումարման անհրաժեշտութիւնը ամուսնական և այլ հասարակական եկեղեցական խնդիրների վերաբննութեան համար... Անցնելով այս թըստոցիկ դիտողութիւններից Արսէն վ. Ղլուճեանի աշխատու-

\*) «Ամսանութիւնը ըստ հայոց հկեղեցական իրաւաբանութեան»:

\*\*) «Ամուսնական խնդիրներ», Մոսկվա, 1891:

թեան՝ պէտք է նախևառաջ նկատենք, որ նա նուիրուած լիւնելով միմնոյն խնդրին՝ չունի սակայն վերոյիշեալ երկասիրութիւնների ինքնուրոյն բնաւորութիւնը. ինքը հեղինակը, ինչպէս և մասամբ երևում է գրքի յառաջաբանից, աւելի համեստ նպատակ է գրել իրան, այն է՝ տալ ամուսնական կանոնագրութեան համառօտ տեսութիւն՝ օգտուելով այդ խնդրի գրականութեան մէջ քիչ թէ շատ յայտնի ազբիւրներից. միայն այստեղ չենք կարող մեր զարմանքը չյայտնել, որ այդ ազբիւրների շարքում չեն գտնուում Արքստակէս եղ. Սեղրակեանի և Վահան վարդ. Բաստամեանի հեղինակաւոր աշխատութիւնները:

Հ. Ղլուճեանի գրքի առաջին մասը պարունակում է իր մէջ ամուսնական կանոնների և սովորութիւնների համառօտ պատմական տեսութիւնը հին աղգերի մէջ. ապա անցնելով քրիստոնէական գարեշը շանին հեղինակը կանգ է առնում հայոց եկեղեցական օրէնսդրութեան վրայ և ընելով հաս ու չհասի խնդիրները եկեղեցական իրաւունքի տեսակէտից՝ գտնում է, որ ներկայ հայրապետութիւնը ընթանալով ժամանակի ոգու համաձայն՝ արգելում է արենակյական չհասութեան վեցերորդ աստիճանը՝ խոհեմ կերպով թոյլ տալով հօթերորդը, որ աւելի համապատասխան է Սսի եկեղեցական ժողովի կանոնագրութեան. և խնամիական չհասութիւնը, որ հայոց եկեղեցին հրբեմն բարձրացնում է մինչև հօթերորդ աստիճանը, ամենայն հայոց հայրապետ Մկրտիչ Լ-ը իր կանոնական կոնդակով իջեցրեց մինչև չորրորդ աստիճանը: Անշուշտ հոգևոր պետի այդ ընթացքը շատ գովելի է, եթէ նա բղխում է այն գիտակցութիւնից, որ եկեղեցին չպիտի մնայ անշարժ հնուց սահմանուած կանոնների շրջանում, այլ կենդանի կապը պահպանելով ժողովրդի հետ՝ միշտ պիտի ընթանայ ժամանակի և կեանքի պահանջների համաձայն. բայց այն ևս պէտք է նկատել, որ եթէ գործող օրէնսդրութիւնը հնացել է և այլևս չէ համապատասխանում ժողովրդի կենսական պահանջներին, պէտք է ազգային եկեղեցական ժողով գումարել, որը և կարող է միայն նոր գոհացուցիչ կանոնագրութիւն հրատարակել համայն գործադրութեան համար. իսկ թողնել հինը անփոփոխ և ի լրումն հնոյն հայրապետական իշխանութեամբ պէս-պէս դէմքերում նորանոր կանոններ ստեղծել, երբեմն նոյնիսկ հակառակ եկեղեցական օրէնքի հիմնական սկզբունքներին, կը նշանակէ իւրաքանչիւր անգամ օրէնսդրի պաշտօն յանձն առնել, մի բան, որ բարձր է կաթողիկոսի իշխանութիւնից, քանի որ օրէնք հրատարակու-

դը աղքային-եկեղեցական ժողովն է, իսկ հոգևոր իշխանութիւնը օրէնքի գործադրող մարմին է:

Մեզ յայտնի են դէպքեր, երբ արենակցութեան չորրորդ աստիճանն անդամ արգելք չէ եղել պսակի թոյլտութեան. եկեղեցական օրէնսդրութեան տեսակէտից դա կանոնական հերետիկութիւն է. և ցաւալին այն է, որ գրեթէ միշտ այդ անկանոնութիւնների շարժառիթը եղել է ոչ թէ կեսնքի պահանջին բաւականութիւն տալու անաշառ ձգտումը, այլ շահասիրութիւնն ու միայն շահասիրութիւնը. հակառակ է. Ղլտճեամսի կարծիքի՝ մենք հրաժարւում ենք այդպիսի ընթացքը խոհեմ նկատելուց...

Արենակցական ճիւղագրութեան, ինչպէս և ինսամիութեան աստիճաններ որոշելը շատ անգամ թիւրիմացութիւնների առիթ է տալիս. պսակի կարգը կատարող քահանան պէտք է կարողանայ ճիշտ որոշել հաս ու չհասի աստիճանը, հակառակ դէպում եկեղեցական օրէնքով անթոյլատրելի պսակը կարող և՛ թոյլատրելի հրատարակուել, և՛ ընդհակառակը, քահանաններին այդ աշխատանքը գիւրայնելու համար հեղինակը իր գրքում բազմաթիւ օրինակներ է առաջ քերում, որոնց մէջ ամենակընճոտ գէպքերն անգամ քննուած և պարզուած են:

Ամուսնութեան մասին գրելով՝ չէ կարելի լուրջեամբ անցնել և՛ այն տեսակի ամուսնութիւնը, որ այնչափ տարածուած է երողական երկրներում, այն է՛ քաղաքացիական պըսակը. և հ. Ղլտճեամսը (որքան յիշում ենք, դա առաջին փորձն է հայ գրականութեան մէջ) համառոտ պատմական տեղեկութիւն է տալիս այդ ինստիտուտի մասին. իհարկէ՝ ինդիրը մանրամանօրէն ուսումնասիրելու համար պէտք է դիմել կրոպական գրականութեան յայտնի աղբիւրներին (Ուսումնաստանում՝ H. C. Սյուրուն: «Օ գրայդանսկօմ բրակ»), 1887.):

Հեղինակը գրքի վերջում կցել է իբր յաւելուած թարգմանօրէն ուսուաց պետական օրէնքները ամուսնութեան մասին. մեր կարծիքով աւելի նպատակայարմար կը լինէր, եթէ օրէնքի բառացի թարգմանութեան փոխարէն հ. Ղլտճեամսը մատչելի լեզուով փոխադրէր ուսուաց ամուսնական իրաւունքի էական սկզբունքները, որ թէ հասկանալի կը լինէր հայ ընթերցողի համար, և թէ ինքը այնքան աշխատանք իզուր չէր վասնի ուսուաց օրէնքի ծանր, գժուարամարս թարգմանութեան վրայ. գրեթէ իւրաքանչիւր յօդուածն ընթերցողը պէտք է մի քանի անգամ կարդայ, որ հասկանայ նրա ճիշտ իմաստը (էջ. 130, յօդ. 66 հայլն), և վերջապէս հայոց լեզուն օրէնքին

յատուկ կարճ և գիւրըմբոնելի ոճ տակաւին չէ մշակել, որ կարելի լինէր սահուն թարգմանել բնագրից:

Յաւելուածի մէջ կան հին և չզործադրուող օրէնքներ (Էջ 142, յօդ. 165, մ.մ. I և II):

Գրքի վերջին բաժինը նույրուած է ամուսնական դատավարութեան, մեղանում ամուսնալուածական գործերի քննութիւնն ունի շատ թերի կողմեր, որոնք սակայն բոլորովին շեշտուած չեն հեղինակի աշխատութեան մէջ: Նա միայն արձանագրում է այն, ինչ որ աւանդաբար կատարուել է և մինչև այժմ կատարում է առանց քննութեան առնելու, որքան հայոց հոգեոր ատեաններում լուղունուած ձեւ համապատասխան է ժողովրդի ներկայ կացութեան պայմաններին և դատավարական հիմնական սկզբունքներին. բացի դրանից՝ չէ կարելի առանց նկատողութեան թողնել հեղինակի հետեւել սխալ դատողութիւնները. հ. Ղլտճեանի կարճիքով քննիչը ի դէպս, եթէ մեղադրեալը ժխտում է իր դէմ եղած մեղադրանքները, իրաւունք ունի պահանջել, որ նա իր անմեղութիւնն ապացուցանող վկաներ ցոյց տայ (Էջ 216). ուրեմն եթէ Մարկոսը մեղադրում է գողութեան մէջ Կիրակոսին, այդ, վերջինը չընդունելով իր վրայ յանցանը՝ պարտական է վկաներով հաստատել, որ ինքը գողութիւն չէ արել...) այդ սկզբունքը հակառակ է դատավարութեան տարրական պահանջներին. մեղադրողից պահանջւում է նախ և առաջ, որ նա իր մեղադրանքը հաստատէ դրական փաստերով. դրանից է կախուած ամբաստանեալի մեղաւոր կամ անպարտ ճանաչելու կարելիութիւնը. այստեղ յանցանքը ապացուցանելու ծանրութիւնը (onus probandi) ամբողջապէս ընկնում է մեղադրով վրայ. վկայի պարտականութիւնն է իրան յայտնի և իր աչքերով տեսակէտից, եթէ նա շատանայ հաստատելով, որ ինչպէս իրան յայտնի է Կիրակոսը չէ գողացել Մարկոսի իրերը. ուրեմն աւելի ուղիղ կը լինէր, եթէ հ. Ղլտճեան այսպէս ասէր. «Բննիչը առաջարկում է (և ոչ պահանջում է) մեղադրեալին, որ նա իր վեաներին ցոյց տայ ի հեղումն իր դէմ յարուցած մեղադրանքից»: Քննութիւնը աւարտելուց յետոյ քըննիչը հրաւիրում է իր մօտ մեղադրեալին, կարգում է նրա մօտ ծայրէիծայր ամբողջ գործը, վերջին անգամ նրանից բացառը րութիւն է առնում և ապա արձանագրութիւն կազմելով, որ մեղադրեալին կարգացել է ամբողջ գործը, վերջինը ուղարկուել է կոնսիստորիա (Էջ. 217). այս կարգն է հրահանգում հ. Ղլտը-

ճեանը. մնում է անբացատրելի թէ ինչու միայն մեղադրեալին է կարգացում գործը և ոչ երկու կողմերին. չէ՞ որ մեղագրուղը, ինչպէս և մեղադրեալը հաւասարապէս շահագրգռուած են իրանց գործի վերջնական վճռով, ուրեմն և հաւասար իրաւունքներ պիտի վայելեն մինչև գործի քննութեան վախճանը:

Պատահում են դէպքեր, ասում է հ. Ղլտճեանը, երբ առուսնու անբարոյականութիւնը ապացուցող փաստերը կամ իսպատ չեն որոշում և կամ խիստ դժուար. այսպիսի պայմաններում հեղինակը առաջարկում է շրջել մեղադրեալին լաւ ճանչող ընտանիքների տները, հարցումներ տալ մեղադրուողի բարոյականի նկատմամբ, իմանալ՝ կը ցանկանայի՞ն արդեօք այդպիսի մի անձի հետ մօտիկ ծանօթութիւն ունենալ, իրանց տունը թողնել, երթ ու գալ ունենալ եայլն: Այդպիսի համաձարակ խուզարկութեան (ՊՈՎԱԼԻՆԻ օԲԽԸԿԵ) կարևորութիւնը հ. Ղլտճեանը պաշտպանում է՝ յենուելով քաղաքացիական դատավարութեան 229-ըդյօդուածին (XV1 հատ, II մ.): Նախ՝ այդ օրէնքը, այժմ արդէն վերացած, ոչ մի կապ չունի ամուսնական դատավարութեան հետ. նա գործադրուում էր քաղաքացիական պրոցեսում միայն տեղերում, ուր տիրում են դատաստանական հին, նախարարի մերժուածն կարգեր: Բացի դրանից՝ հիմնովին սխալ է հ. Ղլտճեանի կարծիքը, իրը քննիչը ամուսնական գործերում իրաւունք ունի ինքնաբերաբար, առանց կողմերի մասնակցութեան, ամուսնական անհաւատարմութիւնը առացուցող փաստեր որսալ համաձարակ խուզարկութեան միջուցով. այդպիսի փափուկ խնդիրներում շատ վտանգաւոր է վճըսական նշանակութիւն ընծայել դէսից-դէնից հաւաքած կարծիքների, որոնց մէջ ճշմարտութիւնը բամբասանքի և անձնական թշնամութեան հետ խառնուած՝ կարող է աւելի քողարկել, քան պարզել ամուսնական գործերի իսկական աստաղը. քննիչը պարտական է արձանագրել միայն փաստերը, որ ներկայացնում են երկու շահագրգռուած կողմերը, առանց իրան թոյլ առլու գաղտնի, ոստիկանական միջոցներով կողմանակի ապացոյցներ հաւաքելու:

Վերջում հարկ ենք համարում նկատելու, որ գրքի լեզուն տեղտեղ ծանր է. աշքի են ընկնում գուենկաբանութիւններ և անյարթ գարձուածքներ. եթէ գիրքը չունենար վերոյիշեալ պակասութիւնները, որոնք ցոյց են տալիս հեղինակի մասնագիտական անպատճառատութիւնը, նա կարող էր ծառայել իբրև օգտաւէտ հրատարակութիւն ժողովրդական ընթերցա-

նութեան համար. դա է մեր վերջնական կարծիքը և. Ղլտճեանի աշխատութեան մասին:

3. Ս.

### ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Արշակ Աթայեան՝ «Սիրոյ-Հովհաննել», հրատ. Թիֆլի. Հրատ., Հնկ., 1904, Թիֆլիզ, գ. 3 կ.:
- 2) Erwand Ter Minassiantz: Die Beziehungen der Armenischen Kirche zu den syrischen-bis zum Ende des 6. Jahrhunderts. 1904, Liepzig.
- 3) Բժ. Վահան Արծրունին՝ «Խոլերայի մասին», 1904, Թիֆլիզ, գ. 15 կ.:
- 4) Միւ. Իւշկեիչ «Տեսակցութիւն», թարգմ. Ա. Գրիգորեան, 1904, Թիֆլիս, գ. 10 կ.:
- 5) Մէյլան՝ «Լէօն-Կայսր», 1904, Ալէքսանդրապոլ, գ. 20 կ.:
- 6) Յովակիմ Սօլօվեան՝ «Ղօնաղլուղս մնաց», վոդլվիլ, բ. տպ., 1904, Թիֆլիզ, գ. 20 կ.:
- 7) Բժ. Լ. Մօնին՝ «Նուէր Ծննդկաններին», փոխ. Դ-ր Վ. Ա., 1904, Թիֆլիզ:
- 8) Գր. ք. Պետրով՝ «Բարի սերմեր», թարգմ. Մամբրէ Վարդապետ, 1904, Վաղարշապատ, գ. 10 կ.:
- 9) Պլ. Հոլգեր Պեդերսոն «Նախատ մը հայ լեզուի պատմութեան», թարգմ. հ. Գարեգին Գարանջիլեան, 1904, Վենիսա, գ. 1,25 քր.:
- 10) Զիւանու «Բնարը», բ. հ., 1904, Վաղարշապատ, գ. 50 կ.:
- 11) Բժ. Գ. Սարգսեանց՝ «Օգտակար և վեասակար միկրոբներ», «Օդի փոշին», (նկարներով), 1904, Թիֆլիս, գ. 15 է.:
- 12) Գորդ Ղասապեան՝ «Փալուստի և Շուշանիկի պատկուելը», 1904, Ալէքսանդրապոլ, գ. 12 կ.:
- 13) Լ. Անդրէս՝ «Անդունդը», թարգմ. Սիմ. Բաբեհեան, 1904, Ա.-Պետերկուրգ, գ. 10.:
- 14) В. Папазянъ: 1) «Лур-да-луръ», 2) «Нагой дервишъ», пер. В. и С. Бабіянъ, 1904, Симферополь, ц. 12 к.
- 15) Եղիկ քահ. Ալխապեանց՝ «Զեննարկ ծաղկահատութեան կամ ծաղկի պատուպստման», 1904, Թիֆլիս, գ. 10 կ.:
- 16) Լէօն «Ս. Մեսրոպ», Թիֆլիս, գինն է 75 կ.:

## Գ.Ա.Խ.ՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

### 1. Շուշուայ գրաւարան-ընթերցարանը

Շուշին ունի միայն մի համակրելի հիմնարկութիւն—գը-  
րադարան-ընթերցարանը, որ սակայն անտարբերութեան է  
մատնուած:

Գրադարան-ընթերցարանը հայոց Բարեգործական ընկե-  
րութեան ձեռքից անցնելով քաղաքային ինքնավարութեան  
ձեռքը՝ ոչնչով չէ առաջադիմել:

Գլխաւոր պատճառը հէնց հասարակութեան ու մանաւանդ  
քաղաքային ինքնավարութեան անտարբերութիւնն է:

Այսպէս թէ այսպէս մեր գրադարան-ընթերցարանի յա-  
ճախորդները սկզբից մինչև հիմա միմնոյն դասակարգի մար-  
դիկն են կազմում: Մտեք ընթերցարան և կը պատահէք միայն  
երիտասարդ ինտելիգենտ պարուների, ուսուցիչների և աշա-  
կերտների: Այս տարի բէալական դպրոցի վարչութեան կար-  
գադրութեամբ իրանց աշակերտներին թոյլ չէ տրում ընթեր-  
ցարանի մուտքը: Ուրեմն մնում են, ինչպէս ասում են, հրկու-  
ջուխտ մի կէնտ անձնաւորութիւններ, որոնք և կազմում են  
ընթերցարանի մշտական յաճախորդները: Մենք չենք խօսում  
ամառուայ ամիսների մասին, երբ նորեկներով և ուսանողնե-  
րով լիքն է լինում ընթերցարանը:

Ինկատի ունեցէք, որ քաղաքիս թուրքերից միայն երկու  
հոգի են ընթերցարան յաճախում: Սա մի ցաւալի փաստ է,  
բայց ի՞նչ արած: Մեր ինտելիգենտ թուրքերը, որոնք պէտք է  
քարոզեն, խրախուսեն իրանց ազգակիցներին ուշադիր լինել  
դէպի դպրոցը, ընթերցարանը, թատրոնը,—զբաղուած են շո-  
վինիստական գաղափարներ տարածելով առանց այն էլ տպէտ  
ժողովրդի մէջ:

Թեմական դպրոցը իր ուսուցիչներով և աշակերտներով  
տալիս էին ընթերցողների մի ստուար թիւ: Բայց հիմա, ի՞նչ-  
պէս գիտէք, այդ դպրոցն էլ չկայ:

Մեր փափկասուններն էլ խոյս ևն տալիս ընթերցարանից, և մենք միանգամայն չենք կարողանում հասկանալ, թէ ինչով են զբաղուած դրանք տանը ձմեռուայ երկար ու բարակ ամիսներին, որ տեսում է ամբողջ ուժը ամիսներ:

Բաւական չէ, որ սա այսպէս է, երեակայեցէք, որ մեր օրիորդները (միջին և ցածր դաստիարակերից) անային գործերով էլ չեն հետաքրքրուում, այլ զբաղուած են իրանց «սիմպատիաներով»: Եւ գեռ խօսում ենք մեր «առաջարիմութեան» մասին:

Դրադարան-ընթերցարանը մուտք ունեցել է 1903 թ. 340 բուր. 97 կոպ.:

Ելքը կազմում են յայտնի ծախքեր և հետևեալներն են. ընակարանի վարձ 200 ր., գրադարանապետի ոռոճիկ 300 ր., ծառայի 180 ր., լուսավառութեան, վառելիքի և մանր ծախքեր 100 ր.: Մինք չենք հաշւում լրագիրների ու ամսապիտների ծախքը: Ինչպէս տեսնում եք, գրադարանը-ընթերցարանը ամեն տարի դեֆիցիտ է ունենում, որ իր վրայ է վերցնում քաղաքային ինքնավարութիւնը:

190<sup>2/3</sup> թ. թ. ստացուել են հետևեալ պարբերական հրատարակութիւնները. «Մշակ», «Նոր-Ֆար», «Մուրճ», «Ազրիւր-Տարադ», «Արարատ», „Կասպի“, „Կավազъ“, „Новое Обозрение“, „Тифл. Листокъ“, „Русскія Вѣдомости“, „С.-Петербургскія Вѣдомости“, „Новое Время“, „Стрекоза“, „Нива“, „Переводчикъ“, „Міръ Божій“ և „Вѣстникъ Европы“: Մինչդեռ ներկայ տարում ստացւում են բացի դրանցից նաև հետեւալները. «Առողջապահիկ Թերթ», «Սուրբանդակ», «Արտէմիս», «Շարքի-Ռուս», „Бакинскія Извѣстія“, „Новости I изд.“, „Биржевые Вѣдомости II изд.“, „Русское Богатство“. Журналъ Для Всѣхъ“, „Изв. о литературѣ“, „Спутникъ Здоровья“, „Дѣтское Чтеніе“, „Вѣстникъ Иностр. Лит.“, „Русская Мысль“, „Вокругъ Свѣта“ և „La Fronde“: Դրանցից «Արտէմիս»-ը և „La Fronde“-ը մինչև հիմա չեն ստացուել, չնայած որ բաժնորդագրութիւնը ժամանակին ուղարկուած է: Բացի այս բոլորից ձեռք են բերուել հին և նոր հեղինակների. գըրուածքներ և 50 օրինակ մանկական պատկերադրդ գրքոյներ:

Այս տարի գրադարան-ընթերցարանը մի քանի արտասովոր ծախքեր է արել և դա շնորհիւ Դ. Տ. -Միքայէլեանի նախաձեռնութեամբ անցեալ ամառ տրուած պարերեկոյթին, որից գոյացել էր 170 ր. արդիւնք, որ և գործադրուել է վերոյիշեալ նպատակին:

Չնայած որ քաղաքային վարչութեան կողմից նշանա-

կուած են 4 հոգի, որոնք պէտք է հսկեն գրադարան-ընթերցարանի գործերին, այնուամենայնիւ դրանք գործով չեն հետաքրքրում և եթէ գոնէ մի քանի անգամ մտած լինէին ընթերցարանի շեմքով, անշուշտ նկատած կը լինէին հետեւալ պակասութիւնները.

1) Գրադարան-ընթերցարանը գտնուում է «Թովիխանա» կոչուած հրապարակից շատ մօտ, ուր ամեն բոպէ լսում է մրգավաճառներիր սուր ձայնը:

2) Նա գտնուում է ուղղակի դինետան դիմաց:

3) Խոնաւ է:

4) Շատ անյարմար է գրադարանապետի սենեակը. գիրք վերցնողը պէտք է թրխկթլխկացնելով անցնէ ընթերցարանով, որպէսզի համնէ գրադարանապետի սենեակը: Գրադարանապետն էլ իր կողմից ազմուկ հանելով՝ գրադարան գնալու համար պէտք է ընթերցարանով անցնէ:

5) Գրադարանի դրները և ընթերցարանի սեղանները չգիտենք ո՞ր թուականում պատրաստած լինելով՝ ամեն մի բանալու ու ծածկելու ժամանակ չափազանց անախորժ ձայներ են հանում, որ անհետանք չէ անցնում ընթերցողների համար:

Պէտք է յիշել նաև, որ գրադարանը այնքան մութ է, որ ցերեկին անզամ այնտեղ նրագ է վառուում:

Եւ այս բոլոր անյարմարութիւններին վճարւում է... 200 րուբլի: Զէ՞ որ սա անտարբերութեան հետեւանք է:

Մենք առաջ բերինք միայն գլխաւոր պակասութիւնները, բայց նա զերծ չէ նաև երկրորդականներից:

Գրադարանի գրքերից անպէտքացել են Ռաֆֆիի, Տուրգենևների և Տոլստոյի հեղինակութիւնները: Անհրաժեշտ է այդ պականը անյապաղ լրացնել և ձեռք բերել նոյնպէս նորագոյն գրողների հեղինակութիւններից: Ամօթ է 30—32 պարբերական հրատարակութիւններ: Ամօթ է 30—32 պարբերական հրատարակութիւնների գրքերը:

Դրացուցակն էլ կազմուած ու տպուած լինելով 1891 թ. շատ անյարմարութիւններ է ներկայացնում ընթերցողների համար: Նոր ձեռք բերուած գրքերի անունները 1891 թ.-ից սկսած չեն նշանակուած այնտեղ: Անհրաժեշտ է և այդ պակասը լրացնել:

Այստեղ աւելորդ չէր լինի յիշեցնել, որ երբ նոր գրացուցակ տպելու լինեն, ամեն մի բաժանմունքից յետոյ թողնուի ազատ ու մաքուր մի քանի թերթիկներ, որպէսզի նոր ձեռք բերուած գրքերի անունները այնտեղ նշանակուէին թէկուզ

գրչով։ Այդպիսի գրացուցակը կարող է երկար ժառայել ու մեծ յարմարութիւն ներկայացնել։

Ընթերցարանը բացւում ու փակւում է անյարմար ժամերին։ Զմեռը, օրինակ, երբ ոչ մի գնալու, զբաղուելու տեղ չկայ, ընթերցարանը բացւում է առաւօտեան ժամը 10—2 և յետոյ 5—8։ Մինչդեռ ամառը, երբ ներկայացումներ են ըսկըսւում, զրօննելու տեղեր էլ են լինում, վերջապէս կարելի է այսպէս թէ այնպէս ժամանակ անց կացնել, ընթերցարանը բացւում է առաւօտեան ժամը 9—1 և 7—10։

Մենք անհրաժեշտ ենք համարում ձմեռ ժամանակ ընթերցարանը փակել աւելի ուշ, քան ամառը։

Իբրև փորձ կ'առաջարկէինք ընթերցարանի մուտքը ձրի անել նրանց համար, որոնք զժուարանում են վճարել որպէսպի հասարակ դասակարգն էլ մուտք գործէ այնտեղ։ Ցանկալի է ընթերցարանում նստած տեսնել արհեստաւորների, մշակների և այլ դասակարգերի մարդկանց։

Վերջացնելով մեր յօդուածը՝ քաղաքային վարչութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում մատնանիշ արած պակասութիւնների վրայ։

Բաւական է այդքան անտարբերութիւնն էլ։

Կ.

## 2. Ոռոգման խնդիրը Երեւանի նահանգում։

Ազգաբնակութեան աճման հետ չեն ընդարձակւում մեր մշակուող հողերի և արդիւնաբեր տարածութիւնների սահմանները։ Եւ ահա այդ կարիքը ստեղծել և առաջ է քաշել մի շարք միջոցներ, որոնց իրագործումով ժողովրդի տնտեսական կացութիւնը կը ստանայ համեմատաբար կանոնաւոր ընթացք։

Այսպէս մի տեղ կարելի էր զարգացնել անասնապահութիւնը, նրա հետ միասին նաև կաթնատնտեսութիւնը, ի նկատի ունենալով լեռնային կլիման և ընդարձակ արօտատեղիները։ Երկրորդ տեղ զարգացնել տնայնագործութիւնը և առհասարակ ձեռագործ արդիւնքները։ Երրորդ տեղ՝ ժամանակակից սիստեմով կատարելագործութիւնը դաշտային աշխատանքների և բոյսերի փոխանակման մէջ, և վերջապէս չորրորդ տեղ՝ դաշտերի պարարտացմամբ և կամ արհեստական ոռոգմամբ կարելի կը լինէր բոլորովին շտկել ժողովրդի տնտեսական կացութիւնը, որը գնալով քայլքայման է հասնել։

Այս միջոցներից իւրաքանչիւրը պայմանաւորուած է մի

շարք դժուարութիւնների հետ ի նկատի ունենալով կարիքի այն չափը, այն շրջանը, այն ժողովուրդը, որի մէջ ենթագլութեած է որոշ ձեռնարկութիւնից սպասուող արդիւնքը. բայց կան ձեռնարկութիւններ, որոնցից սպասելիք օգուտը, ակնկալուող կարիքի չափը այնքան մեծ է իր միջավայրի համար, որ ձեռնարկութեան յետաձգումը կը համարուէր յանցանք:

Այդպիսի մի տնյետածգելի ձեռնարկութիւն պէտք է համարել ոռոգման խնդիրը Երևանի նահանգում, որը այսօր մի ահազին թիւ կազմող ժողովրդի համար դառնել է կեանքի և մահու խնդիր:

Այս խնդրի հետ մօտից ծանօթանալու համար մենք կը բերենք մի քանի փաստեր և ծանօթութիւններ „Պայտայա Կոյյկա Թրիան. ց. 1904 թ.“ պաշտօնական հրատարակութեան մէջ տպուած Երևանի շրջանի ինժեներ-դիդրաւլիկ պ. Տառլովսկու գեղեցիկ գեկուցումից. բայց նախքան այդ անհրաժեշտ է դիմել միքանի վիճակադրական տեղեկութիւնների այն նպատակով, թէ որքան այդ հարցը՝ մասնաւորապէս մի երկու շրջանների համար՝ ստացել է կենսական նշանակութիւն:

Նախ պէտք է իմանալ, որ ամբողջ Կովկասում բոլորից առաւել խիտ բնակեցրած է Երևանի նահանգը, որի մասին ստորև բերում ենք թուեր՝ վերցնելով այդ Կավազսկի Կալենդար 1903 թ. և Պայտայա Կոյյկա Թրիան. ց. 1902 թ. երկու պաշտօնական հրատարակութիւններից:

Նահանգներ	Ըգաբնակութիւն 1897 թ.	Տարածութիւն քառ. վերա վերստի գրամպում է	Մի քառակ.
Զերնամորի շրջան	57,478	5,994	9,6
Կարսի »	290,645	16,869	17,2
Հիւսիսային Կովկաս	3,725,543	194,590	19,
Դաղստանի շրջան	571,381	26,814	21,3
Գանձակի նահանգ	878,185	38,949	22,5
Բագուի »	826,806	35,017	23,6
Թիֆլիսի »	1,054,250	40,197	26,2
Քութայիսի »	1,057,243	32,583	32,4
Երևանի »	829,550	25,012	33,2
Բնդամենը	9,291,028	416,028	22,3

Ինչպէս տեսնում էք, ամենախիտ բնակեցրած նահանգը Երևանն է, իւրաքանչիւր քառակուախ տարածութեան վրայ ապրելով 33,2 մարդ, մինչդեռ ընդհանուր Կովկասի վերաբեր-

մամբ այդ թիւը արտայայտում է աւելի փոքր չափով, այն է՝ 22,3 մարդ մի քառակուսի տարածութեան վրայ:

Խտութիւնը միքամի տեղերում հասել է մեծ չափերի, այնպէս որ համեմատութիւնը զաւաների նկատմամբ արտայայտում է կրկնակի տարրերութեամբ: Մինչդեռ մի տեղում մի քառակուսի վերստ տարածութեան վրայ ապրում է 27 քընակիչ, միւս տեղում այդ թիւը հասնում է 48—50, ինչպէս ցոյց է տալիս հետեւեալ համեմատութիւնը 1992 թուի ազգաբնակութեան նկատմամբ.

Գաւառներ	Բնակչութիւն թիւը	Քառակուսի վերստ	Մի քառակ. վերստի վրայ
Շարուր-Դարալագեազ	79,326	3,064	26
Նոր-Բայազեդ	136,322	5,146	26,5
Նախիջևան	109,318	4,036	27
Սուրմալու	90,628	3,192	28,4
Էջմիածին	133,659	3,268	40,9
Ալեքսանդրոպոլ	181,610	4,120	44
Երևան	137,481	2,829	48,6
Բնդիշանուրը	868,344	25,654	33,8

Երևանի նահանգի մի քանի տեղերում զգալի է հողի մեծ կարիք, և իսկապէս եթէ մանէք էջմիածնի և մանաւանդ Ղամարլուի շրջանները, կը տեսնէք, որ ազգաբնակութիւնը ուղղակի թափուած է իրար վրայ, անքան մօտ-մօտ միմեանց կպած են զիւղերը: Բայց բաւական է մի թեթև ակնարկ, որ մարդ համոզուի, թէ Երևանի նահանգում հողի կարիքը այնքան զգալի չէ, որքան ջրի:

Փորձեցէք անցնել Արարատեան տափարակի երկարութեամբ, այն ժամանակ կը տեսնէք որ ահագին տարածութիւններ մնում են ամայի, անմշակ միմիայն ջուր չլինելու պատճառով: Բաւական էր միքանի ձեռնարկութիւններ, մի քանի արհեստական առուներ, որ միքանի անապատներ փոխարկուէին հրաշալի բռնական դաշտերի՝ մնունդ տալով բաղմաթիւ ազգաբնակութեան:

Թէ որքան տարածութիւններ ձգուած են այս արդիւնաբեր դաշտի զանազան կողմերում, ամփոփ կերպով առաջ է բերում ինժեներ-գիդրաւլիկ Տառլովսկի, որ երկար տարիներ վարելով Երևանի շրջանի ջրերի վրայ հսկողի պաշտօն՝ բաւականին ուսումնասիրել է այդ անապատների ոռոգման հարցը և

ներկայացրել մի գեկուցումով գիւղատնտեսական կարիքները  
ըննող Երևանի նահանգական կոմիտետին:

Երևանի նահանգում այնպիսի ամայի տարածութիւններ  
կան, որոնք՝ եթէ ոռոգուելին՝ կը դառնային ամենաբարդիւնաբեր  
մշակովի հողեր, ըստ Տառլովսկու հաշւում է մօտ 150,000 դեսետ  
տին, որը համարեա հաւասար է նահանգում ոռոգուող հողերի  
ամբողջ քանակութեան (182,613 դեսետինի):

Մի այսպիսի քանակութեամբ հող ոռոգելու հնարաւորու-  
թիւնը իրականութեան սահմաններից գուրս համարելով հան-  
գերձ, որովհետև այդ գործը կը պահանջէր շատ խոշոր ձեռ-  
նարկութիւններ, և երկրորդ ու զլիսաւորը՝ բաւականաչափ ջուր  
անկարող էին հայթաթել մեր գետերը, այնուամենայնիւ հնա-  
րաւոր է սառցել և պիտանի գարձնել բաւականաչափ հողեր:

Արաքսի առաջանում ձգուած են՝ միմեանց շարունակու-  
թեամբ երեք մեծ անջրդի տարածութիւններ, որոնցից առաջինը  
և ամենաընդարձակ տեղ բանողը Մարդարաբադի անապատն է, ո-  
րը բռնում է ամբողջ 107 հազար դեսետին տարածութիւն: Եթէ  
չհաշուենք գարնանային ամիսների նոսր ու աղքատ բուսականու-  
թիւնը, որը չորանում է մի կարճ ժամանակից յետոյ, այս ահազին  
տարածութիւնը տարուայ միւս ամիսներին ներկայացնում է  
մի ամայի անապատ, որը ոչ մի բանով օգուտ չէ բերում իր  
շրջանում ապրող ժողովրդին: Մարդարաբադի անապատը կազ-  
մում է Մաստարա գետի հովիտը: Մարդարաբադի անապա-  
տում հնարաւոր է ոռոգել 7500 դեսետին տարածութիւն,  
որից 4500-ը արքունական և 3000 գիւղական, անցկացնելով  
մի նոր առու Արաքսի այն տեղից, որտեղից սկիզբն է առնում  
նաև Մարդարաբադի առուն, որը իր ամբողջ ընթացքում կ'ու-  
նենայ 65 վերստ: Անապատի հիւսիսային մասը նոյնական կա-  
րելի է ոռոգել, բայց միայն Ախուրեան գետի ջրով, և այդ ա-  
ռուն կարելի է անցկացնել Ալեքսանդրոպոլի մօտից՝ հասցնելով  
մինչև Մաստարա և Բուղդաշէն գիւղերը: Այս անապատը թէ իր  
մեծութեամբ և թէ ձեռնարկութեան մեծածախս պահանջներով  
ներկայացնում է թէև դժուարին, բայց մի շատ կարեոր խըն-  
դիր:

Իր տարածութեամբ երկրորդ տեղը բռնում է Ախուրեան  
կոչուած ամայի տարածութիւնը, որը ձգուելով Արաքսի աջ  
ափին, Սուրբմալուի գաւառում, բռնում է 16 հազար դեսետին  
տեղ, որից 6 հազարը համարւում է միանգամայն յարմարաւոր  
իսկ 10 հազարը հնարաւոր ոռոգուելու Արաքսի ջրով: Զրանց-  
քը կարելի է սկսել Երևանից իգդիր տանող խճուղու վրայ ե-  
ղող Մարդարայի կամուրջից մի փոքր ցած, որը անցնելով փա-

փուկ հողի միջով և ձգուելով մինչև ամայի տեղի սահմանը ընդամենը 8 վերստ երկարութեամբ՝ իրագործելի է շատ հեշտութեամբ:

Ախուրեան կոչուած ամայութեան դիմաց, Արաքսի ձախ ափին, էջմիածնի գաւառի խիտ ընակութեան տեղում, ուր խաչաձև կտրում անցնում են Ալեքսանդրոպոլ-Երևանեան երկաթուղին և Խզդիր-Երևանեան խճուղին, ձգուած է էւջիլարի ամայի տարածութիւնը 4 հազար դեսետին ընդարձակութեամբ։ Այդ ամայութեան մեծ մասը, այն է՝  $2\frac{1}{2}$  հազար դեսետին կարելի է ոռոգել նոյնպէս Արաքսի ջրով՝ անց կացը նելով 15 վերստ երկարութիւն ունեցող մի առու։

Ապա գալիս է Հրազդանի աւազանը, որտեղ ընկած են երկու ամայի տեղեր հիւսիս-արևեմտեան և հարաւ-արևելիան Ղոեր անունով։ Դրանցից իւրաքանչիւրը բռնում է  $71\frac{1}{2}$  հազար դեսետին տարածութիւն, ոսկայն որոնց ոռոգելու համար Հրազդանը չունենալով ջրի աւելորդ քանակութիւն, միշտ էլ դրուած է եղել Սեանայ լճից առատացնելու հարցը։ Այդ սըստակով նոյնիսկ 1847 և 1859 թուերին ձեռնարկուել է Սեանայ լճից մի նոր ջրանցք անց կացնելուն, բայց չնայած գործ գրած ծախքերին՝ այդ ծրագիրը մնացել է անկատար։ Կովկասի ոռոգման խնդրով զբաղուող մէկ էկսպեդիցիա 1889 թուեն յիշեալ Ղոերը ոսողելու նպատակով նորից արձարծեց Սեանայ լընից ջուր վերցնելու հարցը։ Նա ենթազրում էր, որ ջրառատ տարիների կուտակումը միջոց կը տար տնտեսարար լճից շարունակ ստանալ բացի այժմեան Հրազդանից ջրի մի նոր քանակութիւն։ Այս ենթազրութիւնը հիմք էր գտնում մանաւանդ Սեանայ լճի ափերում ապրող ազգաբնակութեան այն տեղեկութեամբ, թէ լճի մակերեսոյթը պարբերաբար 50—60 տարիների ընթացքում բարձրանում է և իշնում է մի սաժենաչափ։ Սակայն պ. Տաղովսկին այդ գտնում է անհիմն՝ ի նկատի ունենալով 30-ական թուականներից սկսած մինչև մեր օրերը եղած գիտողութիւնները, որոնք լճի մակերեսոյթի բարձրանալու ոչ մի ապացոյց չեն տուել։ Տաղովսկին ընդունում է, որ Հրազդանը ունի աւելորդ ջուր, թէև ոչ մեծ քանակութեամբ, և եթէ ոչ ամառուայ ամիսներին, գոնէ գարնան ամիսներին հայտնատիկներ մշակելու համար նա կարող է ջուր մատակարարել, եթէ միայն կանոնադրութիւն մտնի այդ գետի ջրաբաժանութեան և նրա շրջանի ոռոգման կարգերի մէջ։

Բացի յիշեալ անապատները և ամայի տարածութիւնները, որոնց ոռոգելու համար հարկանոր են առանձին առուներ և հիմնական ձեռնարկութիւններ, կան նաև մի շարք գիտո-

զութիւններ, որոնք կապուած են ակունքների մեծացման, լճերի ու ջրամբարների կառուցման ու գոյութիւն ունեցող սակաւաջուր գետերի վարարացման ինդրի հետ:

Այսպէս Հաջի-չայ գետի աւազանում, Արաքսի աջ ափին, որտեղ է հայոց պատմական Երուանդակերտ քաղաքը, իր շուրջն ունենալով (Մոլսէս Խորենացու վկայութեամբ) պարտէզներ, այգիներ և մշակուած ընդարձակ հողեր, այժմ ներկայացընումէ մի անապատ Կարակալա անունով: Հաջի-չայ գետը ազատ ջուր չունի, բայց նրա ակունքների մօտ Սինակի բարձունքներում ձգուած է 7 վերստ երկարութեամբ և 2 վերստ լայնութեամբ, իր յատուկ ակունքներով, մի աւազան (ԿՈՏԼՈՎԻՆԱ)<sup>8</sup> շրջապատուած լեռներով և մի կողմից միմիայն մի նեղ անցքով, որը փակելով կարելի էր ունենալ մի հսկայ ջրամբար: Այս շատ դիւրին է, որովհետև Կարակալայի անապատը ունեցել է ջրամբար և ջրանցք, որի հետքերը մինչեւ այժմ էլ նկատելի են այդ տեղերում:

Դեռ ևս Երևանի վերջին սարդար Հուսէին-խանի օրով, Շոպենի վկայութեամբ, միտք ծագեց Երևանի գաւառի Վեդի-Բասուր շրջանը ոռոգել Սևանայ լիճը թափուող Ադիաման գետի Արփաչան կոչուող ճիւղի ջրով՝ անցկացնելով մի առու մինչև Վեդի-չայ գետի ակունքը: Այս ինսդրով զբաղուել է նաև Ջրերի վրայ հսկող վարչութիւնը (водное управление), որը սակայն մի որոշ բանի չէ յանգել: Բաւական էր մի ծրագիր, մի փոքր ձեռնարկութիւն, որ ինքը Վեդի-Բասուրի ժողովուրդը իր վըրայ վերցնէր ձեռնարկութեան ծախը, ջրի այնքան մեծ կարիքի մէջ է այժմ նա իր կիսածարաւ հողերով:

Բնդհանրապէս մի քանի ձեռնարկութիւններ Երևանի նահանգի հարթութիւնները ոռոգելու նպատակով այնքան հասունացած և ժամանակակից են, որ յետաձգելը նոյնիսկ յանցանք է:

Եւ այս ինդիրը ոչ թէ այժմ, այլև 30-ական թուականներին էին շօշափուած, երբ ոռւսները գեռս նոր էին ոտ դրել Երևանի խանութեան սահմանների վրայ: Շոպենը մատնացոյց է արել, որ Կարնի-Եաթաղի (Եղվարդի սար կամ պատմական Արայի լեառ) և Արարատի լանջերի վրայ եղել են ջրամբարներ, որոնց հետքերը նա տեսել է անձամբ, և որ Արարատի ամայի ստորոտների վրայ կարելի է ջուր հանել, բոլորովին չի կատկածում նա: 70-ական թուականներին էջմիածնի գաւառապետ Խանաղեանը մատնացոյց է արել Ասկնագեղի ձորակը Ջրամբար դարձնելու, Արագածի ջրամբարը վերաշինելու և Ղարագեօլինը

վերակազմելու, նոյնպէս Աբարտի գետի ակունքները մաքրելու նպատակով:

Բայց անցել է Շոպենի օրերից ամբողջ 74, իսկ Խանաղեանից 34 տարիներ, և այդ ուղղութեամբ ոչ մի քայլ դեռևս չէ արուած: Խօսւում է անվերջ խիտ տղգաբնակութեան, հողերի սակաւութեան և առանձնապէս ջրի կարիքի մասին, որից առաջացած կոփւների և մարդասպանութիւնների վեճերով են մեծ մասամբ զբաղուած դատաստանատները, բայց և այնպէս խնդիրը մնացել է խնդիր:

Ամենից շատ ուսումնասիրուած է Սարդարաբադի անապար, որը ոռոգելուց յետոյ մտադրութիւն կայ բնակեցնել Ռուսաստանից բերած ռուս գաղթականներով:

Ա.ԴՕ.

## ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

### ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Նորվեգիացի ինժեներ Բուլլ հնարել է մի նոր տեսակ ապարատ, որը անհնարին է դարձնում անթել հեռազբի միջոցով ուղարկուող հեռագիրները հակառակորդի կողմից բռնելը: Այս հարցը մինչև այժմս դեռ չէր վճռուած, չնայած շատ փորձերի, որոնք արուած էին այս ուղղութեամբ: Բուլլը համոզուած է, որ նրա ապարատը կը տայ այդ ապահովութիւնը: Իր այդ գիւտը նա ներկայացրել է Ամերիկայում հինգ այդ հարցը քննելու համար հիմնուած յանձնաժողովին: Փորձը կատարուել է երկու կայարանների մէջ, որոնց հեռաւորութիւնն է 22 անգլ. միլ: Մի քանի պատերազմականնաւերի հրամայուած էր բռնել այդ հեռագիրները: Բայց նրանց բոլոր ջանքերը գուր անցան:

Բերլինում օգոստոսի 31-ին կայանալու է մորթաբանութեան կոնգրեսսը, որի համար ի միջի այլոց երկու ֆրանսիացի բժիշկներ, Կիրի և Շամպան, պատրաստում են մի զեկուցում սիֆիլիսի դէմ գտած բուժիչ շիճուկի մասին: Վերոյիշնալ բժիշկները հաւատացնում են, որ նրանց յաջողուել է գտնել այդ հիւանդութիւնն առաջացնող բակտերիանները: Նրանց հետազոտութիւնները ցոյց են տուել, որ բոլոր երբեկից այդ հիւանդութեան ենթարկուած մարդկանց արեան մէջ գտնւում են բացիլներ, որոնք և առաջ են բերում սիֆիլիսը:

Բացի այդ նրանց աջողուել է ստանալ այդ բացիլների մաքուր կուլ'տուրան: Հինգ տարի է արդէն, ինչ վերոյիշնալ գիտնականները անում են զանազան փորձեր: Կիրի և Շամպանի ասելով՝ այդ շիճուկը գործածելիս հիւանդութեան երեսյթները անհետանում են, և շիճուկ սրսկած հիւանդների արեան մէջ էլ այդ բացիլները չեն աճում: Փորձեր են եղել և մարդկանց նկատմամբ, և զիտնականների ասելով՝ հետևանքը աջող

է եղել: Գիտական աշխարհը մեծ հետաքրութեամբ սպասում է թէ ինչպէս կը վերաբերուի կոնգրեսուը այդ զեկուցման:

Հոգեկան հիւանդութիւնների յայտնի բժիշկ Վագներ Թու-Եառլեբեգ «Wiener Klinische Wochenschrift» թէրթում տպել է՝ ներքին գործոց նախարարին ներկայացրած իմ զեկուցում՝ կրեակինիզմը \*) բժշկելուհամար արած փորձերի հետեւանքների մասին:

Պրոֆ. Վագները իր փորձերը կատարել է 2-ից մինչև 23 տարեկան կրեակինների վրայ և փորձերը տեսել են 12-ից մինչև 35 ամիս: Պրոֆ. Վագների բժշկութիւնը կայտնում է նրանում, որ նա հիւանդներին ընդունել է տալիս վահանագեղձից (պատօնայա յշելեզա) պատրաստած նիւթ հարերի ձեռվ: Այդ փորձերը ցոյց տուին, որ այս ձեռվ կարելի է բժշկել վերոյիշեալ հիւանդութիւնը: Այսպէս օրինակ բժշկութիւն երրորդ ամսում՝ նկատուել է հիւանդների լաւանալը, ոսկորների և կոճերի զարգանալը: Հիւանդ երեխանները աշխուժանում են, նոյնիսկ սկսում են խաղալ և երգել: Մի քանի երեխաններ այնքան լաւացել են, որ սկսել են յաճախել ուսումնարան:

Այս բժշկութեան մի հետեւանքն էլ այն է որ փուչիկը (Յօնեա) զգալի կերպով փոքրանում է, նոյնիսկ բոլորովին անհետանում է:

Վիեննացի բժիշկներ Ռիտարդ և Էմերի յաջողութեամբ գործ են ածել կապոյտ ճառագայթները ատամնաբութութեան մէջ:

Երկու վերոյիշեալ բժիշկները գործ են ածել 16 մոմի ոյժ ունեցող կապոյտ ճառագայթները և ենթարկելով բերանի լընդերքը երեք րոպէի ընթացքում այդ ճառագայթներին, կատարել են զանազան օպերացիաններ առանց որևէ ցաւ պատճառելու:

Ճապոնացի բժիշկ Մուրաստա յայտնում է հետևեալ տեղեկութիւնները անտիխոլերական շիճուկի մասին.

Խոլերայի դէմ շիճուկ առաջի անգամ գործ է ածել Հընդկաստանում 1892 թ. բժ. Հաւկին, իսկ 1897 թ. Կոլլէն ենթարկել է նրան մանրամասն գիտական ուսումնասիրութեան: Ճապոնիայում, ուր խոլերան շատ յաճախ է լինում, այդ շի-

\*) Հիւանդութիւն, որով բռնուածը թէ հոգեպէս և թէ փորձնապէս բոլորովին այլանդակում է:

Ճուկը մեծ չափերով գործ է ածուել 1902 թ.: 10,000 մարդ՝ կանցից, որոնց չեր սրսկուել շիճուկը, հիւանդանում էին 13 հոգի, իսկ սրսկուածներից միայն 6-ը: Առաջինների մահացութիւնը համառում է 76%, իսկ երկրորդներինը 42,5%:

Խուս գիտնական Մեխիկովը իր մի գրուածքում յայտնում է, որ ժամանակակից միկրոբը պառջին անգամ գտել է 1894 թուականին ճապոնական գիտնական կիտապուո, որին պատկանում է նաև հակաղիֆատիրիտային շիճուկի գիւտը մասամբ:

Վիեննացի բժիշկ պրոֆ. Հետաները նորերումս առաջ եկաւ իր մի առաջարկութեամբ, որ կարող է ունենալ մեծ նշանակութիւն ծաղիկ հիւանդութեան բժկշելու հարցում: Վաղուց յայտնի, է որ կարմիր գոյնն ունի բարերար ազդեցութիւն ծաղկով հիւանդների բժշկութեան համար: Մինչև այժմ էլ հիւանդներին զնում են կարմիր սենսեակներում, պատուհամների ճեղքերը ծածկում են կարմիր թղթով, հաղցնում են կարմիր շորեր և այլն: Պրոֆ. Ֆինչեն, որ առաջինը առաջարկեց բժշկելու այդ եղանակը, կարմիր գոյնի բարերար ազդեցութիւնը բացարում է նրանով, որ այդ դէպքերում կապոյտ և մանիշակագոյն ճառագայթները, որոնք առաջ են բերում վէրքիր և իրրենուանց հիտեանք չհջոտութիւնը, հոռացնուում են, որովհետև կարմիր լոյսը կլանում է այդ գոյները. իսկ կարմիր գոյնի նշանակութիւնը նրանում է, որ խանգարում է չհջոտութիւն գոյանալու:

Պրոֆ. Մոնսո փորձերի հիման վրայ գալիս է այն եղանակացութեան, որ գժուար շնչառութիւնը բարձր տեղերում առաջ է գալիս ոչ թէ թթուածնի նոսրանալուց, այլ ածխաթթուի պակասութիւնից: Փորձերը ցոյց տուին, որ նոյնիսկ այն դէպքում, երբ թթուածնի քանակութիւնը ոչ թէ պակասում է, այլ նոյնիսկ աւելանում է, իսկ ածխաթթուն պակասում է, շնչառութիւնը կատարում է աննորմալ կերպով, և դարկերակը սկսում է արագ-արագ խփել: Նոյն գիտնականի փորձերից համոզուեցին, որ ալկոհոլը Մոնտերոզի գագաթին չի ազդում այնուէս, ինչպէս աւելի ցածր անդերում. նա չի գրգռում և թունաւորում, կարծես թէ ջղային բջիջները դադարում են ալկոհոլական գուգումներին պատասխանել:

Նորերումս երեք Փրանսիացի հետազոտողներ, Լեւրա, Կոնտ և Լաբոնեֆոն դբաղուեցին այն հարցով՝ թէ կարելի՞ է արդեօք մետաքսի գոյնը ստանալ բոժոքի միջոցով, կե-

բակրելով շերամի որթերին զանազան գոյներով ներկուած տեղական երով։ Մինչև այժմ արուած փորձերը ուսնեցել են բացասական հետեանք. Փրանսիացիների փորձերը պսակուեցին յաջողութեամբ,

Նրանք իրանց փորձերի համար ընտրեցին Attacus Orzaba տեսակը։ Որթերի մի մասը կերակրում էր կարմիր գոյնով ներկած տերեներով։ Նրանց մարմինը դրանից ստացաւ կարմիր գոյն, արիւնը նոյնպէս ներկուեց, բոժոժները ստացան հրաշալի կարմիր գոյն։ Նոյն հետեանքը ստացուեց, երբ որթներին տուին կարմիր գոյնով ներկուած կերակուր միայն վերջին 14 օրուայ ընթացքում։ Աւելի վատ հետեանք ունեցան այն փորձերը, որտեղ որթերը ստացում էին կերակուր ներկուած մետիլինի կապոյտ ներկով կամ պիկրինի թթուով։ Այսպիսով բոժոժներին բընական գոյն տալ կարելի է հսարաւոր համարել, միայն պէտք է գործ ածել յայտնի տեսակ գոյներ և ներկեր։

Վաղուց յայտնի է լոյսի ձգողական ոյժը զանազան միջատների վերաբերամբ։ Նոյն իսկ դրանով օգտում են թիթեռներ բռնելու համար։ Բայց մինչև այժմ յայտնի չէր թէ որ գոյներն ամենից շատ են ձգում դէպի իրանց թիթեռներին միջատաբան ժողով։ Պերրո զբաղուեց այս հարցով։ Նրա փորձերից պարզուեց, որ սպիտակ լոյսը ունի ամենամեծ ոյժը, յետոյ գալիս են՝ գեղին, կանաչ, նարնջագոյն, կարմիր, կապոյտ և վերջապէս մանիշակի գոյներ։

Հրէական վիճակագրական ընկերութիւնը ձեռնարկել է երգրագնդի երեսին ապրող բոլոր հրէաների վիճակագրութեան, որը տուել է հետեւեալ թուերը։

Ամենից շատ հրէաներ են ապրում Եւրոպական Ռուսաստանում 5,082,000 հոգի, յետոյ գալիս է Աւստրօ-Ռւսկարիա—1,994,000, յետոյ Միացեալ Նահանգները 1,136,000, Գերմանիա 590,000, Շումանա 269,000, Աֆղանիստան 184,000, Անգլիա 179,000, Մարոկո 150,000, Նիդերլանդիա 104,000, Ֆրանսիա 86,000, Տաճկաստան 82,000, Պաղեստին 78,000։ Ամենից քիչը Բելգիա 12,000 և Ցունաստան 8,4000։ Հրէաների ընդհանուր թիւն է երկրագնդիս վրան 11,000,000 հոգի։

Նորերումս կատարուած հետազոտութիւններից երկում է, որ հողը ամենից շատ մշակուած է Դամիայում, ուր նա կազմում է ամբողջ երկրի  $67\%$ , Իտալիայում  $62,7\%$ , Բելգիա  $53,5\%$ , Ֆրանսիա  $53,3\%$ , Միւս երկրներում մշակուած հողի քանա-

կութիւնը կէսից պակաս է: Բնական մարգագետինների տարածութիւնը ամենից շատ է Անգլիայում—ամբողջ տարածութեան  $36,4^{\circ}/_{\circ}$ , Հոլանդիա  $36,3^{\circ}/_{\circ}$ , Շվեյցարիա  $34,4^{\circ}/_{\circ}$ , Յունաստան  $30,9^{\circ}/_{\circ}$ : Անտառները կազմում են ամբողջ տարածութեան  $51,2^{\circ}/_{\circ}$ , Շվեյցարիայում  $49,3^{\circ}/_{\circ}$ , Եւրոպական Ռուսաստանում  $40,4^{\circ}/_{\circ}$  Աւստրիայում  $32,6^{\circ}/_{\circ}$  և Գերմանիայում  $26,1^{\circ}/_{\circ}$ :

Անգլիայում կատարած փորձերը ցոյց են տալիս, որ քարածուխը ամենից ձեռնուու է պահել ջրի մէջ, նամանաւանդ ծովային ջրի: Դուրս է գալիս, որ օդում քարածուխը կորցնում է իր վառուելու խոշոր տոկոսը, երբեմն նոյնիսկ մինչև  $40^{\circ}/_{\circ}$ : Մինչդեռ ջրից հանած քարածուխը մի քանի օր չորացնելուց յետոյ դառնում է բոլորովին պէտքական վառելու համար:

Մինչև այժմ անհաւատալի էր թւում, թէ կան Ջրեր, որոնք պողպատէ իրերին մագնիսականութիւն են տալիս: Այդ Ջրերը պարունակում են մեծ քանակութեամբ ածխաթթու, որի գոլորշիանալուց յետոյ մնում է երկաթի թթւուկ. այս վերջնով է բացատրում այս Ջրերի օրիգինալ յատկութիւնը:

## ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹՅԻՆ

Հասարակական երեւայիների բարդուրիւնը:—Դարձեայ հայի անընթեցասիրուրիան մասին:—Դպրոցից դուրս կազմակերպուած կրթական միջոցներ:—Հայ ընթեցողների սահմանափակ կանխինգեթը:—Բարձրագոյն մանիքես:—Ուժեղացած պահպանուրիւն:—Գատատանական պալատի վճիռը:—Մինիսթրուերի կոմիտեի ոռոշումը օստերկրացիների բնակավայրերի մասին:—Փիճականակայի նոր գեներաց-ևսականացեի ոռոշումը:—Բարձրագոյն հաստառած մանույի նոր օրենքներ ֆինանսիայում:—Պետական օժանդակուրիւն „Զակառ. Օօօ.՝ յացրին:—Սիստեմիաներ:

Հասարակական երեսյթները տարբերուած են բնականներից իրանց չափազանց բարդութեամբ. այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ հասարակութիւնը բաղկացած է այնպիսի բարդ էակներից, ինչպէս են մարդիկ իրանց ազատ կամքով, հոգեկան յոյզերով, բազմակողմանի ձգտումներով և ուտոպիական երազնքներով:

Հասարակական երեսյթներում յաճախ պատճառները և հետևանքները այնպէս խճանուած են լինուած որ մէկը միւսի տեղ է ընդունուած. այդպիսի խճանուած հանգոյցները շատ սակաւ է կարելի լինուած լուծել Ալեքսանդր Մակեդոնացու կտրականութեամբ, և յաճախ միայն հարցերի մանրազնին, անաշառու ազատ քննութիւնն է մնուած իրեն սասոյգ միջոց: Հասարակական բարդ հարցերից է և հայի անընթեցասիրութիւնը:

Այդ ցաւալի երեսյթի վրայ տարիներ շարունակ խօսւում է, և այնոււամենայնիւ մնուած են չքացատրուած մի շարք փաստեր. այդ հանգամանքը ցոյց է տալիս որ այնքան էլ պարզ խնդիր չէ այդ, ինչպէս երեսում է առաջին անգամից: Նոյն այս էջերում մինք առիթ ենք ունեցել խօսել նոյն երեսյթի մասին (1901 թ. Առ 5, 7, 1902 թ. Առ 7, 1903 թ. Առ 5, 6, 1904 թ. Առ 8)՝ մօտենալով նրան զանազան կազմերից, բայց գեռ ևս մնուած են բաւական չպարզած կէտեր:

Կան մի շարք Փակտեր, որոնք ցոյց են տալիս որ անընթեցասիրութիւնը մեզանուած չի պայմանաւորուած միայն տգիտութեամբ, մայրենի լեզուն չիմանալով կամ ընթեցողների

կողմից դրած մեծ պահանջներով, որ անկարող է գոհացնել հայ տուագրական խօսքը:

Խօսէք երկու սեռի հայ «ինտելիգենտների» հետ, այն էլ այնպիսիների, որոնք հասկանում են հայերէն, մի կողմ թողնելով հայերէն չիմացող լէզիօնները, և գուշը կը համոզուէք, որ այդ ինտելիգենտների մեծագոյն մասը առհասարակ իր «Փէշակից» կամ առօրեայ հոգսերից դուրս չի հետաքրքրում ուրիշ բանով, եթէ իհարկէ չհաշուենք լրագրական սենսացիօն լուրերի ընթերցանութիւնը: Այդ «ինտելիգենտների» մէջ զարգացած են կուլտուրական կեանքի միայն արտաքին պահանջները, իսկ ներքին, մորալ պահանջները մնացել են անմշակ: Բարձր կը թութիւնը նրանց տուել է որոշ տեղեկութիւններ որոշ գրադա- մունքի համար, և դրանց կեանքի գլխաւոր նպատակը դառնում է՝ ըստ կարելոյն լաւ շահագործել իրանց արհեստը, ձեռք բերելու նպատակով իր գիրքի, կոմֆորտի և ապահովութեան համար որքան կարելի է շատ փող: Գաղափարական ձգտումները երբեմն փայլում էին դրանց ուսանողական կեանքում (այն էլ շատ քչերի մօտ), սակայն կեանքի մէջ շատ շուտով իջան, ինչ-պէս վատ ֆրամէ գգալներից արծաթի բարակ շերտը... Ունենալով չափազանց սահմանափակ մորալ ինտերեսներ՝ այդ մարդիկ գոհ են իրանց փէշակով, իրանց տոնուաեղով, իրանց գուեհիկ ժամանցով, բնաւ պահանջ չզգալով հետեւելու իրանց շըրջապատող ազգային, հասարակական կեանքին, հետաքրքրուելու ազգային թէ համաշխարհային գրական ու մտաւոր աշխարհի նոր հոսանքներով: Եւ այդ տիպի մարդիկ առհասարակ չեն կարդում, չեն հետաքրքրուում, որովհետեւ, որոշ դաստիարակութեան շնորհիւ նրանց մէջ զարգացած են միմիայն մերկանտիկ, գըստեհիկ պահանջները, իսկ դրանց էութեան դադափարական կողմը մնացել է խոպան դրութեան մէջ: Դրանք իրանց մուռ-բարոյական ընդհանուր կերպարանքով շատ նման են մեր բուրժուականակարութիւնների:

Այլ պայմաններից է առաջ գալիս անընթերցասիրութիւնը մեր հասարակ ժողովրդի մէջ. տգէտ, աշխարհից կտրուած մեր գիւղական մասսան կամ կարգալ չգիտէ, կամ կարգացածը հասկանալու պատրաստութիւն չունի: Տգիտութեան աստիճանների մասին դադափար կազմելու համար բաւական է իմանալ որ Անդրկովկասում միջին թուղթ 15 զիւղին կամ 7000 բնակչին հազիր մի հատ սկզբնական ուսումնարան է ընկնում: Եթէ համեմատելու լինէք սկզբնական դպրոցներում սովորողների տոկոսը ազգաբնակութեան թուի հետ, գուշը կը տեսնէք որ մեր երկրում այդ տոկոսը աւելի նուազ է, քան Ռուսաստանի մի-

Ջին նահանգներում. Անդրկովկասում այդ տոկոսը հաւասար է 1,5, մինչդեռ այստեղ 2,9. բայց չպէտք է մոռանալ որ այս վերջին թիւն էլ չափազանց անգոհացուցիչ է, եթէ համեմատելու լինենք այլ երկրների հետ։ Ամերիկայի Միացեալ Նահանգներում, օրինակ, այդ տոկոսը կազմում է 17, իսկ Շվեյցարիայում  $15\frac{1}{2}$ <sup>\*</sup>)։ Հարցը մեզանում աւելի ևս մոռայլ գոյն է ստանում, երբ ի նկատի էք ունենում և այն հանգամանքը, որ եղած սկզբնական ուսումնարաններն էլ իրանց չնշին ծրագրով այնքան քիչ մտաւոր պաշար են տալիս իրանց սաներին, որ չափազանց դժուար է դրանց հասկացողութեան համեմատ գըրուածներ ճարել։ Սկզբնական դպրոցների տուած չնշին մտաւոր պաշարը ճոխացնելու և ընդարձակելու նպատակով Ռուսաստանում առանձին ուշք են դարձնում դպրոցից դուրս կազմակերպուած կրթական միջոցների վրայ։ Այդպէս օրինակ, դպրոցին կից բացւում են կրկնողական դասընթացներ, որոնց նպատակն է լրացնել ու ընդլայնել սկզբնական ուսումնատացածների մտաւոր պաշարը, դպրոցի հետ կապում են ժողովրդական գրադարանները հմուտ անձանց ղեկավարութեամբ. աւելացրէք ժողովրդական դասախոսութիւնները, բացատրողական ընթերցումներ—և դուք կը ստանաք դպրոցից դուրս կազմակերպուած միշտը կրթական միջոցներ, որոնցից գուրեկ ենք մենք։

Մեր սկզբնական դպրոցների ուսուցիչները շատ պաշտօնական կերպով են վերաբերում իրանց յանձնած գործին և չեն ցոյց տալիս այն նախաձեռնող ու անձնուելու ոգին, որ յատուկ է, օրինակ, զեմստվոյական ուսուցիչներին։ Եւ դպրոցից դուրս կազմակերպուած կրթական միջոցներ չունենալով՝ մեր գիւղացին դուրս գալով սկզբնական ուսումնարանից, մոռանում է այն միքանի կցկոուր չնշին տեղեկութիւններն էլ, որ ունէր. այդպէս ահա չվարժուելով, նոր սնունդ, լրացուցիչ տեղեկութիւններ չստանալով՝ բնականարար անընթերցասէր է դառնուում ժողովուրդը։

Արդ, եթէ հաշուի չառնէք գիւղական մասսան, հայերէն չիմացող ինտելիգենտներին (որոնց թիւը պատկառելի է) և առհասարակ գաղափարական բաներով չհետաքրքրող «ինտելիգենտ» այն դասը, որի մասին խօսեցինք գրուածքիս սկզբում, եթէ հաշուի չառնէք հարստացած, բայց գուեհիկ և սահմանափակ մնացած բուրժուազիան, տակին կը մնայ այն ողորմելի թիւը, որ կազմում է «հայ ընթերցող» կոնտինգենտը։ Նա մն-

\*.) И. Г. Алибеговъ: «Народное образование на Кавказѣ».

կարող է ապահովել հայ տպագրական խօսքի գործիչի գոյութիւնը, ստեղծել մամուլի և գրականութեան բարգաւաճման նըպաստաւոր պայմաններ...

Լ. Ա.

Մելո. 14

Բարձրագոյն մանիքեստ (շարունակութիւն).

—XXVII. Կովկասի, Թուրքեստանի և Ստեպնոյ երկրի տեղացիներին, որոնք աքսորուած են մինչև Մեր Թագաժառանդի ծնուելու օրը իշխանութեան կարգադրութեամբ ընդհանուր քրէական յանցանքներ գործելու և արատաւոր վարք ունենալու համար և բնակեցրուած են Եւրոպական և Ասիական Ռուսաստանի նահանգներում, որոնց չեն վերաբերուել նախընթաց մանիքեստները, եթէ նրանք աքսորում օրինակելի վարք և ունեցած, —անորոշ ժամանակներով աքսորուածներին—տասներկու տարին անցնելուց, իսկ հինգ տարուց աւելի ժամանակով աքսորուածներին հինգ տարին անցնելուց, իսկ հինգ տարով և հնգից պակաս ժամանակով աքսորուածներին—որոշած ժամանակի կէսն անց կենալուց ազատել ոստիկանական հսկողութիւնից և իրաւունք տալ ապրելու տեղ ընտրելու, բացի մայրաքաղաքային նահանգներից և այն երկրից, որտեղից որ աքսորուած են (Կովկասից, Թիւրքեստանից, Ստեպնըլիյ երկրից), որտեղ ապրելու համար պէտք է ամեն-մի առանձին դէպքում տեղական բարձրագոյն իշխանութեան նախնական թոյլ-տըւութիւնն ստանալ; Իսկ այն աքսորուածներին, որոնց աքսորի ժամանակն արդէն կրծատուած է նախընթաց մանիքեստների հիման վրայ, —կրծատել մի տարով:

XXVIII. 1) Այն անձերին, որոնք արատաւոր վարքի համար աղմինիստրատիւ կարգով աքսորուած են գիւղական հասարակութիւնների վճռով, եթէ նրանց վարքը գովելի է, թոյլ տալ, որպէս օրէնքով (ст. 23 прилож. къ ст. 205 Т. XIV Үст. Пред. Перес. по прод. 1902 г.) նրանց արտօնուած է, անցնելուրիշ նահանգներ և հասարակութիւններ, ոչ բացառութեամբ և այն տեղերի, որտեղից նրանք հեռացրուած են եղել, միայն այն պայմանով, որ վերջին դէպքում ստացուի ներքին գործերի մինիստրի համաձայնութիւնը:

2) Այն անձերին, որոնք աղմինիստրատիւ կարգով աքսորուած են Միբիր մեշշանների համայնքների դատավճռով, այլև որոնք չեն ընդունուել գիւղական և մեշշանների համայնք-

Ներից իրանց շրջանի մէջ, իրանց գործած յանցանքների համար պատիժը կրելուց յետոյ թոյլ տալ անցնելու ուղիշ նահանգներ, ոչ բացառութեամբ և' այն տեղերի, որտեղից որ նըրանք աքսորուած են եղել, բայց գիւղացիների համար—եթէ նրանց վարքուրարքը գովելի է,—նրանց վերադառնալու գէպքում այն նահանգը և գիւղական համայնքը, որտեղից նրանք հեռացրուած են եղել, բացի դրանից՝ ներքին գործերի մինիստրի թոյլաւութեամբ:

XXIX. Ի բաց չառնելով և պետական յանցաւորներին այն թեթևութիւններից, որ շնորհում են ներկայ մասնիքնետի ՀΙΧ յօդուածի 1, 4, 13, 16—23 պարագրաֆները, այն անձերի համար, որոնք ընդհանուր-բրէակական յանցանքներ և գեղձումներ են գործել՝

1) Թոյլատրում ենք արդարադատութեան մինիստրին՝ ներքին գործերի մինիստրի հետ համաձայնելով՝ առանձին ամենահպատակ գեկուցումներով գիմել, այլ և Մեր բարեհայեցողութեանը բարեխօս միջնորդութիւն ներկայացնել իրանց առաջուայ արտօնութիւնները վերականգնելու այն նախկին աքսորուածներին, որոնք մինչև Մեր թագաժառանգի ծննդեան օրը գործել են այնպիսի պետական յանցանքներ, որոնք իրանց յանցանքի տեսակին նայած կամ իրանց գործած յանցանքների համար զղալով և բարի վարքով արժանի կը լինէին աւելի թեթևացման, քան վերը բերուած ՀΙΧ յօդ. 1, 4, 13, 16—24 պարագրաֆներում ցոյց տուածներն են, և որոնք Սիրիբում իրանց պարտաւորեցուցիչ մնալը վերջացնելով աչքի են ընկել անբիծ վարքով և աշխատասէր կհանքով:

2) Այն անձերի վերաբերմամբ, որոնք պատիժ են կրում պետական յանցանքների համար, ՀΙΧ յօդ. 16, 17, 18, 19, 20 և 23 պարագրաֆներում ցոյց տրուած ողորմածութիւնները թոյլ ենք տալիս զործազրել Հեռու Սրեելքի Մեր տեղակալին, Իրկուտսկի գեներալ-նահանգպատին և տեղական նահանգպատիներին, ուժ հարկն է, գատապարտուածների բարի վարքի մասին հաւասարականութեամբ, բայց առանց կրծատելու մայրաքաղաքներում և մայրաքաղաքային նահանգներում ապրելու արգելքի ժամանակամիջոցը, եթէ օրէնքով այլպիսի կրծատում չէ սահմանուած:

3) Հնանալու պատճառով իրանց ոյժը ըստ օրինի չկորցնող այն գործերը պետական յանցանքների մասին (1903 թ. ՍՈԴ. Սլոյ. 68 յօդ.), որոնք՝ մինչև Մեր թագաժառանգի ծըննդեան օրը ամբողջ տասնուհինգ տարի մնացել են անլուծելի, հրամայում ենք մոռացութեան տալ և այդ յանցանքների մէջ մեղապարտների գէմ քրէական գատ չբանալ:

4) Հրամայում ենք նոյնպէս մոռացութեան տալ 1903 թ.  
ՍՈԼ. ՍԼՕԺ. 103, 104, 106 և 107 յօդուածներում նախատիս-  
նուած յանցանքների մասին գործերը, որոնք մինչև Մեր Թա-  
գաժառանդի ծննդեան օրը մնացել են անլուծելի: Այն անձե-  
րին, որոնք մեղադրուում են այդ յանցանքներում կամ իրանց  
մեղքի համար պատիժ են կրում, ազատել պատասխանաւուու-  
թիւններից և պատժից իր բոլոր հետևանքներով՝ իրաւունքնե-  
րից զրկուելու դատապարտուածներին իրանց օրինաւոր զա-  
ւակների հետ միասին (որոնք ծնուել են իրանց ծնողների  
դատապարտուելուց յետոյ) տալով բոլոր արտօնութիւնները ի-  
րանց պատկանող գրութեան վերաբերմամբ, միայն առանց ի-  
րանց գոյքերի վրա ունեցած իրաւունքների:

5) Քր. Դատավ. Օրինագր. 1035 յօդուածի (1892 թ. Օ-  
րէնքների Ժողովածուի ԽVI հատ. 1 մաս) կամ պետական  
կարգն ու հասարակական անդորրութիւնը պահպանելու միջոց-  
ների մասին Սահմանումների 32—36 յօդուածների (Օր. Ժող.  
XIV հ. 1 յօդ. (ծան. 2-րդ) 1 յաւել., Նախն. Յանց. Օրէնսգ.,  
1890 թ. հրատ.) զօրութեամբ ադմինիստրատիւ տուգանքների:  
ենթարկուած և մինչև Մեր Թագաժառանդի ծննդեան օրը չա-  
փահաս դարձած անձերին ազատել ենք հրամայում իրանց քա-  
շելիք պատժից:

6) Նոյն կարգով բանտարգելութեան, բանտարգելութեան  
վեց ամսից ոչ աւել ենթարկուած, բնակութեան տեղ ընտրելու  
իրաւունքը մի տարուց ոչ աւել սահմանափակուած կամ ոստի-  
կանութեան ակնյայտնի հսկողութեան նոյնպէս մի տարուց ոչ  
աւել ենթարկուած անձերին ազատել ենք հրամայում իրանց  
քաշելիք պատժից:

7) Նոյն կարգով բանտարգելութեան վեց ամսից աւել են-  
թարկուած, բնակութեան տեղ ընտրելու իրաւունքը մի տա-  
րուց աւել սահմանափակուած կամ ոստիկանութեան ակնյայտ-  
նի հսկողութեան նոյնպէս մի տարուց աւել ենթարկուած ան-  
ձերի պատժի ժամանակամիջոցի մի երրորդը՝ կրծատել՝ հա-  
ւաստիանալով, որ պատժուածի վարքը գովելի է:

8) Այս ԽХIX յօդուածի 7-րդ պարագրաֆում ցոյց տուած  
շնորհումների գործադրութիւնը թողնում ենք Հեռաւոր Արևել-  
քում Մեր փոխարքային, Կովկասի քաղաքացիական մասի կա-  
ռավարչապետին, գեներալ-նահանգապետներին, Դօնի զինուո-  
րական շրջանի նուկազնոյ ատամանին, նահանգապետներին և  
քաղաքապետներին, ում հարկն է:

9) Ներքին գործերի մինիստրին թոյլ ենք տալիս բարե-  
խոս միջնորդութիւն ներկայացնել Մեր բարեհայեցողութեա-

Նըն այն անձերի մասին, որոնք մինչև Մեր Թագաժառանգի ծննդեան օրն ինքնազլուխ թողել են հայրենիքը և հեռացել պետութեան սահմաններից գուրս իրանց գործած պետական յանցանքների պատճառով, և չեն մեղադրում այն չարագործութիւնների համար, որ ցոյց է տրուած 1903 թ. Սովոր. 99-րդ յօդուածով, և կը ցանկանան հայրենիք վերադառնալ և իրանց հաւատարմութեամբ դէպի Գանձն ու հայրենիքը քաւել իրանց նախկին մեղքը:

XXX. Նրանք, որոնք յուղաքննութեան և դատի տակ են գտնուում և այս մանիֆեստի զօրութեամբ պէտք է ազատուեն դատից ու պատժից, բայց համոզուած են, որ իրանք անմեղ են և կ'ուղենան արդարանալ դատաստանի առաջ, կարող են գործը դադարեցնելու մասին դատարանի վճիռը սահմանուած կարգով յայտնելու օրից մինչև մի ամիս ինսդրել նորոգելու իրանց յուղաքննութիւնն ու դատը՝ նոյնպէս, ով որ մինչև Մեր Թագաժառանգի ծննդեան օրը գործած յանցանքների համար մանիֆեստիս զօրութեամբ պէտք է ազատուի յուղաքըննութիւնից ու դատից և չի ցանկանալ օգտուել գրանով, կարող է նոյնչափ ժամանակամիջոցում ինսդրել իր գործը վերջացնել սահմանուած օրինական կարգով: Թէ մէկ և թէ միւս անձերը կրկին մեղադրուելու դէպօւմ այլ ևս չեն կարող այս մանիֆեստի զօրութեամբ ներման ենթակայ լինել:

XXXI. Այս մանիֆեստի կանոնների գործադրութեան մասին եթէ կասկածներ ծագելու լինեն, բոլոր վարչական հաստատութիւնները պարտաւոր են դիմել կառավարիչ սենատի առաջին դեպարտամենտին, իսկ Թագուհի Մարիայի հիմնարկութեան ատեանի օգախն մտցնուելիք պակասորդների և տուգանքների վերաբերմամբ դիմել Խնամատարական Խորհրդին՝ Թագուհի Մարիայի հաստատութիւնների Մեր Սեփական գրասենեակի կառավարչապետի միջոցով: Կառավարիչ Սենատը և Խնամատարական Խորհուրդն իրանց իշխանութիւնից վեր եղած դէպքերում սահմանուած կարգով հայցում են Մեր թոյլարութիւնը:

—Մինիստրների կոմիտետի Բարձրագոյն հաստատուած որոշումով վճռուած է. համաձայն 1903 թուի յուլիսի 20-ի Բարձրագոյն հրամանի և ներքին գործների մինիստրի նոյն թուականի սեպոհմբերի 15, 22 և 25-ին արած կարգադրութիւնների՝ պետութեան մէջ հետեւալ տեղերը գտնուում են ուժեղացրած պահպանութեան մէջ. Պետերբուրգի, Մոսկուայի, Խարկովի, Եկատերինոսլաւի, Կիեւի, Պոլտավի և Վոլգինի նահանգները, Ռոստով Դոնի վրայ և Նախիջևան, Տագանրոգ քաղաքները և վեր-

Չինի շրջանը, կասպերովկա գիւղը, Գնիլովեան ստանիցան և Պաստուխովի երկաթաշէն գործարանը, Դոնեան զօրքերի շըրջանը, Ելիսաւետգրադ քաղաքը, Բոգոեաւենսկ, Կալինովկա և Վուլեբենսկ շէները. Կրիվօյ-Ռոդ և Վարվարովկա աւանները, Կրիվօրոգեան հանքերը և Գդանցի հանքեր հալող գործարանը, Խերսոնի նահանգի Պոկրովեան և Շուլմակեան գաւառները և Վլադիմիրեան նահանգի Իվանով-Վոզնեսենսկ քաղաքը, Թիֆլիս, Բագու և Բաթում քաղաքները, Բագուի գաւառը, Պետերբուրգի, Օդեսայի և Նիկոլայեւի քաղաքապետութիւնները և Կրոնշտադտի զինուորական նահանգապետութեան տակ եղած վայրերը, Գանձակի նահանգի Գանձակ, Շուշի և Նուխի քաղաքները, Երևանի նահանգի Ալեքսանդրոպոլ քաղաքը և Ղարսը, նոյնպէս և Վիտերսկ և Դվինսկ քաղաքներն իրանց գաւառներով. այս բոլոր յիշուած վայրերը թողնուելու են նոյն ուժեղացրած պահպանութեան վիճակի մէջ մինչև 1905 թուի սեպտեմբերի 4-ը:

— Մեպտեմբերի 2-ին Թիֆլիզի գատաստանական պալատում գոնփակ քննւում էր Ալեքսանդրոպոլի 2 բնակիչների՝ Պերճ Ամատունու և Ալեքսանդր Տէր-Մինսկի գործը: Նըրանք մեղադրում էին Դարդիմանով գորոգովոյի սպանութեան փորձի մէջ: Այդ գործը արդէն քննուել էր Երևանի նահանգական դատարում, և մեղադրեալներն արդարացիլ էին, բայց նահանգական դատարանի պրոկուրորը բողոքել էր, և գործն անցել էր Թիֆլիզի գատաստանական պալատը: Այդտեղ մեղադրում էր պրոկուրորի օգնական Ն. Ի. Նեստելբերգերը, պաշտպանում էին Պ. Ն. Մալիկանտովիչ (Մոսկուայից) և Տ. Ն. Յովհաննիսեան երդուեալ հաւատարմատարները: Երկարատև խորհրդածութիւնից յետոյ պալատը հաստատեց Երևանի նահանգական դատարանի վճիռը—այսինքն՝ արդար ճանաչել նրանց: Վճիռը յայտարարուեց դոնքաց:

— Մինիստրների կոմիտետը լսելով ներքին գործոց մինիստրի առաջադրութիւնը՝ նշանակել տեղեր ընակութիւն հաստատելու այն օտարերկրացիների համար, որոնց հեռացումը Թուսաստանի սահմաններից չկարողացաւ իրագործուել, որոշեց 1904—1906 տարիների ընթացքում. 1) Եւրոպական Թուսաստանից, Կովկասից և Միջին-Ասիական երկրներից հեռացուող օտարերկրացիների համար—Արխանգելսկի, Աստրախանի, Վոլոդայի, Վեատկայի, Օլոնեցի, Օրենբուրգի, Պերմի, Տոմսկի, Տոբոլսկի և Ռուֆիմի նահանգները. 2) Միբիրեան նահանգներից և բնաշխարհներից (օբլաստներից) հեռացուող օտարերկրացիների համար—Եակուտսկի բնաշխարհը. 3) Լեհական Թա-

գաւորութեան նահանգներից հեռացուող օտարերկացիների համար—Վոլոգդայի նահանգը:

—Ֆինլանդիայի գեներալ-նահանգապետի պաշտօնը Բարձրագոյն հրամանով յանձնուած է իշխան Խւան Միխայլովիչ Օբոլենսկիին:

—Ցուլիսի 8-ին Բարձրագոյն հաստատութիւն են գտել Ֆինլանդիայում 1867 թուականից գործադրուող մամուլի օրէնքների փոխարէն նոր փոփոխուած օրէնքներ, որոնցով տարածում է ֆինլանդիայում գրաքննչական ընդհանուր օրէնքները: Այդ նոր որոշումներով՝ 1) պարբերական հրատարակութիւններ, տպարաններ, զրախանութներ, գրադարաններ, ընթերցարաններ ևայլն պահելու վերաբերեալ ֆինլանդացի քաղաքացիների իրաւունքները հաւասարապէս տրում են նաև բոլոր ոռու հպատակներին: 2) մամուլի գլխաւոր վարչութեան և գեներալ-նահանգապետին տրում է իրաւունք՝ ա) յանձին պարբերական հրատարակութեան պատասխանատու-խմբագրի յայտնել նախագուշացում, որ պէտք է լոյս տեսնի հետևեալ համարի սկզբում, առանց որևէ յաւելումի: բ) պահանջել պատասխանատու-խմբագրի փոփոխում, պայմանով գաղաքեցնել հրատարակութիւնը, եթէ որոշեալ ժամանակուայ ընթացքում չկատարուի պահանջը: գ) դադարեցնել մինչև ուժ ամիս մասնաւոր յայտարարութիւններ տպելը այդ հրատարակութիւններում կամ դրանց հատող վաճառումը: դ) հրատարակութիւնների ժամանակաւոր կամ ընդմիշտ գաղաքեցում: ե) աւելի քան 5 տպագրական թերթ ծաւալով տպագրական երկերը պէտք է ներկայացնուեն գրաքննիչին Յ շաբաթ լոյս տեսնելուց առաջ: զ) գրաքննչի հաւանութեամբ լոյս տեսնող ամեն մի տպագրական երկու օրինակի վրայ պէտք է տպած լինի „Դօզովունու պենցորու, չիսլո, մէսյաթ, գոծ և մէստո“: է) տպագրական արտադրութիւններ ցրիչ-վաճառողները պէտք է տեղական նահանգապետի թոյլտութիւնը ունենան: ը) դրամատիկական գրուածքների հրապարակային ներկայացում ֆինլանդիայում թոյլատրուում է մամուլի գլխաւոր վարչութիւնից: թ) արտասահմանից եկած տպագրական երկերի մէջ դատապարտելի կլոտորները հանում են կամ սևացնուում: ժ) մամուլի գլխաւոր վարչութեան տրում է իրաւունք արգելել ներմուծում երկրի մէջ արտասահմանեան այն հրատարակութիւնների, որոնք միշտ արտայայտում են վասակար ուղղութիւն»:

—«Զակասպ. Օօ.» լրագիրը հաղորդում է, որ Փինլանդների մինիստրի կարգագրութեան համաձայն պետական բանկն այս օրերս այդ լրագրի խմբագիր-հրատարակիչ Կ. Մ. Ֆէօդորովին

տուել է 20,000 բուբլի օժանդակութիւն, որպէսզի դրանով նա ընդարձակէ իր հրատարակչական գործը:

—Մեպտեմբերի 9-ին Կովկասի դպրոցական շրջանի հոգարարձուն Թիֆլիզի քաղաքային վարչութեան ուղարկեց ժողովրդական լուսաւորութեան մինիստրից ստացած շրջաբերականը, որով առաջարկուած է ձեռք առնել հետևեալ միջոցները Միապետի կամքի համաձայն. 1) Բարձրագոյն Անուան ստիպենդիաները յատկացնել ոուս-ճապոնական պատերազմում ըսպանուած սպաների զաւակներին. 2) Նոյն երեխաներին ազատել ուսման վճարից, և դպրոցների ունեցած մասնաւոր միջոցներից տալ նրանց թոշակներ. 3) Նրանց յատկացնել մասնաւոր ստեղծենդիաներ, եթէ այդ մասին եղած կանոնները հակառակ չեն դրան. 4) դասագրքեր և ուսումնական պիտոյքներ տալ նըրանց. 5) գոյութիւն ունեցող օժանդակ ընկերութիւններին և հոգարարձուներին առաջարկել օգնել այդ երեխաներին իբր կատարումն Բարձրագոյն կամքի. 6) բանակցութեան մտնել ազնուական ներկայացուցիչների հետ, ջանալով, որ ազնուականների պանսիօններում ընդունեն այդ երեխաներին կամ նրանց թոշակ տան. 7) բանակցութեան մտնել քաղաքների և գեմսավոնների, նոյնպէս և մասնաւոր դպրոցների տէրերի հետ և իմանալ, թէ համարաւոր չեն համարում նրանք իրանց դըպրոցներում կրթել այդպիսի մի քանի երեխաներ կամ ձրի, կամ մասնաւոր և կամ պետական գանձարանի տուած օժանդակութեամբ և 8) մեռած սպաների ու զինուորների երեխաների մուտքը միջնակարգ և ստորին դպրոցներում հեշտացնելու համար ընդունել նրանց առանց մրցութեան ենթարկելու, միայն բաւարար թուանշաններով։ Ուղարկելով մինիստրի այս շրջաբերականը Թիֆլիզի քաղաքադլիսին, հոգարարձուն խնդրում է հաղորդել իրան, թէ ի՞նչ չափով կարող է Թիֆլիզն օգնել ներկայ պատերազմում մեռած անձերի զաւակներին խնամելու գործում։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թուս-ճապոնական պատերազմը. Միջնորդուրեան հարցը.—Անգլիան իր գործերն է շփում.—Թիւրքիան շարութակում է իր խաղաֆականուրիւնը.—Բուլղարական իշխանի շնորհունուելը Փրանց Յովկեի կայսրից.—Վալյոկ-Ռուսասի մահը.—Կոմբի ճառը Օսկերում.—Փուրեալիսմերի միջազգային համաժողով Վիեննայում:

Մարշալ Օյաման թէն գրաւեց Լեաօեանը, սակայն անկարող եղաւ շրջապատել Կուրոպատկինի դօրքը, որ դուրս պրծաւ վտանգաւոր դրութիւնից և յետ նահանջեց Մուկդէն։ Մուկդէնի մօտ երկու կողմերն էլ պատրաստում են մի նոր անեղ և արիւնալի ճակատամարտի. սեպտեմբերի 4-ին արդէն տեղի ունեցաւ ընդհարում երկու բանակների խուզարկու գնդերի մէջ Վանիւցպուզա գիւղի մօտ, և ոռուսները յետ նահանջեցին՝ կատարած համարելով իրանց ստանձնած դերը։ Գիներալ Կուրոպատկինը կինտրոնացնում է իր ուժերը Մուկդէնի մօտ, և մարշալ Օյաման կրկին կը փորձի շրջապատել նրան այդտեղ։

Պորտ-Արտուրի քաջ պաշտպանները շարունակում են օրհասական ընդդիմադրութիւն ցոյց տալ ճապոնացիներին։ Վերջին տեղեկութիւններին նայած՝ ճապոնացիները սեպտեմբերի 6-ից սկսած կարողացել են միքանի նշանաւոր ամրութիւններ ևս գրաւել և աւելի սերտ դարձնել պաշարումը։ Այդ պայմաններում հազիւ թէ կարողանայ Պորտ-Արտուրը կանգուն մնալ մինչև բալտիկեան էսկազրայի ժամանումը։ Օգոստոսի 20-ին առաւտեան ժամի 9-ից 30 րոպէ անց սկսեցին խարիսխները բարձրացնել խաղաղովկեանեան 2-րդ նաւատորմի նաւերը հետեւեալ կարգով։ «Դմիտրի Դոնսկոյ», «Ավրորա», «Свետлана» և «Алмазъ» յածանաւերը, ապա առ. ժամի 10-ին նաւատորմալին զրահակիրներ՝ «Օսլաբъ», «Сисой Великій», «Новаринъ» և «Адмиралъ Нахимовъ» յածանաւն ու եօթ ականանաւեր։ Ժամի 11-ից 10 րոպէ անց շարժուեցին «Императоръ Александръ III» և «Князъ Суворовъ» զրահակիրները, «Китай», «Корея», և «Князъ Горчаковъ» փոխադրանաւերը։

Ռուսաստանը իր ցամաքային ուժերն ևս գորեղացնում է և վերակազմում։ Սեպտեմբերի 11-ին տրուած էր գեներալ-առիւտանտ Գրիգորենքերգի անունով հետևեալ Բարձրագոյն հրովարտակը։

«Օսկար Կազիմիրովիչ, չափազանց լարուածութիւնը, ուրով վարում է ներկայ պատերազմը ծապօնիան և ճապոնական գորքերի ցոյց տուած յամառութիւնը և պատերազմական բարձը յատկութիւնները դրդում են ինձ նշանաւոր կերպով մեծացնել մեր զինուած ոյժերը պատերազմական գործողութիւնների բեմի վրայ, որպէսզի ըստ կարելոյն շուտ համենք վճռական յաջողութիւնների։ Որովհետև այդ միջոցին զօրքի միաւորների թիւը կը հասնի այն թուանշանին, որի ժամանակ մէկ զօրաբանակի մէջ նրանց թողնելը չէ կարելի թոյլ տալ առանց լիսաւելու զօրքերի վարչութեան, մանեօվըներ անելու և շարժունութեան յարմարութիւններին, այդ պատճառով ես անհրաժեշտ համարեցի Մանջուրիայում գործելու համար նշանակուած զօրքը երկու զօրաբանակի բաժանել, պահպանելով նրանցից առաջինի հրամանատարութիւնը Կուրոպատկինի ձեռքում և նշանակելով ձեզ երկրորդ զօրաբանակի հրամանատար։ Ձեր երկարատև ծառայութիւնը հայրենիքին, որ ընդգծուած է պատերազմական քաջութիւններով և ընդարձակ փորձով զօրքերի պատերազմական նախապատրաստութեան գործում, տալիս է ինձ կատարեալ վստահութիւն, որ դուք ղեկավարուելով զլխաւոր հրամանատարի ընդհանուր ցուցմունքներով կ'ուղղէք ձեզ վստահացած զօրքի գործունէութիւնը պատերազմի նալատակներին հասնելու համար, և որ ձեր հրամանատարութեան ատկ մէր քաջարի զօրքերը ցոյց կը տան իրանց յատուկ քաջութիւնը և դիմացկունութիւնը թշնամու հետ ունեցած կըռուի մէջ ի պաշտպանութիւն հայրենիքի պատուի և արժանաւորութեան։ Աստուած օրնէ ձեզ ի վեհ և վառաւոր ծառայութիւն ինձ և Ռուսաստանին։ Մնում եմ դէպի ձեզ անփոփոխ բարեհաճ։ Խսկականի վրայ նորին Մեծութեան Սեփական ձեռքով գրուած է «Նիկոլայ»։

Ճապօնիան ևս լարում է իր բոլոր ոյժերը՝ ցանկալով, որքան կարելի է շուտ ջախջախել թշնամուն և ժամանակ չտալ նրան զօրեղանալու։ Երկու կողմերն էլ բնաւ տրամադրութիւն չեն ցոյց տալիս խաղաղ ճանապարհով լուծելու իրանց վէճը։ Թէև զանազան կողմերից լուծում են միջնորդութեան մասին առաջարկներ, սակայն աւելի մօտ է երևում ճշմարտութեան հոչակաւոր ֆրանսիական հրապարակախօս և քաղաքական գործիչ կլեմանսօի հետևեալ կարծիքը «L'Aurore»-ում. «Քանի ան-

գամ արդէն Եւրոպական միջամտութիւնը ունեցել է ճակատագրական հետևանքներ նրանց համար, որոնք համաձայնուել են ընդունել այդ միջամտութիւնը: Բերլինում Ռուսաստանը պէտք է հանգիստ նայէր, թէ ինչպէս իր ձեռքից խլում էին Թուրքիայի վրայ տարած՝ յաղթութեան պառազները: Նա մինչև այժմ չի մոռացել այդ: Արդեօք Եւրոպայի վրայ չէ ընկնում մեղը որ ծագոնիայի ձեռքից խլում էին այն երկրները, որ նա նուածել էր Զինաստանում, և այդ երկրները յանձնուում էին Ռուսաստանին: ծագոնիան անկասկած չի մոռացել այդ, որովհետեւ ներկայ պատերազմը հէնց Եւրոպայի այն ժամանակուայ վարմունքի արդիւնքն է: Ինչո՞ւ պէտք է Ռուսաստանը և ծագոնիան պատրաստութիւն ցոյց տան ընդունելու միջնորդութիւն նրանց կողմից, որոնք հէնց նման պայմաններում լոկ անբաւականութիւնների առիթ էին տալիս»:

Մինչ Ռուսաստանի գլուխը խառն է, «Նենդ Ալբիոնը» շտապում է շակել իր գործերը Արևելքում: Յաղթելով դալայշամայի թոյլ գորքերին՝ անզլիացիք մտան նրա մայրաքաղաք Լիսասսան, որտեղից փախել էր այդ կրօնապետը՝ ընտրելով իր համար հեռաւոր վանքերից մէկը իրք ապաստան: Յաղթողի և պարտուածի մէջ պայմանագիր կնքուեց: Երբ Տիբեթի մեծամեծների ժողովում բոլորը ստորագրեցին պայմանագիրը, անզլիական արշաւախմբի գլխաւորը, գնդապետ Իենխեսրենդը, գիմեց տիբեթցիներին հետևեալ ձառով. «Դաշնագիրը կնքուած է: Այժմ մենք ապրում ենք. իրար նկատմամբ խաղաղութեան մէջ: Առաջ գոյութիւն ունեցող թիւրիմացութիւնները վերացուած են, և հիմք է դրուած փոխադարձ բարի յարաբերութիւններին ապագայում: Այս դաշնագրի մէջ բրիտանական կառավարութիւնը խպատ խոյս է տուել ամենափոքր միջամբութիւնից ձեր կրօնական գործերի մէջ: Նա չգրաւեց Տիբեթի աշխարհի ոչ մի մասնիկ, ոչ մի փորձ չարաւ խառնուել ձեր ներքին գործերում և ճանաչեց չինական կառավարութեան գերիշխանութիւնը: Անզլիական կառավարութիւնը միայն աշխատեց որ դուք կատարէք 1890 թուականի պայմանագիրը, որ Հնդկաստանի և Տիբեթի մէջ առևտրական յարաբերութիւններ հաստատուեն, որ ձեզ համար էլ ոչ պակաս ձեռնտու է քան մեղ համար, — նման այն է յարաբերութիւններին, որ կապում են տիբեթցիներից բացի Զինաստանի այլ մասերի հետ և, — միւս երկրները. Յետոյ Անզլիական կառավարութիւնը ձգտում էր որ Տիբեթը յարգանքով վերաբերուի Անզլիի ներկայացուցիչներին և որ դուք չշեղուէք ձեր աւանդա-

կան քաղաքականութիւնից միւս երկրների հետ ձեր յարաբերութիւնների մէջ: Ես ձեզ խոստանում եմ անգլիական կառավարութեան անունից որ այս դաշնագիրը խստօրէն կը գործադրուի մեր կողմից: Դուք էլ պէտք է խստօրէն հետեւէք նըրան. նրա ամեն մի խախտումը, առևտուի ամեն մի ճնշում և ամեն մի անարգանքը բրիտանական հպատակների նկատմամբ կամ նրանց պատճառում վնասը նկատողութեան կ'առնուին և կը պատժուին: Դուք մեր մէջ դանում էիր թշնամիներ, երբ գուք չէիր կոտարում ձեզ վրայ պայմանադրով՝ դրուած պարտականութիւնը և յարգանք չէիր ցոյց տալիս Անգլիայի ներկայացուցիչներին: Իսկ եթէ գուք կը կատարէք պայմանագիրը և ցոյց կը տաք քաղաքավարութիւն՝ գուք կը գտնէք մեր մէջ բարի բարեկամներ: Յոյս ունիմ որ մենք այլևս երբէք ստիպուած չենք լինի ձեզ հետ վարուելու ինչպէս թշնամիների հետ»:

Այդ գեղեցիկ խօսքերը իսկապէս յիշեցնում են դառն հարեր ոսկեզրելու սովորութիւնը, որ ընդունողը մի քիչ մխիթարուի... կասկած չկայ որ հզօր Անգլիայի կոնտրով տակ անցաւ թոյլ ծիբեթը, և երբ հարկը պահանջի, գայլի և գառնուկի առակի մէջ գուրս բերուած խօսակցութիւններ էլ կը լսուեն... Առայժմ տիբերիթցիները պարտաւորում են վճարել 7,500,000 ըուփի պատերազմական տուգանք. այդ տուգանքի երաշխաւորութեան համար առայժմ բրիտանական զօրքերը գրաւելու են Զումրի հովիտը: Ծիբեթը այսուհետեւ իրաւունք չունի իր հողի որևէ կտոր ծախսել կամ տալ կաղալով օտար պետութեան առանց Անգլիայի հաւանութեան. նոյն սահմանափակումը երկաթուղային, հեռագրական գծեր անցկացնելու, հանքեր շահագործելու նկատմամբ: Լաւ «անկախութիւն» է:

Անգլիան ուժեղացնում է իր ազգեցութիւնը և հարաւային Պարսկաստանում: Բարեկամական ցոյցեր են տեղի ունենում և Թիւրքիայի նկատմամբ: բրիտանական նաւատորմը այցելութիւն տուաւ Պոլսում՝ Սուլթանին, որ ամենասիրալիր ընդունելութիւն ցոյց տուեց անգլիական ծովագետներին:

---

Սանտիմենտալ մոտիւներով ոչ մի դիպլոմատիա չի դեկավարուում. այդ ճշմարտութիւնը լաւ ըմբռնել է Սուլթան Համիդը սկսած այս օրից, երբ նա գահ բարձրացաւ իր եղբօր Մուրադի տեղ՝ գահից զրկելով և իրեւ պետական կալանաւոր պահելով նրան մինչև նրա մահը: Ի դէպ՝ միքանի ամիս առաջ մեռաւ և անփառունակ թաղուեց այդ գժբախտ Մուրադ Նըրգը: Թիւրքիայում հրատարակուող թիւրքերին հրամայուած էր՝

Մուրադի մահուան չորս տողից աւելի չնուիրել։ Ահա այդ Սուլթան Համբէդը 1876 թուականից մինչև այժմ շարուակում է իր ճարպիկ խաղը երոպական անսիրտ գիպլոմատիայի հետո

Մակեդոնիայում գեռ չեն իրագործուած մշակուած ըետքորները, և ալբանացիները, Սուլթանից սիրուած ալդ «ապըստամբները», կրկին սկսել են իրանց վայրագութիւնները Հին Սերբիայում այնպէս, ինչպէս քրդերը Հին Հայաստանում։ Թիւրք փաշաները իբրև թէ կուում են ալբանացիների դէմ, մինչդեռ երոպացիներին հանգստացը ներու համար զրանք նոյնն են անում, ինչ որ դայեակները, երբ երեխաների լացը կտրելու համար ցոյց են տալիս թէ ծեծում են նրանց վշտացնողներին։ Նոյն կոմեդիան կատարում են Շաքիր կամ Սուլէյման փաշաները, ցոյց տալով թէ «Ճնշում են» ալբանացիներին, «կուում են» նրանց դէմ, որպէսզի լոէ լաց լինող Եւրոպան... Եւ այդ կոմեդիան կրկնում է անվերջ առանց ձանձրացնելու մեծ երեխաներին։ Բոլորին յայտնի է թէ ինչ ազգեցիկ գեր են կատարում ալբանացիները իլդը Քեօշկում։ Առնասարակ ալբանացիները և թիւրքերը շատ լաւ են իրար հասկանում և հիանալի կերպով կատարում, են ստանձնած դերերը։

Այժմ երբ Ռուսաստանը զբաղուած է Հեռու-Արևելքում Աւստրօ-Ռւնդարիայի վարկը բարձրացել է Բալկանեան թերակղում։ Մի փաստ, թէ ինքնըստինքեան չնչին, բաւական բնորոշ է ներկայ մոմենտի համար։ Յայտնի է որ այն օրից, երբ բուլղարական իշխան Ֆերդինանդը Ռուսաստանի հետ հաշտուելու համար իր թագաժառանգ Բորիսին ուղղափառ դարձրեց, Վիեննայի արքունիքում սկսեցին սառնութիւն ցոյց տալ կաթոլիկութիւնը բաղաքական հաշիւներին գոհած իշխանին։ Այդ սառնութիւնը այնտեղ էր համսում որ Ֆրանց Յովանիկը միքանի տարի շարունակ չէր ընդունում իշխանին։ Այժմ, ինչպէս ասում են, անգլիական թագաւորի միջնորդութեան շնորհիւ, Ֆրանց-Յովանիկի կայսրը համաձայնուել է ունկնդրութիւն շնորհել բուլղարական իշխանին, որ ներկայանալով հաւաստիացրել է թէ ինքը հանդիսանում է Բալկանեան թերակղու վրայ խաղաղութեան պատուար և պատրաստ է իսկական միջոցներ ձեռք առնել վերջ դնելու համար յեղափոխական շարժումներին թիւրքական երկրներում։

Այդպէս ահա ամեն մէկը իր մասին է մտածում, և վայնը, որոնք գիպլոմատիայի սանտիմենտալ զգացմունքների վրայ օդային ամրոցներ են կառուցանում...»

Ֆրանսիան էլ իր ներքին գործերով է զբաղուած, մոռանալով միքանի ամիս առաջ արտասանուած ճառերն ու խոստումները Մակեդոնիայի և Թիւրքիայի ասիական նահանգների նկատմամբ։ Արմատական Կոմբը այդ կողմից ոչնչով չի տարբերում իր չափաւոր հանրապետական նախորդ Վալդեկ-Ռուսոից, որի յանկարծակի մահը երկու ամիս առաջ մեծ ցաւպատճառեց Ֆրանսիային։

Կոմբը իրան յատուկ կտրականութեամբ և եռանդով շարունակում է կռուել կղերականութեան դէմ և այժմ պատրաստում է իրագործել իր մեծ նպատակը—եկեղեցու անջատումը պետութիւնից։

Օգոստոսի 22-ին Օսկերրում նա մի նշանաւոր ճառ արտասանեց՝ նուիրած յիշած հարցին։ Կոմբը յայտնում էր թէ նա բնաւ չէր ուզի կարկատաններով շտկել Վատիկանի հետ հանըրապետութեան յարաբերութիւնները։ «Միակ ելքը որ մնում է հոգեոր և աշխարհական իշխանութիւնների համար, դա ապահարզանն է փոխադարձ համաձայնութեամբ։ Սոցիալական խաղաղութիւնը և կրօնական ազատութիւնը այդ է պահանջում։ Կոմբը ընաւ երկիւղ չունի եթէ Հռոմը կը խլի Ֆրանսիայից կաթոլիկների հովանաւորութիւնը Արևելքում։ «Մեր վարկը և ազգեցութիւնը այժմ կախուած է բացառապէս մեր նիւթական հզօրութիւնից և պատուի, արդարութեան և մարդկային համերաշխութեան այն սկզբունքներից, որոնք արդի Ֆրանսիային տուին առանձին դիրք աշխարհում։ Գեղեցիկ, բայց իրականապէս ոչ ճիշդ խօսքեր. յիշեցէր միքանի վաշխառուների շահերի պաշտպանութեան առիթով ֆրանսիական նաւատորմի առաջումը թիւրքական զերը և միւս կողմից հայկական կոտորածների ժամանակ Ֆրանսիայի բռնած դիրքը...»

«Արդարութեան, մարդկային համերաշխութեան» մասին աւելի անկեղծ կերպով խօսում են ըոլոր երկրներում լաւագոյն մամուլի ներկայացուցիչները, սակայն ցաւը այն է որ սակաւաթիւ ազնիւ մամուլի դիմաց կանգնած են աւելի բազմաթիւ անազնիւ, կաշառուող, մոլորեցնող տպագրական խօսքի ներկայացուցիչները։

Ճանաչելով մամուլի՝ այդ եօթերրորդ մեծ պետութեան՝ ոյժը, այս աշխարհի հզօրներն անգամ աշխատում են զանազան միջոցներով իրանց համար պաշտպաններ կամ կուսակիցներ գտնել գրչով զինուած դասակարգի մէջ։

Բնականարար որքան բարձր է որևէ երկրի կուլտուրան, այնքան տարածուած է նրա մամուլը, որեմն և այնքան զօրեղ է.

նրա հասարակական ազգեցութիւնը: Թէ ինչ մեծ նշանակութիւն են տալիս կառավարական շրջանները մամուլին՝ այդ երեաց մամուլի Միջաղգային Համաժողովի անդամներին Վիեննայում ցոյց տուած ընդունելութիւնից: Օգոստոսի 18-ին բայխսրատի շինութեան մէջ էրցհերցոգ Ռայներ՝ Ֆրանց-Յովանէփ կայսեր անունից բացեց մամուլի միջաղգային 1X համաժողովը: Աւստրիական առաջին մինիստր Կեօրքերը, որ ճարտարէ գեղեցիկ ճառիք արտասանելում, իր ճառի մէջ ցոյց տուեց մամուլի ահապին գերը՝ ազգերի մէջ արգարութեան և հանրային բարիքի գիտակցութիւնը զարթեցնելու գործում, ջատագովեց մամուլի կատարեալ աղատութիւնը, համարեց մամուլը հասարակական շահերի պաշտպան: Նա ի միջի այլոց ասաց. «Ես յաճախ ափսոսել եմ որ ինձ չի տրուած հրապարակախօսի տաղանդ»:

Բայց հրապարակախօսութիւնը տաղանդաւոր, սակայն ոչ ազնիւ մարդկանց զրչի տակ յաճախ դառնում է չարիք: Այդ պատճառով առանձին համակրութեամբ պէտք է վերաբերուել համաժողովի մէջ երկու անդամների արծարծած հարցերին: մէկի հեղինակն էր Վիեննայի թերթերից մէկի խմբագիր Վիեննակերը, իսկ միւսինը՝ անդլիացի հրապարակախօս Բերլինին: Զենդիրը առաջարկում էր հիմնել «միջաղգային պատուի գոտարան» գրողների համար: Իսկ Բերլինին առաջարկում էր որ կոպիտ, զրպարտական ցոյցերը ամբողջ երկրների և ազգերի նկատմամբ համարուեն յանցանը, որ պէտք է գտառուի պատուի միջաղգային դաշնակցութեան կողմից: Երկու առաջարկներն էլ միաձայն ընդունուել են, և որքան առատ հունձ կ'ունենան այդ գատարանները, երբ սկսեն մաքրել մամուլի Աւգեան ախոռները...

I. Ա.

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՄՇԱԿ», № 96. — Վերջին ամսում մեռած երկու նշանաւոր հայ գործիչների՝ Տիգրան փաշա Ապօսի և և «Մասիս»-ի ղատառխանառու խըթբաղիլ աղասինատէք Կարապետ Խվիճեանի յիշատակներին նույլառած յօդուածներից իմանում ենք հնուեալը.

Տիգրան փաշա Ապօս որ այս օրերս Զավյալիս վախճանեցաւ, կը մնար իր վերջին թեկզրեն մէկը մեր «անհետացող տիպարներ»-ուն; Այդ տիպարն է՝ իսլամ՝ պետութեան մէջ բազարական բարձր զիրքի տիրացող հայր: Տիգրան փաշա Եգիպտոսի արտաքին զործերու նախկին նախարարն էր: Իզմիրցի մը, և իր ամեն երկրացիներուն պէս աշքը բաց ճարպիկ մը, և մաքոնին ալ՝ հայու հօտարազդի խանածին մը. փիսայցած էր նույլար փաշային—ուրիշ կզմիրցիի մը: Տիգրան փաշա թէկ բաւական զարգացած մարդ ու քանի մը լեզուներու հուսւ, սակայն մեծ հոչակ մը չստացաւ: Հանգամանքները իրեն չթոյլարեցին գոնէ մասամբ վայելել աներին համբաւը, Եգիպտոսի վրայ անդլիական տիրապետութիւնը հայոց տաշի փակեց քաղաքական տառարէզը: Տիգրան փաշային ապարանը ամեն ձմեռ տասնջարման էր Գահիրէ այցելող գրիթէ բոլոր երսպացի ուշադրաւ անձնաւութեանց: Հանգուցեալը Գահիրէի հայոց երեսփոխանական ժողովին նախագահի պատշօնը կը վարէր—մշտական և անշարժ նախագահն էր յանյիշատակ ժամանակաց անտի:

Անհետացող տիպար մը և Կարապետ Խվիճեանը, որ բանի մը

շաբաթ առաջ Պոլիս մեռաւ, ութսունը անցուկ: Հին տիպար խմբագիրը՝ «Մասիսը» հիմնեց 1852-ին և անոր արտօնատէր-խմբագիրը մնաց մինչեւ 1884. իսկ այդ թուականէն յետոյ, երբ թերթը ոյլեայլ խմբագրութեանց միջցաւ զանազան փոփոխութիւններու հնթարկուեցաւ, Խվիճեան միշտ կը մնար արտօնատէր-պատասխանատուն, այսինքն՝ թէ կառավարութեան առջև ինքն էր պատասխանատուն թերթի մը զր չէր խմբագրեր:

Հրատարակիչ-խմբագիրը զարգացած միտք մը չէր, բայց բաւական հմուտ էր հայերէնի. զրով մը չեղաւ, այլ՝ թարգմանիշ մը. բայց, հայացուցած բազմաթիւ վէտերէն շատ քիչը զրական ու զաղափիրական նշանակութիւն մը ունեցած և ազգած են հանրութեան զրոյ: Էն աշքի զարնող զործը՝ հօժէն Սիւի «Թափառական հրէան» է: Սակայն Խվիճեան շատ ու շատ բառեր կերտած և հրապարակ նետած է, օրուան դէպքերուն համտային: Այդ բառերը այսօր ընթացիկ զործածութեան մէջ են իրը հանրային սեփականութիւն, ոչ ոք սակայն անոնց հեղինակը կը յիշէ:

«Մասիսին» յիսուն երկու տարբուան տէրը անյիշատակ կը մեռնի, վասն զի ստեղծող մը չեղաւ, և ոչ ալ զալափարներու տարածող մը: Ո՞չ յառաջագիտութիւնը, ոչ յետագիտութիւնը անոր մէջ բարեկամ մը կամ հակառակորդ մը կը կորսնցնեն: Խվիճեան «խելքը զլուխը» խմբագիրը եղաւ, այսինքն՝ հրատարակիչը, որ հոտառութեամբ կը զգար, թէ որոն կողմը ծոելու է, ով է օրուան զօրաւոր մար-

գը կամ կուսակցութիւնը: Մրտաճմլիկ քան մը կայ մահուանը մէջ գրական մարդուն, մարդուն, որուն աներութացումը հանրութեան հոգին պահ մը տրտմութեամբ չի համակեր: Բնութեան ին տիսուր տեսաբաններէն մին է՝ մարդ մտնող արև մը, որ մէկուն սիրտը չի կոտրեր»:

— Նոյն համարում տպած մի այլ յօդուածից խմանում ենք, որ Պոլսում «հայ գրական և մտառը աշխարհի միքանի ներկայացուցիչներ որոշել են սեպտեմբերի 10-ին մի նեղ շրջանի մէջ համեստ կերպով տօնել դոկտոր ն. Տաղաւարեանի հասարակական, աղքային և զրական զործունէութեան բահամեւակը: Ապա բերած են հետեւալ կենսագրական տեղեկութիւնները.

«Խօկտօր ն. Տաղաւարեան գաւառացի է, ծնված լինելով Սերաստիայում 1862 թուին: Եօթամենոյ հուսակում ծնողների հետ նա տեղափոխուել է Կ. Պոլիս, ուր 1878 թ. նա աւարտեց նախնական ուսումը Կալաթիայի Լուսաւորչեան գարժարանում, որի վարիչն էր Ստեփան Փափազեան և ապա զնաց 1878-ին Փրանսիա՝ երկրագործութիւն սովորելու համար: Սկզբում նա աշխատում է զտառական ագրարակներից մէկի մէջ իրք լոկ բանուր՝ գործնուկան երկրագործութեան ընտելանալու համար, իսկ ապա տեսականը սովորելու համար նա մտնում է Մէրչինի երկրագործական գարժարանը, որտեղ նա աւարտում է ուսումը 1881-ին: Զգտելով ստանալ բարձր երկրագործական ուսումն, նա, իրք շրջանաւարտ Մէրչինի գարժարանի, մըցմաք մտնում է Պարեզի աղքային-երկրագործական ինստիտուտը (Institut National Agronomie), որտեղից 1883-ին դուրս է գալիս ճարտարագէտ-երկրագործ (Ingenieur agronome) դիպլոմով:

Վերադառնալով Կ. Պոլիս, երիտասարդ Տաղաւարեանը, թէկ օժտված զիտութեամբ և մահաւանդ գործնական գիտութեամբ, առժամանակ անդամ և տեղեկաբեր, իսկ 1894—6 թ. Պէրոյի աղքային գարժարանի հոգարարգութեան անդամ և ա-

ռայում է երկրագործութեան մինիստրութեան մէջ, մինչև որ 1884-ին հրամիրում է իր հայրենիք Սերաստիայի աղքային վարժարանների տեսուչ: Ծյուել նա ունենում է բարական լայն և եռանդուն գործունէութիւն, բարեկարգում է զպրոցները, հիմնում է «Հայունեաց ընկերութիւն ի նպառա ի-գական սեփի գաստիարակութեան», վերակազմում է արդէն գյուղթիւն ունեցող «Անձնուէր ընկերութիւնը», բանում է չափահանների համար կիրակնօրեայ գպրոց, կազմակերպում է լըստրան՝ կիրակի օրերը գասախօսնութեան անդարշում է և ոչան գանձի հողերի բարուք մշակութեան և մատակարարութեան գործին:

Յաջորդ տարին նա հրամիրում է Կ. Պոլիս՝ ստանձնելու Գատարգիւղի ըրամեան վարժարանի տեսչութիւնը և մինչոյն ժամանակ հիմնում է այդտեղ մի զուր գիտական ամսագիր «Գիտական Զարժարութեան վերնագրով», որ գոյրութիւն ունեցաւ մինչև 1887-ի վերջերը և գարաբեց խմբագրի հեռանութիւնը Կ. Պոլիսից:

Իր ստացած ուսումը ղեռ թերի նկատելով երիտասարդ Տաղաւարեան 1888-ի սկզբները մտնում է ստանձն Պարիզի բժշկական համալսարանը և ապա Պատեօրի ինստիտուտը: 1891 թ. հոկտեմբերին նա ստանում է «Licencieé es Sciences» (Ազատ ի գիտութիւնս) ստուգանը Սորբոնից, իսկ 1893-ին պատեօբեան ինստիտուտից վկայում է իրք բակտերիոզ (մանրբէկացէտ): Ցաղըր 1895-ին ընութիւն տալով ստանում է բժշկական համալսարանից բժշկականութեան գոկսորի աստիճան և, վերադառնալով Կ. Պոլիս, սկսում է բժշկական պրակտիկա:

Այժմ նրա առաջ բաց էր լայնապէս աղքային և հասարակական գործունէութեան ասպարէզը: Պատրիարքարանը իսկոյն նշանակում է նրան աղքային և Փրկիչ Հիւանդանոցի քննիչ յանձընուղութեամբ անդամ և տեղեկաբեր, իսկ 1894—6 թ. Պէրոյի աղքային գարժարանի հոգարարգութեան անդամ և ա-

տենապետ:

Հայկական կոտորածների ժամանակ դօկտօր Տաղաւարեան, իբրև ազգային գործիչ, ենթարկուց շատերի կրած բախտին, 1895 և 1896-ին նա երկու անգամ բանտարկուց և երկը-րորդ անգամին 5 ամիս մնալով բանտում, նա ազատուց ընդհանուր ներման չորսիւ: 1897-ին Կ. Պոլսի Փըրանսիական հիւանդանոցի օժանդակքիչկ կարգուց, իսկ 1899-ին նշանակուց Ըզգային Հիւանդանոցի զբլիւաւոր բժիշկ, որպիսի պաշտօնը փառում է և այժմ:

Քարով բուն զրական գործունէութեան, պէտք է ասել, որ այդ գործունէութիւնը ևս բաւական բեղմընաւոր է եղել: Բացի զանազան գիտական, բանասիրական և սօցիալական յօդուածներից, տպած զանազան հանդէսների և լրագիրների մէջ, բացի «Դիտական Զարժում» ամսագրի մէջ տպագծ յօդուածներից, Տաղաւարեան ունի առանձին տպագծ բազմաթիւ աշխատութիւններ, որոնցից կը յիշենք 1) Բնական պատմուրիւմ 4 հատոր (տրավագծ է միայն I հատորը) Կ. Պոլսի, 1886, 2) Ծաղումն հայ տայոց 1895, Վիճնա, 3) Մաերհարանուրիւմ 1898, Կ. Պոլսի, 4) Տիեզերիք եւ իր կազմուրիւմ (Փրանսիեն) 1898 Կ. Պոլսի, 5) Ծագում եւ կենսագրուրիւմ Գրիգոր Աղարանի 1898 և 1900, երկու տպագրութիւն, Վեհակի, 6) Առաջնական առողջապահուրիւմ, 1898, Կ. Պոլսի, 7) Ենթական գործարանի, 1898, Կ. Պոլսի, 8) Մարդկային սաղմուահօսուրիւմ, 1900, Կ. Պոլսի, 9) Բառացուցակ ահաւանուաց 1900 և 1901, Կ. Պոլսի, 10) Դարուինականուրիւմ գ. տպագրութիւն, Կ. Պոլսի, 1901, 11) Ռւռուագիծ պատմուրեան հայոց 1903 թ. Պարիզ, 12) Հայոց իին կրօնը, 1903 թ. Պարիզ և այլն:

Բացի այս տպագծ աշխատութիւններից, Տաղաւարեան պատրաստած ունի նաև՝ մի քանի կարեսը աշխատութիւն՝ 1) «Պատմութիւն իմացական զարգացման հայոց հին ժամա-

նակներէ մինչ միը օրերը», 2) «Հայքու Հայաստան», որի Փրանսիական թարգմանութիւնն ևս պատրաստած ունի և, երկի, շուտով լոյս կը տեսնէ: Տպագրված աշխատութիւններից մի քանիսը թարգմանված են Փրանսիերէն և թիւրքիրէն: Փրանսիական կառավարութիւնը, գնահատելով գոկտօր Տաղաւարեանի գործերը, ակադէմիական պատուանշան է տուել նրան (officier d'Académie), իսկ Փրանսիական աստղագիտական ընկերութիւնը իր անդամների շարքի մէջ է մացրել նրան:

Հասարակական և զրական գործունէութեան այս ցուցակը ցոյց է տալիս, որ յանձին գոկտօր ն. Տաղաւարեանի թիւրքահայերը ունեցել են մի եռանդուն և արդինաւէտ գործիչ ու զրող, ուստի և միանզամայն արժանի հրապարակական այն յարգանքին, որ այսօր Կ. Պոլսի զրականները պէտք է մատուցանեն նրան»:

«Մուլճ» ամսագրի խմբագրութիւնը ձայնակցելով «Մշակ»-ի բարի ցանկութիւններին և չնորհաւորելով իր կողմից ևս յարգելի յորելեարին, ցաւում է որ յորելանական մասնաժողովը անկարող է գտնուել իմաց տալ Պոլից գուրս գտնուող հայ զրական շրջաններին իր համակրելի նախաձեռնութեան մատին:

«Մեհելիան մամուլ», օգոստ.—Քարիզէն «Բիւզանդիյուն»-ի զրուած նամակէ մը գոհութեամբ կը տեղեկանանք թէ եղմիցցի ծանօթ ընտանիքի մը ոնդամներէն Պ. Մաքսուտեան Բարիզի Քօնսէրվագուատին մէջ ամենայաջող կերպով անցունելով իր քննութիւնները իրը ողբերգակ և միանզամայն իրը կատակերգակ՝ արժանացերէ առաջին մրցանակի: Պ. Մաքսուտեան աշակերտած է նշանաւոր Միլվէնի և, ինչպէս կ'ըսէ նամակազիրը, զրեթէ ամբողջապէս ընդօրինակած է — տեղ տեղ ալ՝ զերագանց իր վարպետին արտասանութեան եղանակն և զիմագծերու շարժուձները: Ի մօտոյ

Պ. Մաքսուտիան՝ իբր հայ արուեստագէտ՝ առաջին անդամը ըլլալով, պիտի երենայ Փրանսական թեմին վրայ՝ Օսկօնի թատրոնին մէջ»:

— Աւքիշ ազգի բներից էլ իմանում ենք, որ Յմերիկայում ևս յայտնուել է մի հայ գերասանուձի՝ օր. Փլուտ Զառուէլ (Զառուէլ Մոնկասարեան), որ բաւական նշանաւոր տղաղաթիմն ունի ամերիկական և անգլիական թատրուաբեմերի վրայ:

«Բանասաւր» մայիս-յունիս, — Պր. Փրօֆֆ-Գալֆակեան իր գարպետին՝ մեծ երաժշտութեատր Վէնսան ա'լենաֆի՛ պատուակալ նախագահութեան ներքև, ու երաժշտարան (առտօնութեառ) կօժէն ու Սօնիէրի նախագահութեամբ, Պատինիէրի թատրոնին մէջ անցեալ ամիս բանախօսութիւն մը կատարեց Հայ ժողովուրդին գեղարուհասական յատկութիւններուն ու մանուսներ անոր երաժշտական գերին վրայ:

Նախագահը իր հայրենակիցներուն (քանի որ սրահը գրաւուած էր, զբեթէ ամբողջութեամբ, երսպացի երկսեռ բազմութենէ մը, և ուր հազիւ տասնեակ մը Հայեր հետաքրքրուած էին դալու...) նեղկայացրեց մէր երիտասարդ աղջակալիցը:

Եժաւասիկ՝ ինչ որ կը զրէ այս մտսին Բունը Աւետիկ (1 Յուլիս 1904) երաժշտական ամսաթիւթիւնը.

«... Այս ուսումնակրութիւնը պարտի, արգարի, շահաբըքի ամէն երաժշտաները. գտան զի խնդիրը վերակինդանացնելու վրայ է նախական արուեստ մը՝ սրի հետեարաբ բացարձակօրէն անկեղծ է. մէրինէն շատ տարրեր է ան, և սակայն լի երազներով և ըղձանքով (ταρίγατισσ), որ խիստ մօտիկ էն մեզի: Զատ պարզ, արուեստակութենէ զերծ փոքրիկ նախադասութիւններով, բայց նաև համոզումի եռանդով մը ու տպաւորիշ ճշգրտութեամբ մը Պր. Փրօֆֆ-Գալֆակեան կը ցուցնէ այս արուեստին կարեսութիւնը արեկեան քին քաղել հայ արուեստին հին աւանդութիւններէն: Ունկնդիրները՝ հրապարաւած՝ վերստին խնդրեցին «Օրոր»-ը:

հողին վրայ եղած էն ձիշդ այնպէս ինչպէս Յոյները յերոպաւ-յաղթական պարտուածներ՝ որ, արուեստներու գանձը պահպանելով, յաղթողները կը հարկագրեն իրենց գալրացին մէջ ուսոնելու: Աւ եթէ ճարտարապետութիւնն ու միւս կերպնակալ (plasticien) արուեստները չկարսպացան գարգան ծանծի նման ժողովուրդի մը տիրապետութեան ներքի, երածշատթիւնը եղաւ հաս՝ ինչպէս այլուր՝ հարըստանական միսիթարանքը, և իբրև անմարմնեղին ատամարն անանց՝ սրանց առնենքը կը քանդէին... Եյնպէս որ Հայ ժողովուրդին հին երգերուն՝ նոյնիսկ ուրախաւթեան երգերուն՝ այս ծանրալուը և ինքնամփուի հանգամները կենցի խստի խոչտանգուած հոգիները մեզի կը պատմէ: Պր. Փրօֆֆ-Գալֆակեան մեզի ծահօթացուց ատոնցմէ շատ մը հատուածներ, փոխանական հարականի հին հաւաքածոյն, ինչպէս նաև կրօնական ու ժողովրդական ուրիշ հաւաքածոյներէ: Կրեթէ ամէնքն աւ խիստ զեղեցիկ էն. մամնաւրատիքս ծնունդի սա հին երգը՝ «Անկիլորն Էակինց», կամ՝ իրիկուն սա երզը՝ «Լոյս զուարթ» և կամ սա՝ «Անտի բուրիլով խնկոց անուշանառութիւն» որուն երածշտական կազմութիւնը շատ կը նմանի մեր Գրիգորեան երգերուն: Պր. Փրօֆֆ-Գալֆակեան նուազեց նաև տաճկերէն բառերով քանի մը երգել, բացատրելու համար թէ՝ «տաճկական» բառած երաժշտութիւնը հայ երաժշտաւթիւններէն ածանցուած է: Է՞ն վերջը նուազեց «Օրօր» մը որուն հեղինակը ինքն խիկ է, և որ կը ցուցնէ այն օգուտ զոր արդի երաժիշտաները կրնան քաղել հայ արուեստին հին աւանդութիւններէն: Ունկնդիրները՝ հրապարաւած՝ վերստին խնդրեցին «Օրօր»-ը:

«Русское Богатство»-ի օպստոսի համարում մի համառօտ, բայց հետաքրքիր՝ յօդուած է տպուած «Էւրես և Յօնա» վերնազրի տակ որի կարենը մասերը առաջ ենք բերում բացուածօրէն:

«Նախ «Խօսօք Վրեմյա» աշխատեց թարմացնել անտիսկիտիկմց, առում է յիշեալ ոռու ամսաղիբը, —մեզադրելով հրէաներին, թէ նրանք մեր հայրենիթի գլխին պատերազմ բերին, թէ այդ բանում նրանք իհարիչ «Խօսօք Վրեմյա»-ից նուազ մեզաւոր են: Գուկաս չեղան վայրենի փորձեր մեզադրելու հրէաներին եապոնացիներին ցոյց տուած օգնութեան մէջ: Այնուհեան ուրիշ թերթեր հրէաների դէպի պատերազմն ունեցած վերաբերունքի մասին հաղորդեցին մի քանի փասուեր. այդ իսկ փասուերի զուգազրութիւնը անօգուտ չի լինի:

«Ինչպէս յայտնի է, չնայելով հրէաների զինուորական ծառայութիւնից խոս տալու մասին եղած խօսքուղացին, այնուամենայնիւ բանակում հրէաների թիւը ու թէ քիչ է, այլ տևելի է, քան այդ պէտք է լինէր բառ նրանց համեմատական թուի Ռուսաստանում: Մանաւոնդ շատ հրէաներ զրուել են Սիրիբեան զնդերում, և այս հանգամանքը էլ աւելի մեծացնում է հրէաների տակուը զործող բանակի մէջ:

«Պետերբուրգի քարեբինի հաշուով, որ նո հաղորդել է „Ենրք. Եհա.“ աշխատակցին, այժմ կռուող հրէաների թիւը առնուազն տասն հինգ հազարի է հաւանում: Այժմ այդ թիւը կարելի է քարձրացնել: Սրտերի խոզքը կարգացնող թերթերը աշխատեցին զուշակել, թէ հրէաների նուիրատութիւնները պատերազմական պէտքերին կ'ուղար-

կուեն ճապոնացիներին: Փաստերը ցոյց տալին ի հարկէ, հակառակը. հրէական բուբժուազիան նուիրում է նոյնրան, որքան և որիչները:

Հրէաների վարժունքի մասին պատերազմի գաշտում նոյնացն ստացուած են այնպիսի տեղեկութիւններ, որպիսին սպասուիլի էր: Ինչպէս յայտնի է, այնտեղ տառնձնապէս շատ են հրէան ըժշկներ. պատերազմ զնացող բժիշկների առաջին խումբը բաղկացած էր համարեա բացառապէս հրէաներից. սա բոլորովին հասկանալի է, քանի որ պետական ծառայութիւնը, որից նրանք գրկուած են, նրանց չէր ազատում գօրակոչից (մորիլիկացիա):

Եյնուհեան յօդուածազիրը յիշատակում է, թէ հրէա զինուորները որպիսի անձնուցացութեամբ են կռում իրանց ոռու ընկերակիցների կողքին ընդհանուր թշնամու գէմ և վերջացնում է հնատեալ խօսքերով.

«Եյժմ աւելի քան երրեկից է դէպ է ոչ միայն խօսքով, այլ և զործով տմնն մի քաղաքացու հրաւիրել դէպի ապատ և ձեռներէց զործունէութիւն ընդհանուրի բարիքի հումար: Հպատակից կարելի է պահանջել միմիայն կամակատարութիւն, ձեռներէցութիւն կարող են ցոյց տալ միայն քաղաքացիները: Հէնց այդ ձեռներէցութեան մէջ է կայսում իսկական հայրենասիրութիւնը, իսկ վերջինս մնունդ ստանում միայն այն իրաւունքների զիտակցութեամբ, որոնք ապահովեցնում են մեր համակեցութիւնը»:

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Բագուից ինժեներ Լևոն Յ. Ղուկասի նուիրատը՝  
ուութեամբ ուղարկւում են 1904 թ. ընթացքում մի-մի  
օրինակ «Մուրճ» Մեզենի և Կաղաչինսկի հայ բանտար-  
կեալներին և Թիւրքիայի միքանի տեղեր:

«Մուրճ»-ի մաս-մաս վճարող բաժանորդներից միքանի-  
սը կարծել են, որ իրանք վճարելով 5 ըուբլի՝ պէտք է ստա-  
նան կէս տարի ամսագրիս համարները, այսինքն վեց համար.  
—մինչդեռ մեր յայտարարութիւնից պարզ է, որ կէս տարուայ  
«Մուրճ»-ի բաժանորդագինն է 6 ըուբլի և ոչ 5 ըուբլի, իսկ  
մաս-մաս վճարող բաժանորդները համարում են տարե-  
կան բաժանորդները որոշ պայմաններով։ Արդ, խմբագրու-  
թիւնս պատիւ ունի խնդրել, որ այդ բաժանորդները յայտնեն,  
արդեօք կամենում են լրացնել իրանց վրայ ապառիկ մնացած  
բաժանորդագինը և ստանալ «Մուրճ»-ի համարները մինչև  
տարուայ վերջը, թէ՞ ոչ, որպէսզի բացասական պատասխանի  
գէպքում խմբագրութիւնս այլ ևս չպահի նրանց հասնելիք  
համարները և 6-ից սկսած։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

Կովկասի Ուսումնական Շրջանի Հոգաբարձական Խորհրդի  
որոշմամբ, որ հաստատուած է Կովկասի քաղաքացիական  
մասի պ. Կառավարչապետի պաշտօնակատարի կողմից,  
համարուած է պիտանի սկզբնական ուսումնարաններում  
գործադրուելու համար

Կ. ԿՈԽՈՒԿԵՍՆԻ և Լ. ՍԵՐԳՈՎԵՍՆԻ

## ՄԱՅՏԵՆԻ ԽՈՍԿ

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿԸ

(Երրորդ և չորրորդ տարիների համար)  
Համարու հայերէն-ռուսերէն բառզրով  
Գինն է 70 կ.  
(246 երես)

Դիմել. Թիֆլիս՝ «Գուտտենբերգ» և «Կենտրոնական», իսկ Բա-  
գուր՝ «Сотрудникъ» գրավաճառանոցներին:

ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱԼЬ

## ТОЛКОВЫЙ СЛОВАРЬ

ЖИВОГО ВЕЛИКОРУССКАГО ЯЗЫКА

3-е, исправл. и значит. допол. издание, подъ редакціей проф. Спб. у-  
ниверситета И. А. Бодуэна-де-Куртенэ.—Настоящее издание рекомендо-  
вано Ученымъ Ком. М. Н. Пр.

ВЫШЕЛЪ ХІ-Й (I-Й ВЫП. II-ГО ТОМА).

(И—Калмыковатый) СПБ., 1903—1904. 4°. Столбцы 1-й по  
192-й.

ПОДПИСКА ПРОДОЛЖАЕТСЯ Полное собрание состоять изъ  
ЧЕТЫРЕХЪ БОЛЬШИХЪ ТО-  
МОВЪ, каждый томъ изъ 10 вып., всего слѣдовательно 40 вып., за-  
ключающихъ до 250 листовъ *in-4°* или около 8000 столбцовъ  
текста на плотной глазиров. бумагѣ. Подписанная цѣна—20 р. Допуска-  
ется разсрочка. при получении I тома 7 р. 50 к. и затѣмъ при полу-  
чении выпусковъ XI—XXXV по 50 коп., или же при подп. 2 р. 50 к.  
и за кажд. изъ перв. 35 вып. по 50 к.—Перес. по дѣйств. стоим., или  
чемъ для удобства расчета подписчикамъ съ разсрочкою выпуски вы-  
сылаются съ наложенными платежомъ.

Подписка принимается: у издателей—въ книжныхъ магазинахъ Т-ва М. О  
ВОЛЬФ—С.-Петербургъ. Гостиный Дворъ, 18, и Москва: 1) Кузнец-  
кий Мостъ, д. Джамгаровыхъ, и 2) Моховая, д. Чижова и Курындина  
(противъ университета), а также у всѣхъ др. столичныхъ и провин-  
циальныхъ книгопродавцевъ.

ԲԱՅՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

(Երկրորդ Շրջան (1904—1905)

## ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ

ՆԿԱՐԱՉԱՐԻ ԿԻՍԱՄՄԵԱՅ ՀԱՆԴԵՍԻ

Բաժանորդագինն է ամեն տեղ

Տարին՝ 2 թ. 50 կոպ. (Արտասահման 8 ֆրանկ).

Կէս տարին՝ 1 թ. 75 կոպ. Երեք ամիսը՝ 1 թ.

Առանձին համարները ծախտում են 10 կոպ.

Եպառիկ բաժանորդագրութիմ չէ ընդունում:

Բաժանորդագրական տարին հոկտեմբերից հոկտեմբեր է:

Առաջիկայ 1904—1905 թ. շրջանում «Առողջապահիկ թերթը» կը հրատարակուի նոյն զիբքով և ծրագրով և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ:

«Առողջապահիկ թերթի» տարեկան բաժանորդները կը ստանոն.

1. Քսան և շորս համար «Առողջապահիկ թերթ»,  $1\frac{1}{2}$  տպագրական թերթից (24 երես) բաղկացած:

2. Վեց զրքոյկ թէ խմբագրի և թէ ուրիշ հեղինակների աշխատակրուծ «Բժշկի Զբոյցներ» ընդհանուր խորագրով, ամեն-մէկը նոյնպէս  $1-1\frac{1}{2}$  տպագրական թերթ (32—48 երես): Դրբոյքները, որքան թոյլ կը տայ նրանց բովանդակութիմը, զարգարուած կը լինեն նկարներով:

3. «Բժշկի թէրթիկներ» զանազան բովանդակութեամբ: Այս թէրթիկները տպւում են այնպէս, որ նրանց կարելի է ծալել և կազմել փոքրիկ տեսարակներ: «Առողջապահիկը» արդէն հրատարակել է երկու այդպիսի թէրթիկ—«Միմիր» և «Նուէր ծննդականներին»: Առաջիկայ շրջանում հրատարակուելիք թէրթիկների քանակութիւնը կախուած կը լինի ընթացիկ պահանջներից և բաժանորդագրութեան աջողութիւնից:

4. Կովկասեան Պայտերական Բժշկական Ընկերութեան այն բոլոր ժողովրդական հրատարակութիւնները, որոնք լոյս կը տեսնեն 1904—1905 թ. շրջանում:

Բաժանորդ զրուել կարելի է Թիֆլիսում «Առողջապահիկ թերթի» խըմբագրատանը, Գանովսկայա փողոց, № 26, կամ «Գուտատենրերդ» դրավաճառանոցում (Զտարնայա և Դփորցավայա փողոցների անկիւնում):

Բայցում զիմել, տիկին Մարիտ Սունդուկեանի դրավաճառանոցը (Կնիջա-մագազին «Сотрудникъ»):

Բալախանում զիմել պ. Ասուածատուր ծատուրեանին («Անդրանիկ» ընկերութեան գրասենեակում):

Օտոր քաղաքներից զիմել Տիֆլիս, բարձրագույն պարտականութեան բաժանում («Արօգճառական Տերտ») կամ Տիֆլիս, Կլիջնայ մագազին «Գյուտենբերց»:

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue «Arogdžaraik Thirth».

Խմբագրի հրատարակիչ Պ-ր Վ. Սրբունի:

Ժամանակաւոր պատասխանառութիւն կազմակիր՝ Յ. Սպենդիարեան

Հրատարակուհի՝ Վ. Քանաթեան

ջոցներ։ — Հայ ընթերցողների սահմանափառի կոնտինդենտ  
արք Լ. Ս.

Բարձրատրյն մամիշինուու։ — Ուժեղացրած պահպա-  
նութիւն։ — Դասուստանուկան սուպատի վճիռը։ — Մինիս-  
տրքների կամբանի որոշումը օտարերկրացիների քնա-  
կագայքերի մասին։ — Ձինանդիայի նոր դեներալ-նախան-  
դութիւնի նշանակումը։ — Բարձրագայն հաստատած մա-  
մուկի նոր օրինքեր Ձինդրանդիայում։ — Պետական օժան-  
դակութիւն Յակաս։ Օճ.« Արարին։ — Առաջենդիա-  
ներ։

124

18. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԱԽԹԻՒՆ. — Ոռուս-ճամանական պատերազմը,

— Միջնորդութեան հարցը։ — Անզիսն իր դործերն է  
շտկում։ — Փիւրքիան շարունակում է իր քաղաքակա-  
նութիւնը։ — Բուլղարական իշխանի ընդունութիւն Ֆրանց  
Յովաչի կայսրից։ — Առաջիկ-Ոռուսակի մամր։ — Առմբի  
մառը Օսկերում։ — Ժուրնալիաների միջազգային հա-  
մանուլով Վիեննայում։ Լ. Ս.

134

19. ՊԱՐԵՔՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . 141

20. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՐԴՄԻՑ . . . . . 146

21. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. . . . . . 147

22. ՅԱԻԵԼՈՒԾԸ. Ձեզմա Մ'որիէլ «ՀԱԶԻ ԲԱՐԱՅԻ ԱՐ-  
ԿԱԾՆԵՑԻ ՊԱՐԱԿԱԿԱՌԱՄ» , վէպ պարոկ.  
կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարտովկան, 193—240

### ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆԱՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատակ խնդրում է յօդաւածագրերից՝ զրել պարզ, մանաւանդ թաւերը, յատակ անանենքն ու օտար բաւերը, և թիրթի միայն մի երեսի վրա, առանձնապես ուշ զարձնել կլասպութեան, սույղադրամիւն և նոր պարրերաթիւնները որաշակի լինելու վրա։ Թարգմանութեան հետ պէտք է, ուղարկել խմբագրութիւնն և՛ բնոդիրը։

2. 2րդականամբ մեծ յօդաւածները պահուում են խմբագրատանը 6 տարս, իսկ յևայ ոչնչացում են։ Զենոպիլը յնու սահմանը համար պէտք է ուղար-  
կել ճանապարհածախուց։ Փոքր յօդաւածներն ու սույնաւարները չեն վերակար-  
ձնեւու։

3. Գրուոծների վարձարրութեան շաբը որոշում է խմբագրաթիւնը։ Խմբագրութիւնն առանց պայմանների ուղարկաւած ձեռադիքները համբաւում են անվճարելի։

4. Խմբագրութիւնն իրան է վիճականում ուղարկաւած յօդաւածները փո-  
փոխելու կամ կրծանելու իրաւունքը։

5. «Մառաւճի» համարը չափացուելու դէպրում պէտք է խմբագրութիւննը  
տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջար համարի բայ տեսնելը։

6. Խմբագրութիւնն զանազան հարցունենարք դիմայ անձննք պէտք է  
ուղարկաւածն համար ուղարկեն նամակազմազմբ։ Կամ պասային բանել։

7. Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կազ.։ Հասցէի փոխ-  
խումբ պէտք է սուսպարի խմբագրատանը խրաֆունչիւր ամսի 20-ից ոչ ուշ,  
որպէսպի առաջիկայ համարն ուղարկաւ նոր հասցէու։

ՅԵՐԱՊԵՏՈՎԱՆԻ Ե ԲԵԺԵՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1904 թ.

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՏԿԱԿԱՆ ԵԵ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐԱՐԱԿԱՆ

(Եսոր շրջան Ա տարի)

Խմբագրութեան եւ աշխատակիցների նոյն կողմով:

Բ Ա. Ժ Ա. Շ Բ Ռ Դ Ա. Ի Ն Բ Հ Ա Բ

Օտառոտանօնմ՝ տարեկան 10 ր.	Աշխատահման՝ 12 ր. (32 դ.)
կէլ տարբին 6 »	» 7 » (18 դ.)
1 տասնաման 1 »	» 1 » 20կ. (3½ դ.)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ, ԸՆԴՈՒՆԿՈՒՄ է.

Թիժիսում—խմբագրութեանը (Ճավաճափածեան վարչոց, տ. № 16):  
Խոյառութեան այլ եւեկիցից պէտք է զիմել՝ Տիֆլոս, և բարձր բարձր աշխատահմանը՝ ՄՈՐՎԵ».

Աշխատահմանը՝ *Tijlis, Rédaction de la revue „MOURTCHI“.*

Բարձր այդ, «Մուրճ»-ին կորել է զրուլ նաև.

Թիժիսում—«Խոյառութեանը» զրավաճառանոյում:

Բազում աշխատահմանը՝ «Սուրբակ» զրավաճառանոյում:

Մակուայում—ա. Վահանեանի մօա (Сухаревская плош. ս. ձ.):

Երևանում—«Արարատ» զրավաճառանոյում:

Երևանութեանի բաժանուրզները կարող են զիմել՝

Թիհնունում—Հայոց պարզների անուն պ. Լեռն Բորբեանին:

Եղիպատում—կոկտոր Կ. Փաշալեան-Խանին (Ալբուանովիա):

Դահօրութիւն. Բաժանուրզների կորելի է վճարել նաև մաս-մաս սկզբում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յայինի 1-ին 2 ր.—կամ սկզբում 5 ր. և յուլիսի 1-ին 5 րուրի:

ԾԱԾԱՐԱԿՈՒԹԻՒՆ. ընդունուած է տեսն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են—1 երես բանով յայտարարութեան համար 15 ր.,  $\frac{1}{2}$  եր.—8 ր.,  $\frac{1}{3}$  եր.—4 ր., տաղաւոր (կորպ.)—40 կ.:

Զեսութիւնները, նամակները և ծրաբները պէտք է ուղղել խմբագրութեան, Հեղոն ՍԱՐԳՍՅԱՆԻ անունով: